Представители университета сыграли большую роль в тылу, обеспечивая удовлетворение потребностей фронта. В этом деле в 1942-1946 гг. была велика роль ректора университета, академика АН АрмССР Рачья Буниатяна, как и роль открытий, совершенных армянскими учёными. Научно-исследовательские работы армянских учёных стали более глубокими и плодотворными в годы Великой Отечественной войны. Их открытия в большой степени помогли укрепить оборону страны и обеспечить нужды фронта.

Теорию рассеивания света в мутной среде, разработанную преподавателем ЕГУ, президентом АН АрмССР Виктором Амбарцумяном, быстро внедрили в военную промышленность и создали устройства наведения, используемые в ночных условиях. Работы, проведённые в основанной в университете преподавателями факультета физики братьями Абрамом и Артёмом Алиханянами лаборатории космических лучей и ядерных исследований, и эксперименты на основанной в августе 1942 г. станции по исследованию космических лучей на Арагаце проложили путь для использования ядерной энергии в военное время и в мирных условиях¹.

Своими открытиями отличились выдающиеся учёные: физик Норайр Кочарян, математик Арташес Шагинян, химики Левон Ротинянц, Араксия Бабаян, Арменак Мнджоян, геолог Константин Пафенхольц, биологи Армен Тахтаджян, Левон Ованесян, историк Акоп Манандян, лингвисты Рачья Ачарян, Григор Капанцян, востоковед Овсеп (Иосиф) Орбели и другие, основная часть которых преподавала в ЕГУ².

Несмотря на жестокие военные условия, 29 ноября 1943 г. в Ереване, на основе Армфана – филиала Академии Наук СССР, была основана Академия наук АрмССР, первым президентом которой был избран академик Овсеп Орбели, а вице-президентами – академики Виктор Амбарцумян и Вардан Гулканян. Основание академии наук в АрмССР было крупным историческим событием в армянской действительности. Это в значительной степени способствовало объединению руководства научно-исследовательских учреждений республики в единый центр и обеспечению работы по целенаправленному развитию науки.

Представители ЕГУ активно участвовали в оборонительных и наступательных боях против фашистской Германии: в освободительных боях за Москву, Сталинград, Курск, Киев, Кавказ, Украину, Белоруссию, Прибалтику и европей-

¹ Енгоян П., Минасян Э., указ. соч., с. 548, 549.

² Там же, с. 549.

ские страны, участвовали в боевых операциях по захвату Берлина и разгрому милитаристской Японии.

Каждый отважный воин обретает бессмертие в войне, но героями становятся только счастливые. Геройской славы были удостоены двое военных. Тогдашний заведующий кафедрой военного дела, майор Андраник Гегамович Казарян (род. в 1904 г. в Баку), который в годы войны отличился своим стратегическим талантом, поднялся до чина генерал-майора и в качестве командира дивизии в 1943 г. за умелую организацию и руководство форсирования Десны был удостоен звания Героя Советского Союза. Присоединившись к многочисленной армии армянских маршалов и генералов, он на протяжении всей войны достойно нес знамя тысячелетней славы армянского военного искусства. Того же звания был удостоен 19-летний рядовой (доброволец) Сурен Геворкович Саркисян (1924 г. р., Аштарак, Воскеваз), отправившийся на войну с первого курса физико-математического факультета ЕГУ. Это звание было присвоено ему за проявленную самоотверженность во время форсирования наших войск Днепра у города Могилев, когда он под непрерывным обстрелом обеспечивал бесперебойную телефонную связь между двумя берегами реки. Другой воспитанник университета – доблестный боец Арташес Оганджян – повторил подвиг Гастелло и, следуя его примеру, на горящем самолёте врезался в колонну вражеских танков, уничтожив их. Патриот, воспитанник университета был посмертно награждён орденом Красного Знамени¹.

Как и у любой войны, у Великой Отечественной были не только свои солдаты и полководцы, но и учёные, деятели искусств, писатели. В годы войны у университет также были свои поэты и прозаики. Поэт Дереник Чархчян (род. 1916 г.) в 1941 г., прямо с государственного экзамена ушёл на войну, но, к сожалению, погиб в боях за оборону Сталинграда в июле 1943 г. Погиб человек, заранее открывший миру свою веру в то, что жизнь многих людей может быть спасена смертью одного.

В 1941 г. начинающий писатель Грачья Ованнисян, отправившийся с третьего курса университета в армию, вернулся с войны состоявшимся поэтом и в 1948 г., окончив ЕГУ, издал свою первую книгу «Песнь моей жизни», каждое стихотворение которой является лирическим выражением дум и переживаний писателя, прошедшего через тропы войны². Поэт Ваагн Давтян пришёл в университет после ранения на войне и в 1947 г., ещё не окончив обучение, издал свою книгу стихов «Первая любовь». Паруйр Джотян опубликовал свой единственный роман на тему войны «Пленённая девушка». Багиш Овсепян вернулся в университет, привезя с собой лишь поэтическое название романа «Сеятели не вернулись», но роман был написан и переведён на ряд европейских языков как лучшее отражение бедствий войны.

Таким образом, ЕГУ в годы Великой Отечественной войны развернул широкомасштабную деятельность не только в организации мобилизационных работ на высоком уровне, но и в отправке более 870 своих воспитанников на фронт. Эффективной военно-патриотической пропагандой и активными

¹ Енгоян П., Минасян Э., указ. соч., с. 550.

² См. там же, с. 552, 553.

тыловыми работами наш университет способствовал исторической победе в Великой Отечественной войне.

Закалённые в Великой Отечественной войне, университетские солдаты и полководцы, учёные и писатели сыграли большую роль в патриотическом воспитании молодого поколения и передаче им военного опыта. Поэтому не случайно, что в 1980-х годах в Арцахском освободительном движении продолжились уроки Великой Отечественной. ЕГУ стал одним из центров политического движения по освобождению Нагорного Карабаха, созданию независимой Республики Армения, а в числе самых активных деятелей этого движения, рядом с новым поколением, были преподаватели и бывшие студенты – участники Великой Отечественной войны.

Էդիկ Մինասյան – Երևանի պետական համալսարանի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին

Փաստական հարուստ նյութերի քննությամբ հեղինակը վերլուծում է Երևանի պետական համալսարանի ուսանողության, շրջանավարտների, ասպիրանտների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և վարչատնտեսական աշխատողների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմի ռազմական գործողություններին, գորահավաքային ու թիկունքային աշխատանքներին, նրանց ներդրումը պատերազմի հաղթանակի գործում: Տարաբնույթ սկզբնաղբյուրների օգտագործմամբ ճշգրտվում է, որ Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են ոչ թե 500, այլ 869 համալսարանականներ, որոնցից 300-ը հերոսաբար զոհվել է: Նրանցից շատերը պարգևատրվել են շքանշաններով և մեդալներով, իսկ դասախոսներից ԵՊՀ ռազմագիտության ամբիոնի վարիչ, հետագայում գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը և ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի ուսանող Սուրեն Սարգսյանը արժանացել են Խորհրդային Միության հերոսի բարձրագույն կոչմանը: Արխիվային և այլ փաստաթղթերի վերլուծությամբ ցույց է տրվում հայրենական պատերազմի տարիներին տարբեր ուղղություններով ԵՊՀ-ի ծավալած գործունեությունը, որն աջակցել է համաժողովրդական հայրենասիրական շարժմանը՝ կազմակերպել կամավորական, աշխարհագորային ջոկատներ, վերանայել ուսումնական ծրագրերը և դրանք համապատասխանեցրել ռազմաճակատի պահանջներին: Միաժամանակ ԵՊՀ-ն նախապատրաստել է անհրաժեշտ ռազմական կադրեր տարբեր մասնագիտություններով՝ մարտական գործողությունների նախապատրաստման կուրսեր կազմակերպելով: Պատերազմի տարիներին, հաղթահարելով տարատեսակ դժվարություններն ու զրկանքները, ԵՊՀ-ի ղեկավարությունն ու ուսանողությունը պատվով ու մեծ նվիրումով են իրականացրել իրենց պարտքը հանուն հայրենիքի:

Edik Minasyan – *Participation of Yerevan State University in the Great Patriotic War*

Having studied extensive factual material, the author analyzes the participation of Yerevan State University students, graduates, post-graduate students, teaching and administrative staff in the military operations, mobilization and rear work during the Great Patriotic War, as well as their contribution to victory. The study of various sources revealed that not 500, but 869 of the university personnel took part in the Great Patriotic War, 300 of whom died heroically. Many of them were awarded medals and orders, and one of the lecturers, Head of the Chair of Military Science of YSU, later Major General Andranik Ghazaryan, and Suren Sargsyan, a student of the Faculty of Physics and Mathematics, were awarded the highest title of Hero of the Soviet Union. The analysis of archival and other documents shows that YSU carried different activities during the years of the Patriotic War. It supported the people's patriotic movement, organized volunteer, military detachments, revised curricula and brought them in line with the requirements of the front. At the same time, YSU trained the necessary military personnel in different specialties by organizing combat training courses. During the war years, overcoming various difficulties and hardships, the YSU leadership and students served their homeland with honor and great devotion.

Ներկայացվել է 15.04.2020

Գրախոսվել է 28.04.2020

Ընդունվել է տպագրության 30.06.2020

**ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ**

Բանալի բառեր – Երևանի պետական համալսարան, Երկրորդ համաշխարհային պատերազմ, Հայրենական մեծ պատերազմ, պատերազմական հուշեր, դասախոսներ, ազգային դիվիզիաներ, վճռական ճակատամարտեր

Պատմական ժամանակաշրջանի կամ իրադարձությունների համար կարևոր են հուշագրությունները, որոնք լավագույնս համալրում են պատմության տարբեր դրվագներ, այն դարձնում առավել ամբողջական: Երկրորդ համաշխարհային պատերազմի մասին գրվել են հազարավոր հուշագրություններ, որոնց շնորհիվ հնարավոր է առավել խորը և համընդգրկուն ըմբռնել պատմական ու պատերազմական գործընթացները: Այդպիսի հուշագրություններ են թողել նաև հայ ժողովրդի բազմաթիվ զավակներ՝ ներկայացնելով իրենց անցյալը Հայրենական մեծ պատերազմի օրերին: Պատերազմի մասնակիցների հուշերը թույլ են տալիս ավելի խորը և մանրամասն ըմբռնել հայկական և խորհրդային այլ դիվիզիաների մարտական ուղիները, նրանց առջև դրված խնդիրները:

Սույն հրապարակման մեջ հեղինակն անդրադառնում է Երևանի պետական համալսարանի մի քանի աշխատակիցների՝ Էդուարդ Ջրբաշյանի, Համլետ Սահակյանի, Լիպարիտ Գյուլբուդադյանի, Գարսևան Շառոյանի, Լևոն Բաբայանի, Ռեմ Կարապետյանի և Հովհաննես Մովսիսյանի, ինչպես նաև համալսարանականներին առնչվող այլոց հուշերին, որոնք մասնակցել են Հայրենական մեծ պատերազմին և իրենց ներդրումն ունեցել ԽՍՀՄ մեծ հաղթանակի գործում: Համալսարանական հերոսների հուշերը տեղեկություններ են հաղորդում նաև հայ մեծանուն զորավարների և նրանց գործողությունների մասին, ինչը համալրում է ազգանվեր գործիչների կենսագրության տարբեր դրվագները:

* * *

Հայրենական մեծ պատերազմի մասնակից Էդուարդ Ջրբաշյանը¹ պատերազմի ավարտից երեսուն տարի անց իր հուշերում գրել է. «Լինում են

¹ Է. Ջրբաշյանը ծնվել է 1923 թ. Երևանում, 1941 թ. ավարտել Երևանի Շ. Ռուսթավելու անվան միջնակարգ դպրոցը և նույն թվականին գորակոչվել Կարմիր բանակ: Սկզբում սովորել է Թբիլիսիի ավիացիոն դպրոցում, իսկ հետո՝ Բաքվի հետևակային ռազմական ուսումնարանում, ստացել է լեյտենանտի կոչում և ուղարկվել ռազմաճակատ: Նա ջոկի, դասակի և ա-

պահեր, երբ չէս ուզում հավատալ, թե Մեծ հաղթանակից հետո անցել է երեք տասնամյակ մի ամբողջ սերնդի կյանք: Թվում է, թե դեռ երեկ էին անասելի դժվարություններով, կորուստներով, բայց և ապշեցուցիչ հերոսականությամբ այն օրերը: Ըստ երևույթին, պատճառն այն է, որ անցած տարիներին պատերազմն ասեք միշտ քեզ հետ է եղել, քո էության մեջ, քո գործերում և մտորումներում:

Վերհիշելով այն չորս կրակոտ տարիները՝ իմ միտքն ամենից ավելի կանգ է առնում երկու ծայրաթևերի վրա՝ սկիզբն ու վերջը: Ես պատկանում եմ այն սերնդին, որը միջնակարգ դպրոցից հետո միանգամից մտավ պատերազմի փորձությունների մեջ: Հիշում եմ, մեր ավարտական երեկոն տեղի էր ունենում 1941 թ. հունիսի 21-ին, այն ժամանակ, երբ թշնամու ինքնաթիռներն արդեն օդ էին բարձրանում իրենց մահացու բեռը հանգիստ քնած քաղաքացիների վրա թափելու համար: Դժբախտ զուգադիպություն՝: Բայց ես ուզում եմ հիշել ռուս բանաստեղծի տողերը. «Երանի՛ նրան, ով այցելում է այս աշխարհը նրա ճակատագրական բուպեներին»: Այո՛, իմ սերնդին վիճակվեց լինել մարդկության պատմության մեջ մեծագույն պատերազմի ամենաերիտասարդ մասնակիցների թվում, ժամանակից շուտ հասունանալ, ծանր փորձությունների մեջ ճանաչել ու տարբերել իրական հերոսությունը և բարոյական արժեքները՝ փոքրոգության կամ ցուցադրական հայրենասիրության դրսևորումներից... 1945 թ. մայիսի 9-ը ես դիմավորեցի զինվորական հոսպիտալում: Դժվար էր բնութագրել այն տրամադրությունը, որ այն ժամանակ տիրել էր մեզ՝ պատերազմի մասնակիցներին, թիկունքում մնացած կանանց ու տղամարդկանց: Հաղթանակի մեջ անսպասելի և զարմանալի ոչինչ չկար. այդ օրվան մենք ամբողջ հոգով հավատում էինք. հավատում էինք նույնիսկ պատերազմի ամենադժվարին պահերին: Վաղուց սպասված հրճվանքն ու հպարտությունը միախառնվում էին ծանր կորուստների թախ-

կանանետային մարտկոցի հրամանատարի պաշտոնով եղել է մի քանի՝ նախ Հյուսիսային Կովկասի, Բրյանսկի, ապա Երկրորդ բելառուսական և Մերձբալթյան ռազմաճակատներում: Մասնակցել է Լիտվայի ազատագրման և Արևելյան Պրուսիայի գրավման համար մղվող մարտերին: 1944 թ. հոկտեմբերին 157-րդ ականանետային գնդի կազմում է. Ջրբաշյանը անցել է պետական սահմանը և կատաղի մարտերից մեկում ծանր վիրավորվել: Հենց այդ ժամանակ մարտական խնդիրները խիզախորեն կատարելու համար շատերի հետ պարզևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով: ԵՊՀ բանասիրության ֆակուլտետը նա ավարտել է 1950 թ. և ընդունվել ասպիրանտուրա: 1954 թ. պաշտպանել է թեկնածուական, 1965 թ.՝ դոկտորական ատենախոսություններ, իսկ 1967 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1974 թ. նա ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1982 թ.՝ ակադեմիկոս: Մանրամասն տե՛ս **Ենգոյան Փ., Մինասյան Է.**, Երևանի պետական համալսարանն ու համալսարանականները Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.), Երևան, 2019, էջ 519-520, Կենսագրական հանրագիտարան, խմբ. Հ. Միմոնյան, Գ. Գևորգյան, Հ. Գասպարյան, Հ. Միրզոյան և այլք, Երևան, 2019, էջ 592-593:

¹ Այս տողերը Ֆյոդոր Իվանովիչ Տյուտչևի (1803-1873) «Յիցերոն» բանաստեղծությունից են, որը գրվել է 1836 թ.:

ծի հետ: Բայց ամենից ավելի մարդկանց կլանել էր խաղաղ կյանքի ու աշխատանքի իրականացող երազանքը, որը և՛ դյուրիչ էր, և՛ անսովոր, անհավատալի...

Ես պատկանում եմ այն սերնդին, որ առաջին անգամ համալսարան մտավ Հաղթանակի տարին՝ 1945 թ. աշնանը: Գրեթե բոլոր առաջին կուրսի տղաները նախկին ռազմիկներ էին, անցած բազում փորձությունների միջով: Այժմ մենք լեցուն էինք ուսման անսահման ծարավով, որ մեր հոգում սրել ու խորացրել էր պատերազմի դաժան դպրոցը:

Երեսուն տարի է անցել այդ օրերից, բայց ամեն ինչ թվում է այնքան մոտ, հարագատ, անմոռանալի...»¹:

* * *

Համլետ Սահակյանը² 89-րդ Թամանյան դիվիզիայի 526-րդ գնդի հրետանային մարտկոցի հրամանատարն էր: Սևաստոպոլի ազատագրության մարտերում նա խիզախության համար պարգևատրվել է «Փառքի երրորդ» աստիճանի շքանշանով, այնուհետև նշանակվել կապի և հետախուզության հրամանատար: 1975 թ. «Երևանի համալսարան» թերթի 18-րդ համարում հրատարակվել են Սահակյանի ծառայակից Ա. Գրիգորյանի հուշերը նրա մասին³:

Ա. Գրիգորյանը հիշում է լեհական Ռուսկի Բրուտ բնակավայրի մոտ տեղի ունեցած մարտերում Սահակյանի ռազմական գործունեության մասին: «Ընթանում էին ծանր մարտեր: Թշնամու շրջափակված խմբավորումը ընտրված խմբով փորձում էր դուրս գալ կամրջի մոտ և դուրս պրծնել շրջափակումից: Ավագ լեյտենանտ Սարկիսովի ականանետային մարտկոցը հանձնարարություն ստացավ ամրապնդել կամրջի շրջանում գտնվող մարտական դիրքերը և ուժեղ կրակով վերացնել հակառակորդի ռազմական մեքենաները: Կապի և հետախուզության ջոկատի հրամանատար ավագ սերժանտ Համլետ Սահակյանը՝ անցնելով թշնամու տեղակայման հատված ուսումնասիրեց և տեղորոշեց գերմանացիների տեղադրությունը: Բարձրա-

¹ Մեր սերնդի ուղին // «Երևանի համալսարան», 10.V.1975:

² Հ. Սահակյանը ծնվել է 1918 թ. Դիլիջանում: 1938 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և մեկ տարի անց զորակոչվել Կարմիր բանակ, մինչև Հայրենական մեծ պատերազմի սկսվելը ծառայել տարբեր զորամասերում: Կերչի ազատագրական մարտերի ժամանակ վիրավորվել է և դեռ լրիվ չապաքինված՝ դաշտային հոսպիտալից վերադարձել զորամաս: Այնուհետև մասնակցել է Սիմֆերոպոլի, Սևաստոպոլի, Վարշավայի ազատագրմանը և Բեռլինի գրավմանը: 1945 թ. ամռանը Սահակյանը զորացրվել է, վերադարձել Երևան և ընդունվել ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: 1950 թ. այն ավարտել է և աշխատանքի անցել Դիլիջանի կուսշրջկոմում: 1962 թ. տեղափոխվել է ԵՊՀ, պաշտպանել թեկնածուական ատենախոսություն, ստացել դոցենտի կոչում և աշխատել դիալեկտիկական մատերիալիզմի և տրամաբանության ամբիոնում: Վախճանվել է 2001 թ.: Տե՛ս **Ենգոյան Փ., Մինասյան Է.**, նշվ. աշխ., էջ 520-521:

³ Бойцы вспоминают минувшие дни // «Երևանի համալսարան», 10.V.1975:

ցած քամին, սակայն, խանգարում էր խիզախ հերոսի աշխատանքին: Սակայն նա կարողացավ հաղթահարել դժվարությունները և կապ հաստատելով մարտկոցի հետ՝ հստակ տեղեկություններ հաղորդեց թշնամու տեղադրության վերաբերյալ:

Մարտերը շարունակվեցին հունվարի 18-ից 21-ը: Այդ օրերի ընթացքում Սահակյանը գերազանց իրականացրեց հրամանատարության բոլոր հանձնարարությունները: Հետախույզի տրամադրած տեղեկությունների շնորհիվ խորհրդային հրետանավորները արագ վերացրեցին թշնամու կենդանի ուժը և տեխնիկան: Վերջին օրը մարտկոցը շարքից դուրս հանեց թշնամու մեծ թվով մեքենաներ, 25 հրանոթ, հակառակորդի զինվորներին: Թշնամին ջախջախվեց: Մարտերում հերոսության և խիզախության համար Սահակյանը պարգևատրվեց Հայրենական պատերազմի շքանշանով: Սահակյանը Թամանյան դիվիզիայի հետ միասին անցավ ամբողջ ճանապարհը և հասավ մինչև Բեռլին: Սահակյանը, վիրավորվելով շարքից դուրս եկավ, միայն Գերմանիայի անձնատվությունից երեք ժամ առաջ: Այժմ Համլետ Համայակի Սահակյանը համալսարանի լավագույն դասախոսներից է»:

* * *

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լիպարիտ Գյուլբուդադյանը¹ իր հուշերում անդրադառնում է ոչ միայն իր, այլև եղբոր՝ Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սիրաք Գյուլբուդադյանի² ռազմաճակատում անցկացրած օրերին: Առաջին խոշոր մարտը, որին մասնակցել է մայրը Լ. Գյուլբուդադյանը՝ որպես դիվիզիոնի հրամանատար, Միլիտարյուի տակ մղել է 19-րդ տանկային կորպուսը, որի ժամանակ թշնամին գլխովին ջախջախվել է, իսկ կորպուսը Ղրիմի գլխավոր մատույցների ու Պերեկոպի ամրությունների վրայով հասել է մինչև Արմյանսկ: Լ. Գյուլբուդադյանի հրետանային դիվիզիոնը այդ մարտում թշնամու կողմից շրջապատման մեջ գտնվելիս խուճապի չի մատնվել և կռվել է այնքան, մինչև օգնության են հա-

¹ Լ. Գյուլբուդադյանը ծնվել է 1912 թ. Սուրմալուի նահանգի Կողբ գյուղում: 1934-1939 թթ. սովորել է ԵՊՀ քիմիական ֆակուլտետում, այնուհետև ընդունվել ասպիրանտուրա: 1939 թ. զորակոչվել է Կարմիր բանակ և ծառայել մինչև 1946 թ.: 1946-2003 թթ. նա աշխատել է ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնում: 1973 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 1974 թ. ստացել պրոֆեսորի կոչում: Վախճանվել է 2003 թ. մայիսի 15-ին:

² Ս. Գյուլբուդադյանը ծնվել է 1915 թ. Սուրմալուի գավառի Կողբ գյուղում: 1934 թ. ավարտել է Հոկտեմբերյանի (Արմավիր) շրջանի Արմավիր գյուղի մանկավարժական տեխնիկումը և մինչև 1938 թ. աշխատել, ապա ընդունվել ԵՊՀ բանասիրական ֆակուլտետ: 1941 թ. հուլիսին զորակոչվել է Կարմիր բանակ, ավարտել Սուխումիի հրետանային ուսումնարանը, ստացել կրտսեր լեյտենանտի կոչում և նշանակվել ծառայության դասակի հրամանատար: Պատերազմի ավարտից հետո Ս. Գյուլբուդադյանը զորացրվել է և շարունակել ուսանել ԵՊՀ բանասիրական ֆակուլտետում: 1953 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1974 թ.՝ դոկտորական ատենախոսություններ: 1978 թ. ստացել է պրոֆեսորի կոչում: 1956 թվականից աշխատել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետում: Վախճանվել է 1997 թ. հոկտեմբերի 17-ին:

սել ռազմաճակատի մյուս զորամասերը: Թշնամու դեմ տեղի ունեցած ուժերի անհավասար մարտում հաղթանակ տանելուց հետո Լ. Գյուլբուղադյանի դիվիզիոնը սրընթաց երթով Սիվալի վրայով անցել է Սիմֆերոպոլ՝ մասնակցելով Սևաստոպոլի համար մղվող մարտերին¹:

«Հիշում եմ, Ղրիմի ազատագրումից հետո 19-րդ Պերեկոպյան կարմրադրոշ տանկային կորպուսը, որի կազմի մեջ էր մտնում նաև մեր 179-րդ ականանետային գունդը, շտապ կարգով ուղարկեցին Տուլա, մարտական ուժերը վերականգնելու և լրացվելու: Շատ արագ ավարտվեցին այդ գործողությունները և կորպուսը մեկնեց Մերձբալթյան ճակատ՝ Հ. Բաղրամյանի ղեկավարած ռազմաճակատը: Այստեղ մեզ սպասում էր մի խիզախ գործողություն: Բանն այն է, որ ֆաշիստական զորքերը, նահանջելով Լենինգրադից և Տալինից, նորից վերցրել էին Ռիգան: Ռիգայից հարավ-արևելք մեր դիվիզիաներից մեկը շրջափակման մեջ էր ընկել: Անհրաժեշտ էր նրան դուրս բերել շրջապատումից: Մեր կորպուսի առջև այդ պատվավոր խնդիրը դրվեց: Մերձբալթիկայում մեր առաջին գործողությունը եղավ բիրժայան օպերացիան: Մենք ճեղքեցինք գերմանացիների ռազմաճակատը, խորացանք մոտ 10 կմ և թեքվելով 90 աստիճան, շարժվեցինք ռազմաճակատին զուգահեռ՝ ոչնչացնելով թշնամու բոլոր կրակակետերը, և օրվա վերջում մենք միացանք շրջապատված մեր զորքերին: Պետք էր տեսնել, թե դա ինչպես մեծ ցնծություն առաջացրեց:

Հիշում եմ, մի անգամ մարշալ Հ. Բաղրամյանը մեզ մոտ՝ համալսարանում հյուր էր: Երբ ես պատմեցի, թե ինչպես նա «նեղն էր ընկել» և մենք նրան նեղ տեղից դուրս բերեցինք՝ նա ծիծաղելով ելավ տեղից, մոտեցավ ինձ, և մենք գրկախառնվեցինք: Այդ դեպքը ևս չեմ մոռանում:

Նրա ռազմաճակատում մենք շատ խիզախություններ կատարեցինք: Ես այդ ժամանակ դիվիզիոնի հրամանատար էի, հիշում եմ նաև, թե ինչ խոշոր ճեղքում կատարվեց Շաուլյայից դեպի արևմուտք և ստեղծվեց այսպես կոչված Կուռլանդյան խմբավորումը:

Այդ խոշոր գործողության շարունակությունը եղավ այն, որ մեր զորքերը բաժանվեցին երկու մասի: Մի մասը շրջապատեց մնացած գերմանացիներին, իսկ մյուս մասը՝ ֆաշիստական զորքերին հետապնդեց մինչև Տիլզիտ-Քյոնիքսբերգ, որը ավարտվեց Քյոնիքսբերգի հետագա գրավումով: Դա մարշալի լավագույն գործողություններից մեկն էր: Մենք մնացինք շրջապատման մեջ գտնվող խմբավորման դեմ հանդիման: Այստեղ շատ դժվարին մարտեր էին տեղի ունենում: Թշնամին ամեն կերպ աշխատում էր վանդակից դուրս պրծնել: Մենք շատ դժվարին մարտեր մղեցինք թշնամուն զսպանակների մեջ պահելու համար: Հիշում եմ երբեմն օրվա ընթացքում ես դիվիզիոնի մարտակարգը մի քանի անգամ տեղից-տեղ էի փոխում, գերմա-

¹ Տե՛ս Ենգոյան Փ., Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 260:

նացիներին ցույց տալու համար, որ նրանց դեմ մեծ ուժեր են կանգնած:

Մերձբալթիկայի տարածքը անտառոտ էր և տեսանելիությունը շատ վատ: Այդ պայմաններում դժվար էր մարտը վարել: Միայն 120 մմ ականանետերը հարմար կրակային միջոց էին:

Մ. Գ. Մահակյանի «Սովետական Մերձբալթիկայի համար մղված մարտերում» (Երևան, 1981 թ.) գրքի 143-րդ էջում գրված է իմ մի դրվագի մասին. «Մինիստրության արխիվային փաստաթղթերից մեկում գրված է. «Կապիտան Գյուլբուդադյանը աշխատելով 179-րդ ականանետային գնդի շտաբի պետ, Տրիշկիայի շրջանում գերմանացիների պաշտպանությունը ճեղքելու 19-րդ տանկային կորպուսի արշավում և Երկուգեմեի համար մղված մարտերում իրեն դրսևորեց անձնական խիզախություն և արիություն ունեցող, մարտը հմտորեն վարելու կազմակերպիչ: 1944 թ. հոկտեմբերի 5-10-ը կապիտան Գյուլբուդադյանը հմտորեն կազմակերպեց գնդի համագործակցությունն աջակցող տանկային բրիգադի հետ, որի շնորհիվ գունդը գերազանց կատարեց իր մարտական խնդիրը... Վեցմուսթայի շրջանում 202-րդ տանկային բրիգադի աջ թևի վրա թշնամին ձեռնարկեց հակազրոհ: Կովի լարված պահին Գյուլբուդադյանը իր վրա է վերցնում երկու ականանետային դիվիզիոնների ղեկավարությունը և զանգվածային կրակ տեղում հակառակորդի մարտաշարերի վրա: Կապիտանը այդ գործողությունների համար պարգևատրվում է «Կարմիր դրոշի» շքանշանով»:

Եղբայրս՝ Սիրակ Գյուլբուդադյանը, նույնպես պատերազմի մասնակից է: Բայց նրանց գունդը Հյուսիսային Կովկասի համար մղված մարտերում անհաջողության մատնվեց և գերվեց թշնամու կողմից: 1944 թ. փետրվարին նրան հաջողվում է փախուստ կատարել և միանալ հարավսլավական, ապա և ալբանական պարտիզանական ջոկատներին: Մասնակցել է Ալբանիայի ազատագրմանը: Տիրանայում տեղի ունեցած շքերթի ժամանակ նա ստացել է պարտիզանի տոմս: 1945 թ. III Ուկրաինական ռազմաճակատում մասնակցել է Ավստրիայի և Հունգարիայի ազատագրմանը: 1945 թ. մարտին Բալատոն լճի շրջանում տեղի ունեցած մարտերից մեկում նա վիրավորվել է և ապաքինվելուց հետո նորից վերադարձել ռազմաճակատ: Իմ ուրախությանը չափ չկար, երբ նրանից ստացա առաջին նամակը: Այդ նամակով նա ինձ հայտնում էր, որ ինքը արդեն կռվում է թշնամու դեմ:

Պատերազմը հաղթանակով ավարտեցինք, վերադարձանք մեր սիրած խաղաղ կյանքին, զբաղվեցինք մեր նվիրական գործով: Մեր անխոնջ աշխատանքով, սիրած գործին անմնացորդ նվիրումով մենք որոշ հաջողության ենք հասել, թե՛ աշխատանքում և թե՛ անձնական կյանքում: Այժմ մեր ամենամեծ ցանկությունն է խաղաղությունը: Մենք գիտենք, թե ինչ բան է պատերազմը և ոչ մի սերնդի համար չենք ցանկանա, որ այն երբևէ կրկնվի»¹:

¹ Ռազմաճակատային հուշեր // «Երևանի համալսարան», 9.V.1985:

* * *

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գարսևան Շառոյանը¹ ևս իր ներդրումն է ունեցել Հայրենական մեծ պատերազմում և մասնակցել 409-րդ հայկական հրաձգային դիվիզիայի մղած մարտերին: Իր հուշերում նա ոչ միայն անդրադարձել է իր մարտական ուղուն, այլև հարստացրել այդ հերոսական դիվիզիայի դրվագները:

«Երբ պատերազմը սկսվեց ես 35 տարեկան էի, արդեն հասցրել էի ավարտել համալսարանի պատմության ֆակուլտետը և ապա ընդունվել ասպիրանտուրա, իսկ 1934 թ. մինչև Մեծ Հայրենականի սկիզբը դասախոսել եմ ՍՍՀՄ պատմության ամբիոնում:

1941 թ. օգոստոսին գորակոչվեցի սովետական բանակ և ծառայության մտա 409-րդ Հայկական հրաձգային դիվիզիայում: Սկզբնական շրջանում ինձ վստահեցին ականանետային մարտկոցի հրամանատարի պաշտոնը, իսկ այնուհետև աշխատեցի դիվիզիայի թերթում: 1942 թ. մասնակցել եմ Մոզդոկի տակ տեղի ունեցող դաժան մարտերին, հետո տեղափոխվեցի Հարավ-Արևմտյան և Երրորդ Ուկրաինական ռազմաճակատները:

1944-1945 թթ. մեր ողջ սովետական բանակի սպաների և զինվորների համար դժվարին տարիներ էին: Մոտենում էր հաղթանակը, այնքան սպասված և այնքան ցանկալի: Շարունակում էինք կենաց ու մահու պայքար մղել, իրար հետևից ազատագրում էինք քաղաքներ ու գյուղեր, բնակիչները մեզ դիմավորում էին արցունքներն աչքերին, իրենց ազատարարների ոտքերի առջև փունջ-փունջ ծաղիկներ էին նետում: Մասնակցել եմ Ռումինիայի, Բուլղարիայի, Հարավսլավիայի գրավմանը: Մենք հատկապես ահեղ դիմադրության հանդիպեցինք Բելգրադ և Բուդապեշտ քաղաքները ազատագրելիս: Բայց մեր զինվորները անհողողող էին և հաղթանակի վճռականությամբ լի:

Եվ հաղթեցինք...»²

* * *

Լևոն Բաբայանը³ եղել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ և լինելով 89-րդ Թամանյան

¹ Գ. Շառոյանը ծնվել է 1906 թ. Բայազետ քաղաքում (Կամո): Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո տեղափոխվել է Երևան և ընդունվել ԵՊՀ պատմության ֆակուլտետ: 1934 թվականից անցել է դասախոսական աշխատանքի ԽՍՀՄ պատմության ամբիոնում: 1941 թ. օգոստոսին գորակոչվել է Կարմիր բանակ: 1967 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել պատմական գիտությունների դոկտորի աստիճան, իսկ 1969 թ.՝ պրոֆեսորի կոչում: 1968-1970 թթ. եղել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, իսկ 1970-1976 թթ.՝ ԽՍՀՄ պատմության ամբիոնի վարիչ: 1976-1986 թթ. աշխատել է ԽՍՀՄ պատմության ամբիոնում որպես պրոֆեսոր, իսկ 1986 թ. անցել է վաստակած հանգստի: Վախճանվել է 2007 թ. օգոստոսի 16-ին: Տե՛ս **Ենգոյան Փ., Մինասյան Է.**, նշվ. աշխ., էջ 345-346:

² Ահեղ օրերի արձագանքը // «Երևանի համալսարան», 9.V.1985:

³ Լ. Բաբայանը ծնվել է 1923 թ. Բաթումում: 1941 թ. ավարտել է տեղի ռուսական միջնակարգ դպրոցը և գորակոչվել բանակ: Պատերազմից հետո նա զորացրվել է, մի քանի տարի

դիվիզիայի մարտիկ՝ կարևոր տեղեկություններ է հաղորդել նրա մարտական ուղու և սխրագործությունների վերաբերյալ:

«1942 թ. մեկնել եմ ռազմաճակատ՝ 89-րդ հայկական Թամանյան դիվիզիայի շարքերում: Մարտական մկրտությունը ստացել եմ Գռոզնու մոտակայքում մղվող մարտերում: Մասնակցել եմ Նովոռոսիյսկ, Կերչ, Սևաստոպոլ քաղաքների համար մղվող մարտերին: Հանդիպելով թշնամու դաժան դիմադրությանը մեր հրետանային դիվիզիոնը մեծ օգնություն ցույց տվեց հրաձգային ստորաբաժանումներին՝ թուլացնելով և ջլատելով թշնամու ուժերը:

Իմ հիշողության մեջ միշտ վառ է ընկերոջս՝ գնդացրորդ Ռուբիկ Ղազարյանի սխրանքը: Գտնվելով Ֆրանկֆուրտի-Օդերի ափի պլացդարմում՝ հայ քաջորդին ընկավ շրջապատման մեջ և անհավասար մարտում զոհվեց: Հետագայում, երբ ազատագրեցինք այդ տերիտորիան, գտանք մեր ընկերոջ անշունչ մարմինը, որի վրա 70 վերք կար:

Հիշարժան են նաև Բեռլինի համար մղվող հերոսական մարտերը: Հումբոլտ-Հայն բունկերի մերձակայքում մենք հանդիպեցինք ահեղ դիմադրության: Բայց ի վերջո բունկերի գարնիզոնը չդիմացավ մեր հրետանու կրակին և մայիսի 1-ին կապիտալուացիայի ենթարկվեց:

Հաղթանակի օրը մոտ էր...»¹:

* * *

Ռեմ Կարապետյանը² Նովոռոսիյսկի, ինչպես նաև մի շարք այլ գործողությունների մասնակից է:

«Բանակ մեկնել եմ կամավոր, 17 տարեկանում: Ավարտել եմ Ֆրունզեի ռազմական ուսումնարանը, ստացել եմ լեյտենանտի կոչում և ուղարկվել Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Որպես դասակի հրամանատար ծառայել եմ 18-րդ դեսանտային բանակում: 8-րդ գվարդիական բրիգադում

աշխատել այլ կազմակերպություններում, հետո՝ 1956 թ. տեղափոխվել համալսարան: Պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, ստացել դոցենտի կոչում և աշխատել ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնում: Վախճանվել է 2018 թ. դեկտեմբերին: Տե՛ս **Ենգոյան Փ., Մինասյան Է.**, նշվ. աշխ., էջ 408-409:

¹ Ահեղ օրերի արձագանքը, էջ 7:

² Ռ. Կարապետյանը ծնվել է 1924 թ. Երևանում: 1941 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը և մեկնել Լիտվա: Նույն թվականի դեկտեմբերին կամովին մեկնել է Կարմիր բանակ և մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: Ավարտել է Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ուսումնարանը, ստացել լեյտենանտի կոչում և ուղարկվել Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Դասակի հրամանատարի պաշտոնով ծառայել է 18-րդ դեսանտային բանակում: 1943 թ. նա 46-րդ գվարդիական դիվիզիայի հետ եղել է Կալինինի ռազմաճակատում: Կարապետյանը 1946 թ. զորացրվել է և ընդունվել ԵՊՀ կենսաբանական ֆակուլտետ, իսկ 1951 թ. ասպիրանտուրա, որն ավարտելուց հետո 1954 թ. անցել է դասախոսական աշխատանքի ԵՊՀ կենսաբանական ֆակուլտետի ֆիզիոլոգիայի ամբիոնում որպես ավագ դասախոս: Տե՛ս **Ենգոյան Փ., Մինասյան Է.**, նշվ. աշխ., էջ 449-450:

մասնակցել եմ Նովոռոսիյսկի պաշտպանական մարտերին: 1944 թ. արդեն առաջին Մերձբալթյան ռազմաճակատում էի: Մասնակցել եմ Վելիկի Լուկի, Օստրովի, Ռիգայի, Տարտուի, Վարշավայի ազատագրմանը: Իմ հիշողության մեջ անմոռաց է Բեռլինի կապիտուլյացիան: Այն սովետական զինվորներիս համար պատերազմի հաղթական ավարտ էր նշանակում, մեր զորամասը 146-րդ դիվիզիայի շարքերում մասնակցեց Բեռլինի գրավմանը:

Տարտուի գրավման ժամանակ մեր դիվիզիայում ստեղծվեց հատուկ ջոկատ, որի առջև զինվորական առաջադրանք դրվեց. կարճ ժամանակում ճեղքել հակառակորդի դիրքերը և փրկել Տարտուի նշանավոր համալսարանը, որը գերմանացիները նախապատրաստվել էին պայթեցնել: Մեծ կորուստների գնով մենք կարողացանք փրկել պատմամշակութային և գիտական այդ հանրաժանոթ օջախը»¹:

* * *

Հովհաննես Մովսիսյանը² անցել է փառավոր մարտական ուղի հայկական 76-րդ լեռնահրաձգային՝ առաջին հայկական ազգային դիվիզիայի կազմում: Նրա մասին Հրայրա Քոչարը գրել է. «Նա իր մարտական սխրանքներով արժանավոր տեղ գրավեց ստալինգրադյան հերոս պաշտպանների շարքերում: Ապրեց նա մեր անհաջողությունների ողջ ծանրությունը: Տեսավ ամեն ինչ: Մաքառեց հուսահատության դեմ և հասավ Ստալինգրադի համար մղվող ամենավճռական մարտերին...»³:

Հ. Մովսիսյանը գրել է. «Ինձ բախտ է վիճակվել կովելու հայկական լեռնահրաձգային, Կ. Ե. Վորոշիլովի անվան Կարմրադրոշ դիվիզիայի ինտերնացիոնալ կազմում, որը մարտական սխրանքերի համար 1942 թ. նոյեմբերին Գերագույն գլխավոր հրամանատարության կողմից արժանացավ զվարդիականի կոչման և դարձավ 51-րդ զվարդիական դիվիզիա:

76-րդ հրաձգային դիվիզիայի հետ եղել եմ Հարավ-Արևմտյան, Դոնի, Ստալինինգրադյան և Վորոնեժի ռազմաճակատներում: 1942 թ. հունիսի 24-ին Բելյայա գյուղի մոտ վիրավորվել եմ: Այնուհետև ապաքինվել և վերադարձել ռազմաճակատ: 1944 թ. օգոստոսին ինձ ուղարկեցին Երկրորդ Ուկրաինական ռազմաճակատ՝ նշանակելով հակատանկային կործանիչ հրետանային մարտկոցի հրամանատար: Մասնակցել եմ նաև Ռումինիայի, Հուն-

¹ Ահեղ օրերի արձագանքը, էջ 7:

² Հ. Մովսեսյանը ծնվել է 1914 թ. Բաքվում: 1938 թ. կամովին մեկնել է Կարմիր բանակ, 1939 թ. մասնակցել Արևմտյան Բելառուսիայի ազատագրմանը, իսկ 1939-1940 թթ.՝ խորհրդաֆիննական պատերազմին: 1940 թ. դեկտեմբերին զորացրվել է և նորից անցել ուսուցչական աշխատանքի հայրենի Շաղաթ գյուղում: Սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, և 1941 թ. հունիսի 22-ին նա կրկին զորակոչվել է Կարմիր բանակ: Հ. Մովսիսյանը 1960 թվականից աշխատել է ԵՊՀ-ում որպես կադրերի բաժնի վարիչ: Վախճանվել է 1995 թ.: Տե՛ս **Ենգոյան Փ., Մինայան Է.**, նշվ. աշխ., էջ 497-498:

³ «Խորհրդային Հայաստան», 1.V.1943:

գարիայի, Չեխոսլովակիայի տերիտորիաների ազատագրմանը: Բայց ինչպես ամեն մի ճակատային, այնպես էլ իմ հիշողության մեջ պատերազմը մի այնպիսի անջնջելի հետք է թողել, որ այն շարունակում է զգացնել տալ իր ներկայությունը ամեն օր, ամեն ժամ: Ինձ համար հատկապես անմոռաց է Ստալինգրադյան էպոպեան: Եվ ինչպե՞ս կարելի է մոռանալ այն օրերը, երբ վայրկյանն ու հավիտենությունն իրար էին միանում, երբ բռպեն օր էր թվում, օրը մի դար, երբ ամեն մեկն իր հախուռն մոլուցքով ապագայի բախտն էր որոշում:

Ստալինգրադյան ճակատամարտի օրերին յուրաքանչյուր սովետական մարտիկ արդեն գիտեր իր սրտի խորքից ստել ֆաշիզմը և դրա համար էլ նա բռնակալի դեմ կռվի բռնկվեց հոգու ամբողջ ուժով, նրան ոչնչացնելու ու բնաջնջելու կամքով:

Այդպես էլ եղավ...»¹:

**Айк Мхоян – Великая Отечественная война в воспоминаниях сотрудников
Ереванского государственного университета**

В статье представлены воспоминания сотрудников Ереванского государственного университета, участников Великой Отечественной войны 1941-1945 гг.: Эдуарда Джрбашяна, Гамлета Саакяна, Липарита Гюлбудагяна, Гарсевана Шарояна, Левона Бабаляна, Рема Карапетяна, Ованнеса Мовсисяна. Эти воспоминания считаются важным историческим первоисточником как для описания военных действий Великой Отечественной войны, так и для описания боевого пути национальных дивизий. В воспоминаниях содержатся сведения о 409-й, 76-й, 89-й дивизиях, а также данные о битвах под Берлином, Сталинградом, Варшавой и других битвах.

**Hayk Mkhoyan – The Patriotic War in the Memoirs of the Employees of
Yerevan State University**

The work presents the memoirs of the employees of Yerevan State University, who participated in Great Patriotic War (1941-1945). They are considered an important historical source both for the military operations of the Patriotic War and for the combat route of the national divisions. The memoirs contain information on the 409th, 76th and 89th divisions, as well as data on the battles of Berlin, Stalingrad, Warsaw and others. The article presents the memoirs of Eduard Jrbashyan, Hamlet Sahakyan, Liparit Gyulbudaghyan, Garsevan Sharoyan, Leon Babalyan, Rem Karapetyan, and Hovhannes Movsisyan.

Ներկայացվել է 25.04.2020

Գրախոսվել է 15.05.2020

Ընդունվել է տպագրության 30.06.2020

¹ Ահեղ օրերի արձագանքը:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԻՐԱՀԱՅ ՆԵՐՈՍՆԵՐԸ

Բանալի բառեր – Հայրենական մեծ պատերազմ, նացիստական Գերմանիա, Կարմիր բանակ, ռազմաճակատ, շարքայիններ, տարածք, ազգաբնակչություն, փոքրիկ հանրապետություն, հաղթանակ, քաջագուն հայորդիներ, խորհրդային Միության հերոս

Երբ 1941 թ. հունիսի 22-ին բռնկվեց Հայրենական մեծ պատերազմը, արյունահեղ ճակատամարտեր սկսեցին տեղի ունենալ Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի տարածքներում: Հայ ժողովուրդը թեն հեռու էր անմիջական վտանգից, այդուհանդերձ, պատերազմի պայմաններին համապատասխան, ամենասեղմ ժամկետներում մոբիլիզացրեց իր ուժերը, արդյունաբերությունը հարմարեցրեց ռազմական իրողությանը, հանգանակեց դրամական միջոցներ, պատրաստեց զինվորական հանդերձանք, պարեն, զենք ու զինամթերք (հրացաններ, ավտոմատներ, գնդացիրներ, ականանետներ, հրանոթներ, տանկեր և այլն), ձևավորեց նաև ազգային զինվորական միավորումներ (կազմավորվեց Հայկական ազգային վեց դիվիզիա) և այդ ամենը փոխանցեց ռազմաճակատին: Ինչ խոսք, այդ ժամանակ և դրանից առաջ ևս ԽՍՀՄ բանվորագյուղացիական Կարմիր բանակում ծառայում էին բազմաթիվ հայ շարքային մարտիկներ, սերժանտներ, կրտսեր ու ավագ սպաներ, զեներալներ:

1941 թ. Հայաստանից դուրս հայկական դիվիզիաներ կազմավորվեցին նաև Վրաստանում, որտեղ տեղակայված 28-րդ և 38-րդ պահեստային բրիգադները համալրված էին բազմաթիվ հայերով: Այդտեղ պատրաստվում էին երթային վաշտեր և ուղարկվում ռազմաճակատ¹: Հայերի քանակը զգալի էր նաև այդ տարածքում ստեղծված 47-րդ, 63-րդ, 242-րդ, 390-րդ դիվիզիաներում²: Վերջինս առաջինն ընդգրկվեց կերչյան մարտերում³: Չնայած թշնամու ակնհայտ գերազանցությանը՝ դիվիզիան հետ մղեց տանկային մի քանի գրոհ, բայց հետագա մարտերում ծանր կորուստներ կրեց և գրեթե ամբող-

¹ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VIII, Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի և հետպատերազմյան կոմունիստական շինարարության տարիներին 1941-1965, Երևան, 1970, էջ 56:

² Տե՛ս **Հարությունյան Կ.**, Ջավախքցիների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945), Երևան, 2014, էջ 20-25:

³ Այլ տվյալով՝ 390-րդ հրաձգային դիվիզիան կազմավորվել է 1942 թ. փետրվարին Կերչի թերակղզում:

ջովին ջախջախվեց: Անհավասար մարտում զոհվեց նաև դիվիզիայի հրամանատար, գնդապետ Միմոն Զաքյանը:

Սույն հոդվածում հայկական¹, ռուսական², վրացական³ և աբխազական⁴ համապատասխան գրականության և մամուլի հրապարակումների հիման վրա մեկտեղում, հատկապես հետխորհրդային ժամանակաշրջանի նորահայտ որոշ տվյալներով համալրում և շահագրգիռ անձանց ներկայացնում ենք Վրաստանում բնակված այն հայ քաջագունների՝ ԽՍՀՄ ազատության ու անկախության համար Մեծ հայրենականի տարիներին իրականացրած սիրանքները, որոնք ըստ արժանվույն գնահատվել են խորհրդային կառավարության կողմից և արժանացել Խորհրդային Միության հերոսի բարձր կոչման⁵:

Լշենք, որ բնակչության թվաքանակով և տարածքով ՀԽՍՀ-ը հզոր ու հսկայածավալ Խորհրդային Միության ամենափոքր հանրապետություններից էր (1940 թ. այդտեղ բնակվում էր ընդամենը 1 320 000 մարդ): Բայց Հայրենական մեծ պատերազմին մասնակցած 300 000 մարտիկներով, ԽՍՀՄ 106 հերոսներով, Փառքի երեք աստճանների 27 ասպետներով, ավելի քան 65 զեներալներով ու հինգ մարշալներով մեր հանրապետությունը երկրում զբաղեցնում էր առաջնակարգ տեղերից մեկը:

Զինվորական բարձրագույն կոչում ստացած 106 հայորդիներից 16-ը ծնվել են Վրաստանում՝ ներառյալ նրա վարչական միավոր կազմող Ջավախքը (Սամցխե-Ջավախեթի մարզ), Աբխազիայի Ինքնավար Հանրապետությունը⁶ և Հարավային Օսիայի ինքնավար մարզը: 16-ից չորսը Թբիլիսիից էին, չորսը՝ Աբխազիայից, երկուսը՝ Ջավախքից, այլը՝ Թեթրիձղարոնից, Կասպիից, Գորիից և Գագրայից:

Հերոսներից սանիտարական դասակի հրամանատար Սերգեյ Գրիգորյանը, գնդապետ Լևոն Դարբինյանը, գվարդիայի ավագ սերժանտ Ապավեն

¹ Հայագգ, էլեկտրոնային հանրագիտարան:

² Герои Советского Союза. Краткий биографический словарь в двух томах, Москва, 1987-1988 (т. 1, 1987), Герои СССР, Сайт: Герои страны, **Амирханян М. Д.**, Армяне – Герои Советского Союза, Ереван, 2005.

³ ქართული საბჭოთა ენციკლოპედია, თბილისი, 1975-1987 წწ., კარლო ცქიტიშვილი, ტრისტან ჩინჩილაკაშვილი, საბჭოთა კავშირის გმირები საქართველოდან, თბილისი, 1977, გრიგოლ ონანი, დიდ სამამულო ომის გმირები საქართველოდან, თბილისი, 1965.

⁴ **Абшилава А.**, Сыны Абхазии – Герои Советского Союза, Сухуми, 1961, *его же*: В боях за Родину, Сухуми, 1980.

⁵ Սովետական (Խորհրդային) Միության հերոսի կոչումը սահմանվել է ԽՍՀՄ Կենտրոնական գործադիր կոմիտեի (ԿԳԿ) 1934 թ. ապրիլի 16-ի որոշմամբ՝ որպես պատվավոր կոչում: Խորհրդային Միության հերոսին հանձնվում էին Լենինի շքանշան, «Ռսկե աստղ» մեդալ և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության շնորհագիր:

⁶ Աբխազիա, նախկինում՝ Աբխազիայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն, ապա՝ Աբխազական Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն (Վրացական ԽՍՀ կազմում): Այժմ՝ de facto անկախ հանրապետություն Սև ծովի արևելյան ծովափնյա հատվածում՝ Վրաստանից հյուսիս-արևմուտք:

Ռոստոմյանը, լեյտենանտ Սերգո Օգանովը, հաստոցավոր գնդացրի հաշվարկի հրամանատար Վաչագան Վանցյանը և կապիտան Հարություն Չաքրյանը Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացան հետմահու (շնորհագրերն ու շքանշանները հանդիսավոր պայմաններում հանձնվեցին նրանց ծնողներին կամ ընտանիքի անդամներին):

Միհրան Բոստանջյանը, Սուրեն Ասլամազաշվիլին, Աշոտ Ասրիյանը, Երվանդ Գալուստաշվիլին, Հարություն Մելեթյանը, Հարություն Շուշանյանը և Կարապետ Միմոնյանը գորացրվելուց հետո, չինայելով իրենց ուժերն ու մասնագիտական կարողությունները, առանձնակի հմտություն և վարպետություն ցուցաբերեցին նաև ժողովրդական տնտեսության վերականգնողական աշխատանքների գործառույթներում, իսկ գեներալ-լեյտենանտ Ստեփան Միկոյանը և գեներալ-մայոր Աշոտ Ղազարյանը ծառայության, ինչպես նաև հասարակական գործունեության հետ մեկտեղ միաժամանակ նվիրվեցին (առաջինը օդաչուի, երկրորդը՝ տանկիստի) իրենց կյանքի հարուստ ու բովանդակալից պատմության գրառմանը:

Այո՛, ծանրակշիռ է ԽՍՀՄ հայ հերոսների, հայ զորավարների, հայկական ազգային դիվիզիաների, հայ ռազմագերիներով և թշնամու գրաված տարածքների հայազգի բնակիչներով համալրված պարտիզանական ջոկատների, դիմադրական շարժումների ու ինտերնացիոնալիստական խմբերի¹ ներդրած ավանդը պատերազմի վճռական շրջադարձի, ապա և վերջնական հաղթանակի գործում, ինչպես նաև Ղրիմի, Մոսկվայի, Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ), Օդեսայի, Սևաստոպոլի, Բրեստի ամրոցի, Կովկասի պաշտպանությունում, Վոլգայի և Կուրսկի աղեղի ճակատամարտերում, ԽՍՀՄ եվրոպական մասի, Մերձբալթյան հանրապետությունների և Արևելյան Եվրոպայի մի շարք ժողովուրդների ազատագրման, ճապոնական միլիտարիստների դեմ մղված մարտերում: Հարկ է հիշատակել նաև Հայ առաքելական եկեղեցու՝ խորհրդային բանակին ցույց տված օգնությունը: Այս ամենի մասին գրվել են վեպեր, պատմվածքներ, բանաստեղծություններ, նկարահանվել են գեղարվեստական ու վավերագրական ֆիլմեր, կերտվել նկարչական կտավներ, ԽՍՀՄ հայ հերոսների անուններով կոչվել են դպրոցներ, փողոցներ, հիմնադրվել են նաև պատմության թանգարաններ և այլն:

Մխրանքների բնույթով ու բովանդակությամբ ևս անգնահատելի և աննախադեպ են ռազմադաշտերում անձնվիրաբար մարտնչած մեր քաջազունների մարտական գործողությունները: Այսպես տանկի ռադիստ Կարապետ Միմոնյանը Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացավ 1939 թ.

¹ Նրանք, ակտիվություն դրսևորելով, ոչնչացնում էին զինամթերքով և պարենով բեռնավորված գնացքներ, մարդատար ու բեռնատար ավտոմեքենաներ, զինապահեստներ, կամուրջներ և այլ օբյեկտներ:

դեկտեմբերի վերջերին՝ ֆինների անառիկ համարվող «Մաներհայմի գծի»¹ պաշտպանական ամրությունների ճեղքման ժամանակ ցուցաբերած խիզախության համար: Ավագ սերժանտ Ապավեն Ռոստոմյանը «հունանավետիսյանական» է: Այս հայորդին մարմնով ծածկեց թշնամու գնդացրի հրակնատը և անձնագոհությամբ ապահովեց ստորաբաժանման գրոհի հաջողությունը: Սանիտարական դասակի 20-ամյա հրամանատար Սերգեյ Գրիգորյանը ևս մարմնով ծածկեց գումարտակի հրամանատարին և սեփական կյանքի գնով փրկեց նրան: Հարություն Շուշանյանը Փառքի III, II և I աստիճանի շքանշանների ասպետ է՝ կոչումով, իրավունքով և արտոնությունով հավասարեցված Խորհրդային Միության հերոսի կոչման: Մեր մեկ այլ արիասիրտ մարտիկ Հարություն Մելեթյանը Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացած ամենաերիտասարդ² հայորդին է: Իրենց սխրանքների համար նրանք ընդգրվել են թե՛ ազգային, թե՛ Հայրենական մեծ պատերազմի և թե՛ տարբեր ժողովուրդների պատմական տարեգրություններում:

Նույն անձանց մասին տարբեր սկզբնաղբյուրների մասնակի տեղեկությունները, որոնք առնչվում են հերոսի կոչում ստանալու ժամանակացույցին, շքանշանների և մեդալների քանակին, ծննդավայրերին, զոհվելու կամ մահվան ամսաթվերին, երբեմն չեն համընկնում, ուստի հոդվածում նշվում են տարատեսակ տարբերակները: Դրանք կարելի է համադրել և ավելի ստույգ ներկայացնել հերոսների գործունեության ծավալը, չափն ու կշիռը:

Կենսագրականները ներկայացվում են այբբենական կարգով:

1. **ԱՍԼԱՄԱԶԱՇՎԻԼԻ** (Ասլամազյան) Սուրեն Արտեմի. – Ծնվել է 1914 թ. մարտի 4-ին Վրաստանի Կավթիսիսի գյուղում (այժմ՝ Կասպի մունիցիպալիտետ): Խորհրդային Միության հերոս (22 փետրվարի 1944), գվարդիայի սերժանտ: 1937-1939 թթ. ծառայել է Կարմիր բանակում, պատերազմն սկսվելուն պես կամավոր մեկնել ռազմաճակատ: Մասնակցել է Հարավային Օսիայի Օրջոնիկիձե (այժմ՝ Վլադիկավկազ) քաղաքի մերձակայքում ծավալված մարտերին, Հյուսիսային Կովկասի պաշտպանությանը, Ուկրաինայի, Մոլդովայի, Ռումինիայի, Հունգարիայի, Չեխոսլովակիայի ազատագրմանը, ճապոնական կվանտունյան բանակի ջախջախմանը: Եղել է կործանիչ դիվիզիոնի հակատանկային հրացանակիրների ջոկի հրամանատար: Հերոսի

¹ «Մաներհայմի գիծը» նախկին ֆիննական սահմանային ամրությունների համակարգն է Կարելյան պարանոցում: Այն այդպես է անվանվել ֆինն մարշալ Կարլ Գուստավ Մաներհայմի անունով:

² Ի դեպ՝ Անդրկովկասից ռազմաճակատ մեկնած (ընդ որում՝ կամավոր) ամենաերիտասարդ հայ զինվորը նույնպես թբիլիսցի է՝ Սերգո Միրզոյանը: Թեև Սերգոյի հերոսի կոչում չի շնորհվել, բայց բացառիկ հերոսական է նրա արարքը. 16-ամյա պատանին «գրոհել» է զինկոմիսարիատի վրա, համառորեն պնդել է, որ իրեն զինվորագրեն և ծնողներից թաքուն փախել է գործող բանակ: Բելառուսում, Ուկրաինայում, Արևելյան Պրուսիայում մարտական առաջադրանքները հաջող կատարելու և ցուցաբերած խիզախության համար նա արժանացել է շքանշանների:

կոչման արժանացել է 1943 թ. սեպտեմբերին Դնեպրի գետանցման ժամանակ ցուցաբերած խիզախության համար: Ջորացրվել է 1945 թ.: Ապրել է Թբիլիսիում, 1955-1969 թթ. աշխատել Կիրովի անվան հաստոցաշինական գործարանում: Վախճանվել է 1970 թ. նոյեմբերի 22-ին Թբիլիսիում:

2. **ԱՍՐՅԱՆ** Աշոտ Մինասի. – Ըստ հայկական սկզբնաղբյուրների՝ ծնվել է 1920 թ. մարտի 3-ին ՀԽՍՀ Ստեփանավանի շրջանի (այժմ՝ Լոռու մարզ) Վարդաբլուր գյուղում: Խորհրդային Միության հերոս (2 նոյեմբերի 1944), փոխգնդապետ: 1940 թվականից ծառայել է Կարմիր բանակում, 1943 թ. ավարտել տանկային դասընթացները, եղել տանկային դասակի հրամանատար: Կարելական Պետսամո (այժմ՝ Պեչենգա, Մուրմանսկի մարզում) քաղաքի ազատագրման ժամանակ հրամանատարության հատուկ առաջադրանքները հաջողությամբ կատարելու և ցուցաբերած անօրինակ արիության ու հերոսության համար տանկի հրամանատար Աշոտ Ասրյանին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահությունը 1944 թ, փետրվարի 11-ին շնորհել է Խորհրդային Միության հերոսի կոչում: Մասնակցել է Լեհաստանի ազատագրմանը, Բեռլինի ճակատամարտին:

Աշոտ Ասրյանը մարտերից մեկի ժամանակ ծանր վիրավորվել է, բուժվելուց հետո ծառայությունը շարունակել տանկային զորամասում: 1952 թ. ավարտել է Ուլյանովսկի գվարդիական տանկային ուսումնարանը, գնդապետի աստիճանով զորացրվել 1969 թ.: Բնակվել է Կիևում, որտեղ վախճանվել է 1992 թ. հոկտեմբերի 7-ին:

Ըստ վրացի հեղինակների՝ Աշոտ Ասրյանը ծնվել է Թիֆլիսում, բանվորի ընտանիքում: 1940 թ. սեպտեմբերի 9-ին Թբիլիսիի Կալինինի շրջանի զինկոմիսարիատը նրան զորակոչել է և ուղարկել Մերձբայթյան զինվորական օկրուգի 202-րդ հրաձգային դիվիզիա՝ որպես վարորդ: 1941 թ. հունիսի 22-ից մասնակցել է հյուսիսարևմտյան պաշտպանական մարտերին: 1942-1943 թթ. սովորել է Գորկի քաղաքի տանկային արագացված դասընթացներում: 1944 թ. հունիսից միջին տանկի հրամանատար Աշոտ Ասրիյանը հոկտեմբերի 14-ին Պետսամո քաղաքի ազատագրման մարտերում իր տանկի անձնակազմով ոչնչացրել է տաս ավտոմեքենա՝ հետևակով և ռազմամթերքով, հակատանկային մարտկոց, դզոտ, հինգ մոտոցիկլետ և շուրջ 100 զինվոր: Մարտի ժամանակ վիրավորվել են բոլորը, իսկ տանկն սկսել է բոցավառվել: Ասրիյանը մարել է կրակը, կապել ընկերների վերքերը, նորոգել մեքենան և առաջինը ներխուժել Պետսամո: Մարտերի ժամանակ ցուցաբերած անօրինակ սխրանքների համար նրան շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում:

3. **ԲՈՍՏԱՆՋՅԱՆ** Միհրան Միհրանի. – Ծնվել է 1913 թ. օգոստոսի 22-ին Սուխումի շրջանի (այժմ՝ Սուխումի մունիցիպալիտետ, Աբխազիա) Զեմո Էշերա (Վերին Էշերա) գյուղում: Խորհրդային Միության հերոս (22 փետրվարի 1944), լեյտենանտ: 1936 թ. ավարտել է Թիֆլիսի կրտսեր հրամանատարների կապի դպրոցը, մասնակցել Ստալինգրադի (այժմ՝ Վոլգոգրադ) ճակա-

տամարտին, Ուկրաինայի, Հունգարիայի, Ավստրիայի, Ռումինիայի ազատագրմանը: Եղել է վաշտի, ապա՝ գումարտակի քաղղեկ: Հատկապես աչքի է ընկել Դնեպրի գետանցման մարտերում:

Հայտնի է եղել որպես խիզախ հետախույզ: 1943 թ. մարտի 26-ին անձամբ ոչնչացրել է թշնամու տասը զինվոր: Նույն օրը հետախույզների խմբում գրոհել է կարևոր նշանակություն ունեցող թշնամու գրաված բարձունքը և նոնակներով շարքից հանել գնդացրային երկու կետ: Փոխարինելով զոհված հրաձիգին՝ հակատանկային արկով պայթեցրել է գերմանական գրահամեքենան: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 27-ին, Զապորոժիեի շրջանի Կաննսկոյե գյուղի մոտ մասնակցել է թշնամու երեք գրոհի հետմղմանը և իր զինվորներին անձամբ առաջնորդել սվինամարտի:

1945 թ.՝ զորացրվելուց հետո, ապրել է Գագրայում, վարել պատասխանատու պաշտոններ: 1958 թ. փետրվարի 14-ին Մ. Բոստանջյանը հանկարծամահ է եղել: Նրա անունով Գագրայում փողոց է կոչվել:

Վրացական սկզբնաղբյուրներում նա հայտնի է Բաստանջյան ազգանվամբ: Միջնակարգն ավարտելուց հետո աշխատել է գործարանում, 1935-1937 թթ. ծառայել Խորհրդային բանակում, ավարտել քաղկազմի նախապատրաստական դասընթացները: 1941 թ. վերջին կամավոր մեկնել է Կարմիր բանակ, 1943 թ. նոյեմբերի 26-ին Դնեպրի գետանցման ժամանակ ոչնչացրել է թշնամու առաջավոր պահակախմբին: Գտնվելով գումարտակի ձախ թևում՝ կազմակերպել է ստորաբաժանման պաշտպանությունը և հետմղել հակառակորդի երեք հակազոր, որի արդյունքում թշնամին մարտադաշտում թողել է հարյուրավոր զինվորներ ու սպաներ: Անձամբ ոչնչացրել է 47 զինվորի:

4. ԳԱՆՈՒՍՏԱՇՎԻԼԻ (Գալստյան) Սոկրատ Ալեքսեյի. – Ծնվել է 1920 թ. հոկտեմբերի 15-ին Վրաստանի Ուփլիսցիխե գյուղում: Խորհրդային Միության հերոս (3 հունիսի 1944), գվարդիայի շարքային, գնդացրորդ: Ավարտել է միջնակարգ դպրոցը: 1940 թ. օգոստոսի 15-ին զորակոչվել է Կարմիր բանակ, 1941 թ. օգոստոսից եղել է մարտադաշտերում, մասնակցել Հարավարևմտյան, 4-րդ, 3-րդ Ուկրաինական ռազմաճակատներին, Կովկասի պաշտպանությանը: Հերոսի կոչման արժանացել է Օդեսայի ազատագրման ժամանակ ցուցաբերած սխրանքի համար: Հետագա մարտերից մեկում նա ծանր վիրավորվել է, 1945 թ. ապրիլին զորացրվել և աշխատանքի է անցել Գորի քաղաքում, որտեղ և մահացել է 1981 թ. մարտի 29-ին:

Սոկրատ Գալուստաշվիլիի անունը հավերժացվել է Երևանում և Նիկոլանում հերոսներին նվիրված հուշարձան-կոթողների վրա:

Վրացական սկզբնաղբյուրները նրա մասին հաղորդում են հետևալը. Սոկրատ Ալեքսեյի Գալուստաշվիլին ծնվել է 1920 թ. հոկտեմբերի 15-ին Ուփլիսցիխե գյուղում (այժմ՝ Գորիի մունիցիպալիտետ), գյուղացու ընտանիքում, ազգությամբ վերացի է: Մի քանի սկզբնաղբյուրներում նշվում է, նրա իսկական ազգանունը Գալուստյան է, ազգությամբ հայ է: Մելիտոպոլի

ազատագրման մարտերում իրեն գերազանց դրսևորելու համար նա արժանացել է իր առաջին պարգևին՝ «Կարմիր աստղի» շքանշանին, աչքի է ընկել Դնեպրովսկի բնագծի անցման ժամանակ: Առաջինն է ներխուժել Կապերովկա բնակավայր և ակտիվորեն մասնակցել դրա ազատագրմանը: 1944 թ. մարտի 16-ին թշնամական թվաքանակով մինչև երկու գնդի հասնող հետևակային հակազորի ժամանակ գվարդիական գումարտակի գնդացրորդ Սոկրատ Գալուստաշվիլին անցել է ձախ թևը և դիմահար կրակի տակ պահել թշնամուն: Երբ վերջացել են փամփուշտները, ձեռնամարտի է բռնվել, տապալել ռումինացի ենթասպային, խլել ավտոմատը և գնդակահարել իրեն շրջապատող զինվորներին: Գերմանացիների չորրորդ հակազորի ժամանակ նա առաջինն է մարտի նետվել՝ իր հետ տանելով զինակիցներին: Գրաված տեղամասը հետևակայինները հաջողությամբ պաշտպանել են մինչև յուրայինների օգնության հասնելը: Մարտերում նա ընդհանուր առմամբ ոչնչացրել է թշնամու 100 զինվոր ու սպա: Այդ ամենի համար հրամանատարը՝ 8-րդ առանձին գնդացրահրետանային գումարտակի գվարդիայի մայոր Ս. Ա. Մարիչևը, նրան ներկայացրել է Խորհրդային Միության հերոսի կոչման:

5. **ԳԱՐԱՆՅԱՆ** Երվանդ Գևորգի. – Ծնվել է 1903 թ. դեկտեմբերի 20-ին Արևմտյան Հայաստանի Տրապիզոնի նահանգի Կուրշումլի գյուղում: Խորհրդային Միության հերոս (15 հունվարի 1944), գվարդիայի ավագ: 1935 թ. նրա ընտանիքը գաղթել է և հաստատվել Գագրայի շրջանում (Աբխազիա): Կարմիր բանակի շարքերում նա եղել է 1941 թվականից: Հայրենական մեծ պատերազմի ժամանակ մարտնչել է Ստալինգրադում, Կուրսկում, մասնակցել նաև Դոնի, Բրյանսկի, Կենտրոնական, Արևմտյան, Բելառուսական 1-ին ռազմաճակատներին: Երվանդ Գարանյանի մարտական հաշվարկը հատկապես աչքի է ընկել 1943 թ. սեպտեմբերին ուկրաինական Չերնիգով քաղաքի ազատագրման և Դնեպրի գետանցման ժամանակ, որի համար արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման:

1945 թ. զորացրվելուց հետո առժամանակ բնակվել է Կրասնոդարի երկրամասի Ադլերի շրջանում, որտեղ 1945-1951 թթ. վարել է Ադլերի գյուղխորհրդի նախագահի պաշտոնը: Այնուհետև, մինչև կյանքի վերջն ապրել է նույն շրջանի Վեսյոլոյե գյուղում: Մահացել 1995 թ. նոյեմբերի 24-ին, Մոսկով:

Ըստ վրացական սկզբնաղբյուրների՝ Երվանդ Գարանյանը ծնվել է 1903 թ. մարտի 22-ին Աբխազիայի Բադնար գյուղում: 1943 թ. սեպտեմբերին՝ ուկրաինական Չերնիգով քաղաքի համար մղված մարտերի ժամանակ, գվարդիայի ավագ Երվանդ Գարանյանը, հետ մղելով թշնամու հակազորիները, թնդանոթը հանել է բաց դիրք և ուղիղ նշանառությամբ ոչնչացրել կենդանի ուժ և երեք կրակակետ՝ թշնամուն ստիպելով փախուստի դիմել: 1943 թ. սեպտեմբերի 28-ին առաջիններից մեկը Գալկի գյուղի (Բրազինսկի շրջան, Գոմելի մարզ, Բելառուս) մոտ կրակի ներքո գետանցել է Դնեպրը, գրավել

պլացդարմը, ամրացել գետի աջ ափին, հետ մղել հակառակորդի՝ կորցրած դիրքերը վերադարձնելու բոլոր փորձերը և թշնամու ուժերը կրակի տակ պահել այնքան ժամանակ, մինչև գնդի ստորաբաժանումներն անցել են գետը և ավելի ընդարձակել գրաված տարածքը: Այդ սխրանքի համար նա արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման: Մարտնչել է նաև Լեհաստանի և Գերմանիայի տարածքներում:

6. ԳՐԻԳՈՐՅԱՆ Սերգեյ Վարդանի. – Ծնվել է 1923 թ. ապրիլի 14-ին Հարավային Օսիայի Օրջոնիկիձե քաղաքում: Խորհրդային Միության հերոս (20 դեկտեմբերի 1943, հետմահու), բժշկական ծառայության գվարդիայի լեյտենանտ: Ուսանել է Թբիլիսիի Ա. Ս. Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտում (այժմ՝ Բլիա Ճավճավաձեի պետական համալսարան), ապա Խարկովի ռազմաբժշկական ուսումնարանում: Հայրենական մեծ պատերազմի ժամանակ որպես հրաձգային գումարտակի սանիտարական դասակի հրամանատար Սերգեյ Գրիգորյանը իրադրության թելադրանքով, հաճախ հարկադրված, մի կողմ է դրել սանիտարական պարագաները, գեւք վերցրել և մասնակցել Հյուսիսարևմտյան ռազմաճակատի արյունահեղ մարտերին, Ուկրաինայի ազատագրմանը: Այսպես՝ 1943 թ. հոկտեմբերի սկզբներին գերմանական տանկերի դեմ հակազոռի ժամանակ նա հակատանկային նոնակով ոչնչացրել է դրանցից մեկը, նպաստել շրջապատման օդակի ձեռքմանը: Միայն մեկ մարտի ժամանակ նրա դասակը մարտադաշտից դուրս է բերել 250 վիրավորի: Սերգեյ Գրիգորյանն անձամբ մարտադաշտից տեղափոխել է 47 զինվոր ու սպա: Հերոսաբար զոհվել է 1943 թ. հոկտեմբերի 4-ին՝ Ղենպրոպետրովսկի մարզի Աննովկա գյուղի մոտ: Թշնամու փոթորկալից կրակի տակ խիզախ հայորդին մարմնով ծածկել է գումարտակի հրամանատարին, փրկել նրա կյանքը, իսկ ինքը մահացու վերք է ստացել և զոհվել:

Վրաստանի Թեթրիժղարո գյուղի դպրոցի բակում, որտեղ նա սովորել է, կանգնեցված է նրա հուշարձանը:

Ըստ վրացական սկզբնաղբյուրներից մեկի՝ Սերգեյ Գրիգորյանը ծնվել է 1921 թ. հունվարի 21-ին Վրաստանի Ադքուլաղ գյուղում (այժմ՝ Թեթրիժղարոյի մունիցիպալիտետ): Ավարտել է Թեթրիժղարոյի միջնակարգ դպրոցը:

7. ԴԱՐԲԻՆՅԱՆ Լևոն Խնկանուսի. – Ծնվել է 1905 թ. մայիսի 29-ին Վրաստանի Ալաստան (այժմ՝ Ախալքալաքի մունիցիպալիտետ) գյուղում: Խորհրդային Միության հերոս (10 հունվարի 1944, հետմահու), գվարդիայի գնդապետ: 1918 թ. թուրքական արշավի ժամանակ նրա ընտանիքը զոհվել է, մինչև 1920 թ. նա ապաստանել է Բորժոմի որբանոցում: 1921-1922 թթ. ծառայել է Կարմիր բանակում, 1922-1924 թթ.՝ խորհրդային միլիցիայում: 1927 թ. ավարտել է Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան հայկական միացյալ ռազմական դպրոցը, 1934 թ.՝ Մոսկվայի «Վիստրել» ուսումնարանի դասընթացները: Սովորել է Մ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայում: Պատերազմի սկզբնական ամիսներին կռվել է Կենտրոնական, ապա Հարավարևմտյան ռազմաճակատներում: Եղել է գնդի հրամանատար, դիվիզիայի հրամանատարի տե-

ղակալ, ապա՝ գվարդիայի տանկային բանակի մեխանիզացված բրիգադի հրամանատար: Աչքի է ընկել Խարկովի ազատագրման, Դնեպրի գետանցման, Կիևի, Ֆաստովի համար մղված մարտերում: 1942 թ. մայիսից սեպտեմբեր ծանր մարտեր է մղել Խարկովի, Յիմլյանսկի և Կալմիցկի շրջաններում: 1943 թ. մասնակցել է Վորոնեժի և 1-ին ուկրաինական ռազմաճակատներում տեղի ունեցած մարտերին: Դեկտեմբերին նրա ղեկավարած 69-րդ մեքենայացված բրիգադը ճեղքել է թշնամու ամրությունները Կիևից արևմուտք և հնարավորություն ընձեռել ազատագրելու Կորոստիշև քաղաքը: Այդ գործողությունների ժամանակ Լևոն Դարբինյանը ծանր վիրավորվել է հինգերորդ անգամ և մահացել՝ հետմահու արժանանալով հերոսի կոչման: Թաղված է Կորոստիշևի եղբայրական գերեզմանատանը, որտեղ հուշարձան է կանգնեցված:

8. ՂԱԶԱՐՅԱՆ Աշոտ Վաղարշակի. – Ծնվել է 1921 թ. հուլիսի 11-ին Վրաստանի Ծալկայի շրջանի Չիվթթիլիսե գյուղում (այժմ՝ Ծալկայի մունիցիպալիտետ): Խորհրդային Միության հերոս (24 մարտի 1945), զրահատանկային զորքերի զեներալ-մայոր (1970): Թբիլիսիիում միջնակարգ կրթություն ստանալուց հետո 1939 թ. զորակոչվել է խորհրդային բանակ: 1939-1940 թթ. որպես գնդացրորդ մասնակցել է սպիտակ ֆինների դեմ կռիվներին, Հայրենական մեծ պատերազմի տարիներին՝ Մերձբալթիկայի, Լենինգրադի ու Ռժևի պաշտպանական և Սմոլենսկի մարզի, Բելառուսի, Մերձբալթիկայի ազատագրման մարտերին: 1945 թ. հունվարի 18-ից 22-ը Աշոտ Ղազարյանի ղեկավարած տանկային գումարտակը Արևելյան Պրուսիայում 150 կմ խորացել է թշնամու թիկունքում և անօրինակ սխրանքով կազմալուծել ֆաշիստական զորքերի կոմունիկացիաները, ոչնչացրել շուրջ 100 զինվոր ու սպա, 30 տանկ, ավելի քան 80 հրանոթ և այլն: Մարտական առաջադրանքները փայլուն կատարելու համար նրան շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում: Պատերազմի ավարտից հետո նա շարունակել է զինվորական գործունեությունը, 1949 թ. ավարտել զրահատանկային և մեքենայացված զորքերի ակադեմիան: Եղել է տանկային գնդի շտաբի պետ, տանկային գնդի՝ հրամանատար, 1969-1986 թթ.՝ ՀԽՍՀ զինվորական կոմիսար, 1987-1995 թթ.՝ ՀՀ աշխատանքի և զինված ուժերի վետերանների խորհրդի նախագահ, ՀԽՍՀ 9-11-րդ գումարումների Գերագույն խորհրդի դեպուտատ, ԽՍՀՄ գրողների միության անդամ (1976 թվականից):

Հեղինակ է հուշագրական ու փաստագրական երկերի: Աշոտ Ղազարյանի «Պատերազմ, մարդիկ, ճակատագրեր» (հ. 1-3, Երևան, 1979-1985) գիրքն արժանացել է ՀՀ պետական մրցանակի (1985): Ռուսերեն լույս են տեսել նրա *Четверть века в танках* (Երևան, 1970, 1972), *Война, люди, судьбы* (кн. 1-4, Երևան, 1975-1984), *Присяга на всю жизнь* (Москва, 1988) գրքերը: Մահացել է 1995 հոկտեմբերի 10-ին (այլ տվյալով՝ 15-ին) Երևանում:

9. ՄԵԼԵԹՅԱՆ (Մելետյան, Մելիթյան) Հարություն Ռուբենի. – Ծնվել է 1925 թ. նոյեմբերի 25-ին Կրասնոդարի երկրամասի Նիժնի Շիլովկա գյու-

դում: Խորհրդային Միության հերոս (27 հունիսի 1945), տանկիստ, գվարդիայի կրտսեր լեյտենանտ: 1931 թ. նրա ընտանիքը տեղափոխվել է Գագրա (Աբխազիա): 1943 թ. մայիսին նա զորակոչվել է Կարմիր բանակ: 1944 թ. ավարտել է Կրասնոդարի հրաձգահրետանային ուսումնարանը և Հայրենական մեծ պատերազմին մասնակցել հուլիսից (այլ տվյալով՝ սեպտեմբերից) 1-ին ուկրաինական ռազմաճակատի զորքերի կազմում՝ որպես հրաձգային դասակի հրամանատար: Աչքի է ընկել Արևմտյան Ուկրաինայում և Լեհաստանում, հատկապես Սանդոմիրյան հենակետի (Լվովի մոտ) և լեհական Չենստոխովա քաղաքի համար մղված մարտերում: Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացել է 1945 թ. հունվարին՝ Օդերի գետանցման, նրա ձախ ափին հենակետ գրավելու և այն ընդարձակելու համար: Հարություն Մելեթյանը իր դասակով, առաջիններից մեկն անցնելով գետը, թշնամուն վտարել է գերիշխող բարձունքից, հետ մղել մի քանի գրոհ և ապահովել մյուս ստորաբաժանումների գետանցը: Այդ սխրանքները կատարելիս նա չէր բոլորել 20 տարին: Մասնակցել է նաև Բեռլինի և Պրագայի գրավմանը:

Գվարդիայի կրտսեր լեյտենանտը զորացրվել է 1946 թ.: 1952 թվականից ապրել և աշխատել է Աբխազիայի հայաբնակ Խոլոդնայա Բեչկա գյուղում: Մահացել է 1997 թ. մայիսի 9-ին, թաղված է Ադլեր քաղաքում:

10. **ՄԻԿՈՅԱՆ** Ստեփան Անաստասի. – Ծնվել է 1922 թ. հուլիսի 12-ին Թիֆլիսում: Խորհրդային Միության հերոս (3 ապրիլի 1975), ավիացիայի գեներալ-լեյտենանտ (1980), վաստակավոր փորձարկող օդաչու, տեխնիկական գիտությունների թեկնածու: 1941 թ. ավարտել է Կաչինսկու Ա. Ֆ. Մյասնիկյանի անվան կարմրադրոշ ռազմավիացիոն դպրոցը, 1951 թ.՝ Ն. Ե. Շուկովսկու անվան ռազմաօդային ինժեներական ակադեմիան: Որպես օդաչու, ավագ օդաչու, ապա օդակի հրամանատար՝ մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, Մոսկվայի սահմանապահ զորքերի կազմում (Արևմտյան, Դոնի, Հյուսիսարևմտյան ռազմաճակատներում): 1942 թ. հունվարի 6-ին Ստեփան Միկոյանը սխալմամբ հարված է ստացել խորհրդային օդաչուի կողմից: Նրան հաջողվել է վայրէջք կատարել, ձեռքի և դեմքի 3-րդ աստիճանի այրվածքներով տեղափոխվել է հիվանդանոց: 1942 թ. հոկտեմբերին իրականացրել է տասնչորս մարտական թռիչքներ: Օդային մարտում կործանել է հակառակորդի վեց ինքնաթիռ: 1951 թվականից եղել է ռազմական փորձարկող օդաչու, 1959 թվականից՝ կործանիչ ինքնաթիռների ավագ փորձարկող օդաչու, Գվարդիական կործանիչ ավիացիայի հրամանատար:

Ստեփան Միկոյանը մեծ ներդրում է ունեցել հայրենական ավիացիայի զարգացման գործում: Նա կյանքից հեռացել է 2016 թ. մարտի 24-ին, 94 տարեկանում: Հրատարակել է հետևյալ գրքերը՝ *Заход на посадку по приборам* (Москва, 1979) (с А. Г. Корбуттом), *Воспоминания военного лётчика-испытателя* (Москва, 2002, 2006, 2013):

11. **ՇՈՒՇԱՆՅԱՆ** Հարություն Վարդերեսի. – Ծնվել է 1913 թ. մարտի 8-ին Աբխազիայի Գանթիադիի (այժմ՝ Գագրայի մունիցիպալիտետ) Ցանդրիպշ

ավանում: Փառքի III, II և I աստիճանի շքանշանների ասպետ (21 հուլիսի 1944, 24 հոկտեմբերի 1944, 29 հունիսի 1945), հետևակային զորամասի եֆրեյտոր, կոչումով, իրավունքով ու արտոնությունով հավասարեցված է Խորհրդային Միության հերոսի կոչման: Շքանշանների արժանացել է Լենինգրադի մարզում, Արևելյան Պրուսիայում, Օդերի գետանցման ժամանակ մարտական գործողություններում ցուցաբերած խիզախության համար: Փառքի III աստճանն ստացել է 1944 թ. հուլիսի 21-ին, երբ Վիբորգի մերձակայքում անձամբ «լեզու» է բռնել, որից կորզել են շատ կարևոր տեղեկություններ: Փառքի II աստճանն ստացել է 1944 թ. հոկտեմբերի 24-ին (այլ տվյալով՝ սեպտեմբերին)՝ Էստոնիայի Տարտու քաղաքի մոտ ավտոմատով գերմանական տասը զինվոր ոչնչացնելու, իսկ երկուսին գերեվարելու համար: Փառքի I աստճանին արժանացել է 1945 թ. հունիսի 29-ին (այլ տվյալով՝ փետրվարին): Լեհական Գրաուդենց քաղաքի մոտ հետախուզական խմբում մարտի է բռնվել և անձամբ ոչնչացրել մեկուկես տասնյակ զինվոր և գերմանական գումակի¹ հինգ սայլ:

Մահացել է 1988 թ. մայիսի 7-ին:

12. **ՌՈՍՏՈՄՅԱՆ** Ապավեն Վասիլի. – Ծնվել է 1905 թ. փետրվարի 15-ին Վրաստանի Բոլնիս-Խաչեն (այժմ՝ Բոլնիսի մունիցիպալիտետ) գյուղում: Խորհրդային Միության հերոս (10 ապրիլի 1945, հետմահու), գվարդիայի ավագ սերժանտ: Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է առաջին իսկ օրվանից, մարտնչել 3-րդ, ապա 1-ին ուկրաինական ռազմաճակատներում: Հերոսի կոչման արժանացել է լեհական Չենստոխովո վոյեվոդության Ժարկի քաղաքի ազատագրման ժամանակ ցուցաբերած անձնագոհության համար: 1945 թ. հունվարի 18-ին խիզախ հայորդին մարմնով ծածկել է թշնամու գնդացրի հրակնատը և ապահովել ստորաբաժանման գրոհի հաջողությունը:

13. **ՄԻՄՈՆՅԱՆ** Կարապետ Միմոնի. – Ծնվել է 1918 թ. հունիսի 6-ին Թիֆլիսում: Խորհրդային Միության հերոս (15 հունվարի 1940), մայր (1955): 1938 թ. Թբիլիսիի երկաթուղու բանվորագյուղացիական թիվ 3 միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո զորակոչվել է Կարմիր բանակի շարքերը: Հերոսի կոչման արժանացել է սպիտակ ֆինների դեմ մղած մարտերում «Մաներհայմի գծի» ամրությունների ճեղքման ժամանակ ցուցաբերած արիության և խիզախության համար (1939 թ. դեկտեմբեր): 1940 թ. ուղարկվել է Մերձբալթյան զինվորական օկրուգ, որտեղ 202-րդ հրաձգային դիվիզիայում ծառայել է որպես վարորդ: 1942 թ. ավարտել է Թբիլիսիի հրետանային ուսումնարանը, եղել տանկի հրաձիգ ռադիստ: Հրանոթով ոչնչացրել է մի քանի տասնյակ զինվորների: Կոչվել է նաև Հյուսիսային Կովկասի պաշտպանների շարքերում: Զորացրվել է մայրի աստիճանով, ծառայել հրամանատարական կադրեր պատրաստող զորամասերից մեկում: Ապրել և

¹ Գումակ՝ զորամասին հատկացված փոխադրական միջոցների ամբողջություն:

աշխատել է Թբիլիսիում, որտեղ և վախճանվել է 1983 թ. դեկտեմբերի 10-ին (ըստ մեկ այլ տվյալի՝ դեկտեմբերի 12-ին):

14. **ՎԱՆՑՅԱՆ** Վաչագան Հունանի. – Ծնվել է 1913 թ. մայիսի 14-ին Ախալքալաքի շրջանի (այժմ՝ Ախալքալաքի մունիցիպալիտետ) Զակվի գյուղում: Խորհրդային Միության հերոս (24 մարտի 1945, հետմահու, ըստ մեկ այլ տվյալի՝ 8 ապրիլի 1945), սերժանտ: 1928 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1937-1939 թթ. աշխատել է Բաթումի արդյունաբերական ձեռնարկություններում: Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից կամավոր մեկնել է ռազմաճակատ, հայտնի է եղել որպես հմուտ գնդացրորդ: Վիտեբսկի շրջանի Շումիլինո երկաթուղային կայարանի մոտ Վաչագան Վանցյանը ոչնչացրել է հակառակորդի երեք գնդացրային կետեր, հետ մղել երկու հակազրոհ: Մի քանի անգամ վիրավորվել է, աչքի ընկել Բելառուսի, Լիտվայի ազատագրման մարտերում: Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացել է 1944 թ. հունիսի 29-ին՝ Սեմել գետի աջ ափին հենակետը գրավելու ժամանակ ցուցաբերած խիզախության և անձնագոհության համար (ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության վկայականը հանձնվել է կնոջը): Վախճանվել է 1944 թ. օգոստոսի 1-ին Լիտվայում:

Ըստ վրացական սկզբնաղբյուրի՝ Վաչագան Վանցյանն աչքի է ընկել նաև Նեմանի գետանցման ժամանակ, ոչնչացրել հակառակորդի ինը զինվոր: Օգոստոսի 1-ին նա Լիտվայի Ուկմերգեի շրջանի Տաուսնայա գյուղի մոտ (Դիստրիկտ մունիցիպալիտետ) գրավել է հակառակորդի պլացդարմը և հետ մղել հինգ զրոհ: Ծանր վիրավորվել է, բայց գրեթե արյունաքամ պահել է պլացդարմը մինչև հիմնական ուժերի ժամանումը: Վերջին պահին նռնակով նետվել է գերմանական տանկի տակ, այն պայթեցրել, իսկ ինքը զոհվել է: Թաղված է լիտվական Շիլան գյուղում (Բիրտայի շրջան): Հերոսի բրոնզաձույլ կիսանդրին կանգնեցված է հայրենի Զակվի գյուղում և շրջկենտրոնի կենտրոնական այգում:

15. **ՉԱՔՐՅԱՆ** Հարություն Խաչիկի. – Ծնվել է 1918 թ. մայիսի 14-ին Աբխազիայի Գումիստա գյուղում (ներկայումս՝ գտնվում է Սուխումի տարածքում): Խորհրդային Միության հերոս (24 մարտի 1945, հետմահու), կապիտան: 1939 թ. զորակոչվել է Կարմիր բանակ, 1941 թ. ավարտել է Ժիտոմիրի հետևակային ուսումնարանը: 1941 թ. հունիսից կռվել է Կովկասյան, Հարավային, 4-րդ ուկրաինական ռազմաճակատներում, եղել է Ս. Օրջոնիկիձեի անվան 77-րդ հրաձգային դիվիզիայի 276-րդ հրաձգային գնդի գումարտակի հրամանատարի օգնական, հետո՝ գումարտակի հրամանատար: Հարություն Չաքրյանը Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացել է 1944 թ. ապրիլի 11-ին Դրիմի Կիրկ-Իշուն բնակավայրի գրավման, ապրիլի 15-ից 18-ը գումարտակի առաջխաղացումը դեպի Սևաստոպոլ ապահովելու, մայիսի 7-ին Սապուն Գորայի գրոհի ժամանակ ցուցաբերած խիզախության ու անձնագոհության համար: Չոհվել է Սևաստոպոլի մատույցներում:

Ըստ արխիվական սկզբնաղբյուրի՝ Հարություն Չաքրյանը ծնվել է 1917

թ. ծառայողի ընտանիքում: Գումիաստայի թերի միջնակարգ դպրոցում սովորելուց հետո ուսումը շարունակել է Սուխումի հայկական միջնակարգ դպրոցում, որն ավարտել է գերազանցության ցուցանիշներով: Կարմիր բանակում ծառայել է 1939 թ. նոյեմբերից: Հարություն Չաքրյանը, իր զինվորներին առաջնորդելով դեպի հիտլերյան զորքերի գլխավոր հենակետը՝ Սապուն Գորայի բարձունքը, 1944 թ. մայիսի 7-ի լուսաբացին գրոհի ժամանակ ոչնչացրել է թշնամու 30 զինվոր ու սպա: Առաջինը հասնելով սարի բարձունքին՝ ծածանել-ամրացրել է կարմիր դրոշը: Նրա ստորաբաժանումը գերի է վերցրել 60 գերմանացու: Հաջորդ օրը՝ մայիսի 8-ին, Սևաստոպոլի վրա թշնամու հարձակման ժամանակ նա մահացու վիրավորվել է: Ստորաբաժանման զինվորները երդվել են վրեժխնդիր լինել իրենց հրամանատարի մահվան համար, շարունակել են մարտը և մայիսի 9-ին ազատագրել Սևաստոպոլը: Հարություն Չաքրյանը թաղված է Ղրիմում՝ Վերին Չորգուն գյուղում (Սևաստոպոլի մոտ): 1948 թ. հունվարի 31-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահը Չաքրյանի հորը՝ Խաչիկ Չաքրյանին գրել է. «Ձեր որդին՝ հրամանատար Հարություն Չաքրյանը, սովետական հայրենիքի համար մղվող մարտերում մահացել է հերոսի մահով: Ուղարկում եմ Ձեզ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգիրը առ այն, որ Ձեր որդուն շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում: Պահպանեք որպես հուշ Ձեր հերոս զավակի մասին, որի սխրանքը երբեք չի մոռացվի ժողովրդի կողմից»:

2010 թ. Բալակլավում կառուցվել է հուշարձան՝ ի հիշատակ Հարություն Չաքրյանի:

16. **ՕՅԱՆՅԱՆ** Սերգեյ Անդրեյի (Մամբրեի). – Ծնվել է 1921 թ. փետրվարի 23-ին Թիֆլիսում: Խորհրդային Միության հերոս (22 փետրվարի 1943, հետմահու): 1941 թ. ավարտել է Թբիլիսիի հրետանային դպրոցը, հուլիսին 317-րդ հրաձգային դիվիզիայի 606-րդ գնդի կազմում, որպես հրետանային մարտկոցի հրամանատար, մեկնել է ռազմաճակատ, մասնակցել Ուկրաինայի պաշտպանությանը: 1941 թ. նոյեմբերի 17-ից 18-ը Սերգեյ Օհանյանի 16 մարտիկներից բաղկացած մարտկոցը Ռոստովի մատույցներում Բոլշիյե Սալա գյուղի մոտ ոչնչացրել է գերմանական 30 տանկ: Ցուցաբերած խիզախության և արիության համար Սերգեյ Օհանյանն արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման: Հետագայում զոհվածների աճյունները տեղափոխվել են Բոլշիյե Սալա, որտեղ նրանց շիրիմների վրա գյուղի աշխատավորների միջոցներով կառուցվել է հուշարձան: ԽՍՀՄ պաշտպանության նախարարի 1966 թ. ապրիլի 12-ի հրամանով Սերգեյ Օհանյանի անունը հավերժ գրանցվել է Թբիլիսիի Բաքվի 26 կոմիսարների անվան բարձրագույն հրետանային ուսումնարանի ցուցակում:

Ըստ վրացական սկզբնաղբյուրների՝ Սերգո Օգանովը ծնվել է 1921 թ. հունվարի 22-ին, բանվորի ընտանիքում: 9-րդ դասարանի աշակերտ Սերգոն դիմել է Թիֆլիսի լեռնահրետանային ուսումնարան: Ծառայությունը Կարմիր

բանակում սկսել է 1939 թվականից: 317-րդ հրաձգային դիվիզիայի 606-րդ գնդի կազմում անհավասար մարտի է բռնվել թշնամու 50 տանկի դեմ, հետ է մղել տանկային և հետևակային երեք կատաղի գրոհներ, երկու օրվա մարտերի ընթացքում անձամբ ոչնչացրել է գերմանական 30 տանկ: Նա ոչ միայն մարտկոցի հրամանատար է եղել, այլև նշանառու, արկերի մատակարար և արկերը լիցքավորող:

Այդ մարտում զոհվել են մարտկոցի բոլոր հրետանավորները և հրամանատարը՝ Սերգո Օգանովը, որոնք սակայն պատվով կատարել են մարտական առաջադրանքը՝ ոչ մի տանկ չի անցել նրանց պաշտպանած բնագիծը: Թաղվել են Բուլշիյե Սալի գյուղի եղբայրական գերեզմանոցում: Նրա անունով փողոց կա Դոնի Ռոստովում:

Грачик Байрамян – Грузино-армянские герои Советского Союза

Значительный вклад в героическую работу в тылу внесли и оказали весомую помощь Красной Армии в годы Великой Отечественной войны армянские национальные дивизии, армянские полководцы, Герои Советского Союза – славные сыны армянского народа. В данной статье на основе соответствующей армянской, русской, грузинской и абхазской советской и постсоветской литературы и публикаций прессы были обобщены, дополнены новыми данными и освещены подвиги полтора десятка героев – из многочисленных армян Грузии, принявших участие в Великой Отечественной войне. Их исключительные военные действия во имя свободы и независимости страны были оценены советским руководством по достоинству: им было присвоено высшее воинское звание СССР – звание Героя СССР.

Hrachik Bayramyan – Georgian-Armenian Heroes of the Soviet Union

The glorious sons of the Armenian people, heroes of the Soviet Union, commanders, Armenian National Divisions made a significant contribution to the Red Army, as well as to the heroic work of the rear during the Great Patriotic War. The article covers the heroic deeds of 16 brave Armenians from Georgia, who took part in the Great Patriotic War, which have been compiled and replenished based on the material of Armenian, Russian, Georgian and Abkhazian Soviet and post-Soviet literature and press. Their heroic participation in the war for freedom and independence, as well as in the military operations was highly appreciated by the Soviet Government, hence some of them were awarded the title of Hero of the Soviet Union.

Ներկայացվել է 27.05.2020

Գրախոսվել է 07.06.2020

Ընդունվել է տպագրության 30.06.2020

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԿ ՄՈՎՄԻՍՅԱՆ

ԾՈՓՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԱՀԱՑԱՆԿԸ (Մաս Բ)*

Ք.ա. IV-III դարերում Ծոփքի կամ Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության գոյության խնդիրը¹: Ինչպես արդեն նշվեց, մի շարք հեղինակներ Ծոփքի թագավորության սկզբնավորումը թվագրում են Ք.ա. IV դարով՝ այն կապելով Գավգամելայի ճակատամարտից հետո Հայաստանի անկախացման հետ: Ուստի նախ կանգ առնենք Ք.ա. IV դարում Ծոփքի կամ Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության գոյության հնարավորության խնդրին:

Անհրաժեշտ է արձանագրել, որ Ք.ա. IV դարում որևէ հիշատակություն չկա Ծոփքի կամ Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության գոյության մասին, ավելին՝ որևէ առիթով այդ երկրամասերն ընդհանրապես չեն հիշատակվում: Գավգամելայի ճակատամարտի առնչությամբ հիշատակվում են հայկական երկու երկրամասերի՝ Մեծ Հայքի և Փոքր Հայքի գորքերը՝ համապատասխանաբար Օրոնտես-Երվանդ Գ-ի ու Միթրաուստեսի (Միհրվահիշտ) առաջնորդությամբ²: Նրանք որոշ ժամանակ անց անկախ հռչակեցին երկու հայկական պետություններ՝ Մեծ Հայքի և Փոքր Հայքի թագավորությունները³:

* Առաջին մասը տպագրվել է նախորդ համարում:

¹ Այս խնդրի մասին արդեն հրատարակված մեր դիտարկումները տե՛ս **Մովսիսյան Ա.**, Դիտարկումներ Հայաստանի Ք.ա. V-III դարերի պատմության շուրջ // «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XXIX, Երևան, 2014, էջ 90-95, **Մովսիսյան Ա., Կարապետյան Լ.**, նշվ. աշխ., էջ 14-18:

² Իստսի և Գավգամելայի ճակատամարտերին հայերի մասնակցության մասին տե՛ս **Քվինտուս Կուրտիուս Ռուֆուս**, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, գիրք III, II, 4-6, XII, 10, 12-13, գիրք IV, XVI, 1-6, **Արրիանոս Փլավիոս**, Ալեքսանդրի արշավանքը, գիրք III, III, 5-6, XI, 7, **Օհանյան Մ.**, Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքը և Հայաստանը, Երևան, 2003, էջ 21-62:

³ Երվանդ Գ-ն «Արոանդես» անվանաձևով հիշատակվում է նաև Կոմմագենեի Նեմրուք լեռան սրբավայրում և, ի տարբերություն Երվանդ Բ-ի, կրում է «արքա» տիտղոսը (**Hümann K., Puschtein O.**, նշվ. աշխ., էջ 286, 307, **Тирация Г.**, նշվ. աշխ., էջ 70-73, **Տիրացյան Գ.**, Երվանդունիները Հայաստանում // «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1958, թիվ 6, էջ 65-67, **Toumanoff C.**, նշվ. աշխ., էջ 279-280):

Գավգամելայի ճակատամարտից հետո Հայաստանին վերաբերող հաջորդ հիշատակությունը պահպանվել է Ստրաբոնի մոտ, ըստ որի՝ այդ ճակատամարտից որոշ ժամանակ անց Ալեքսանդրի զորաբանակներից մեկը Մենոն զորավարի գլխավորությամբ ուղարկվեց գրավելու Բարձր Հայքի ոսկու հանքերի շրջանը, սակայն հայերը ոչնչացրեցին նրա բանակը¹:

Ք.ա. IV դարի վերաբերյալ հաջորդ վկայությունը պահպանել է Դիոդորոս Միկիլիացին (Միցիլիացին), ըստ որի՝ Ալեքսանդրի ժառանգորդների (*դիադոքոսներ*) պատերազմների ժամանակ Եվմենեսը, իբրև հաղթաթուղթ իր մրցակիցների նկատմամբ, վկայակոչել է Օրոնտեսի նամակը, «որը տիրում էր Արմենիայի սատրապությանը»²: Տեղեկությունը վերաբերում է Մեծ Հայքի արքա Երվանդ Գ-ին և թվագրվում է Ք.ա. 317 թվականով: Դիոդորոս Միկիլիացու «Պատմական գրադարան» երկի էջերում պահպանվել է այդ ժամանակաշրջանին վերաբերող մեկ այլ ուշագրավ հաղորդում ևս, ըստ որի՝ մակեդոնացիների կողմից գահընկեց արված Կապադովկիայի արքա Արիարաթեսը կարողացել է վերականգնվել հայրական գահին՝ շնորհիվ Մեծ Հայքի արքա Արդատեսի տրամադրած զորքերի³: Դա տեղի է ունեցել Ք.ա. 301 թվականին⁴:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի՝ Ք.ա. IV դարի պատմության մասին պահպանված վկայությունները վերաբերում են Մեծ Հայքին և Փոքր Հայքին: Հետևաբար, Ծոփքի կամ Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության պատմությունը Ք.ա. IV դարից սկսելը որևէ կերպ չի կարող հիմնավոր լինել:

Այժմ անդրադառնանք Ք.ա. III դարում Ծոփքի կամ Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության գոյության խնդրին, որից հետո մեկ առ մեկ կքննարկենք սկզբնաղբյուրներում վկայված և ուսումնասիրություններում քննարկված բոլոր արքաների մասին տեղեկությունները:

Այստեղ նույնպես պետք է արձանագրել, որ այս հարյուրամյակում ևս որևէ սկզբնաղբյուրում չի հիշատակվում Ծոփքի կամ Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորությունը: Ինչպես արդեն նշել ենք, Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության գաղափարը հայագիտության մեջ հայտնվել է միայն XX դարի կեսին՝ շնորհիվ Գ. Տիրացյանի: Այն ընդունվել ու

¹ Ստրաբոն, XI, 14, 9, Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 95-97, Օհանյան Մ., նշվ. աշխ., էջ 74-75:

² Դիոդորոս Միկիլիացի, գիրք XIX, գլ. XXIII, 1-3:

³ Տե՛ս Դիոդորոս Միկիլիացի, գիրք XXXI, գլ. XIX, 4-5: Հմմտ. Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 441, Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 100-103:

⁴ Իրադարձության թվականի հարցի քննարկումը տե՛ս Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 435-441, Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 97-103: Քննարկման առարկա է եղել նաև հարցը՝ արդյո՞ք «Արդատեսը» ճշգրիտ արքայանունն է, թե դա «Արտավազդ» կամ «Արտանդես» (այսինքն՝ «Երվանդ») անվան աղճատված ձևն է: Եթե ճիշտ է վերջին ենթադրությունը, մեծ հավանակա- նությամբ կարելի է ընդունել, որ նա Մեծ Հայքի անկախության հիմնադիր Երվանդ Գ-ն է և թագավորել է Ք.ա. 331 թվականից մինչև Ք.ա. IV դարի վերջը կամ III դարի սկիզբը:

ամրապնդվել է խորհրդահայ պատմաբանների միջավայրում (Գ. Սարգսյան, Բ. Հարությունյան և այլք): Սակայն դա եղել է տեսական մոտեցում՝ նպատակ ունենալով վերականգնել սկզբնաղբյուրների տեղեկությունների սակավությունից առաջացած բացը: Ասվածը հիմնավորելու համար համառոտակի հիշատակենք այն բոլոր փաստերը, որոնք պահպանվել են սկզբնաղբյուրներում Հայաստանի Ք.ա. III դարի պատմության վերաբերյալ:

Արդոատեսի մասին Դիոդորոս Սիկիլիացու տեղեկությունից հետո ժամանակագրորեն հաջորդ վկայությունը վերաբերում է Ք.ա. 255 թվականին, երբ, ըստ Մենոն Ներակլեացու, Բյութանիայի Նիկոմեդես արքայի որդի Զիելասը (Զիաելասը) նախ ապաստան է գտնում «հայոց արքայի» մոտ, ապա արտաքին ուժերի օգնությամբ վերականգնում է թագավորությունը¹: Հայոց արքայի անունը, դժբախտաբար, սկզբնաղբյուրում չի նշվում, սակայն հասկանալի է, որ զգալի հեռավորության վրա գտնվող, ոչ սահմանակից երկրի ներքին գործերին կարող էր միջամտել միայն լուրջ ուժ և տարածաշրջանային հեղինակություն ունեցող պետությունը, որի համար առավել հավանական թեկնածուն, իհարկե, Մեծ Հայքն է: Ենթադրվել է, որ հայոց այդ արքան կարող էր լինել Սամոս (Շամ) Երվանդունին, քանի որ վերջինիս իշխանության շրջանը կարող է համապատասխանել հիշյալ դեպքերի ժամանակին:

Ինչ է մեզ հայտնի Սամոս (Շամ) արքայի մասին:

Հայաստանի Ք.ա. III դարի պատմության վերականգնմանը մեծապես օգնում են Կոմմագենեի Նեմրոթ լեռան սրբավայրի արձանագրությունները, որոնք թողել է Երվանդական արքայատան շառավիղ Անտիոքոս Ա Կոմմագենացին: Հայրական գծով նրա նախնիների շարքում հիշատակվում են Արոանդես-Երվանդ Բ-ն, որին Քսենոփոնը հիշատակում է Ք.ա. 401 թ.՝ որպես ամբողջ Հայաստանի սատրապ-կառավարիչ, Արոանդես-Երվանդ Գ արքան (որը Գավգամելայի ճակատամարտից հետո հոչակեց Մեծ Հայքի անկախ թագավորությունը), ապա հաջորդում է մի գահակալ, որի անունից պահպանվել է «...անես» վերջավորությունը, որից հետո վկայված են Սամոս (Շամ) և Արսամես (Արշամ) արքաները²:

Սամոս (Շամ) արքան որևէ պատմիչի երկում չի հիշատակվում: Փաստը, որ Կոմմագենեի Սամոսատ քաղաքը հիշատակվում է դեռևս Ք.ա. 245 թ., թույլ է տվել ուսումնասիրողներին եզրակացնելու, որ այդ քաղաքի հիմնադիրը (որի համար Սամոսից բացի այլ թեկնածու չկա) գահակալել է մինչ

¹ Ст' у Мемнон, О Геракле (пер. В. П. Дзагуровой) // «Вестник древней истории», 1951, № 1, с. 298-299. Հմմտ. Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 442, Տիրացյան Գ. Ա., Հայաստանը մ. թ. ա. III դարում, էջ 512, Սանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 111, Габелко О. Л., История Вифинского царства, СПб., 2005, с. 198-200:

² Ст' у Hümann K., Puschtein O., նշվ. աշխ., էջ 286, 308-309, Тирация Г., նշվ. աշխ., էջ 71-74, Toumanoff С., նշվ. աշխ., էջ 280-283:

այդ՝ Ք.ա. մոտ 270/260-240-ական թվականներին¹:

Այսքան են Սամոս (Շամ) արքայի մասին եղած փաստերը: Ակնհայտ է, որ չկա որևէ փաստարկ, ինչի հիմամբ կարելի է այս արքային համարել Շոփքի կամ Շոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության հիմնադիր կամ այդ երկրամաս(եր)ը Մեծ Հայքից անջատող: Փաստերի տրամաբանությունը հուշում է, որ նա պետք է լիներ Մեծ Հայքի արքա, քանի որ նրա նախորդներ Երվանդ Բ-ն ամբողջ Հայաստանի սատրապն էր, Երվանդ Գ-ն՝ Մեծ Հայքի արքան, իսկ նրա հաջորդ Արշամը, ինչպես կտեսնենք ստորև, ունեցել է նույնպիսի կարգավիճակ:

Ք.ա. III դարում իշխած հայ գահակալների մեջ ամենահարուստ տեղեկություններն ունենք Արսամես (Արշամ) արքայի մասին: Դրանք արքայի հատած դրամներն են և նրա մասին մատենագրական ու վիմագիր վկայությունները:

Արշամ (Արսամես) արքայից մեզ հասած բոլոր դրամները հունագիր են և կրում են «Արսամես արքայի» մակագրությունը², ինչից հնարավոր չէ պարզել, թե նա որ պետության արքան էր:

Արշամ արքայի մասին վիմագիր վկայությունները մեզ են հասել Կոմմագենեի արքա Անտիոքոս Ա-ից, որը, Արշամին իր հայրական նախնիների ցանկում հիշատակելուց բացի, տեղեկացնում է, որ նա է հիմնել Արսամես անվամբ երկու քաղաք Եփրատ և Նիմֆայոս գետերի վրա³: Թեպետ Շոփքի Արշամաշատ քաղաքի հիմնադրման մասին մեզ որևէ արձանագրություն կամ մատենագրական վկայություն չի հասել, ուսումնասիրողները հակված են այդ քաղաքի հիմնադրումը ևս վերագրել Արշամ արքային⁴:

¹ Տե՛ս օրինակ՝ **Toumanoff C.**, նշվ. աշխ., էջ 280-281, ՀԺՊ, հ. I, էջ 512, **Սուրբաֆյան Կ. Ա., Վան Լով Է.**, նշվ. աշխ., էջ 24 և այլն): Վաղ բյուզանդական աղբյուրներում Շոփքում հիշատակվում է Սամոկերտ բնակավայրը, որը ևս, հավանաբար, հիմնել է Սամոսը Ք.ա. III դարում: Մեզ են հասել «Սամոս» անունը կրող արքայական դրամներ, սակայն ուսումնասիրողների շրջանում կա բանավեճ, դրանք պետք է համարել Ք.ա. III դարում իշխած արքայինը, թե՛ Ք.ա. II դարի երկրորդ կեսին հիշվող Սամոս Բ Թեոսեֆեսիինը (տե՛ս **Bedoukian P. Z.**, նշվ. աշխ., էջ 9-10, 22-23, 32, աղ. I, 1, **Nersessian Y. T.**, նշվ. աշխ., էջ 47-48, աղ. I, 1, **Kovacs F. L.**, նշվ. աշխ., էջ 1, 39, **Վարդանյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 33):

² Տե՛ս **Bedoukian P. Z.**, նշվ. աշխ., էջ 10-12, 23-24, 32-33, աղ. I, 2-8, **Nersessian Y. T.**, նշվ. աշխ., էջ 48-50, աղ. I, 2-4, 6-9, **Kovacs F. L.**, նշվ. աշխ., էջ 1-2, աղ. I, 1-10, **Վարդանյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 33-34: Ելնելով դրամների տարատեսակությունից՝ դրամագետներն առաջարկում են Ք.ա. 240-230 թթ. տեսնել Արշամ անունով երկու գահակալների, ինչը, սակայն, չի հաստատվում մատենագրական տվյալներով: Ե. Ներսիսյանն առաջարկում է ենթադրյալ Արսամես Ա-ի և Արսամես Բ-ի միջև տեղադրել Քարասպեսին (**Nersessian Y. T.**, նշվ. աշխ., էջ 48-49):

³ Տե՛ս **Dorner F. K., Goell Th.**, Arsameia am Nymphaios. Die Ausgrabungen im Hierothesion der Mithradates Kallinikos, Berlin, 1963, S. 40, **Օծյոս Բ. Բ.**, նշվ. աշխ., էջ 234-251:

⁴ Տե՛ս օրինակ՝ **Սարգսյան Գ. Խ.**, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Սովսես Խորենացին, էջ 124, **Տիրացյան Գ. Ա.**, Հայաստանը մ. թ. ա. III դարում, էջ 512, **Հակոբյան Թ.Խ.**, Պատմական Հայաստանի քաղաքները, Երևան, 1987, էջ 71-73:

Արշամի մասին միակ և բացառիկ մատենագրական տեղեկություն է մեզ հասցրել Պոլիենոսը ռազմական խորամանկությունների մասին պատմող «Ստրատեգեմներ» աշխատության էջերում¹: Նրա չափազանց արժեքավոր վկայությունից տեղեկանում ենք, որ Ք.ա. 220-ական թթ. սկզբին Արշամ արքան ապաստան է տվել Մելնկյան տիրակալ Մելնկոս Բ Կալլինիկոսի դեմ ապստամբած նրա եղբորը՝ Անտիոքոս Հիերաքսին: Վերջինս իշխում էր Փոքր Ասիայի սելևկյան տիրույթներին և ձգտում էր գահընկեց անելով եղբորը՝ տիրելու ամբողջ Մելնկյան աշխարհակալությանը: Անհաջողություն կրելով Միջագետքում և հետապնդվելով Մելնկոս Բ-ի երկու զորավարների մեծաթիվ ուժերի կողմից՝ նա մտնում է Հայաստան, որտեղ նրան ապաստան է տալիս Արշամ արքան:

Հասկանալիորեն, Արշամը պետք է լիներ այնքան հզոր գահակալ, որ կարողանար ապաստան տալ Մելնկյան տիրակալի գլխավոր թշնամուն: Այս փաստը վկայում է հոգուտ Արշամի Մեծ Հայքի թագավորը լինելու, քանի որ ո՛չ Շոփքը, ո՛չ Կոմմագենեն ի վիճակի չէին լինի նման ուժի դիմակայել (մանավանդ որ իբրև թագավորություններ դրանք Ք.ա. III դարում չեն էլ հիշատակվում): Անտիոքոս Հիերաքսին աջակցած պետության համար Փոքր Հայքի թեկնածությունը ևս անհավանական է, քանի որ ապստամբ արքայազնի բանակը Միջագետքից անմիջապես մտել է Արշամ արքայի տարածք, իսկ Փոքր Հայքը Միջագետքի հետ չուներ ընդհանուր սահման: Հետևաբար, Արշամը կարող էր լինել միայն Մեծ Հայքի թագավորը:

Արձանագրենք, որ Սամոս (Շամ) և Արշամ (Արսամես) արքաների մասին սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկություններից և ոչ մեկը հիմք չի կարող լինել ենթադրելու, որ գոյություն է ունեցել Շոփք-Կոմմագենեի միացյալ թագավորություն: Եթե նրանք ստրատեգիական նկատառումներով ուշադրություն են դարձրել Հայաստանի հատկապես հարավարևմտյան շրջանների ամրապնդմանը և այնտեղ կառուցել են մի քանի ամրոց, ապա դա չի կարող նշանակել, որ նրանց իշխանությունը տարածվել է միայն այդ տարածքում²: Ի վերջո, թե՛ Սոֆենե-Շոփքը, թե՛ Կոմմագենեն հրաշալի հայտնի էին հունահռոմեական պատմագրության ներկայացուցիչներին, և հարկ եղած դեպքում նրանք Ք.ա. III դարի իրադարձությունները հիշատակելիս կնշեին այդ երկրանունները, ինչպես դա անում են հետագա դարերի դեպքերի առնչությամբ:

¹ Պոլիենոս, գիրք IV, գլ. 17, Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 111-113, 115-116, Էլչիրեկյան ժ. Գ., նշվ. աշխ., էջ 42: Տե՛ս մ. թ. ա. III դարում, էջ 512-513:

² Նման տրամաբանությամբ առաջնորդվելով՝ պետք է եզրակացնեինք, որ Տիգրան Երվանդյանի իշխանությունը տարածվել է միայն Արցախի վրա, քանի որ այնտեղ է գտնվել նրա հիմնած միակ Տիգրանակերտը (Մովսես Խորենացի, գիրք Ա, գլ. Լ), իսկ Երվանդ Դ-ի իշխանությունը՝ միայն Արաքս և Ախուրյան գետերի միախառնման վայրում, քանի որ այդ շրջանում են կառուցվել նրա հիմնած երեք քաղաքները՝ Երվանդաշատը, Բագարանը և Երվանդակերտը (Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. ԺԲ, Խ, ԽԲ):

Մի շարք ուսումնասիրողներ Ք.ա. 220-201 թթ. միջակայքում են թվագրում Քսերքսես արքային, որին Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության կողմնակիցները համարել են այդ պետության պառակտումից հետո Ծոփքի առանձին թագավորության հիմնադիրը: Ինչպես նշվեց, Ք.ա. III դ. Մեծ Հայքից անջատված Ծոփքի-Կոմմագենեի թագավորության մասին տեսությունը չունի որևէ աղբյուրագիտական հիմնավորում: Չկա նաև որևէ փաստ, ըստ որի՝ Քսերքսես արքան եղել է Ծոփքի թագավորության հիմնադիրը (ո՛չ Ք.ա. III դարում, ո՛չ էլ որևէ այլ ժամանակ): Իսկ հայագիտության մեջ տարածում գտած տեսակետը, թե Ծոփքում իշխող Քսերքսես արքան դավադրաբար սպանվել է Ք.ա. 201 թ., հիմնված է թյուրիմացության վրա: Ծոփքի արքա Քսերքսեսը թագավորել է ոչ թե Ք.ա. III, այլ II դարում և եղել է ոչ թե Անտիոքոս Գ-ի, այլ Անտիոքոս Դ-ի ժամանակակիցը, ամուսնացել է վերջինիս քույր Անտիոքիսի հետ և դարձել նրանց համատեղ դավադրության գոհը Ք.ա. 164 թվին¹:

Ըստ Պոլիբիոսի՝ Քսերքսեսի հայրը ևս եղել է թագավոր և հրաժարվել է Մելևկյաններին հարկեր վճարելուց²: Այս տեղեկության լույսի ներքո ևս քիչ հավանական է Քսերքսեսին Արշամի որդի համարելը, քանի որ Արշամը ոչ միայն ենթակա և հարկատու չի եղել Մելևկյան տերությանը, այլև հակադրվել է վերջինիս և ապաստան տվել Մելևկոս Բ-ի ռիսերիմ թշնամուն՝ Անտիոքոս Հիերաքսին: Պոլիբիոսի հաղորդած տեղեկությունը լիովին համապատասխանում է Ք.ա. 160-ական թթ. Ծոփքում իշխող Քսերքսես արքային, որի նախորդ Ջարեհը իրոք եղել է Մելևկյան տերության ենթակա՝ ստրատեգոս, վճարել է հարկեր, ապա անկախանալով հրաժարվել հարկեր վճարելուց:

¹ Մանրամասն տե՛ս **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 446-453: Այս փաստի վրա ուշադրություն է հրավիրվել դեռևս XIX դարում (**Langlois V.**, նշվ. աշխ., 1869, էջ 6-19, **Babelon E.**, նշվ. աշխ., էջ CXCV-CXCVII): Այն, որ Անտիոքիսը Անտիոքոս Գ Մեծի դուստրն էր և Անտիոքոս Դ-ի քույրը, պարզորոշ վկայում է Դիոդորոս Սիկիլիացին (**Դիոդորոս Սիկիլիացի**, գիրք XXXI, գլ. XIX, 7):

² «Քսերքսեսի թագավորության ժամանակ Արմուսատա քաղաքում, որը գտնվում է այսպես կոչված Գեղեցիկ դաշտում, Եփրատի և Տիգրիսի միջև, Անտիոքոս թագավորը քաղաքը պաշարելով վերցնելու մտադրությամբ՝ բանակել էր նրա մոտ: Տեսնելով (Անտիոքոս) թագավորի պատրաստությունները, Քսերքսեսը նախ փորձեց փախուստի միջոցով փրկվել, բայց քիչ ժամանակ անց նա զոջաց, վախենալով, որ մայրաքաղաքը թշնամու ձեռքն ընկնելու դեպքում ինքը կարող է կորցնել ամբողջ թագավորությունը: Ուստի դեսպաններ ուղարկելով Անտիոքոսի մոտ, հայտնեց, որ ցանկանում է բանակցություն սկսել նրա հետ: Անտիոքոսի հավատարիմ ընկերները խորհուրդ չէին տալիս թագավորին ձեռքից բաց թողնել պատանուն, այլ համոզում էին, որ քաղաքը գրավելով՝ իշխանությունը հանձնի Միհրդատին, որը նրա քրոջ որդին էր: Բայց թագավորը չլսեց նրանցից ոչ մեկին, իր մոտ հրավիրեց պատանուն, հաշտվեց նրա հետ և նույնիսկ զիջեց նրան հարկի մեծագույն մասը, որը պարտավոր էր իրեն վճարել (Քսերքսեսի) հայրը: Այնուհետև, ստանալով Քսերքսեսից 300 տաղանդ և հազար ձի ու հազար ջորի լծասարքով, նա վերադարձրեց նրան ամբողջ իշխանությունը և նրան ամուսնացրեց իր Անտիոքիս քրոջ հետ: Այսպիսով, Անտիոքոսն իր արքայական վեհանձնությամբ, որ ցուցաբերել էր ներկա դեպքում, ձեռք բերեց երկրի բնակիչների բարեկամությունն ու երախտիքը» (**Պոլիբիոս**, VIII, 25, 1-5):

Ինչպես տեսնում ենք, սկզբնաղբյուրները միանշանակ վկայում են, որ Ք.ա. III դարում Մեծ Հայքից չեն անջատվել ո՛չ Ծոփքը, ո՛չ Կոմմագենեն, ո՛չ էլ դրանք միասին՝ իբրև մեկ պետություն: Մեծ Հայքը բաժանվել է միայն Երվանդ Դ-ի զոհվելուց հետո, երբ Ք.ա. 201 թ. անկում ապրեց Հայկազունի-Երվանդականների թագավորությունը Մեծ Հայքում: Այդ մասին պարզորոշ վկայում է Ստրաբոնը՝ նշելով, որ Հայաստանը (իմա՝ Մեծ Հայքը) բաժանվել է Անտիոքոս Գ Մեծի ստրատեգոսներ Արտաշեսի և Ջարեհի միջև. «Հայաստանի վերջին իշխողն էր Օրոնտեսը... Այնուհետև Արտաքսիասը և Ջարիադրեսը՝ Անտիոքոս Մեծի գորավարները, երկիրը բաժանեցին երկու մասի: Նրանք կառավարում էին արքայի իշխանության ներքո»¹:

Սելևկյանների տիրապետությունը, բարեբախտաբար, շատ կարճ տևեց: Մագնեսիայի ճամատամարտից (Ք.ա. 190 թ. դեկտեմբեր) հետո Արտաշեսն ու Ջարեհը դաշնակցեցին Սելևկյաններին պարտության մատնած Հռոմի հետ և հռչակեցին երկու հայկական անկախ թագավորություններ՝ Մեծ Հայքի և Ծոփքի: Վերջինս գոյություն ունեցավ շուրջ մեկ դար՝ Ք.ա. 94 թ. Տիգրան Բ Մեծի կողմից նվաճվելով և վերամիավորվելով Մեծ Հայքին:

Ճշգրտումներ Ծոփքի թագավորության գահակալների ցանկում: Այժմ Ծոփքի թագավորության գահացանկի լիակատար ճշգրտման նպատակով քննարկենք գիտական գրականության մեջ որպես Ծոփքի արքաներ ներկայացված բոլոր գահակալներին: Նրանցից դուրս թողնելով լիովին անհավանական թեկնածուներին (որոնց մասին արդեն նշվեց)՝ ստանում ենք գահակալների հետևյալ ցանկը՝ Սամոս (Շամ), Արշամ (Արսամես), Արդիսարես, Քսերքսես, Արտաբանոս, Ջարեհ, Մեիրուժան (Միթրոբուզանես), Արկաթիո/աս, Մորֆիլիգ, Արտանես, Տիգրան Կրտսեր և Սոհեմոս:

Սամոս (Շամ) – Ինչպես նշվեց, եղել է ամբողջ Մեծ Հայքի արքան, կապ չունի Ծոփքի արքայացանկի հետ:

Արշամ (Արսամես) – Նույնպես եղել է ամբողջ Մեծ Հայքի արքան և կապ չունի Ծոփքի գահացանկի հետ:

Քարասպես – Դեռևս XIX դարավերջին, ելնելով թագի նմանությունից, առաջարկվել էր Քարասպեսին դիտարկել իբրև Ծոփքի արքա և թվագրել Ք.ա. III դարի տարբեր ժամանակահատվածներով², իսկ Ատրպետը Քարասպեսին (Հարասպես անվամբ) առաջարկում էր թվագրել Ք.ա. 316 թվականով³: Սակայն վերջին տարիներին Քարասպեսի անվամբ նոր դրամների հայտնաբերումից և ուսումնասիրությունից պարզվեց, որ նա սկուրական արքա է, ո-

¹ Ստրաբոն, XI, 14, 15:

² Տե՛ս **Babelon E.**, նշվ. աշխ., էջ CXCI-CC, կատալոգի էջ 211-212, 229-230, աղ. XXIX, նկ. 1-7: **Բասմաջեան Կ.**, նշվ. աշխ., էջ 27:

³ Տե՛ս **Ատրպետ**, նշվ. աշխ., էջ 28:

րի դրամները հատվել են Թրակիայում և կապ չունեն ո՛չ Ծոփքի, ո՛չ էլ հայ իրականության հետ ընդհանրապես¹:

Արդիսարես – Որպես օրինաչափություն՝ Արդիսարեսը թվագրվել է Ք.ա. III դարի վերջին քառորդով կամ III-II դարերի սահամանային շրջանով: Նրա մասին մատենագրական որևէ տեղեկություն չի պահպանվել: Ուսումնասիրության սկզբնաղբյուրը միայն դրամագիտական է, իսկ Ծոփքի թագավորության գահակալ նա համարվել է արքայի թագի վերլուծության հիմքով: 1982 թ. կասկած հայտնվեց Արդիսարեսի՝ Ծոփքի թագավորության հետ կապ ունենալու խնդրում, քանի որ արքայանունն ուներ սեմական ստուգաբանություն²: Քիչ ավելի ուշ՝ 1996 թ., հրատարակվեց Արդիսարեսի նորահայտ դրամը, որի վրա նշված էր նաև նրա երկրանունը՝ Ադիաբենե: Արքայի թագի համադրումը Ադիաբենեի տարածքից հայտնաբերված ժայռափոր քանդակի հետ (Իրաքի հյուսիսում գտնվող Բաթաս-Հերիր հնավայրում) վերջնականապես հաստատեց Արդիսարեսի՝ Ադիաբենեի արքա լինելը և բացառեց կապը Ծոփքի թագավորության հետ³: Այսինքն՝ պետք է հրաժարվել նաև Արդիսարեսին Ծոփքի թագավորության արքայացանկում տեսնելու մտքից:

Արտաբանոս – Ծոփքի գահացանկում այս անվան հայտնվելու միակ հիմքը եղել է Քսերքսեսի դրամին նման մի դրամ, որի վնասված ...ABANO[Y] մակագրությունը, ինչպես նշվեց վերը, առաջարկվել էր վերականգնել [ART]ABANO[Y] («Արտաբանոսի»): Ինչպես տեսանք, դրամների ոճային նմանությունները դեռևս բավարար պայման չեն դրանք թողարկած արքաներին միննույն դինաստիայի ներկայացուցիչներ համարելու համար (ինչպես Քարասպեսի, Արդիսարեսի, նաև, կտեսնենք, Մորֆիլիզի պարագաներում): Քանի որ Ծոփքի այդ անվամբ արքա չունենք վկայված գրավոր որևէ սկզբնաղբյուրում, պետք է հրաժարվենք Արտաբանոս անունը Ծոփքի թագավորության արքայացանկում տեղադրելու մտքից:

Ջարեհ – Ծոփքի թագավորության հիմնադիր Ջարեհի գահակալման սկիզբն ընդունված է համարել Ք.ա. 189 թ., քանի որ նա Ծոփքը (իսկ Արտաշեսը՝ Մեծ Հայքը) անկախ թագավորություն հռչակեց Մազնեսիայի ճակա-

¹ Տե՛ս **Sayles W.G.**, *Ancient Coin Collecting VI: Non-Classical Cultures*, Iowa, 1999, p. 27: Հմմտ. **Marciak M.**, նշվ. աշխ., էջ 68-69:

² Տե՛ս **Lipiński E.**, *Le culte d’Istar en Mésopotamie du Nord à l’époque parthe* // «*Orientalia Lovaniensia Periodica*», 1982, № 13, p. 117-120. Այս անվան սեմական բնույթը մատնանշվել էր դեռևս XIX դարում (տե՛ս օրինակ՝ **Visconti E. Q.**, նշվ. աշխ., էջ 252-254, **De Sauley F.**, նշվ. աշխ., էջ 101):

³ Տե՛ս **de Callataÿ F.**, *Abdissarès l’Adiabénien* // «*Iraq*», 1996, vol. 58, p. 135-145, **Grabowski M.**, *Abdissares of Adiabene and the Batas-Herir Relief* // «*Światowit. Annual of the Institute of Archaeology of the University of Warsaw*», 2011, 9, p. 117-140, **Marciak M.**, **Wójcikowski R. S.**, *Images of Kings of Adiabene: Numismatic and Sculptural Evidence* // «*Iraq*», 2016, vol. 78, p. 79-101, **Marciak M.**, նշվ. աշխ., էջ 69, 293:

տամարտից և հռոմեացիների հետ դաշնակցելուց հետո¹: Թե մինչև երբ է իշխել Չարեհ արքան, հայտնի չէ: Ք.ա. 165 թ. Ծովքի գահին հիշատակվում է նրա որդի Քսերքսեսը:

Քսերքսես – Ինչպես նշվեց վերը, սկզբնաղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ Քսերքսեսը եղել է Անտիոքոս Դ-ի (Ք.ա. 175-164 թթ.) ժամանակակիցը, ամուսնացել վերջինիս քույր Անտիոքիսի հետ և դարձել նրանց համատեղ դավադրության զոհը Ք.ա. 165 թ.: Եղել է Չարեհի որդին, հավանաբար նրա անմիջական հաջորդը (քանի որ Անտիոքոս Դ-ն նրան ներում է իր հոր՝ Մելևկյան տերությանը չվճարած հարկերի մեծ մասը, իսկ Մելևկյաններին ենթակա և հարկատու է եղել Չարեհը Ք.ա. 201-189 թթ.): Թե երբ է ավարտվել Չարեհի իշխանությունը և սկսվել Քսերքսեսինը, հայտնի չէ: Անհայտ է նաև պատճառը, թե ինչու է Հովհաննես Անտիոքցու երկում Քսերքսեսը կոչվում «Հայաստանի բռնակալ»²: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Պոլիբիոսի վերը բերված տեղեկության մեջ Քսերքսեսը երկու անգամ կոչվում է «պատանի», ինչը մատնանշում է, որ դեպքերի կատարման ժամանակ նա չափազանց երիտասարդ էր և պետք է գահ բարձրացած լիներ ոչ վաղ անցյալում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Անտիոքոս Դ Եպիփանեսը Հայաստան է արշավել Ք.ա. 165 թ. (ի պատասխան Ք.ա. 168 թ. Արտաշես Ա-ի Միջագետք արշավելու, ինչի արդյունքում Տնորիքը միացվեց Մեծ Հայքին), ընդ որում, Մեծ Հայքի արքա Արտաշես Ա-ին հաղթելուց հետո հարձակվել է նաև Ծովքի վրա³: Եթե նկատի ունենանք, որ Ք.ա. 201 թ. Չարեհն արդեն վաստակ ունեցող գորավար էր և Արտաշեսի հետ միասին Անտիոքոս Գ-ի կողմից նշանակվել էր ստրատեգոս, ապա այդ ժամանակ առնվազն պետք է լիներ 20-25 տարեկան, իսկ Ք.ա. 165-ին՝ 55-60: Այդ տարիքի գործչի առաջնեկը հազիվ թե լիներ պատանի, ուստի կարելի է ենթադրել, որ նա Չարեհի ավագ որդին չէր, այլ կրտսերներից մեկը և իշխանության էր հասել ոչ օրինական, բռնի ճանապարհով, ինչի համար ստացել է «բռնակալ» որակումը: Իսկ այդ դեպքերից կարճ ժամանակ անց (հավանաբար Ք.ա. 163-160 թթ. ընթացքում) հիշատակված Մեհրուծանը կարող էր լինել Չարեհի ավագ որդին, ինչն էլ ապահովեց նրա գահակալումը:

Այսպիսով, տեսնում ենք, որ Քսերքսեսն իշխել է Չարեհից հետո, նրա

¹ Ճակատամարտը տեղի է ունեցել Ք.ա. 190 թ. դեկտեմբերին, իսկ հռոմեացիների հետ դաշինքի բանակցությունները պետք է պահանջեին որոշակի ժամանակ, ուստի ուսումնասիրողները Ծովքի և Մեծ Հայքի թագավորությունների հռչակումը թվագրում են Ք.ա. 189 թվականով:

² **Հովհաննես Անտիոքցի**, II, 53:

³ Մանրամասն տե՛ս **Մարգարյան Գ. Խ.**, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, էջ 242-247, **Էյչիբեկյան Ժ. Գ.**, նշվ. աշխ., էջ 64-67:

իշխանությունը երկարատև չի եղել՝ մինչև Ք.ա. 165 թվականը¹: Ք.ա. 165 թ. Քսերքսեսի՝ պատանի լինելու հանգամանքից ելնելով՝ նրա իշխանության սկիզբը կարելի է թվագրել Ք.ա. 160-ական թթ. սկզբով կամ, առավելագույնը, Ք.ա. 170-ականների վերջով (կարծում ենք, այս պարագայում նախընտրելի է Ք.ա. մոտ 170 թ. նշումը):

Մեհրուժան (Միթրոբուզանես) – Թե ով է գահ բարձրացել Շոփրում Ք.ա. 165 թ. Քսերքսեսի դավադիր սպանությունից անմիջապես հետո, սկզբնադրյուններում ստույգ չի նշվում: Տեղեկանում ենք, որ Շոփքի գահի ինդրին միջամտել են Մեծ Հայքն ու Կապպադովկիան, երբ առաջինում դեռ իշխում էր Արտաշես Ա-ն (Ք.ա. 189-մոտ 160 թթ.), իսկ երկրորդում արդեն գահ էր բարձրացել Արիարաթես Ե-ն (Ք.ա. 163-130 թթ.): Ընդ որում, նշվում է, որ այդ միջամտությամբ Արիարաթես Ե-ն Մեհրուժանին (Միթրոբուզանես) ոչ թե հաստատել, այլ վերականգնել է գահին. «Այն բանից հետո, երբ Արիարաթեսը Միթրոբուզանեսին վերականգնեց հայրենի տերության վրա, Արտաքսիասը՝ Հայաստանի թագավորը, չհրաժարվելով իշխանության նկատմամբ իր ունեցած ընչաքաղցությունից, դեսպաններ ուղարկեց Արիարաթեսի մոտ, առաջարկելով նրան համաձայնել իր հետ և, յուրաքանչյուրն իր մոտ եղած երիտասարդին մահվան ենթարկելով, իրար միջև բաժանել Մովսենեն: Իսկ Արիարաթեսը, որին խիստ օտար էր այդպիսի անագնվությունը, հանդիմանեց դեսպաններին և (նամակ) գրեց Արտաքսիասին, առաջարկելով նրան հեռու մնալ նման գործերից: Հետևաբար, Արիարաթեսն ահա այս գործից հետո, իր անձի շուրջը եղած համբավը մեծ չափով բարձրացրեց: Իսկ Միթրոբուզանեսը, իրեն իշխանության վրա վերականգնողի հանդեպ հիացության արժանի հավաստարմության և ազնվության շնորհիվ՝ տիրացավ իր հայրենի իշխանության»²:

Վկայությունից հասկանալի է դառնում, որ Մեհրուժանը եղել է Շոփքի արքա, գահընկեց է արվել (հավանաբար Արտաշես Ա-ի կողմից, որը հետո էլ չէր հրաժարվել այդ մտադրությունից), ապա վերականգնվել հայրենի գահին Արիարաթես Ե-ի օգնությամբ Ք.ա. 163-160 թթ. ընթացքում³: Դա թույլ է

¹ Քսերքսեսի թունավորումը կնոջ՝ Անտիոքիսի ձեռքով տեղի է ունեցել Ք.ա. 165 թ. Անտիոքոս Դ-ի արևելյան արշավանքի ժամանակ, քանի որ հաջորդ տարի մահացավ նաև ինքը՝ Անտիոքոս Դ-ն:

² **Դիոդորոս Միկիլիսցի**, գիրք XXXI, գլ. 22:

³ Այս ժամանակամիջոցը նշում ենք՝ նկատի ունենալով Արիարաթես Ե-ի գահ բարձրանալու և Արտաշես Ա-ի մահվան ընդունված թվականները: Սակայն ճշմարտության դեմ չմեղանչելու համար նշենք, որ Արտաշես Ա-ի մահվան ընդունված թվականը պայմանական է: Այն են համարել Ք.ա. 160 թվականը՝ ելնելով երկու փաստից: Առաջին՝ Արտաշեսը սկզբնադրյուններում վերջին անգամ հիշվում է Մարաստանի սատրապ Տիմարքոսի ապստամբության առնչությամբ (Ք.ա. 162-160 թթ.), երկրորդ՝ ըստ Մովսես Խորենացու (գիրք Բ, գլ. Կ), նա գահակալել է 41 տարի: Հաշվարկելով Ք.ա. 201 թվականից՝ Արտաշեսի գահակալության վերջը ստացվել է Ք.ա. 160 թվականը: Սակայն նկատենք, որ Մովսես Խորենացու խոսքը վերաբե-

տալիս եզրակացնելու, որ հենց Մեհրուժանն է եղել Ք.ա. 165 թ. Քսերքսեսին հաջորդած Շոփքի արքան: Թե մինչև երբ է իշխել Մեհրուժանը, հայտնի չէ:

Արկաթիո/աս – Այս արքայանունը որևէ սկզբնաղբյուրում վկայված չէ և ուսումնասիրողների վերականգնման արդյունք է: Վերականգնվել է այն Կարկաթիոկերտ քաղաքանունից, որը, ըստ Ստրաբոնի, Շոփքի մայրաքաղաքն էր իր ապրած ժամանակ¹: Բանն այն է, որ բոլոր ուսումնասիրողները գտնում են, որ «Կարկաթիոկետ» քաղաքանունը (որն այլ սկզբնաղբյուրից հայտնի չէ) մեզ է հասել խեղաթյուրված վիճակում: Առաջարկվել է այն վերականգնել «Արկաթիոկերտ» տարբերակով՝ հիմքում տեսնելով Արկաթիո/աս արքայի անունը, որն իր հերթին կապվել է այդ անունը կրող դրամի հետ: Ենթադրվել է նաև, որ նա կարող էր լինել Ջարեհի որդին, որը եղել է մյուս որդու՝ Մեհրուժանի (Միթրոբուզանեսի) մրցակիցը, ում անունը սկզբնաղբյուրներում չի պահպանվել²:

Ավելի հեռուն գնալով՝ Ֆ. Լ. Կովաչն այս ենթադրյալ անունով երկու պոնտացի արքա է տեսնում Շոփքի գահին, ընդ որում, երկրորդ Արկաթիասին նույնացնում է Միհրդատ Չ Եվպատորի նույնանուն որդու հետ, մի բան, որ, ինչպես նշվեց վերը, միանգամայն անհիմն է:

Հարկավոր է նշել, որ «Արկաթիոկերտը» «Կարկաթիոկերտի» վերականգնման միակ տարբերակը չէ: Դեռևս Յ. Մարկվարտը, իսկ հետագայում Ս. Երեմյանը, Ռ. Հյուսնը, Բ. Հարությունյանը հավանական են համարել, որ այդ տեղանունն աղավաղումն է Պտղոմեոսի «Աշխարհագրության» մեջ հիշատակված Արտագիգարտա քաղաքանվան³: Վերջինիս հայերեն տարբերակն ակնհայտորեն «Արտակակերտն» է, որի հիմքում «Արտակ» անձնանունն է: Այս անվան հավանականությունը Շոփքի գահացանկում բավականին մեծ է, եթե նկատի ունենանք, որ Ք.ա. 90-ականներին Շոփքի արքան կրում էր «Արտանես» անունը, իսկ հայոց մեջ առավել սիրված Վահագն-

րում է Արտաշեսի թագավորությանը, ուստի ճիշտ չէ սելևկյան ստրատեգության շրջանը (ինչի մասին Պատմահայրը չի էլ հիշատակում), որի ընթացքում Արտաշեսը Անտիոքոս Գ-ին ենթակա մի պաշտոնյա էր, հաշվարկել որպես թագավորության տարիներ: Եթե թագավորության 41 տարին հաշվենք Ք.ա. 189 թվականից, Արտաշես Ա-ի մահվան համար կստանանք Ք.ա. 148 թվականը (նման սրբագրումն իր հետ կարող է բերել այլ հարցերի պատասխաններ ևս, ինչն առանձին հրապարակման նյութ է): Այսինքն՝ Մեհրուժանի գահին վերահաստատվելը կարող էր տեղի ունեցած լինել Ք.ա. 163-148 թթ. ընթացքում:

¹ «Մոփենեի արքայանիստը Կարկաթիոկերտն է» (**Ստրաբոն**, XI, 14, 2):

² Մ. Չամչյանցը նշում է Ջարեհի այդ որդու անունը՝ Դորոն, սակայն չի վկայակոչում իր սկզբնաղբյուրը (**Չամչյանց Մ.**, նշվ. աշխ., էջ 206-207), ինչը շատ արժանահավատ չի թվում:

³ **Marquart J.**, Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Wien, 1930, S. 34-38 (մինչ այդ նշված աշխատությունը հատվածաբար լույս է տեսել «Հանդես ամսօրեայ»-ի էջերում, տե՛ս 1913, թիվ 9, էջ 530-533), **Hewsen R. H.**, Armenia. A Historical Atlas, Chicago-London, 2001, p. 37, maps № 22-23 (ըստ Բ. Հ. Հարությունյանի), 40, 48, 56 (ըստ Ս. Ս. Երեմյանի), 57, **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա, Երևան, 2001, էջ 188-191:

Հերակլես աստվածն այդ ժամանակաշրջանում Նեմրոթի սրբավայրում վկայված է «Արտագն(ես)» տարբերակով¹: Այսպիսի վերականգնման պարագայում մեծ է գայթակղությունը կապ տեսնելու տվյալ անվան և Չմշկածագի Արտակա (Արդական, Արտըկա, Արտըկան, Արդըզան) բնակավայրի միջև, որը գտնվել է Ծոփաց աշխարհի Ծոփք Շահունի գավառում²:

Նկատի ունենալով ամբողջ ասվածը՝ մինչև նոր ու ավելի ծանրակշիռ փաստերի ի հայտ գալը, կարծում ենք, Ծոփքի թագավորության արքայացանկում «Արկաթիոս» անվան կողքին նույնչափ (գուցեն՝ ավելի) հավանականությամբ պետք է հնարավոր համարենք «Արտակ» արքայանվան թեկնածույունը

Մորֆիլիզ – Ինչպես նշվել է, Մորֆիլիզի կամ Մորփյուդիկեսի մասին մեզ տեղեկացնում է Մովսես Խորենացին, ըստ որի՝ նա մակեդոնացիների ժառանգներից էր և միավորել էր Լազիկան, Պոնտոսը, Փոյուզիան, Կապադովկիան և այլ տարածքներ: Արշակունյաց հայկական ճյուղի հիմնադիր Վաղարշ արքան, հաղթելով նրան, նվաճեց նրա իշխանության տակ եղած երկրները, որով մակեդոնական սպառնալիքը վերացավ³: Օ. Բլաուն մի դրամի վրա (որը նման էր Ջարեհին ենթադրաբար վերագրվող մեկ այլ դրամի) կարդալով հունարեն MOPI և ΣARI մակագրությունները՝ առաջարկեց դրանք վերծանել իբրև «Մորի[ֆիլիզ որդի] Ջարի[ադրեսի]», իսկ Մորֆիլիզին համարել Ծոփքի արքա Ջարեհի որդին և հաջորդը: Օ. Բլաունից հետո բազմաթիվ ուսումնասիրողներ Մորֆիլիզին համարել են Ծոփքի արքա (տե՛ս վերը):

Խորին հարգանք տածելով վերոնշյալ բոլոր ուսումնասիրողների նկատմամբ՝ պետք է արձանագրենք, որ լիովին անհասկանալի է տրամաբանությունը, թե ինչու պետք է Լազիկայի, Պոնտոսի, Փոյուզիայի, Կապադովկիայի և այլ տարածքների մակեդոնական ծագումով տիրակալը համարվի Ծոփքի արքա, որի տիրությունների ցանկում անգամ չի հիշվում Ծոփքը: Ինչ վերաբերում է նշված և մյուս դրամներիին, որոնք Ջ. Ֆրիդլենդերը ենթադրել էր, որ կարող են պատկանել հայ արքաներին⁴, իսկ Օ. Բլաուն վերագրել էր Ծոփքի արքաներին, իրականում կապ չունեն Ծոփքի հետ և պատկանել են Կապադովկիայի արքաներին⁵: MOPI մակագրությունը ոչ թե արքայանվան

¹ Քաղաքանվան հիմքում քիչ հավանական է «Արտագն(ես)» դիցանունը տեսնելը, քանի որ Վանի (Արարատ-Ուրարտու) թագավորության անկումից հետո Հայաստանում չի արձանագրվել որևէ աստծո անունով նոր հիմնված քաղաքի անվանակոչություն:

² Տե՛ս **Գասպարյան Հ. Յ.**, նշվ. աշխ., էջ 294-295, **Հակոբյան Թ. Խ.**, **Մելիք-Բախչյան Ս. Տ., Բարսեղյան Հ. Խ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 409, 490:

³ **Մովսես Խորենացի**, գիրք Բ, գլ. Դ-Ե:

⁴ **Friedlander J.**, նշվ. աշխ., էջ 266-272:

⁵ Այդ փաստի վրա ուշադրություն էին հրավիրել Յ. Մարկվարտը դեռևս 1895 թ. (**Marquart J.**, նշվ. աշխ., էջ 521-526), Կուրտ Ռեգլինգը (**Regling K.**, *Dynastenmünzen von Tyana*,

մաս է, այլ դրամահատման վայրը. Կապադովկիայի արքայական երեք նշանավոր դրամահատարանները գտնվում էին Մորիմա, Անիսա և Տիանա քաղաքներում, որոնց անունները նշվում էին կապադովկիական դրամների վրա¹:

Ի մի բերելով Մորֆիլիզի կամ Մորփյուղիկեսի մասին քննարկված տվյալները արձանագրենք, որ այս արքան ևս կապ չունի Ծոփքի թագավորության գահացանկի հետ:

Արտանեսը – Տիգրան Մեծը, շարունակելով իր պապ Արտաշես Ա-ի քաղաքական ծրագրերը, առաջին խնդիրը համարեց Մեծ Հայքի վերամիավորումը: Եվ արդեն Ք.ա. 94 թ. Տիգրան Մեծի գորքը ներխուժեց Ծոփքի թագավորություն և միավորեց այն Մեծ Հայքին²: Այս դեպքերի առիթով, կրկին Ստրաբոնի երկում կա թեպետ ոչ որոշակի, սակայն ուշագրավ հաղորդում Ծոփքի թագավորություն տարածքային ընդգրկման մասին. «*Արտաքսիասի շառավիղն էր Տիգրանը, որն ուներ այսպես կոչված բուն Հայաստանը. այն հարակից էր Մեդիային, Ադվաններին և Իբերներին, մինչև Կոլխիս ու Եվքսիդյան Կապադովկիա. իսկ Ջարիադրեսի (շառավիղն էր) Արտանես Սուփենացին, որն ուներ հարավային և, առավելապես, արևմտյան մասերը: Տիգրանը հաղթեց նրան և ինքը դարձավ այդ բոլոր երկրների տերը*»³:

Ինչպես նշվել է, Ստրաբոնի հիշատակած Ծոփքի արքա Արտանեսը Ստեփան Բյուզանդացու երկում ներկայացվում է «Արսակես» (Արշակ) անվամբ⁴: Արտանես-Արսակեսը Ծոփքի թագավորությունում իշխած վերջին գահակալն էր:

Տիգրան Կրտսեր – Տիգրան Մեծի ջանքերով Ծոփքը Մեծ Հայքին վերամիավորելուց հետո հայտնի են Ծոփքի թագավորության «վերակենդանացման» երկու փորձեր, որոնցից առաջինն Արտաշատի պայմանագրով Տիգրան Կրտսերին Ծոփքի (և Կորդուքի) թագավոր ճանաչելու Պոմպեոսի ծրագիրն

Morima und Anisa in Kappadokien // «Zeitschrift für Numismatik», Zweiundvierzigster Band, Berlin, 1935, S. 9-16) և ուրիշներ:

¹ Տե՛ս **Marciak M.**, նշվ. աշխ., էջ 74-75: Նույնպիսին է վիճակը նաև Ջարեհին վերագրված դրամի պարագայում (**Blau O.**, նշվ. աշխ., էջ 107-110), որի ANISA մակագրությունը ոչ թե հայրանուն է, այլ թողարկման քաղաքի՝ Անիսայի արձանագրումը, որը Կապադովկիական դրամահատարաններից էր: Այդ դրամը ևս վերագրվում է Արի[ամնես] կամ Արի[արաթես] անվամբ արքաներից որևէ մեկին:

² Մասնագիտական գրականության մեջ այս իրադարձությունը տարբեր հեղինակներ թվագրել են Ք.ա. 95-93 թթ., սակայն, դատելով փաստերից և ժամանակի քաղաքական իրողություններից, առավել հավանական է Ք.ա. 94 թվականը (տե՛ս **Մանանդյան Հ.**, նշվ. աշխ., էջ 140-141, **Սարգսյան Գ. Խ.**, Հայկական աշխարհակալ տերությունը: Տիգրան Բ // ՀԺՊ, հ. I, էջ 558-559, **Մանասերյան Ռ. Լ.**, Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ, Երևան, 1987, էջ 31-32; **Հակոբյան Հ. Պ.**, նշվ. աշխ., էջ 63-65 և այլն):

³ **Ստրաբոն**, XI, 14, 15:

⁴ Տե՛ս **Stephani Byzantii**, նշվ. աշխ., էջ 244-245:

էր, որը չիրականացավ արքայազն Տիգրանի ձերբակալության պատճառով¹:

Որևէ սկզբնաղբյուրում չի նշվում Օռփքում Տիգրան Կրտսերին թագավոր հռչակելու մասին: Ունենք միմյանցից անկախ երկու հաղորդում. առաջինը՝ Տիգրան Կրտսերի՝ հոր ձեռքով թագադրվելու մասին, երկրորդը՝ Պոմպեոսի արշավանքից առաջ Տիգրան Կրտսերի՝ Օռփքի կառավարիչ լինելու հնարավորության մասին: Առաջին հաղորդումը Ապպիանոսինն է, որը Տիգրան Մեծի որդիներին ներկայացնելով, Տիգրան Կրտսերի մասին գրում է. «Իսկ երրորդը՝ Տիգրանը, որը որսի ժամանակ շատ էր անհանգստացել իր հոր համար, թագ էր ստացել նրանից, այսուհանդերձ, քիչ ժամանակ անց սաևս ապստամբելով՝ հեռացավ, պատերազմեց հոր դեմ և պարտվելով, ապաստանեց պարթևների թագավոր Հրահատի մոտ»²: Այս տեղեկությունից էլնելով՝ Հ. Աստուրյանը եզրակացնում է, որ ծերունի Տիգրան Մեծը որդուն հռչակել է գահակից՝ նրան հանձնելով նաև Օռփքի ու Կորդուքի կառավարումը³: Ինչ խոսք, հնարավոր է, որ Լուկուլլոսին երկրից վճռելուց հետո, Հռոմի հետ դեռևս չավարտված պատերազմի պայմաններում, Ք.ա. 67 թ. 73-ամյա Տիգրան Մեծը գահաժառանգ որդուն հռչակել գահակից՝ նրան հանձնարարելով երկրի հարավային և արևմտյան երկու կարևոր նահանգների կառավարումը: Սակայն ուսումնասիրողների մեծ մասը Տիգրան Կրտսերին թագադրելը և գահակից հռչակելը հավանական չի համարում, քանի որ նման փաստը կհիշատակեին մյուս պատմիչները ևս, իսկ Ապպիանոսի տեղեկությունը, Հ. Մանանդյանի բնորոշմամբ, «անորոշ մի վկայություն» է⁴: Ինչ վերաբերում է Պոմպեոսի արշավանքից առաջ Տիգրան Կրտսերին Օռփքի կառավարիչ նշանակելուն, ապա դա միանգամայն հավանական է և կարելի

¹ «Պոմպեոսը... որոշեց, որ որդին (=Տիգրան Կրտսերը) իշխի Օռփքի և Կորդուքի վրա, որոնք այժմ կազմում են Փոքրագույն Հայաստանը, իսկ հայրը՝ մյուս Հայաստանի վրա, և որ տղան պետք է լինի ժառանգորդը... Բայց քանի որ նա (=Տիգրան Կրտսերը) մինչև այդ փորձել էր պարթևներին ոտքի հանել Պոմպեոսի դեմ, ձերբակալվեց, շղթայակապ արվեց, տարվեց նրա հաղթահանողեսին ու (հետագայում) սպանվեց» (**Ապպիանոս**, գիրք XII, 105): Ըստ Պլուտարքոսի՝ Պոմպեոսը Տիգրան Մեծին Արտաշատի պայմանագրի կնքման ժամանակ, ի թիվս այլ պայմանների, հայտնեց, որ «Օռփքում կթագավորի նրա որդին: Տիգրանն այս պայմանները սիրով ընդունեց, և այնժամ հռոմայեցիները նրան արքայավայել ողջունեցին... Որդին, ընդհակառակը, խիստ դժգոհեց և, երբ նրան հրավիրեցին հյուրասիրության, հայտարարեց, թե ինքը Պոմպեոսի կողմից նման պատիվների կարիքը չունի, քանի որ կարող էր իր համար այլ հռոմայեցու ճարել: Այնժամ Պոմպեոսը հրամայեց շղթայել նրան և պահել բանտում, հաղթահանողեսի համար» (**Ջուզակչիոք**, Պոմպեոս, 33): Նման բովանդակությամբ հաղորդում ունի նաև Դիոն Կասսիոսը (**Դիոն Կասսիոս**, գիրք XL, 53, 2-4):

² **Ապպիանոս**, գիրք XII, 104:

³ Տե՛ս **Աստուրեան Հ. Յ.**, նշվ. աշխ., էջ 77: Հ. Աստուրյանի տեսակետի պաշտպանությամբ վերջերս հանդես եկավ Ս. Դ. Լիտովչենկոն (**Литовченко С. Д.**, Царство Софена в восточной политике Помпея // «Древности», Харьковский историко-археологический ежегодник, вып. 10, Харьков, 2011, с. 36-37):

⁴ Տե՛ս **Մանանդյան Հ.**, նշվ. աշխ., էջ 233:

է հիմնավորել Դիոն Կասսիոսի ուշագրավ տեղեկությամբ¹: Սակայն հարկ է նշել, որ Տիգրան Կրտսերին Ծովքի կառավարիչ նշանակելը որևէ կապ չունի Ծովքի թագավորության հետ: Հայտնի է, որ Տիգրան Մեծն իր նվաճած Մելկյան պետության կառավարիչ էր նշանակել Բագադատեսին, Հյուսիսային Միջագետքում՝ իր եղբայր Գուրասին: Նույն կերպ էլ, Լուկուլլոսին պարտության մատնելուց և վտարելուց հետո Տիգրան Մեծն արևմտյան կարևոր սահմանային նահանգի կառավարիչ կարող էր նշանակել իր թագաժառանգ որդուն: Դա, բնականաբար, որևէ կապ չունի Ծովքի թագավորությունը վերականգնելու գաղափարի հետ, մի բան, որը կհակասեր հայկական հողերը միավորելու Տիգրան Մեծի քաղաքականությանը, ինչը գերակա էր մեծ տիրակալի իշխանության հենց սկզբից:

Ինչպես տեսնում ենք, Տիգրան Կրտսերը ևս չի կարող տեղ գտնել Ծովքի թագավորության գահացանկում:

Սոհեմոս – Ծովքի թագավորության «վերակենդանացման» երկրորդ փորձը վերաբերում է մեր թվարկության I դ. կեսերին: Ներոն կայսրը 54 թ. Եմեսիայի Սոհեմոս արքային ճանաչում է նաև Ծովքի արքա, ինչի մասին Տակիտոսն ունի հետևյալ հաղորդումը. «Տարվա վերջում անհանգիստ լուրեր են տարածվում, որ պարթևները նորից ներխուժել և հափշտակում են Հայաստանը, դուրս քշելով Ռադամիստին... Այս ու նման լուրեր էին տարածում ժողովրդի մեջ. Ներոնը հրամայում է Արևելքի լեզեոնները լրացնելու համար մերձակա պրովինցիաներում ժողովված երիտասարդությունը մոտեցնել և տեղավորել Հայաստանի սահմանների մոտ, իսկ երկու հին թագավորների՝ Ագրիպպային ու Անտիոքոսին ռազմի համար զորքեր նախապատրաստել, որոնցով պիտի ներխուժեին պարթևական սահմանները: Միաժամանակ

¹ Ըստ այդ տեղեկության՝ Ծովքի գանձապահ բերդերը հրաժարվում էին ենթարկվել որևէ մեկին, բացի Տիգրան Կրտսերից: Չքննարկելով տեղեկության բոլոր հնարավոր մեկնաբանությունները՝ այն մեջբերում ենք ամբողջությամբ. «(Պոմպեոսը) կրտսեր Տիգրանին պարզեց միայն Ծովքը: Եվ քանի որ պատահամբ Ծովքում էին գտնվում գանձատները, ուստի և երիտասարդը սրանց պատճառով վիճեց և հաջողություն չունենալով, քանի որ Պոմպեոսը ոչ մի այլ տեղից չէր կարող ստանալ պայմանավորված գումարը, դժգոհեց և մտադրվեց փախչել: Սակայն Պոմպեոսը, տեղեկանալով այդ մասին, նրան հսկողության տակ վերցրեց՝ առանց կալանքի, և սուրհանդակներ ուղարկելով գանձերի պահապանների մոտ, հրամայեց նրանց, որ այդ բոլորը հանձնեն նրա հորը: Եվ որովհետև նրանք չհնազանդվեցին, ասելով, թե երիտասարդը (Տիգրանը), որին այժմ պատկանում է այդ երկիրը, պետք է այդ բանը հրամայի իրենց, ապա (Պոմպեոսը) նրան ուղարկեց դեպի բերդերը: Եվ սա, բերդերը փակ գտնելով, մոտիկ գնաց և դժկամությամբ հրամայեց բաց անել դրանք: Եվ երբ նրանք այլևս չէին հնազանդվում, առարկելով, որ նա այդ հրամանը տվել է ոչ թե կամովին, այլ հարկադրված, Պոմպեոսը զայրացավ և շղթայեց (երիտասարդ) Տիգրանին: Եվ այսպիսով, ծերունի (արքան) ստացավ գանձարանները. իսկ նա զորքը երեք մասի բաժանելով, ձմեռեց Անահտական երկրում և Կյուռնոս գետի մոտ ու Տիգրանից էլ մեծ քանակությամբ այլ բաներ ևս ստացավ, ինչպես նաև պայմանավորվածից ավելի շատ գանձեր» (Դիոն Կասսիոս, գիրք XL, 53, 2-5):

կարգադրում է Եփրատ գետի վրա կամուրջներ գցել: Եվ Փոքր Հայքը հանձնում է Արիստոբուլոսին, իսկ Սոֆենեի մարզը՝ Սոհեմին, երկուսին էլ տալով թագավորական նշաններ»¹: Ելնելով Տակիտոսի այս հաղորդումից՝ որոշ ուսումնասիրողներ մինչև 60 թ. (Տիգրան Զ-ի կառավարումը) կամ 63 թ. (Հռանդեայի ճակատամարտը) հաշվում են Սոհեմոս Եմեսացու թագավորությունը Շոփքում: Սակայն այստեղ ևս պետք է հավատարիմ մնալ սկզբնաղբյուրների հաղորդումներին: Տակիտոսի հաղորդումը վերաբերում է միայն 54 թ. վերջին, ընդ որում Սոհեմոսին տրվել է «Սոֆենեի մարզը», ոչ թե Շոփքի թագավորությունը և այդ շնորհումը կատարվել է հեռակա, առանց Սոհեմոսի Շոփք այցելության: Եթե Փոքր Հայքի և Արիստոբուլոսի կապի մասին կան տեղեկություններ նաև հետագա տարիների դեպքերի առնչությամբ, ապա Սոհեմոսի և Շոփքի կապի մասին ո՛չ Տակիտոսի երկում, ո՛չ էլ այլ սկզբնաղբյուրում որևէ տեղեկություն այլևս չկա: Այսինքն՝ այստեղ գործ ունենք Պարթևստանի դեմ պատերազմում Եմեսիայի թագավորության շահագրգիռ մասնակցությունն ապահովելու Ներոնի խորամանկ մտադրության հետ, որը, սակայն, չի վերածվել Շոփքի թագավորության վերականգնման: Հետևաբար, Սոհեմոսին ևս որևէ հիմք չունենք ընդգրկելու Շոփքի թագավորության արքայացանկում:

Այսպիսով, ի մի բերելով սկզբնաղբյուրների տեղեկություններն ու նոր ժամանակների հետազոտողների ուսումնասիրությունների քննությունը, տեսնում ենք, որ, թեպետ գրականության մեջ շրջանառվել է երկու տասնյակ անուն, իրականում Շոփքի 95-ամյա թագավորությունն ունեցել է հինգ գահակալ: Այսօր կարող ենք արձանագրել, որ այդ հինգից չորսի մասին ունենք որոշակի տեղեկություններ, իսկ մեկը (չորրորդ գահակալը) շարունակում է մեզ ներկայանալ տեսական վերականգնումների ճանապարհով: Այսպիսով, Շոփքի թագավորության գահացանկն ունեցել է հետևյալ պատկերը.

Զարեհ – Ք.ա.189 – մոտ 170 թթ.,

Քսերքսես – Ք.ա. մոտ 170-165 թթ.,

Մեհրուժան (Միթրոբուզանես) – Ք.ա. 165 – ?,

Արկաթիոս / Արտակ / Դորոն – անհայտ,

Արտանես (Արսակես) – ? – Ք.ա. 94 թվականներ:

Այս արքայացանկի հետ կապված մի շարք հարցեր իրենց պատասխանները կստանան հետագա ուսումնասիրությունների ընթացքում:

¹ **Տակիտոս**, XIII, 6-7 (ՀԺՊԲ-ի հայերեն թարգմանության մեջ նշված է՝ «Սոֆենեի թագավորությունը», մինչդեռ բնագրում Շոփքը կոչվում է «մարզ»):

Артак Мовсисян – Царский список Софенского царства

Начиная с XVIII века исследователи в качестве правителей Софенского царства называли около двух десятков кандидатов, которые рассматриваются в статье. В результате уточняется, что за всю 95-летнюю историю Софенского царства было пять правителей:

Зариадр (Зарех) – 189 – ок. 170 гг. до р. Хр.,
Ксеркс – ок. 170 – 165 гг. до р. Хр.,
Митробузанес (Мехружан) – 165 г. до р. Хр. – ?,
Аркадий / Артак / Дорон – ?,
Артанес (Арсакес) – ? – 94 г. до р. Христова.

Artak Movsisyan – The List of Kings of the Kingdom of Sophene

Since the XVIII century researchers have proposed about two dozen candidates, who ruled in the Kingdom of Sophene, which are considered in this article. As a result of the study, it was clarified that during its 95-year history the Kingdom of Sophene had five kings:

Zariadres (Zareh) – 189 - c. 170 BC,
Xerxes – c. 170 - 165 BC,
Mitrobuzanes (Mehruzhan) – 165 BC - ?,
Arkaios / Artak / Doron – ?,
Artanes (Arsakes) – ? - 94 BC.

Ներկայացվել է 31.01.2020

Գրախոսվել է 02.02.2020

Ընդունվել է տպագրության 30.06.2020

**ԿԱՐՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ԹՎԱԿԱՆԸ ԵՎ
ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ**

Բանալի բառեր – Կարսի թագավորություն, Վանանդ, թագավորության հռչակում, ձեռագիր, հայկական սկզբնաղբյուր, թագավորության տարածք, արքունի տիրույթ, վարկած

Հայոց թագավոր Աշոտ Գ Ողորմածի օրոք (953-978) Կարսում առանձին թագավորության հռչակման հարցը, լինելով Բագրատունյաց թագավորության պատմության համար հույժ հենքային, դարձել է մի շարք պատմաբանների քննության թեմա: Չնայած դրան՝ այն շարունակում է մնալ Բագրատունյաց թագավորության պատմության՝ հավելյալ ուսումնասիրության կարոտ հիմնահարցերից մեկը: Առաջին հերթին խիստ թերի է այդ թագավորության հիմնադրման ժամանակագրության և պատմական հանգամանքների քննությունը, որի հետևանքով հայոց միասնական թագավորության փաստացի տրոհման իրողությունը, ըստ էության, հիմնավոր լուսաբանում և բացատրություն չի ստացել:

Ի սկզբանե նշենք, որ բոլոր ուսումնասիրողները Կարսի թագավորության ստեղծմանն առնչվող իրադարձությունների առաջընթացի իրենց տարբերակը ներկայացնելիս հղել են Աստղիկի հաղորդած տեղեկություններից մեկը. «Եւ զկնի Աբասայ թագաւորեաց Աշոտ որդի նորա, որ եւ Շահանշահ կոչիր՝ ամս ԻԵ: Եւ Մուշեղ եղբայր նորա առ նովաւ թագաւորեաց ի Կարս»¹: Միաժամանակ նրանք դրանով են մեկնաբանել դեպքերի զարգացման հնարավոր տարատեսակ տարբերակները:

Դեռևս XX դ. սկզբին Մտ. Պալասանյանը Կարսի թագավորության ստեղծումը անհայտ տրամաբանությամբ թվագրել է 968 թվականով: Ըստ նրա՝ «...Մուշեղ մի քանի կուսակիցներ ժողովեց իւր շուրջը և նոցա օգնութեամբ Վանանդ զաւառում առանձին թագաւորութիւն հիմնեց Կարս մայրաքաղաքով (968 թ.): Աշոտ ներքին կոթիւների պատճառ չտալու համար՝ ոչ միայն ճանաչեց այս նոր թագաւորութիւնը, այլ և լաւ յարաբերութիւններ պահպանեց իւր եղբոր հետ»²: Կուսակիցների օգնությամբ 968 թ. Մուշեղի կողմից Վա-

¹ **Ստեփանոս Տարանեցի Աստղիկ**, Պատմութիւն տիեզերական // «Մատենագիրք Հայոց», ԺԵ., հ. Ժ. դար, Պատմագրութիւն, գիրք Բ, Երևան, 2011, էջ 755 (այսուհետև՝ **Աստղիկ**):

² **Պալասանեան Ս.**, Պատմութիւն Հայոց, սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիս, 1902, էջ 295:

նանդում Կարս մայրաքաղաքով թագավորության հիմնադրումը ամբողջությամբ հեղինակի մտահանգումն է, ընդ որում՝ առանց որևէ հիմնավորման՝ ըստ սկզբնաղբյուրների: Հետագայում, ամենայն հավանականությամբ, հենց Ս. Պալասանյանի տեսակետը հիմք ընդունելով, Հ. Աճառյանը ևս Կարսի թագավորության հիմնադրումը թվագրել է 968 թվականով¹:

Կարսի թագավորության ստեղծման վերաբերյալ խիստ հակասական է Լեոյի տեսակետը: Ըստ նրա՝ երբ Աշոտ Գ-ն տեղափոխվեց Անի, նրա «եղբայր Մուշեղը մնաց Կարսում և, օգտվելով այն հանգամանքից, որ իր հայրն այնտեղ թագավորական գահ էր հաստատել, իրեն հայտարարեց նրա ժառանգ, և այսպիսով թագավոր նստեց Աշոտի կողքին, որը չդիմադրեց այդ բանին, քանի որ Մուշեղը նրան կատարյալ հպատակություն խոստացավ»²: Մի կողմ թողնելով, որ Լեոյի կարծիքը որևէ սկզբնաղբյուրային տեղեկություններով չի հիմնավորվում, նշենք, որ այն անտրամաբանական է և շինծու: Մտացվում է, որ «գահ հաստատելը»՝ նշանակում է տարածքը կամ քաղաքը օժտել գահով, ուստի այնտեղ հաստատված յուրաքանչյուր իշխող կարող է հավակնել այդ գահին, ինչպես վարվել է Մուշեղը: Մյուս կողմից, չնայած Մուշեղը իրեն հռչակել է իր հոր՝ Աբաս Բագրատունու ժառանգ, բայց կատարյալ հպատակություն է հայտնել վերջինիս օրինական ժառանգ Աշոտ Գ-ին, որը չի դիմադրել եղբոր թագավոր դառնալուն, մինչդեռ, եթե վերջինս իսկապես իրեն հռչակեր հոր՝ հայոց արքա Աբասի ժառանգ, Աշոտ Գ-ն ինքնաբերաբար կդիմադրեր նրան, քանի որ այդպիսով վիճարկվում էր նրա առաջնության իրավունքը:

Ավելի ուշ Աշոտ Գ-ի եղբայր Մուշեղի՝ Կարսում թագավոր հռչակվելու առնչությամբ Ս. Երեմյանը շրջանառել է 960-ական թվականների սկզբին, իսկ ավելի ստույգ՝ 963 թ., այդ իրադարձության տեղի ունենալու փաստը հիմնավորող տեսակետը: Ըստ նրա՝ «երբ Աշոտ Գ-ն 961 թ. մայրաքաղաքը փոխադրեց Անի, Կարսի կառավարիչ նշանակվեց նրա եղբայր Մուշեղ Բագրատունին, որը 963 թ. իրեն հռչակեց Կարսի ու նրա գավառի թագավոր՝ «թագավոր Կարուց»: Աշոտ Գ-ն հարկադրված էր ճանաչել նրա թագավորությունը, բայց որպես ենթակա թագավորություն»³: 963 թ. Կարսի թագավորության հիմնադրման տեսակետի կողմնակիցն է նաև Կ. Յուզբաշյանը⁴:

Հ. Հարությունյանը կարծում էր, որ Աշոտ Գ-ն Մուշեղին Կարսի կառավարիչ է նշանակել այն բանից հետո, երբ նա տեղափոխվել է Անի, ապա 962

¹ Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ., Երևան, 1946, էջ 462-463:

² **Լեո**, Երկերի ժողովածու, հ. երկրորդ, Երևան, 1967, էջ 578:

³ **Երեմյան Ս.**, Կարսը IX-XI դարերում // Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1976, էջ 95: Տե՛ս նաև՝ **Еремян С.**, Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке // «Երբեր հիստորիական գիտությունների» (այսուհետև՝ «ԼՀԳ»), 1971, թիվ 3, էջ 7:

⁴ Տե՛ս **Юзбашян К.**, Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., Москва, 1988, с. 72, 75:

թ. Բյուզանդիայի դրդամբ ապատամբել է եղբոր դեմ՝ իրեն հռչակելով թագավոր: Ներքին խռովություններից խուսափելու համար Աշոտ Գ-ն ճանաչել է նրա թագավորությունը՝ պայմանով, որ նա ենթարկվի իրեն, պայման, որը Մուշեղը կատարել է մինչև 984 թվականը¹: Համանման տեսակետ է հայտնել նաև Թ. Հակոբյանը²:

Ռ. Մաթևոսյանը Կարսի թագավորության ստեղծումը թվագրում էր 961 թվականով, երբ Անի տեղափոխվող Աշոտ Գ-ն եղբորը նշանակել է Կարսի կառավարիչ և ճանաչել որպես Կարսի թագավոր³: Նա կարծում էր, որ Մուշեղին թագավոր է կարգել անձամբ Աշոտ Գ-ն՝ ելնելով այն իրողությունից, որ հայոց թագավորության արևմտյան սահմաններին ահագնացել էր Բյուզանդիայից եկող վտանգը, ինչը սկիզբ էր առել այն բանից հետո, երբ 949 թ. բյուզանդական զորքը գրավել էր Կարսին, Հավնունիքն ու Բասենը և ստեղծել բանակաթեմ⁴: Նա գտնում էր, որ երկու եղբայրները փաստորեն բաժանել են հայրական ժառանգությունը, որով Վանանդ-Երասխաձորը անցել է Մուշեղին, և այդ բաժանումն ամրագրվել է վերջինիս՝ թագավոր հռչակվելով⁵:

Իր մեկ այլ հոդվածում Ռ. Մաթևոսյանը կարծիք էր հայտնում, որ Աշոտ Գ-ն Մուշեղին կարգել կամ «նշանակել» է թագավոր: Հայկական մանր ժամանակագրություններից մեկում հանդիպող «... Աշոտ ... զեղբայր իւր՝ զՄուշեղ Կարուց կացոյց թագաւոր»⁶ հիշատակության «կացոյց» բառը նա մեկնաբանել է իբրև «նշանակել»⁷, թեև իր իսկ հղած «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» բառարանում նշված են այդ բառի «դնել», «հաստատել», «կարգել» բացատրությունները⁸: Այն է՝ տվյալ պարագայում խոսքը կարող է վերաբերվել ոչ թե նշանակմանը, այլ թագավոր նշանակելուն, հաստատելուն կամ կարգելուն, ինչին կանդրադառնանք ստորև:

Հուլի 2ինձու է «Հայոց պատմության» ակադեմիական նոր հրատարակությունում Կարսի թագավորության ստեղծման նկարագրությունը, որը էապես տարբերվում է «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական նախորդ հրատարակությունում Ս. Երեմյանի առաջ քաշած վերոհիշյալ կարծիքից: Համապատասխան բաժնի հեղինակ Ա. Ութուջյանը գրում է, թե իբր Աշոտ Գ-ն մայրաքաղաքը Անի տեղափոխելուց հետո, նույն 961 թ. Վանանդը առանձ-

¹ Տե՛ս **Հարությունյան Հ.**, Հայաստանը IX-XI դարերում, Երևան, 1959, էջ 97:

² Տե՛ս **Հակոբյան Թ.**, Անի մայրաքաղաք, Երևան, 1988, էջ 22:

³ Տե՛ս **Մաթևոսյան Ռ.**, Վանանդը Բագրատունյաց թագավորական ոստանի մարզ (X դ. առաջին կես) // «ԼՀԳ», 1979, թիվ 4, էջ 81:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 82:

⁶ «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 501:

⁷ Տե՛ս **Մաթևոսյան Ռ.**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Երևան, 1990, էջ 152:

⁸ Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. առաջին, Ա-Կ, Երևան, 1979, էջ 1078:

նացրել է որպես փոխարքայություն՝ կառավարիչ (այսինքն՝ փոխարքա) նշանակելով եղբորը՝ Մուշեղին, որը պետք է իրականացներ երկրի՝ «Բյուզանդիային սահմանամերձ ռազմավարական գոտիների պաշտպանության հույժ կարևոր գործը»: Մուշեղի ստացած պաշտոնը նա համարում է արքունի ծառայություն և, հետևելով Ռ. Մաթևոսյանին¹, այդ պաշտոնի գործառույթները համեմատում Արշակունյաց շրջանի բղեշխի գործառույթների հետ: Ի վերջո Ա. Ութուջյանը արձանագրում է. «Մակայն Մուշեղը դրսևորում է առավել ինքնուրույն, կենտրոնից անջատվելու և ինքնուրույն իշխելու միտումներ, որն Ասողիկին իրավունք է տվել նրան անվանելու թագավոր», թեև «այս դեպքում «թագավոր» հորջորջումը սուկ պատիվ էր, որ տրվում էր հատուկ ծառայության դիմաց (ըստ հեղինակի՝ այն տրվել է 963 թ. – Ա. Ե.)»²: Այն է՝ ստացվում է, որ 961 թ. ապագա Կարսի թագավորության ընդգրկած տարածքը առանձնացվել է որպես փոխարքայություն, որի կառավարիչը պետք է իրականացներ Բյուզանդիային հարևան տարածքների պաշտպանությունը: Այդ գործառույթն անհիմն կերպով համեմատվում է Արշակունյաց դարաշրջանի բղեշխի գործառույթի հետ, իսկ այնուհետև նույնքան անհիմնորեն «թագավոր» տիտղոսը համարվում է «հատուկ ծառայության դիմաց» տրված «պատիվ»: Անիրական է նաև հեղինակի այն վարկածը, թե իբր Մուշեղին թագավոր կոչելու համար Ասողիկին իրավունք է տվել այն, որ Կարսի տիրակալը, կենտրոնախույս ձգտումներ հանդես բերելով, փորձել է իշխել ինքնուրույնաբար: Իրականում նման գործելաոճը չի կարող որևէ մեկին թագավոր կոչելու իրավունք տալ: Հայտնի է, որ թագավոր լինել նշանակում է նախևառաջ թագադրված լինել:

Փաստորեն, Ասողիկի հետևյալ տեղեկությունից են բխել նման իրարամերձ և հակասական տեսակետները. «Աբասից հետո 25 տարի թագավորեց նրա որդի Աշոտը, որ Շահանշահ էր կոչվում: Եվ նրա եղբայր Մուշեղը նրա օրոք թագավորեց Կարսում»³: Մինչդեռ այնտեղ չկա ոչ մի ակնարկ ապստամբության և Աշոտ Գ-ի՝ եղբոր թագավորությունը ստիպված ճանաչելու մասին: Ավելին, ըստ այս տեղեկության՝ հնարավոր չէ նաև ճշգրտել այդ իրադարձության թվականը: Վերջինս, անկասկած, միայն տրամաբանորեն է տեղադրվել Աշոտ Գ-ի՝ Անի տեղափոխվելուց հետո, քանի որ մինչ այդ Կարսը Աշոտ Գ-ի նստոցն էր:

Նշված բոլոր հետազոտողներն անուշադրության են մատնել հայկական և վրացական սկզբնաղբյուրներում պահպանված կարևոր տեղեկություն-

¹ Տե՛ս **Մաթևոսյան Ռ.**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 159:

² Տե՛ս **Ութուջյան Ա.**, Կարսի (Վանանդի) թագավորություն // «Հայոց պատմություն», հ. II, Միջին դարեր (IV դար-XVII դարի առաջին կես), գիրք երկրորդ, (IX դարի կես-XVII դարի առաջին կես), Երևան, 2014, էջ 121:

³ **Ասողիկ**, էջ 755:

ները (կամ պարզապես դրանց անտեղյակ են եղել), որոնք մի կողմից ամբողջությամբ փլուզում են Կարսի թագավորության՝ 960-ական թթ. սկզբներին ստեղծված լինելու տեսակետը, իսկ մյուս կողմից՝ այդ թագավորության հիմնադրումը Աշոտ Գ-ի՝ Անի տեղափոխվելու հետ կապելու վարկածը:

Մասնավորապես, հայկական ձեռագրերից մեկում («Պատմութիւն Ս. Կենսաբերին և սոսկալի Ս. Նշանին, թէ որպէս բերաւ յաշխարհն Արշարունեաց ի Կամրջաձորոյ») առկա է հետևյալ տեղեկությունը. «Եւ յետ Սմպատայ՝ Մուշեղ հորեղբայր նորա թագաւորեալ ինն ամ, և սա մեռանի. և յետ սորա Աբաս թագաւորեալ ամս վեց...»²: Պարզվում է, որ Մուշեղը թագավորել է միայն ինը տարի, իսկ այն մասին, որ Մուշեղից հետո Աբասը Կարսում թագավորել է վեց տարի, տեղեկացնում է նաև Ասողիկը³: Բացի այդ, Փարսադան Գորգիջանիձեի «Վրաստանի պատմությունը» երկասիրությունում նշված է, որ Մուշեղը թագավորել է տասը տարի⁴: Նա Բագրատունի արքաների թագավորության տարիների վերաբերյալ հաղորդում է ճշգրիտ և հայկական սկզբնաղբյուրներին համապատասխան տեղեկություններ՝ Աշոտ Գ՝ 25 տարի⁵, Սմբատ Բ՝ 13 տարի⁶ և այլն, ուստի նրա տեղեկության այս հատվածը անուշադրության մատնելու կամ կասկածի ենթարկելու որևէ հիմք չկա:

Փաստորեն, հայկական և վրացական երկու սկզբնաղբյուրները Մուշեղին վերագրում են իննից տասը տարվա գահակալություն: Իսկ ինչ վերաբերում է այն իրողությանը, որ հայկական սկզբնաղբյուրում Մուշեղի թագա-

¹ «Եւ յետ Սմպատայ Մուշեղ հորեղբայր նորա թագաւորեալ ինն ամ...» տեղեկության մեջ «յետ Սմպատայ» արտահայտությունից հետո հիշատակվում են ոչ թե Գագիկ Ա-ն (990-1018) և հաջորդները, այլ Կարսի թագավորները՝ Մուշեղը, Աբասը և մանուկ Գագիկը, որը հուշում է, որ պատմիչը Բագրատունյաց ավագ ճյուղի նկարագրությունից «յետ Սմպատայ»-ով անցում է կատարել Կարսի ճյուղի գահակալներին:

² «Այրարատ. բնաշխարհի Հայաստանեայց», տեղագրեաց Հ. Ղեւոնդ Վ. Ս. Ալիշան, Վենետիկ-Ս. Ղազար, 1890, էջ 548: Տե՛ս նաև **Գարեգին Ա. կաթողիկոս**, Յիշատակարանը ձեռագրաց, հ. Ա. (Ե. դարից մինչև 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 175:

³ Տե՛ս **Ասողիկ**, էջ 766:

⁴ Տե՛ս **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին: Քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ. ներածություն-ծանոթություններով յեվ հավելվածներով, հ. Բ. (ԺԳ-ԺԸ դար), Յերեվան, 1936, էջ 97:

⁵ Հմմտ. **Ասողիկ**, էջ 755. «Եւ գկնի Աբասայ թագաւորեաց Աշոտ որդի նորա, որ եւ Շահանշահ կոչիւր՝ ամս ԻԵ (25 – Ա. Ե.):» Աբասի մահը պատմիչը վերագրում է հայոց 402 թվականին (953/954 թ. – Ա. Ե.): Տե՛ս նույն տեղում: Հետևաբար այդ նույն թվականին է համընկնում Աշոտ Գ-ի գահ բարձրանալը, որից մինչև նրա մահը՝ հայոց 426 թվականը (977/978 թ.), ըստ տարիների կազմում է 25 տարի:

⁶ Հմմտ. **Ասողիկ**, էջ 760. «...Մեռաւ թագաւորն Հայոց՝ արինեալն Աշոտ՝ ի ՆԻԶ թուականին (426 թ.-977/978 թ. – Ա. Ե.), եւ ի նոյն ատուր թագաւորեաց Սմբատ որդի նորա ամս ԺԳ (13 – Ա. Ե.):» Այնուհետև Ասողիկը Սմբատ Բ-ի մահը վերագրում է հայոց 438 թվականին (989/990 թ.): Տե՛ս նույն տեղում, էջ 808: Հայոց 426 և 438 թվականների միջակայքը՝ ըստ տարիների, կազմում է 13 տարի:

վորության տևողությունը նշվում է ինը տարի, իսկ վրաց հեղինակի կողմից՝ տասը տարի, ապա դա կարելի է վերագրել նշված սկզբնաղբյուրներում հաշվարկը կա՛մ ըստ տարիների և կա՛մ տարեշրջաններով հաշվարկելու իրողությանը: Նման դեպքերը հայտնի են: Օրինակ, Թովմա Արծրունին և Ասողիկը ընդունում են Աշոտ Ա արքայի գահակալությունը հայոց 336 (887/888)-339 (890-891) թվականների ընթացքում¹, սակայն նրանցից առաջինը Բագրատունի առաջին արքային վերագրում է չորս², իսկ մյուսը՝ հինգ տարվա գահակալություն³: Ակնհայտ է, որ Թովմա Արծրունին Աշոտ Ա-ի գահակալությունը հաշվարկում է տարեշրջաններով (887-888 թթ.՝ մեկ լիարժեք տարի, 888-889 թթ.՝ մեկ լիարժեք տարի, 889-890 թթ.՝ մեկ լիարժեք տարի, 890-891 թթ.՝ մեկ լիարժեք տարի, ընդամենը՝ չորս լիարժեք տարի), իսկ Ասողիկը՝ ըստ տարիների (887 թ.՝ առաջին տարի, 888 թ.՝ երկրորդ տարի, 889 թ.՝ երրորդ տարի, 890 թ.՝ չորրորդ տարի, 891 թ.՝ հինգերորդ տարի):

Ասողիկի հավաստի տեղեկությամբ՝ Մուշեղը վախճանվել է հայոց 435 թ. (984/985 թ.)⁴: Ուստի, եթե ընդունենք, որ նրա գահակալությունը սկիզբ է առել 962 կամ 963 թվականից, ինչպես կարծում են վերոհիշյալ հեղինակները, կստացվի, որ նա գահակալել է 22-23 տարի: Ակնհայտ է, որ Մուշեղի գահակալության տարիների հիշատակությունները սկզբնաղբյուրներում, հաշվի առնելով այն, որ հստակ է նրա մահվան թվականը, 960-ական թթ. նրա գահակալության սկիզբնավորման թվագրման հնարավորությունը ընդհանրապես ի չիք են դարձնում: Մուշեղի մահվան 984 թվականից ինը կամ տասը տարի էտ գնալու դեպքում հանգում ենք նրա գահակալության սկզբնավորման 974 կամ 975 թվականին, որը մտորումների տեղիք է տալիս, քանի որ հենց այդ ժամանակ Հայոց թագավորությունը բախվում էր բուռն և վտանգներով լի իրադարձությունների, որոնք կարող էին հիմքեր ստեղծել Կարսի որպես նոր թագավորության կենտրոն հանդես գալու համար: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է Բյուզանդիայի կայսր Հովհաննես Չմշկիկի (969-976) 974 թ. արշավանքի հետևանքով առաջ եկած ծանր կացությանը, որը կարող էր հնարավորություն տալ մի շարք հայ ավատատերերի թագավորական նկրտումներ հանդես բերելու համար: Լիովին հավանական է Հ. Հարությունյանի տեսակետն այն մասին, որ Մուշեղն իրեն թագավոր է հռչակել Բյուզանդիայի դրդմամբ:

¹ Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց // «Մատենագիրք Հայոց», ԺԱ., հ. Ժ. դար, «Պատմագրութիւն», Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 236-238 [ըստ պատմիչի՝ հայոց 339 թ. (890/891 թ.) դրությամբ Աշոտ Ա-ն գահակալել էր չորս տարի, այսինքն՝ գահին էր բազմել հայոց 336 թ. (887/888 թ.)]; **Ասողիկ**, էջ 740-741 [ըստ պատմիչի՝ Աշոտ Ա-ն գահակալել է հայոց 336 թվականից (887/888 թ.) սկսած հինգ տարի, իսկ նրան հաջորդած Սմբատ Ա-ն՝ հայոց 340 թվականից (891/892 թ.) սկսած]:

² Տե՛ս նույն տեղում, էջ 238:

³ Տե՛ս **Ասողիկ**, էջ 741:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 766:

Ուստի կարելի է նշել, որ Կարսի թագավորության հիմնադրումը տեղի է ունեցել ամենայն հավանականությամբ 975 թ., որից մինչև Մուշեղի մահվան 984 թվականը ըստ տարիների հաջորդականության հաշվարկելով (975 թվականը՝ առաջին տարի, 976 թվականը՝ երկրորդ տարի և այդպես շարունակ)՝ կատարվի 10 տարի, իսկ տարեշրջաններով հաշվարկելու պարագայում (975-976 թթ. մեկ լիարժեք տարի, 976-977 թթ.՝ երկու լիարժեք տարի և այլն)՝ ինը տարի, որքան էլ, ըստ նշված սկզբնաղբյուրների, իշխել է Մուշեղը:

Ինչ վերաբերում է Կարսի թագավորության հանդես գալու հանգամանքներին, ապա, կապված Ասողիկի՝ Մուշեղի նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի հետ, երբ պատմիչը նրա վարմունքը անուղակիորեն դատապարտում է՝ նրան հիշատակելով որպես մարմնական հաճույքներին տրված անձի¹, իսկ այնուհետև Սմբատ Բ-ի (978-990) և Մուշեղի թշնամանքի հետ², կարելի է կարծել, որ այն առնվազն սկզբնական շրջանում համաձայնեցված չէր Աշոտ Գ-ի հետ: Հավանաբար Մուշեղը, որի նստոցը Կարսն էր, օգտվելով Հովհաննես Չմշկիկի արշավանքների ստեղծած վտանգից, հանդես էր եկել թագավորական նկրտումներով: Այս առումով հետաքրքրական է հայկական մանր ժամանակագրություններից մեկում (վերնագրված «Թագաւորք վերջինք Բագրատունիք») առկա հետևյալ հիշատակությունը՝ «... Աշոտ ... զեղբայր իւր՝ զՄուշեղ Կարուց կացոյց թագաւոր»³, որը ցույց է տալիս, որ չնայած Մուշեղի՝ ամենայն հավանականությամբ թագավոր ինքնահռչակվելու ցավալի իրողությանը, Աշոտ Գ-ն ստիպված է եղել հաշվի նստելու կատարված իրողության հետ՝ նրան կացուցանելով կամ հաստատելով որպես Կարսի թագավոր: Ընդունելի է Լեոյի վերոհիշյալ այն տեսակետը, որ Աշոտ Գ-ն, սկզբում դեմ լինելով Կարսի թագավորության ստեղծմանը, հետագայում եղբոր կատարյալ հնազանդության դիմաց չառարկեց նրա գահակալությանը: Դրա վկայությունն է այն, որ Աշոտ Գ-ի օրոք Անիի և Կարսի տիրակալների միջև որևէ գժտություն հիշատակված չէ: Ավելին, Կարսի թագավորության ընդգրկված տարածքները՝ Վանանդից մինչև Ճակատք և Կարին, պետք է ճանաչված լինեին որպես Մուշեղ թագավորի տիրույթ Աշոտ Գ-ի կողմից, իսկ դա կարող էր տեղի ունեցած լինել միայն ավագ եղբոր համաձայնությամբ: Ուստի հայկական մանր ժամանակագրության վերոհիշյալ տեղեկությունն այն մասին, թե «... Աշոտ ... զեղբայր իւր՝ զՄուշեղ Կարուց կացոյց թագաւոր», կարելի է թարգմանել հետևյալ կերտակ՝ «Աշոտն իր եղբայր Մուշեղին Կարսի թագավոր հաստատեց»:

Ցայսօր Կարսի թագավորության ընդգրկված տարածքների առումով ընդունված է Ս. Երեմյանի տեսակետը, որն իրականում խիստ խնդրահարույց

¹ «Բայց Մուշեղ ոչ ունէր զերկիւղն Աստուծոյ ի մտի, վասն զի բազմաբոյծ բոզիք կէայր նա»: Տէ՛ս Ասողիկ, էջ 761:

² Տէ՛ս նույն տեղում, էջ 760:

³ «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, էջ 501:

է: Ըստ նրա՝ «Կարսի թագավորության տարածքը գրավում էր Մեծ Հայքի Այրարատ նահանգի արևմտյան գավառները՝ Երասխա (Արաքս) գետի վերին հոսանքը, ներառյալ Ախուրյան գետի վերին ու միջին հոսանքը, Պաղակացիս (այժմ Չըլդըր) լճի գոգահովտի հետ, ինչպես և վերջինիս արևմուտքից հարող Փոս գավառակը՝ մինչև Կուր գետը: Թագավորության տարածքը՝ Կարսի սարահարթը՝ իր ընդգրկած հին հայկական ութ գավառներով բարձրադիր էր»¹: Այս շարադրանքը առաջացնում է բազմաթիվ հարցեր, իսկ գլխավորը՝ այն, թե Այրարատի ո՞ր ութ գավառների մասին է խոսքը:

Ս. Երեմյանը սկզբում «հին հայկական ութ գավառներ»-ի ներքո նկատի ունենում էր Վանանդը կամ Կարսը, Ջարիշատը՝ Փոս գավառակով, Կարմիր Փոքրակը, Մժնկերտը (Աբեդյանք), Հավնունիքը, Կեչրորը, Ջարեհավանը, Կաղզվանը (Գաբեդյանք)², այն է՝ Այրարատի՝ «Աշխարհացոյց»-ում հիշատակված Վանանդ, Աբեդյանք, Գաբեդյանք, Հավնունիք, Արշարունիք գավառների գրեթե ամբողջ տարածքը և Գուգարքի Արտահան գավառի մի հատվածը (Փոս գավառակ): Նկատենք, որ այս ցանկից նա դուրս է թողել Ճակատքի առնվազն արևմտյան հատվածը՝ Շատիկ բերդով, որը պատկանում էր Մուշեղին³: Այնուհետև Ս. Երեմյանը մանրամասնել է իր տեսակետը: Ըստ նրա՝ այդ ութ գավառների թվում էին՝ Վանանդը, որը բաղկացած էր երեք հատվածներից (բուն Վանանդ կամ Կարուց երկիր՝ Կարս կենտրոնով, Կարմիր փոքրակ՝ Ախուրյան գետի ակունքների շրջանում և Ջարիշատ, որն ընդգրկում էր Պաղակացիս լճի գոգահովտը), այնուհետև՝ Մժնկերտ (Աբեդյանք), Հավնունիքը՝ Ավնիկ բերդով, Ադորի գավառը՝ Հավճիչ բերդով, Կաղզվան և Արշարունիք գավառի արևմտյան կեսը կազմող Կեչրոր գավառները, Ջարեհավան գավառակը, ինչպես նաև Շատիկ ամրոցի շրջակայքը⁴: Այստեղ, փաստորեն, կան հավելումներ և փոփոխություններ: Հավելվել են Ադորի գավառը և Շատիկ ամրոցը: Ստացվում է, որ, ի տարբերություն նախորդ տեսակետի, ութ գավառների ցանկում Վանանդը, Ջարիշատը և Կարմիր փոքրակը հաշվարկված են որպես մեկ ամբողջություն, որով, հաշվի առնելով Ադորիի և Շատիկ ամրոցն ընդգրկող Ճակատքի հավելումը, դարձյալ ստացվում է ութ գավառ, միայն, փաստորեն, փոքր-ինչ այլ ընդգրկումով: Սակայն, եթե Շատիկ ամրոցի Կարսի թագավորության մեջ գտնվելու պարագան հիմնավորվում է սկզբնաղբյուրով, ապա Ադորիի դեպքում նման փաստեր չկան: Վերջինս տեղադրվում է Տուրուբերանի Սարդաղի և Դասնավորք գավառների ու Այրարատի արևմտյան գավառների միջև՝ Տուրուբերա-

¹ Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 98:

² Տե՛ս Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 4:

³ Տե՛ս Ասողիկ, էջ 760:

⁴ Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 98:

նում՝ ընդգրկելով Երասխ գետի առափնյա լեռնային շրջանները¹: Աղորիի վերաբերյալ Ս. Երեմյանը հղում է Արիստակես Լաստիվերցու տեղեկությունն այն մասին, որ Բյուզանդիայի կայսր Վասիլ Բ-ն (976-1025) 1001 թ. անցել է Աղորի գավառի Հավաճիչ բերդի կողքով², որը, ի դեպ, մինչ այդ պատկանել էր Տայքի Դավիթ կուրապաղատին (961-1000/1001)³: Հասկանալի է, որ այդ տեղեկությունը չի հիմնավորում Աղորիի պատկանելիությունը Կարսի թագավորությանը: Հարկ է նաև նշել, որ Ս. Երեմյանը կիրառում է գավառանուններ, որոնք խնդրո առարկա ժամանակաշրջանում, մեղմ ասած, այնքան էլ կիրառական չէին: Ավելին, դրանք ոչ բոլորն էին «Մեծ Հայքի Այրարատ նահանգի» «դասական» գավառներ, այլ ֆեոդալական մասնատվածության շրջանում Այրարատի գավառների ներքին տրոհումների արդյունքն էին: Նման նկարագրությունից հետո Ս. Երեմյանն ամրագրում է, թե «իր ութ գավառների սահմաններում (այստեղ նա հղում է իր իսկ հեղինակած «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի» աշխատության այն էջերը, որտեղ ներկայացված են Այրարատի «աշխարհացոյց»-յան շրջանի և հետագայում ձևավորված վերոհիշյալ գավառները – Ս. Ե.) Կարսի թագավորությունն ընդգրկում էր շուրջ 10 հազար քառ. կմ տարածություն...»⁴, ինչը, փաստորեն, խիստ թերի կարծիք է:

Ա. Ութուջյանը ևս փորձել է ներկայացնել Կարսի թագավորության կազմն ու վարչական բաժանումը: Եվ այսպես, ըստ նրա տեսակետի (որը Ս. Երեմյանի կարծիքի կրկնությունն է)՝ Մեծ Հայքի Այրարատ նահանգի արևմտյան ութ գավառներն էին՝ Վանանդը, Մենկերտը (հավանաբար, Մժնկերտ) կամ Աբեդյանքը, Կաղզվանը (Գաբեդյանք), Զարեհավանը, Կեչրորը, Հավնունիքը, Զարիշատը և Կարմիր Փորակը⁵: Խորացնելով իր դիտարկումները՝ նա կարծիք է հայտնում, թե այդ գավառաբաժանումը նաև վարչական բաժանում էր, որը, ինչպես և թագավորության տարածքը, մնացել է անփոփոխ վերջինիս գոյության ամբողջ ընթացքում⁶: Մակայն նշված գավառաբաժանումը նաև որպես վարչական բաժանում ներկայացնելու համար որևէ սկզբնաղբյուրային հիմք չկա, հետևաբար հնարավոր չէ պնդել նաև, թե այն թագավորության գոյության ամբողջ ընթացքում մնացել է անփոփոխ:

Ս. Երեմյանի կողմից Կարսի թագավորությանը «հատկացվող» տարած-

¹ Տե՛ս **Դանիելյան Է.**, Վասիլ Բ-ի 1000 թ. արևելյան արշավանքի նպատակը և երթուղին // «ԼՀԳ», 1973, թիվ 10, էջ 68-71:

² Տե՛ս **Պատմություն Արիստակիսի Լաստիվերցույ**, աշխատասիրությանը՝ Կ. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 23:

³ Տե՛ս **Ասողիկ**, էջ 764:

⁴ **Երեմյան Ս.**, նշվ. աշխ., էջ 99:

⁵ Տե՛ս **Ութուջյան Ա.**, նշվ. աշխ., էջ 120:

⁶ Տե՛ս նույն տեղում:

քի սահմանները, չնայած վերոհիշյալ թերությանը, ընդհանուր առմամբ համապատասխանում են իրականությանը: Խնդիրն այն է, որ Աշոտ Գ-ն եղբորն էր հանձնել Բագրատունյաց տոհմական և արքունի տիրույթների արևմտյան հատվածը՝ բացառությամբ Բագրևանդ գավառի: Բոլոր այդ գավառները նախկինում, մասնավորապես Աբաս թագավորի օրոք, կազմում էին Բագրատունիների արքունի տիրույթների մասը¹: Դրա օգտին է նաև Ստեփաննոս Օրբելյանի՝ Աշոտ Երկաթ (914-929) և Աբաս (929-953) թագավորների գահակալության ժամանակաշրջանին վերաբերող հիշատակությունն այն մասին, որ «...Բագրատունիքն իշխեին միայն Շիրակայ և Այրարատու մինչև Գեղամ (իմա՝ Գեղամաձով – Ա. Ե.) և մինչ ի յՈւխտիսն (իմա՝ Ուղթիքը կամ Ուղթիսը Տայքում – Ա. Ե.) և մինչ ի Կարին և մինչ ի Վասպուրականի սահմանն և մինչ ի Չորոյգետն և մինչ ի Գարդման. և Սիւնիք կտրեալ էր ի նոցանէ»², այն է՝ մասնավորապես Շիրակի Բագրատունիների տիրույթներն ընդգրկում էին ամբողջ արևմտյան Այրարատը՝ հյուսիս-արևմուտքում տարածվելով մինչև Ուղթիս-Օլթի, իսկ արևմուտքում՝ մինչև Կարին: Ինչպես տեսանք, Ռ. Մաթևոսյանը կարծում է, որ 949 թ. բյուզանդական զորքը գրավել էր Կարինը, Հավնունիքն ու Բասենը և վերջիններիս ընդգրկմամբ ստեղծել բանակաթեմ: Սակայն Բասենի և Հավնունիքի այդտեղ ընդգրկված լինելը հազիվ թե ընդունելի տեսակետ է, քանի որ ըստ Ստեփանոս Օրբելյանի վերոհիշյալ տեղեկության՝ մինչև Կարին (իմա՝ Կարնո գավառ) տարածվող Բագրատունյաց տիրույթները ներառում էին նաև Բասենն ու Հավնունիքը:

Սակայն, նշվածն առաջ է բերում մի կարևոր հարց: Տայքի՝ Ուղթիսից արևելք տարածվող հատվածը, որն ընդգրկվում էր Շիրակի Բագրատունիների տիրույթներում, կա՞մ պետք է նույնպես գտնվեր Կարսի թագավորությունում, կա՞մ մինչ այդ ընդգրկված լինե՞ր 961 թվականից ի վեր Դավիթ կուրապաղատի օրոք իր վերելքի շրջանն ապրող Տայքի կուրապաղատությունում: Մեզ առավել հավանական է թվում այն, որ Տայքի այդ հատվածը սկզբում անցել է Կարսի Մուշեղ թագավորին, բայց հետո նրա կողմից հանձնվել Դավիթ կուրապաղատին՝ ի պատասխան ցուցաբերած օգնության: Հավանաբար, իրադարձությունները զարգացել են հետևյալ կերպ: Հայտնի է, որ Ճակատք գավառում գտնվող Շատիկ բերդը պատկանում էր Մուշեղին, բայց գրավվել էր Սմբատ Բ արքայի (978-990) կողմից, որի պատճառով

¹ Տե՛ս Եղիազարյան Ա., Աբաս Բագրատունի. թագավոր Հայոց, Երևան, 2017, էջ 45-53:

² «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 300: Այդ տեղեկության ժամանակաշրջանային ընդգրկումը որոշվում է հայկական անանուն ժամանակագրություններից մեկում նույն այդ հիշատակության հստակ թվագրմամբ: Ըստ դրա՝ հիշատակությունը վերաբերում է Սմբատ Ա-ի մահից հետո ընկած ժամանակաշրջանին՝ մինչև Բագրատունյաց Հայաստանում նոր թագավորությունների ի հայտ գալուն: Տե՛ս «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. I, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 384:

Մուշեղն օգնության էր կանչել Դավիթ կուրապաղատին: Վերջինիս միջնորդությամբ բերդը վերադարձվեց Մուշեղին¹, որը, մեր համոզմամբ, դրա դիմաց կուրապաղատին տվեց Տայքի նշված տարածաշրջանը: Նման «նվերները» այդ պատմափուլում ընդունված էին: Մասնավորապես, նույն Դավիթ կուրապաղատը ռազմական աջակցության դիմաց Սմբատ Բ-ին էր հանձնել Աբխազաց Բագրատ Գ թագավորից (978-1014) խլված Սակուրթթ բերդը²: Այդ է պատճառը, որ Տայքի՝ Ուղթիս քաղաքից արևելք ընկած հատվածը Մուշեղի թագավորության տարածքում չէր ընդգրկվում:

Ի վերջո, հարկ է պարզաբանել ևս մեկ կարևոր խնդիր: Եթե Մուշեղն իրեն հռչակել է թագավոր Կարսում, իսկ Աշոտ Գ-ն նրան ճանաչել է որպես այդպիսին, ապա ի նչն է պատճառը, որ նրան հատկացվել է ոչ թե միայն Կարսը՝ հարակից տարածքով, այլ այդչափ ընդարձակ տարածք՝ Բագրատունյաց արքունի տիրույթների ամբողջ արևմտյան հատվածը: Ինչպես տեսանք, Կարսի թագավորության ստեղծման վերաբերյալ կարծիքներում գերիշխում էր այն միտքը, որ Անի տեղափոխվելուց հետո Աշոտ Գ-ն Կարսում կառավարիչ է նշանակել Մուշեղին, որը թագավոր դառնալու նկրտումներ է դրսևորել: Ըստ Ս. Երեմյանի՝ Մուշեղն իրեն հռչակել է Կարսի և շրջակա Վանանդ գավառի թագավոր³, բայց նա չի բացատրել, թե իրեն Կարս քաղաքի և Վանանդ գավառի թագավոր հռչակած Մուշեղի թագավորությունն ինչպես կարող էր նման՝ ավելի քան կրկնակի ընդարձակ տարածքներ ընդգրկել:

Մեր համոզմամբ, գաղտնիքը թաքնված է ավելի վաղ՝ Աշոտ Ա Բագրատունի թագավորի օրոք (887-891) ձևավորված իրողության մեջ: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Աշոտ Ա-ի մահից կարճ ժամանակ անց, երբ արքայազն Սմբատը նոր էր վերադարձել Գուգարքից և արդեն հուղարկավորված հոր կորուստը սգում էր Երազգավորսում, «...Աբաս սպարապետն Հայոց եւ եղբայր արքային Աշոտոյ ի կողմանս պետութեան Վանանդայ առկայացեալ կայր» և փորձեց անհանազանություն դրսևորել⁴: Սմբատը պատժիչ արշավանքի էլավ, ասպատակեց Կարսի արվարձանները, իսկ ամրոցում ապաստանել էր շրջակա գավառի գաղթականությունը⁵: Փաստորեն, Սմբատի գործունեության սկզբում հիշատակվում է «Վանանդի պետությունը»: «Պետութիւն» կնշանակե «իշխանություն», «տերություն»⁶, իսկ «Վանանդի պետությունը» ընդգրկում էր համանուն գավառը, որի բնակչությունը Սմբատի արշավանքի սպառնալիքից գաղթել ու ապաստանել էր «պետու-

¹ Տե՛ս Ասողիկ, էջ 760:

² Տե՛ս նույն տեղում, էջ 806:

³ Տե՛ս Еремян С., նշվ. աշխ., էջ 7:

⁴ **Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցույ** Պատմություն Հայոց // «Մատենագիրք Հայոց», ԺԱ., հ. Ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 446:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 447:

⁶ Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. երկրորդ, Հ-Ֆ, Երևան, 1981, էջ 646:

թյան» կենտրոն Կարսում: Անկասկած, եթե այդ գավառը «Վանանդի պետության» մեջ չլիներ, նրա բնակչությունը Սմբատի գործից փախչելու կարիք չէր ունենա: Փաստորեն, Աշոտ Ա-ի գահակալության շրջանում Բագրատունիների՝ Այրարատում գտնվող տոհմական և արքունի տիրույթների արևելյան հատվածում Կարս կենտրոնով ձևավորվել էր մի իշխանություն՝ «Վանանդի պետությունը», որտեղ իշխում էր արքայի եղբայր Աբաս սպարապետը: Այդ պետությունը, անկասկած, ձևավորվել էր այն բանից հետո, երբ Վանանդ գավառի տերերը, որոնք գավառում իշխում էին 887 թ. դրությամբ¹, 888 թ. ապստամբել էին Աշոտ Ա-ի իշխանության դեմ և ի հետևանս դրա գրկվել էին իրենց տիրույթներից²: Մ. Օրմանյանի և Ս. Երեմյանի կարծիքով՝ Կարսը Աշոտ Ա Բագրատունու գահակալությունից սկսած եղել է սպարապետի նստավայրը³, որն այնքան էլ հավանական չէ, քանի որ միայն մեկ սպարապետի՝ այնտեղ իշխելու իրողությունը չի կարող վստահելի հիմք հանդիսանալ նման տեսակետի համար, առավել ևս, որ այդ սպարապետի իշխանությունը կոչվում էր «Վանանդի պետություն»: Մեզ թվում է, որ Վանանդեցիների տոհմից գավառը իլելուց հետո երկու եղբայրները՝ Աշոտ Ա թագավորն ու Աբաս սպարապետը՝ բաժանել են իրենց տոհմական տիրույթները և Աբասին բաժին հասած «Վանանդի պետության» մեջ, բացի համանուն գավառից, մտել են նաև Այրարատի արևելյան գավառները՝ բացառությամբ Բագրևանդի, այն է՝ բոլոր այն տարածքները, որոնք հետագայում մաս կազմեցին Մուշեղի թագավորության:

«Վանանդի պետության» իշխողների հետագիծը հետևյալն է. Աբաս սպարապետից հետո, Սմբատ Ա-ի օրոք (891-914) Կարսում «պահակ», այն է՝ «վերակացու»⁴ էր Հասան Գնթունին՝ որպես «հրամանատար ի վերայ ամենայն տան արքայի»⁵: Այնուհետև, ինչպես հայտնի է, Կարսը Աբաս թագավորի (929-953) նստոց-մայրաքաղաքն էր, որից կարելի է հանգել այն հետևության, որ նա եղել է Վանանդի պետության կառավարիչն Աշոտ Երկաթի օրոք: Տեղին է հիշել, որ, ըստ Ռ. Մաթևոսյանի, «Վանանդի պետությունը» ոչ այլ ինչ էր, եթե ոչ «վարչական մարմին, որի ղեկավարումը հանձնվել էր Աբասին (իմա՝ սպարապետին – *Ս. Ե.*)»⁶, ինչը միայն մասամբ ընդունելի կարծիք է, քանի որ խոսքը պարզապես վարչական մարմնի մասին չէ, այլ «պետության», իշխանության:

¹ Տե՛ս նաև **Գարեգին Ա. կաթողիկոս**, նշվ. աշխ., էջ 84:

² Տե՛ս **Երեմյան Շ.**, նշվ. աշխ., էջ 5:

³ Տե՛ս **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հայ ուղղափառ եկեղեցույ անցքերը սկզբէն մինչև մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, Կոստանդնուպոլիս, 1912, պլուս 1075, **Երեմյան Շ.**, նշվ. աշխ., էջ 5:

⁴ Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. երկրորդ, էջ 586:

⁵ **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 468:

⁶ Տե՛ս **Մաթևոսյան Ռ.**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 150:

Դրանից բխում է, որ Մուշեղի թագավորության սահմանների ճշգրտման համար պետք է հիմք լիներ այն իրողությունը, որ Աշոտ Գ-ի՝ Անի տեղափոխվելուց հետո Մուշեղին էր հանձնվել «Վանանդի պետության» իշխանությունը, որի սահմաններում հռչակվել էր Աշոտ Գ-ի կողմից հաստատված Մուշեղի թագավորությունը: Փաստորեն, Կարսի թագավորությունն ընդգրկում էր Բագրատունյաց տոհմական և արքունի տիրույթների արևելյան գավառները՝ բացառությամբ Բագրևանդի, որը մնացել էր Աշոտ Գ-ի բաժնում:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ Կարսի թագավորության ստեղծումը տեղի է ունեցել 975 թ., երբ Բյուզանդական կայսրության առաջխաղացման իրողությունից օգտվել է Կարսի տիրակալ Մուշեղը, որը թագավորել է ինը-տասը տարի և վախճանվել 984 թ.: Նրա օրոք Կարսի թագավորությունն ընդգրկում էր Բագրատունիների արքունի և տոհմական տիրույթների արևելյան հատվածը՝ Շիրակից և Ճակատքից մինչև Տայք ու Կարին և Պաղակացիս լճից մինչև Բագրևանդ:

Арман Егиазарян – *Дата и обстоятельства создания Карсского царства*

Карсское царство было основано в середине 970-ых годов, когда Мушег, правитель города Карс, воспользовался продвижением Византии в западные районы Армении и провозгласил себя царем, после чего правил в течение девяти-десяти лет и умер в 984 г. Карсское царство включало западную часть области Айратат Великой Армении: территории между провинциями Ширак и Чакатк на востоке и провинциями Тайк и Карин на западе, а также от озера Чилдир на севере до провинции Багреванд на юге.

Arman Yeghiazaryan – *Date and Circumstances of the Formation of Kars Kingdom*

Formation of the Kars kingdom took place in the middle of 970s, when Mushegh, the Prince of Kars city, took advantage of the Byzantine movement to the western regions of Armenia and proclaimed himself king, ruled for nine-ten years and died in 984. The kingdom of Kars included the western part of Ararat region of the Greater Armenia: the territories between provinces of Shirak and Tchakatk in the east to the Taik and Karin provinces in the west, and from the Childir lake in the north to the Bagrevand province in the south.

Ներկայացվել է 06.02.2020

Գրախոսվել է 05.05.2020

Ընդունվել է տպագրության 30.06.2020

**Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՈՐԲԱԽՆԱՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1890-ԱԿԱՆ ԹԹ.)**

Բանալի բառեր – Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, պատրիարքարան, որք, որքանոց, «Նպաստից Յանձնաժողով», Բաղեշ, Սեբաստիա, Խարբերոյ

XIX դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունը շարունակում էր դաժան քաղաքականություն վարել իր ենթակայության տակ գտնվող ժողովուրդների և հատկապես հայ ժողովրդի նկատմամբ: Վերջինիս հանդեպ գործադրվող բռնություններն առավել ցայտուն դրսևորվեցին Աբդուլ Համիդ II-ի գահակալության օրոք (1876-1908), որը պայմանավորված էր Հայկական հարցի արձարձմամբ և հայկական ազգային-ազատագրական պայքարի վերելքով: Նա Հայկական հարցի «լուծումը» տեսնում էր ի դեմս հայ ժողովրդի բնաջնջման:

Արևմտահայերի զանգվածային կոտորածները պետական քաղաքականության մակարդակով Աբդուլ Համիդն իրականացրեց 1894-1896 թթ.: Ըստ այդմ՝ դա հայ ժողովրդի հանդեպ օսմանյան կառավարության կիրառած ցեղասպան քաղաքականության առաջին փուլն էր: Այդ ոճրագործությունն իրականացվում էր քրդական զորախմբերի, ինչպես նաև մուլեռանդ մուսուլմանների կողմից առհասարակ, որոնց օսմանյան կառավարությունը հանձնարարել էր անխնա կոտորել Արևմտյան Հայաստանում, ինչպես նաև Օսմանյան կայսրության այլ վայրերում բնակվող հայերին:

Ընդհանուր առմամբ, 1890-ական թթ. Աբդուլ Համիդի կազմակերպած արևմտահայերի զանգվածային կոտորածներն ունեցան անդառնալի հետևանքներ, որոնց արդյունքում զոհվեցին ավելի քան 300 000 հայեր, հսկայական չափերի հասան հայերի արտագաղթն ու բռնի կրոնափոխությունը: Այդ ջարդերի հետևանքներից էր 50 000 հայ որբերի¹ պահպանման և խնամքի առաջնային խնդիրը, որոնց օգնության համար հիմնադրվեցին բարեգործական, հասարակական ու կրոնական տարբեր կազմակերպություններ և ընկերություններ: Առաջին ձեռք մեկնողներից եղավ «Կովկասի Հայոց Բարեգործական ընկերությունը»: 1897 թ. Մոսկվայում Գրիգոր Ջանշյանի խմբագրությամբ լույս տեսած «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած

¹ Օրմանեան Ս., Ազգապատում, հ. Գ, Էջմիածին, 2001, էջ 5474:

հայերին»¹ գրքի վաճառքից ստացված ամբողջ հասույթը պետք է տրամադրվեր հայ կարոտյալներին: Մինչև 1898 թ., գրքի վաճառքի արդյունքում, Կ. Պոլսում գտնվող ռուսական դեսպանատուն է ուղարկվել 15 640 ռուբլի՝ ի նպաստ հայերի² և այդ գումարով առավել կարիք ունեցող բնակավայրերում հիմնադրվել է ութ որբանոց³:

Միջազգային հանրությունը ևս ջանքեր է գործադրել թեթևացնելու տառապյալ արևմտահայության վիճակը: Հանգանակություններ են կազմակերպվել Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Դանիայում և այլուր: Նշենք, օրինակ, որ 1896 թ. մարտին հայերին օգնելու համար Մեծ Բրիտանիայում հավաքվել էր 34 000 ֆունտ ստեռլինգ⁴: Գերմանական նպաստներով⁵ 1897 թ. մայիսի 1-ի դրությամբ պահվում էր 1250 որբեր ընդգրկող 14 որբանոց, իսկ հավաքած ընդհանուր գումարը կազմում էր 1 072 000 մարկ⁶:

Արևմտահայությանը ցուցաբերած օգնության գործում որոշակիորեն առանձնանում է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, որի որբախնամ գործունեության լուսաբանմանը նվիրված է սույն հոդվածը:

Հայ որբերի փրկության և հայեցի դաստիարակման մեծ խնդրին փորձեց որոշ չափով լուծում տալ Կ. Պոլսի պատրիարք Մատթեոս Գ. Իզմիրյանը, որի կազմակերպած հանգանակությունների շնորհիվ մինչև 1896 թ. հունվարի 31-ը հավաքվել էր 90 000 ռուբլի⁷: Սակայն վերջինիս կազմակերպած օգնության գործը մնաց անավարտ, քանզի 1896 թ. նա պաշտոնաթող եղավ և արքունիկեց Երուսաղեմ: Նրան փոխարինեց Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը (1896 թ. նոյեմբեր – 1908 թ. հուլիս): Օգնության խնդիրը կազմակերպելու համար տեղապահ Չամչյանի նախաձեռնությամբ Կ. Պոլսում ստեղծվեց ազգային մի մարմին Ալեթաճյան եպիսկոպոսի նախագահությամբ: Բացի այդ ստեղծվեց նաև «տարագրելոց հանձնաժողով» գաղթականների գույքը և հաշիվները ամփոփելու համար⁸: Ազգային սահմանադրությամբ նախատեսված մարմինները արդեն փակ էին:

Մ. Օրմանյանի պաշտոնավարման տարիները համընկան արևմտահայերի համար սուսկալի ծանր ժամանակաշրջանի հետ: Ժողովրդի հոգեկան և

¹ St' u Bratskaya pomoshch' posttravavshim v Turcii armenyam, Moskva, 1897:

² «Տարագ», 1898, թիվ 28, էջ 630, «Մշակ», 1898, թիվ 123, էջ 2:

³ «Արարատ», 1900, թիվ 1, էջ 24:

⁴ «Տարագ», 1896, թիվ 12, էջ 195:

⁵ Գերմանական օգնության մասին տե՛ս **Քոսյան Լ. Ս.**, Գերմանական միսիոներների որբախնամ գործունեությունը XIX դարի երկրորդ կեսին // «Հայագիտության հարցեր» (այսուհետև՝ «ՀՀ»), 2017, թիվ 3, էջ 31-41:

⁶ «Մշակ», 1897, թիվ 76, էջ 1: Տե՛ս նաև «Մուրճ», 1897, թիվ 6, էջ 894:

⁷ **Արասխանեան Ա.**, Ընդհանուր դրություն: Նիւթական նպաստի գործը // «Մուրճ», 1896, թիվ 3-4, էջ 477:

⁸ **Օրմանեան Մ.**, նշվ. աշխ., էջ 5486:

բարոյական անկմանն ուղեկցում էին սոցիալական ծանր վիճակը, սովը, բռնի մուսուլմանացումը և այլն: Օգնության կանչը լսվում էր ամենուրեք: Պաշտոնավարման առաջին իսկ օրվանից Մ. Օրմանյանը փորձեց ամեն գնով սպեղանի դնել կարիքավոր ժողովրդի վերքերին:

Համիդյան կոտորածներից հետո հայ որբերի փրկության գործին մասնակցում էին տարբեր միսիոներական հաստատություններ: Մակայն օտարերկրյա աջակցությունը երբեմն իրականացվում էր կրոնական (կաթոլիկ, բողոքական) կազմակերպությունների միջոցով, որոնք ազգային գիտակցության ու դավանանքի տեսանկյունից հայ երեխաների օտարացմանն էին նպաստում: Մ. Օրմանյանը գնահատելով նրանց գործադրած ջանքերը, միաժամանակ զգուշացնում էր, որ բարեգործության քողի տակ նրանք չզբաղվեն դավանափոխությամբ¹: Պատրիարքը հրահանգում է հոգևոր առաջնորդներին ուշի ուշով հետևել օտար որբանոցներում խնամվող հայ երեխաների հայեցի դաստիարակմանը և մայրենի լեզվի ուսուցմանը: Նա համապատասխան շրջաբերականներով դիմում է նաև արտասահմանի հայությանը, կոչ անելով նպաստել այնտեղ պատասպարված հայ որբերի հայեցի դաստիարակմանը: Հետաքրքրական է, որ Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը մեծ ուշադրություն չէր դարձնում բարերարների դավանանքին, քանզի նրա համար կարևորը երեխաներին սովից փրկելն էր: Իսկ Մ. Օրմանյանը ապրելով կաթոլիկ ընտանիքում, քաջատեղյակ էր պապականության՝ կաթոլիկ հայությանը իր մեջ ձուլելու քաղաքականությանը, ուստի գործադրում էր ամեն ճիգ հայ որբերին հայոց եկեղեցու գրկում պահելու համար²:

Մ. Օրմանյանը օգնության հարցը կարգավորելու նպատակով դիմում է օսմանյան կառավարությանը փորձելով ստանալ արտոնություն հանձնաժողով կազմելու համար, բայց սկզբնական շրջանում դա նրան չի հաջողվում: Ուշադրություն չդարձնելով այդ խնդրին, պատրիարքը 1897 թ. տարեմուտին հատուկ կոնդակով դիմում է կոտորածներից զերծ մնացած բնակավայրերի հայությանը, արտասահմանի գաղթականությանն ու հասարակությանը օգնության խնդրանքով³:

Միաժամանակ Մ. Օրմանյանը շարունակում է հանձնաժողով ստեղծելու թույլտվության խնդրանքով բազմաթիվ նամակներ հղել կառավարությանը: Ի վերջո, 1897 թ. մարտի 28-ին պատրիարքի ջանքերով հիմնվում է «Նպաստից Յանձնաժողովը», որը պետք է բաշխեր հանգանակված օգնությունը: Իմ կարծիքով օսմանյան կառավարությունը թույլատրեց այս հանձնաժողովի գործունեությունը սուկ նրա համար, որ խուսափեր հետագա

¹ «Նոր Դար», 1899, թիվ 53, էջ 2:

² **Կոստանդյան Է. Ա.**, Դրվագներ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի կյանքից և գործունեությունից, Երևան, 2015, էջ 246:

³ **Օրմանեան Մ.**, նշվ. աշխ., էջ 5487:

աղմուկից: Եվ ինչպես Օրմանյան էր գրում, «եւ այս ինծի կբաւեր գործը յառաջացնելու և աճեցնելու, զի ո՛չ թէ աշխատանքէ կը խուսափէի, այլ միայն հանրութեան աչքին առջեւ կասկածի տեղի չտալ կուզէի»¹:

Ցարական ինքնակալությանը ընդհանուր առմամբ հաջողվեց Այսրկովկասի որոշ վայրերում (Բաքվի, Երևանի, Ելիզավետպոլի նահանգներ, Կարսի մարզ) բնակչության լայն զանգվածներին մեկուսացնել ռուսական առաջին հեղափոխության պայքարի հորձանուտից: Դրան էր ուղղված, մասնավորապես, թուրք-հայկական ընդհարումներ կազմակերպելու դիվային ծրագիրը, որ հղացավ և իրականացրեց Ռուսաստանի իշխանական վերնախավը: Այդ ընդհարումների ջատագովը նախևառաջ Կովկասի փոխարքա, հայտնի հայակեր՝ իշխան Գ. Գուլիցինն էր: Իշխանությունների վերաբերմունքը հայերի նկատմամբ ոգևորիչ եղավ թուրքերի համար: Նրանց մոտ այն կարծիքը ստեղծվեց, թե կարելի է անպատիժ կերպով թալանել հայերին և ենթարկել ջարդերի:

Ցարիզմը Կովկասում ամենահեղափոխական տարր համարում էր հայությանը, իսկ կայունության երաշխիք՝ թուրքերին: Ահա թե ինչու հենց վերջիններիս միջոցով էին ցանկանում երկրամասը գերծ պահել համառուսաստանյան հեղափոխական շարժումներից: Դրա համար, Գուլիցինի կարծիքով պետք էր զինել թուրքերին ընդդեմ հայերի:

Նիկոլայ II-ը և նրա շրջապատը ամբողջությամբ պաշտպանում էին հայակեր կառավարչապետի մտադրությունը: Դիվային ծրագրում ներառվել էին երկրամասի ռուսական իշխանությունները, բանակը, ոստիկանությունն ու ժանդարմերիան, մուսուլման հոգևորականությունը, թուրք խաներն ու բեկերը, թուրք-քրդական խուժանը և իհարկե պանիպլամիզմի և թուրքականության ախտով վարակված այսպես կոչված «մտավորականությունը»:

Հայաստյաց ու բարբարոս քաղաքականության զսպանակը արագությամբ սկսեց բացվել: Բաքվի 1905 թ. ջարդերին հետևեցին թուրք-հայկական ընդհարումները Բաքվի, Գանձակի, Երևանի նահանգների քաղաքներում և գյուղերում: Բացառություն չէր նաև Շուշին: Քաղաքի ոստիկանապետ Սախարովը ամեն ինչ անում էր թշնամացնելու Շուշիի հայերին և թուրքերին:

¹ Տե՛ս Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967), Երևան, 1970, էջ 342, Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ 1794-1980, Երևան, 1986, էջ 411-449:

Նրա հակահայ գործունեությունը այնքան բացահայտ ու լկտի դարձավ, որ հայտնի հեղափոխական, ազնիվ ու նվիրված հայրենասեր, գործիչ Յապոնացի Սաբոն Ջանգեգուրից անցավ Շուշի և գնդակահարեց հանցագործ ոստիկանապետին և նրա պրիստավ Շումակնիչին¹: 1905 թ. գարնանն ու ամռանը թուրք-հայկական աղետալի ընդհարումներ տեղի ունեցան Ջանգեգուրում, որոնց կրակը անցավ Շուշի: Սկզբում ընդհարումները սահմանափակ էին և երկուստեք ջանքերով արագորեն մարվում էին: Բայց քաղաքի ռուսական իշխանությունները զինելով թուրք բնակիչներին, դրդեցին նրանց սադրիչ գործողությունների: Շուշիում ու նրա շրջապատի թուրքական գյուղերում թուրք և քուրդ բեկերի ու ավազակապետերի ղեկավարությամբ կազմավորվեցին զինված ջոկատներ, որոնք խնդիր ունեին Գանձակի ու Շուշիի գավառներում հայ բնակչության ջարդ իրականացնել:

Կատաղի մարտեր ընթացան Խաչենում, Առաջաձոր գյուղի մատույցներում, Շուշի-Եվլախ ճանապարհին թալանվեցին ու հոշոտվեցին բազմաթիվ հայեր, և այդ բոլորը՝ իշխանությունների աչքի առջև՝ հաճախ նրանց թելադրանքով:

Իհարկե արցախահայությունը հանգիստ նստած չէր սպասում, այլ ՀՅԴ տեղական կոմիտեի և Գանձակի նահանգում հայկական ուժերի ընդհանուր հրամանատար Խանասորի Վարդանի (Սարգիս Մեիրաբյան) գլխավորությամբ ակտիվորեն զինվում էր՝ պատրաստվելով օրհասական կռվի:

Սակայն ցավով պետք է նշել, որ, ի տարբերություն թուրքերի, հայ մեծահարուստները, նամանավանդ Բաքվում և այլ քաղաքներում ապրող ունևոր շուշեցիները զարմանալի անտարբերություն ցուցաբերեցին հայրենի եզերքի ճակատագրի նկատմամբ՝ դժկամությամբ և ոչ բավարար նյութական օգնություն հատկացնելով զենք-զինամթերք հայթայթելու կարևորագույն գործին:

Ինքնապաշտպանության հրամանատարությունը Շուշիի հայկական թաղամասերում ստեղծեց մարտական գործողությունները ղեկավարող օղակներ՝ բանիմաց և զինվորական գործին զիտակ անդամներով: Մի շարք վայրերում կազմակերպվեցին ամրացված պաշտպանական դիրքեր:

Օգոստոսի 7-ի, լույս 8-ի գիշերը անհայտ անձանց կողմից սպանվեց մի թուրք լապտերավաճառ: Դա թուրքերի շրջանում հակահայ հիստերիա առաջացրեց: Սկսվեց երկուստեք մեղադրանքների, ալան-թալանի ու բռնությունների շարան, որը օգոստոսի 16-ին հեշտությամբ վերածվեց կատաղի զինված բախման: Իշխանությունները, այդ թվում գորքը, դիտորդի դերում էին, մինչդեռ աստիճանաբար ավելանում էր երկուստեք զոհերի թիվը: Օգոստոսի 17-ին նոր թափով վերսկսվեց երկուստեք հրաձգությունը: Թուրքերը

¹ Տե՛ս «Դրոշակ», 1927, թիվ 10 (163), հոկտեմբեր, էջ 319, «Հայրենիք», 1925, թիվ 1 (37), նոյեմբեր, էջ 34, **Միմունյան Ն.**, նշվ. աշխ., էջ 253:

մեծ թվով կորուստներ ունեցան, մահով ընկան նաև մի շարք անվեհեր հայ մարտիկներ, այդ թվում՝ հայտնի հեղափոխական, շուշեցի Մարգար Ժամհարյանը (Մռավ)¹:

Օգոստոսի 18-ի վաղ առավոտյան կոիվը նորից թեժացավ: Թուրքերին Ադդամից օգնության էին եկել նոր ուժեր, որոնց հաջողվեց նեղել հայ պաշտպաններին: Սակայն դա երկար չտևեց: Մեր մարտիկները հակազդվեցին խուճապի մատնեցին խուժանին: Թուրքերը, տալով բազմաթիվ զոհեր, աճապարանքով նահանջեցին, սակայն հասցրին հրո ճարակ դարձնել հայկական թաղամասերը: Մոխրի վերածվեցին 400-ից ավելի տուն, խանութներ, արհեստանոցներ, պահեստներ, հայկական թատրոնի շենքը, հիվանդանոցը, Մայրամյան դպրոցը և այլն²:

Օգոստոսի 20-ի կեսօրին կոիվը դադարեց: Հայերից սպանվել էր 40, վիրավորվել 68 մարդ, թուրքերի կորուստները շատ ավելին էին: Միայն սպանվածները շուրջ 500-ն էին, իսկ վիրավորները՝ շատ մեծ էին³: Հայ մարտիկները գեներալի ուժով և նախահարձակ գործողություններով կարողացան զսպել նաև Ադդամի շրջանի թուրք հրոսակներին⁴:

Հաղթանակը շոշափելի էր, սակայն Շուշին ավերվել էր, տնտեսապես քայքայվել, ողջ մնացած հայերից շատերը լքել էին քաղաքը, խորացել էին հայերի և թուրքերի միջև թշնամանքն ու անվստահությունը: Շուտով թե՛ քաղաքում և թե՛ գավառի հայկական գյուղերում վրա հասավ սովը: Հայ բնակչության համար ողբերգություն դարձավ նաև այն, որ ռուսական պատժիչ զորքը իր ամբողջ աստվածությունը թափեց անմեղ հայ գյուղացու գլխին՝ նրան ենթարկելով ավերի ու կողոպուտի, շատերին ձերբակալելով՝ քշեց հայրենի օջախներից: Եղան բազմաթիվ զոհեր:

Օգտվելով ռուսական կազակական և ոստիկանական ջոկատների անթաքույց աջակցությունից՝ թուրքական խուժանը փակեց Շուշի տանող ճանապարհները, գերեվարեց և սպանեց բազմաթիվ հայերի: Հայատյաց լկտի քաղաքականությամբ հատկապես աչքի ընկավ Գանձակի նահանգի պատժիչ ջոկատների ընդհանուր հրամանատար, երդվյալ հայակեր, գեներալ Գոլոշապովը:

Սակայն արցախահայությունը չընկրկեց. «...նոր աղետները, տմարդի հարևանի հարձակումները,– հայ ժողովրդի սոցիալական տարբեր խավերին, նրա տարբեր հատվածներին մղեցին համերաշխ գործակցության, ամբապնդվեց ազգային գիտակցությունը, ուժեղացավ միմյանց սատար կանգնելու ձգտումը»⁵:

¹ Այս մասին տե՛ս **Միմոնյան Հ.**, նշվ. աշխ., էջ 367-371:

² Տե՛ս **Լեռ**, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 159, **Միմոնյան Հ.**, նշվ. աշխ., էջ 372-373:

³ Տե՛ս **Միմոնյան Հ.**, նշվ. աշխ., էջ 373:

⁴ Տե՛ս նույն տեղում, ինչպես նաև «Դրոշակ», 1905, թիվ 13 (166), դեկտեմբեր, էջ 203-204:

⁵ **Միմոնյան Հ.**, նշվ. աշխ., էջ 713:

Թուրք-հայկական ընդհարումների վերջին փուլը սկսվեց 1905 թ. կեսերից և դարձյալ ընդգրկեց նաև Շուշին: Շուշեցիները, սակայն, այս անգամ ևս հանկարծակիի չեկան: Թուրքերը, որ 1905 թ. օգոստոսին շոշափելի կորուստներ էին կրել, ամեննին խելքի չեկան և նորից նպատակադրվեցին հայաթափ անելու քաղաքը: Ձինվելու հետ մեկտեղ՝ նրանք դարձյալ դիմեցին քանիցս փորձված մեթոդի՝ ամենուր աղաղակելով, թե հայերը պատրաստվում են իրենցից մաքրել Շուշին: Միաժամանակ նրանք օգտագործեցին հայ ազգաբնակչության համար մշտական պատուհաս դարձած թուրք և քուրդ անասնապահ խուժանի քոչը, որի ուղիներից մեկն անցնում էր Շուշիի մատույցներով: Օգտվելով քոչի ընձեռած հնարավորությունից՝ թուրք զինված բաշիբոզուկները Շուշին մեկուսացրին շրջակա հայկական գյուղերից և պատրաստվեցին ոչնչացնել նրա հայ բնակչությանը¹: Թուրքերին ոգևորում էր նաև այն հանգամանքը, որ ռուսական իշխանությունները ինչպես միշտ դարձյալ նրանց թիկունքում էին և ակտիվ պատժիչ գործողություններ կիրառելով՝ փորձում էին հայտնաբերել և ձերբակալել ընդհատակում գործող դիմադրական շարժման հայ կազմակերպիչներին և առաջին հերթին ՀՅԴ ներկայացուցիչներին, որոնք ղեկավարում էին Շուշիի հայ բնակչության ինքնապաշտպանության գործը:

Նախքան Շուշիի վրա գրոհելը՝ թուրքերը հարձակումներ գործեցին քաղաքից կտրված հայկական բնակավայրերի վրա՝ ալան-թալանի ենթարկելով դրանք: Մազապուրծ բնակչությունը լցվեց Շուշի՝ ավելի տագնապալի դարձնելով վիճակը²: Կարծելով, թե հայ բնակչությունը անգեւ ու վեհերոտ է և խուսափում է պաշտպանական միջոցառումներ ձեռնարկելուց, 1906 թ. հուլիսի 12-ին՝ Շուշին շրջապատող խուժանը ներսում գտնվող ցեղակիցների հետ միասին (1000-ից ավելի զինված բարբարոս դոչիներ) դիմեց հարձակման: Սկզբում քաղաքի ռուս զինվորականությունը պաշտպան կանգնեց հայ բնակչությանը, սակայն մեր ռազմիկների կազմակերպած հակահարվածի հաջողությունը տեսնելով՝ փոխեց մտադրությունը և անցավ թուրքերի կողմը: Բայց արդեն ուշ էր: Վերջիվերջո հայ քաջամարտիկները մտան թուրքական թաղամասերը և կրակի մատնեցին դրանք՝ կիրառելով թշնամու որդեգրած միևնույն մարտավարությունը: Ի վերջո հուլիսի 22-ին հրաձգությունը դադարեց, հայերի հաղթանակը կատարյալ էր: Միայն սպանված թուրքերի թիվը 190-ից ավելի էր: Հաղթանակը կոփվեց հայ մարտիկների անձնագոհության, հմտության և կազմակերպվածության շնորհիվ: Շուշին հերոսաբար դիմադրեց և կարողացավ փրկել հայ բնակչությանը զանգվածային թալանից ու կոտորածից³:

¹ Տե՛ս **Միմոնյան Հ.**, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք II, Երևան, 2003, էջ 16:

² Տե՛ս նույն տեղում, էջ 19:

³ Տե՛ս **Միմոնյան Հ.**, նշվ. աշխ., գիրք II, էջ 20-25, «Դրոշակ», 1906, թիվ 81 (174), օգոստոս, էջ 115:

Սակայն ավերն ու զոհերը ծանր նստեցին հայության վրա: Շուշիի, Արցախի և ամբողջ հայության համար այս ընդհարումները քաղաքական և սոցիալ-տնտեսական լուրջ հետևանքներ ունեցան: Հայաթափ եղան բազմաթիվ բնակավայրեր, զոհվեցին բազմաթիվ անմեղ մարդիկ: Անկում ապրեց տնտեսությունը, սաստկացավ սովը հատկապես գյուղական շրջաններում: Առավել ողբերգական դարձավ լեռնային շրջանների հայ բնակչության դրությունը: Ընդհարումները հնարավորություն չտվեցին գյուղական ցանքս կատարելու, չկար սերմնացու, նյութական այլ միջոցներ: Տեղի ունեցավ անասունների զանգվածային անկում: Քաղաքներում մեծ չափերի հասավ գործազրկությունը, ետընթաց ապրեցին առևտուրն ու արհեստները: Դա հատկապես նկատելի դարձավ հայաշատ քաղաքներում՝ Բաքվում, Գանձակում և իհարկե Շուշիում: Շատ հայ արհեստավորներ և առևտրականներ թողեցին քաղաքը և գաղթեցին Կովկասի ու Կենտրոնական Ռուսաստանի տարբեր վայրեր, ապա՝ Թավրիզ և Իրանի այլ քաղաքներ: Դադարեց մշակութային ու կրթական օջախների գործունեությունը, դանդաղեց երիտասարդ սերնդի կրթության ու դաստիարակության գործը: Ռուս հասարակական-քաղաքական շրջանակներում հայությունը սկսեց դիտվել որպես ռուսական միջավայրին խորթ, անհանգիստ ու վտանգավոր տարր, գնալով խորացավ անարդար ու անհիմն կասկածանքը հայ ժողովրդի նկատմամբ: Ուժեղացավ բռնությունների և հալածանքի ալիքը հայ մտավորականության նկատմամբ: Գործին քիչ օգնեց նաև Կովկասի նոր կառավարչապետ կոմս Վորոնցով-Դաշկովի վարած ավելի մեղմ ու չափավոր քաղաքականությունը: Սակայն ընդհարումների շնորհիվ արթնացավ հայի ազգային գիտակցությունը: Նա սկսեց հասկանալ իր ազգային արժանապատվությունը զենքով պահպանելու արժեքը: Համերաշխության, միասնության գաղափարը սկսեց դիտվել որպես անհրաժեշտություն: Եկեղեցական գույքի բռնագրավումը և այնուհետև թուրք-հայկական ընդհարումները ուժեղացրին ազգային գիտակցությունը: Ամրապնդվեց արևմտահայ-արևելահայ համագործակցությունը¹:

Մի փոքր անդրադառնանք թուրք-հայկական ընդհարումների պատճառներին: Դրանց սկզբից ռուսական և եվրոպական մամուլն ու հասարակական քաղաքական գործիչները նշում էին հայերի և թուրքերի սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները, հանիրավի շեշտում, որ ընդհարումների բուն պատճառը մի կողմից երկրամասի հայ տարրի բարեկեցիկ կյանքով ապրելն ու ունևոր լինելն էր, մյուս կողմից թուրքի՝ աղքատ, հարստահարված լինելը: Այս տեսակետը այնքան էր արմատացել, որ դրան տուրք էին տալիս նաև շատ առաջադեմ գործիչներ և մամուլի օրգաններ, որոնց մեջ քիչ չէին սոցիալ-դեմոկրատական աշխարհայացք ունեցողները:

Սա միանգամայն անարդար մոտեցում էր հետևյալ պատճառով: Նախ

¹ Տե՛ս **Միմոնյան Հ.**, նշվ. աշխ., գիրք II, էջ 63-65:

Կովկասի ամենահարուստ տարրը հենց թուրք խաները, բեկերն ու աղալարներն էին, որոնք իրենց ձեռքում կենտրոնացրել էին հողային հսկայական տարածքներ, տասնամյակներով ավազակությամբ ու ավարչությամբ, զբաղված հատկապես հայ բնակչությանը ական-թալանի ենթարկելով կուտակել էին հսկայական հարստություն: Այլ բան է, որ այդ անլուր միջոցները «մեռած» էին, վերածված գանձի և տնտեսական հարաբերությունների մեջ դեր չէին խաղում: Նրանցից բացի՝ և՛ Շուշիում, և՛ այլ քաղաքներում ու հատկապես Բաքվում կապիտալիստական տնտեսահարաբերություններում ներգրավված էին ոչ քիչ թվով թուրք գործարարներ, որոնք հաջողությամբ ներդրումներ էին անում, այսպես ասած «պտտեցնում» իրենց գումարները: Ոչ քիչ հարստություն էին կուտակել շատ թուրք քոչվոր անասնապահներ:

Հայերի ունևոր և մրցակցության մեջ ավելի հաջողակ լինելը չէր բուն պատճառը, այլ դրա հետևանքով առաջացած թունտ այն նախանձը որ պատել էր թուրքին, ներսից կերել նրան և նախաձեռնող, աշխատող ու ստեղծագործ, դատող հային դարձրել աչքի փուշ: Նույն ատելությունը հաճախ համակել էր նաև թուրք բանվորությանը, որի գերակշռող մասը սևագործ էր, ի տարբերություն որակյալ հայ բանվորության: Կույր, գազանային ատելության օբյեկտ էր դարձել հայ մտավորականությունը՝ ուսուցիչը, ինժեները, բժիշկը, փաստաբանը, գյուղատնտեսը:

Սրան պետք է ավելացնել նաև թուրքի բարբարոս, ոճրագործ ցեղային հոգեբանությունը, քոչվորի հանցավոր բնագոյը, որոնք նրա պատմական զարգացման առանձնահատկությունն էին: Թալանն ու ավազակությունը, «գյավուրին» խոշտանգելն ու սպանելը տգետ և խավարամտության մեջ խարխափող թուրքի համար տղամարդկության յուրատեսակ նշան էին, հպարտության առարկա: Թուրքական այսպես կոչված «պոետիկ պատումները» լի էին նմանօրինակ «հերոսությունների» նկարագրություններով:

Թուրք-հայկական ընդհարումների պատճառներից են երկու ժողովուրդների քաղաքակրթական հայացքների (քաղաքական, գաղափարական, մշակութային ու կրոնական) առանձնահատկություններն ու տարբերությունները: Թուրքական վերնախավը ձգտում էր գերիշխանության Կովկասում: Այդ նկրտումները աջակցություն էին ստանում Թուրքիայից, ինչ-որ չափով նաև Իրանից ու ռուսական ինքնակալությունից: Առաջին երկու երկրների ցանկություններն ավելի հեռուն էին տարածվում: Նրանք չէին կորցնում կովկասյան թուրքերի միջոցով երկրամասը նորից ձեռք գցելու հույսը: Գործի էր դրվել դրա իրագործման զենքը՝ կրոնական անհաղորժողականությունը և այդ հիմքի վրա տարածված պանիսլամիզմի գաղափարախոսությունը, որը լայն արձագանք էր գտել թուրք մոլլաների, հողատերերի, նավթարդյունաբերողների և այսպես կոչված «թուրք մտավորականության» շրջանում:

Թուրք-հայկական ընդհարումների գլխավոր պատճառներից էր ցարական ինքնակալության քաղաքականությունը: Կովկասը հնազանդ պահելու, ռուսական առաջին հեղափոխության ազդեցությունը երկրամասում չեզո-

քացնելու, ազատատենչ հայի երազանքը սպանելու նպատակով ցարիզմը կանգնեց թուրք հետադիմական ու խավարամիտ էթնոսի կողքին՝ կազմակերպելով և ուղղորդելով նրան դեպի հայերի սպանդի իրականացումը: Ինքնակալությունը այդ քայլով փորձեց հայ ազգային-ազատագրական շարժումը արմատից ոչնչացնել, սրել միջհամախմբային հակասությունները: Գործի դնելով ռուս ազգայնական մտավորականության՝ Մուվորիհի, Վիտտեի, հետագայում Ստոլիպինի և նրանց գաղափարական զինակիցների ներուժը՝ ցարական իշխանությունները հայ ազգային կուսակցությունները հորջորջեցին ազգայնամոլ ու անջատողական, իսկ հայ ժողովրդին՝ անվստահելի էթնիկ տարր: Բարեբախտաբար ռուս մտավորականության շրջանում գտնվեցին շատերը (Ալ. Ամֆիտեատրով, Յու. Վեսելովսկի, Մ. Կովալսկի և ուրիշներ), որոնք եվրոպացի առաջադեմ բազմաթիվ գործիչների հետ իրենց ձայնը բարձրացրին՝ ի պաշտպանություն հայ ժողովրդի և նրա ոսնահարված իրավունքների:

Առաջին համաշխարհային պատերազմը նոր, մինչ այդ չտեսնված ողբերգություն բերեց հայ ժողովրդին: Հայոց պատմության ամենասև էջին՝ Մեծ եղեռնին հետևեց տագնապներով ու օրհասական կոիվներով լեցուն մի ժամանակաշրջան: Ռուսական ինքնակալության տապալումը նրա լծի տակ գտնվող ժողովուրդների մեջ ազատության ու դեմոկրատական զարգացման հույսեր ներշնչեց: Սակայն, ավա՛ղ, հայ ժողովուրդը նորից կանգնեց ֆիզիկական ոչնչացման եզրին: Ցարիզմի վերացումից հետո Կովկասը շատ շուտով կրկին վերածվեց ազգամիջյան կոիվների թատերաբեմի: Նորաստեղծ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների միջև ծագեցին տարածքային վեճեր, որոնք մեծապես թուլացրին այդ երկրները, հող նախապատրաստեցին նրանց անկախության վերացման և խորհրդայնացման համար:

Իր կազմավորման հենց առաջին օրվանից Ադրբեջանի Հանրապետությունը հայկական անկախ պետության նկատմամբ սկսեց վարել ագրեսիվ, նվաճողական քաղաքականություն: Մշտապես ունենալով Թուրքիայի աջակցությունը, անթաքույց հովանավորվելով Այսրկովկասի անգլիական կառավարչության և բրիտանական զորքերի կողմից՝ Ադրբեջանը պահանջեց իր տարածքներ ճանաչել Նախիջևանը, Արցախն ու Զանգեզուրը: Սկսվեց հիշյալ հայկական այդ հողերի հայ բնակիչների ազգային-ազատագրական պայքարի նոր փուլը ադրբեջանական զավթիչների նկրտումների դեմ:

Նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը շրջապատված լինելով թշնամիներով, ըստ էության անկարող էր իրական և արդյունավետ օգնություն ցույց տալ վտանգված երկրամասներին: 1918 և 1919 թվականներին հայերը պաշտպանական հերոսամարտեր մղեցին մասնավորապես Զանգեզուրում և Արցախում՝ դիմակայելով ադրբեջանական ահագնացող վտանգին: Ջորավար Անդրանիկի՝ Զանգեզուրից հեռանալն ավելի ծանրացրեց հայկական զույգ երկրամասերի դրությունը: 1919 թ. օգոստոսի 12-ին Շոշ

գյուղում գումարվեց արցախահայերի 7-րդ համագումարը, որը հենց սկզբից մերժեց Ադրբեջանի կառավարության և անգլիացիների կողմից Արցախի ու Ջանգեզուրի գեներալ-նահանգապետ նշանակված, հայ ժողովրդի ռիսերիմ թշնամի Խոսրով-բեկ Սուլթանովի վերջնագիրը, որով պահանջվում էր 48 ժամվա ընթացքում ընդունել Ադրբեջանի գերիշխանությունը, հակառակ դեպքում երկրամասը կհպատակեցվի գենքի ուժով: Խուսափելով ազգամիջյան ընդհարումներից, հաշվի առնելով Նախիջևանի կորուստը և ծայրահեղ ծանր վիճակը՝ համագումարը վերջիվերջո օգոստոսի 22-ին որոշեց ընդունել Ադրբեջանի գերիշխանությունը: Համաձայնագիրը հայերն ընդունեցին մի պայմանով, որ Ադրբեջանն այդուհետ չէր միջամտելու Լեռնային Ղարաբաղի ներքին գործերին¹: Ատելի Սուլթանովը տոնում էր իր հաղթանակը, սակայն բոլորովին ձեռք չէր քաշել Արցախն ու Ջանգեզուրը հայաթափ անելու մտադրությունից: Ավելին, իր նպատակը իրագործելու համար նա ի սպաս դրեց իր տրամադրության տակ եղած բոլոր ուժերն ու հնարավորությունները:

Ճիշտ է, 1919 թ. նոյեմբերին Գորիսի մատույցներում թուրքական բանակն ու զիված խուժանը խայտառակ պարտություն կրեցին, սակայն Սուլթանովը մնաց անդրդվելի և ետ չկանգնեց Արցախն ու Ջանգեզուրը գենքի ուժով հնազանդեցնելու իր ծրագրերից: Օգոստոսի 22-ի համաձայնագիրը դիտելով լոկ ժամանակ շահելու միջոց՝ նշանավոր հայակերը փորձում էր մի կողմից ջլատել հայկական ուժերը, տնտեսական շրջափակման ենթարկել Արցախի բնակավայրերը՝ սովի ու թշվառության մատնելով դրանց բնակիչներին, մյուս կողմից զինում ու վարժեցնում էր իր ձեռքի տակ եղած թուրք և քուրդ բաշիբոզուկներին՝ պատրաստվելով վճռական գոտեմարտի:

1919 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, այնուհետև 1920 թ. սկզբին Ադրբեջանի զինված ուժերն ու թուրքական խուժանը լուրջ պարտություն կրեցին Ջանգեզուրում՝ Գարեգին Նժդեհի ղեկավարած ուժերի կողմից: Այս հանգամանքը ոգևորիչ եղավ արցախահայության համար: Սակայն ջախջախիչ պարտությունից գազազած թուրքերը տենդագին պատրաստվեցին գենքով վերջնականապես լուծում տալու ինդրին: Գարնան սկզբին թշնամին Ղարաբաղում և նրա շուրջ կուտակեց 10 հազարից ավելի կանտնավոր զորք, ինչպես նաև քրդական դոչիներից կազմված հեծելազոր: Այդ զորամասերի ընդհանուր հրամանատար էր նշանակվել օսման թուրք Նուրի փաշան, օգնական՝ զորավար Ներուզովը: Նրանց տրամադրության տակ էին բազմաթիվ թուրք սպաներ²: Պետք է հատուկ նշել, որ Ադրբեջանը, շնորհիվ զինվորական նախարար Սամեդբեկ Մեհմանդարովի եռանդուն և բանիմաց ջանքերի, կարողացել էր կարճ ժամանակամիջոցում ստեղծել լավ զինված ու մարտունակ բանակ, որը պատրաստվում էր իրականացնել Արցախի

¹ Տե՛ս «Слово», 28 августа 1919, **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Թեհրան, 1982, էջ 322-323:

² Տե՛ս «Ժողովուրդ», 26 մարտի 1920:

վերջնական հպատակեցումը: Արցախահայությունը ելավ օրհասական պայքարի: Հայկական փոքրաթիվ ուժերը պատրաստվեցին նախահարձակ ապստամբության: Մարուշեն գյուղում կենտրոնացավ ինքնապաշտպանական ջոկատների շտաբը: Նախապատրաստական աշխատանքները ղեկավարում էին Արսեն Միքայելյանը, գնդապետ Ջախար Մեսյանը, Դալի Ղազարը (Միքայել Բադալքոյիսյան), Արսեն Հովհաննիսյանը, Ասատուր Ավետիսյանը, Հովակ Ստեփանյանը, կապիտան Մարտիրոսյանը¹:

Նշված ղեկավար գործիչները Երևանի կառավարությունից ու հատկապես Դրոյից ստացել էին խիստ հրահանգ՝ գործել զգույշ և ծածուկ, գաղտնի պահել ապստամբելու իրենց մտադրությունը թուրքերից: Մակայն հայ զինվորական ղեկավարությունը տեղերում սկսեց գործել բացեփաց, միանգամայն լեզավ և ցուցադրական: Ադրբեջանական կողմին իսկույն պարզ դարձավ, որ հայերը պատրաստվում են զինված ելույթների:

1920 թ. փետրվարի 19-ին Սուլթանովը վերջնագրով դիմեց արցախահայությանը: Այն քննարկելու համար փետրվարի 22-ին Շոշ գյուղում գումարվեց Ղարաբաղի 8-րդ համագումարը, որը կտրուկ մերժեց Սուլթանովի վերջնագիրը և քվեարկեց Հայաստանի Հանրապետությանը միանալու օգտին: Դրան հակառակ, Շոշում հավաքվեց 45-50 պատգամավորներից կազմված մեկ այլ «համագումար», որն ընդունեց վերջնագիրը՝ ճանաչելով Ղարաբաղն իբրև Ադրբեջանի մաս²: Այնուամենայնիվ Սուլթանովը խիստ դժգոհ մնաց արցախցիների որոշումներից՝ կրկնապատկելով իր եռանդը:

Թուրքերը նախ ամրացրին Շուշին և Խանքենդ ավանը, ապա գրավեցին Ասկերանի անցուղին և դրանով իսկ ապահովեցին Ադրբեջանի կապը Շուշիի հետ: Ադրբեջանական նախահարձակների հաջորդ քայլը եղավ այն, որ գորքերը կենտրոնացրին ոչ միայն Ջևանշիրի սահմաններում, Ասկերանում, Խանքենդում, Շուշիում, այլև Կարյազիտյում, Ջաբրայիլում, Աղդամում և այլ վայրերում³:

1920 թ. մարտի 20-ին Սուլթանովը նոր վերջնագիր ներկայացրեց արցախահայությանը՝ ընդունել Ադրբեջանի վերջնական և համընդհանուր գերիշխանությունը, բայց դարձյալ մերժում ստացավ: Մարտի 21-ին դրությունը կտրուկ լարվեց. Թարթառ ավանում կողոպտվեցին հայերի խանութները, իսկ Մարաղա, Չայլու և Թալիշ գյուղերի սահմաններում թուրքերը սկսեցին քշել ու տանել հայերի նախիրը, ոտնատակ տալ արտերը: Ասկերանի շուրջը և Խանքենդում ադրբեջանական զորքերը նոր բախումների առիթ տվեցին, իսկ Շուշիում Սուլթանովը պահանջեց հայերի զինաթափում: Քաղաքի հայկական մասի սահմաններում թուրքական նորանոր զորքերը դիրքեր

¹ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 114, ց. 2, գ. 3, թթ. 21-24, Միմոնյան Ա., Ջանգեզուրի գոյամարտը 1917-1921 թթ., Երևան, 2017, էջ 429:

² Տե՛ս Վրացեան Ա., նշվ. աշխ., էջ 372, Գևորգյան Հ., Դրո, Երևան, 2014, էջ 562-563:

³ Տե՛ս «Слово», 27 марта 1920, Վրացեան Ա., նշվ. աշխ., էջ 372, Միմոնյան Ա., նշվ. աշխ., էջ 429:

գրավեցին, չնայած հայկական մասում վաղուց առկա էին թուրք գորամասեր: Բոլոր քայլերը վկայում էին, որ Ղարաբաղի հարաբերական խաղաղությունն ապրում է իր վերջին ժամերը:

Մարտի 22-ին մուսուլմանների կրոնական տոնն էր՝ Բայրամը, որն արագացրեց դեպքերը: Մարտի 22-ի լույս 23-ի գիշերը հայերը՝ Դավի Ղազարի (Միքայել Բաղալբյոխյան) գլխավորությամբ, հարձակվեցին Ասկերանի վրա, ջարդեցին թուրքերից և դադստանցիներից բաղկացած գորամասը: 50 ասկյարներից փախուստի դիմելով ազատվեցին 15-ը¹: Գրավելով Արցախի գլխավոր միջանցքը՝ հայ մարտիկները Շուշին այդպես կտրեցին Ադրբեջանից: Դա սպասվող դեպքերի կանխման փորձ էր: Հայկական ուժերը հարձակվեցին նաև Խանքենդի վրա, որտեղ ևս գտնվում էին թուրքական զորքերը, պաշարեցին այն և կտրեցին Շուշիի հետ նրա կապը ևս: Հարձակում եղավ նաև Թարթառ ավանի վրա²:

Նշված դեպքերն իրենց արձագանքն ունեցան Շուշիում, որտեղ միամիտ հայերը հույսները դրել էին Սուլթանովի՝ քաղաքի հայերին պաշտպանելու ազնիվ խոսքի վրա:

Մարտի 23-ի լուսաբացին քաղաք մտան 35 զինված հայ մարտիկներ և հանդուգն հարձակում գործեցին 600-ից ավելի զինվոր ունեցող թուրքական զորանոցի վրա: Հարձակումը հանդիպեց ուժգին դիմադրության, և դա ազդանշան եղավ, որպեսզի թուրքական զորքերը տարբեր ծայրերից միահամուռ հարձակվեն քաղաքի հայկական մասի վրա: Սկսվեց իրարանցում: Հայկական մասում հրդեհ ծագեց, որը շուտով տարածվեց ամենուր: Հայությունը խուճապի մատնվեց, թուլացավ նրա առանց այն էլ անբավարար ինքնապաշտպանությունը, ժողովուրդը ահաբեկված բռնեց փախուստի ճանապարհը:

Շատերը մնացին բոցերի մեջ, իսկ մուսավաթական զինվորները և մուսուլմանական մոլեռանդ ամբոխը անցան ծրագրված ջարդարար գործողությունների ու թալանի: Այդ օրը սպանվեց մի քանի հազար մարդ կանայք, ծեղեր և երեխաներ: Բարբարոս զորքի ու խուժանի ձեռքով սրախողխող ընկան հասարակական, քաղաքական, կրոնական, մշակութային բազմաթիվ գործիչներ:

Երկու օրվա ընթացքում Շուշիի հայկական մասը՝ շուրջ 2000 տուն, բազմաթիվ խանութներ և արհեստանոցներ, հրդեհի ճարակ դարձան: Քաղաքում կանգուն մնացին միայն 25 շինություն, այդ թվում՝ թեմական դպրոցը, Բեգլարյանի շքեղ տունը և մի քանի այլ արժեքավոր շենքեր:

Հետագա մի քանի օրերին մուսավաթականներն ու խուժանը շարունա-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 606, թ. 27, ֆ. 206, ց. 1, գ. 84, թ. 34, **Միմոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 430:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 84, թ. 34, «Յառաջ», 7 ապրիլի 1920, թիվ 73, Հայաստանի պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 480, **Միմոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 430:

կեցին անսանձ կամայականությունները, բռնություններն ու անպատիժ սպանությունները, Արցախի ազգային խորհուրդը դադարեց գործել: Շուշիում Բեգլարյանի և մյուս չայրված տներում ապաստանած ավելի քան 5000 հոգի՝ կին ու երեխա, գերվեցին և նետվեցին բանտերը: Այս վիճակում Շուշին մնաց երկու շաբաթ: Ոճրագործ Սուլթանովը, գտնվելով մեկուսացած ու պաշարված դրության մեջ, զգուշանում էր կոտորել հայ գերիներին:

Պաշարված, բայց կանգուն էր մնացել նաև Խանքենդը՝ այդտեղ գտնվող թուրք զորքերով, որոնք հրետանու շնորհիվ կարողացան պահել իրենց դիրքը: Հայերը վաղուց քաշվել էին այդտեղից¹:

Ջանգեզուրից մեծ դժվարությամբ զինյալներ և ռազմամթերք հասցվեց հայկական ուժերին: Բայց հրամանատարությունը և նամանավանդ զանգեզուրյան մարտիկների ղեկավար, գնդապետ Ա. Թարվերդյանը անվճռական ու ապաշնորհ գտնվեցին, որի հետևանքով ավերներն ու կոտորածը շարունակվեցին: Ճիշտ է, Դիզակում հայ ինքնապաշտպանական ուժերը հաջողության հասան, բայց թուրքերը կարողացան մեծ թափով առաջ շարժվել:

Ամենուրեք շարունակվում էին համառ կռիվները, դրանք մեծ թափ էին ստացել հատկապես Ջևանշիրում և Գանձակի գավառում: Մարտի 24-ին ադրբեջանական զորքերը թուրք խուժանի աջակցությամբ Ջևանշիրի շրջանում (Ինջա գետից սկսած) դիմեցին հարձակման: Հայերը, որ առաջացել էին մինչև Թարթառ ավանը, քաշվեցին Մարաղա, Չայլու և Թալիշ գյուղերը, որոնց շուրջ տեղի ունեցավ համառ կռիվ: Հայերը, խնայելով փամփուշտները, հետզհետե թողեցին Մարաղան, երկու Չայլուները, Մարգուշավանն ու կենտրոնացան Թալիշում:

Ադրբեջանական մեկ այլ զորամաս՝ թնդանոթներով զինված, խուժանի ուղեկցությամբ մարտի 25-ին հարձակվեց Գանձակի գավառի Կարաչինար և Էրքեջ գյուղերի վրա: Այս շրջանի զինված հայերը՝ Տեր-Անանյանի ղեկավարությամբ, դուրս եկան թշնամուն դիմադրելու: Երկու օրվա համառ կռիվից հետո զինամթերքի բացակայության պատճառով հայկական զինված ուժերը ստիպված թողեցին Կարաչինարը, Խարխապուտը, Պարիսը, Էրքեջը, Մանաշիղը և Ներքին Շենը: Մտնելով այդ գյուղերը՝ թուրքերը անլուր չարագործություններ կատարեցին բնակչության նկատմամբ: Ապրիլի 2-ին ընկավ Թալիշը, ավերումի ու ջարդի ենթարկվեցին Գանձակի գավառի գյուղերը՝ Չարդախլուն, Բանանցը, Գետաշենը, Սուլուկը²:

Երկարատև պաշարումից հետո՝ ապրիլի 3-ին ընկավ Ասկերանի բերդը՝ եզրափակելով ինքնապաշտպանական կռիվների անհաջողությունը: Ադրբեջանը ցնծության մեջ էր, ամենուր կոչեր էին լսվում. «Ղարաբաղը լիովին

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 69, 163-164, գ. 423, թ. 9, ֆ. 4033, ց. 5, գ. 461, թ. 145, «Հառաջ», 12 մայիսի, 1920, **Վրացեան Ա.**, նշվ. աշխ., էջ 372-373, Нагорный Карабах в 1918-1923 гг., Ереван, 1992, с. 416, **Գևորգյան Հ.**, նշվ. աշխ., էջ 569, **Սիմոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 430-431:

² Տե՛ս **Սիմոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 434-435:

մաքրենք գյավուր հայերից»: Բայց թուրք բարբարոսների անհուն ուրախությունը Շուշիի հայաթափումն ու ավերումն էր:

Ապրիլի 6-ին Ադրբեջանի զորքերը արշավով մտան Շուշի: Միաժամանակ պաշարումից ազատվեցին Խանքենդի զորամասը, Շուշիի զորքը և ինքը՝ Սուլթանովը¹: Դրանից հետո նրա և Հաբիբ բեյ Սելիմովի թողստվածությամբ սկսվեց Շուշիում կենդանի մնացած անգեն ու անպաշտպան հազարավոր հայերի բռնությունների, բռնաբարությունների, տանջանքների ու սպանությունների մի եղկելի շարան, որպիսին դժվար է պատկերացնել: Շուշիի առաջնորդ Վահան Եպիսկոպոսին և թեմական դպրոցի տեսուչ, նշանավոր բոլշևիկ Ալեքսանդր Ծատուրյանին (Ռուբենի) գլխատեցին և նրանց գլուխները, ի ցույց բոլորի, բարձրացրին ձողերի վրա:

1920 թ. մարտի 23-ից ապրիլի 6-ը ժամանակահատվածում թուրքերը և քրդերը Շուշիում ոչնչացրին գրեթե ամբողջ հայությանը: Քաղաքի 35 հազար բնակիչ ունեցող հայկական թաղամասը ոչնչացվեց, ավերված Շուշիի տերը դարձավ 23 հազար բնակիչ ունեցող թուրքական մասը²: Քաղաքի ճակատագիրը մեկընդմիջտ որոշված էր: Երբեմնի ծաղկուն ու շենշող բնակավայրը վերածվել էր մոխրակույտի: Ղարաբաղի վարչական ու մշակութային կենտրոնի հրդեհումը և ավերումը անդառնալի կորուստ էին տարածաշրջանի ամբողջ հայության և ընդհանրապես հայ մշակույթի համար:

Որո՞նք էին Շուշիի անկման և արցախահայության 1920 թ. սկզբի պարտության պատճառները: Մուսավաթական հրոսակախմբերին հաջողվեց հսկայական ավերներ կատարել Արցախում այն պատճառով, որ հայերն ապստամբել էին իրենց համար աննպաստ պայմաններում առանց լուրջ ու բազմակողմանի նախապատրաստության՝ չունենալով ամուր կարգապահությամբ կանոնավոր զորք, անհրաժեշտ քանակի ռազմամթերք ու զենք: Մարտ-ապրիլյան դեպքերը եկան հաստատելու դեռևս 1920 թ. փետրվարի 2-ին Դիզակի Հարար գյուղում հրավիրված Արցախի ազգային խորհրդի մի քանի անդամների և զինված ջոկատների հրամանատարների խորհրդակցությունում արձանագրված այն կանխատեսումը, թե «Ղարաբաղում եղած սակավաթիվ ռազմամթերքով կովի դեպքում երեք օր միայն կարող ենք դիմանալ»³:

¹ Տե՛ս Վրացեան Ա., նշվ. աշխ., էջ 373, Գևորգյան Հ., նշվ. աշխ., էջ 571, 577, 578, Միմոնյան Ա., նշվ. աշխ., էջ 436:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 417, թթ. 139-140, գ. 563, թ. 67, ֆ. 278, ց. 1, գ. 30, թթ. 1-2, ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 27, թ. 55, «Слово», 16 апреля 1920, Միմոնյան Ա., նշվ. աշխ., էջ 438:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 606, թ. 30: Համլետ Գևորգյանը, իր արժեքավոր մենագրության մեջ վկայակոչելով Եղիշե Իշխանյանին, Հովակ Ստեփանյանին և դեպքերի ակնաստես ու մասնակից այլ գործիչների, իրավացիորեն նշում էր, որ Արցախի ողբերգությունն ու նամանավանդ Շուշիի կործանումը հետևանք էին արցախյան մարտական ջոկատների ղեկավարներ Դալի Ղազարի, Արսեն Միքայելյանի, Ջախար Մեսյանի, ռոտմիստր Տեր-Մարտիրոսյանի և նրանց մի շարք գործնկերների հապճեպ կազմակերպած, վատ փոխհամաձայնեցված,

Այնինչ ռուս, թուրք գեներալների ու սպաների միջոցով Ադրբեջանը կարողացել էր հատկապես 1919 թ. դեկտեմբեր-1920 թ. մարտ ամիսներին զգալի առաջընթաց ունենալ Բանակաշինության ուղղությամբ, և այդ գործում անուրանալի էր ռազմական նախարար, գեներալ-մայոր Մամեդբեկ Մեհմանդարովի դերը:

Մուսավաթական «Բակինեց» թերթը, անդրադառնալով Բանակի կազմակերպման ուղղությամբ ձեռք բերված հաջողություններին, գրում էր. «Ադրբեջանը պարտավոր է կենդանության ժամանակ անձեռակերտ հուշարձան կանգնեցնել իր առաջին և անփոփոխ ռազմական նախարար գեներալ Մեհմանդարովի համար: Միայն զինվորական գործի այդպիսի գիտակը կարող է կարճ ժամանակում ոչնչից ստեղծել Բանակ, որը պատիվ կբերեր եվրոպական ցանկացած փոքր պետության: ... Իհարկե ոչ ոքի չի զարմացնում Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների գորքերի օրինակելի վիճակը, որքանով որ վրացիներն ու հայերը ծառայության են անցել ռուսական Բանակներում և զինվորական ոգին նրանց մոտ բարձր է: Եվ գեն[երալ] Մեհմանդարովի մեծ աշխատանքը հենց նրանով էլ բարձր է, որ, ի պատիվ մեր կառավարության, պետք է ասել, որ սա միշտ և ամեն ինչում աջակցել է իր ռազմական նախարարին Բանակի կառուցման համար՝ նրան տրամադրելով դիկտատորական իրավունքներ և անսահմանափակ վարկեր»¹:

Եվ դա այն դեպքում, երբ Արցախի ու Ջանգեզուրի հայ պաշտպանների համար գենք ու զինամթերք ձեռք բերելը կապված էր անասելի դժվարությունների հետ: Մարտիկներն իրենց ստացած փամփուշտներն օգտագործում էին խիստ խնայողաբար: Հայաստանը չէր կարողանում բավարար քանակությամբ զինամթերք առաքել Ջանգեզուր, իսկ Արցախն ընդհանրապես Երևանից ոչինչ չէր ստանում: Արցախցիների միակ հույսը շարունակում էր մնալ Ջանգեզուրը, որն իր սուղ հնարավորություններից այնուամենայնիվ, բաժին էր հանում նրանց:

Արցախահայերի պաշտպանական խմբերը ապստամբությանը պատրաստվում էին անկազմակերպ, հախուռն, ոչ ծածուկ, այլ ցուցադրական ձևով, որը չէր կարող վրիպել հակառակորդի ուշադրությունից: Պարտության մեջ իրենց լուրջ մեղքի բաժինն ուներ հայկական ուժերի ղեկավարությունը, որն ակնհայտորեն թերագնահատեց թշնամու ուժերը, լրջորեն չմշակեց ապստամբության ռազմական պլանը, զինվորական պրոֆեսիոնալիզմը փոխարինեց խիզախ, բայց տաքարյուն և անհաշվենկատ գործելակերպով:

Հերթական անգամ իր դերը խաղաց մեր անմիաբան, ոչ միասնական լինելը, ի հակառակ թշնամու, որը կարողացավ համախմբել իր բոլոր ներքին ուժերը՝ արդյունավետ կերպով իրականացնել հակահայ քարոզչություն,

չկշռադատված, տաքարյուն ու անմիտ գործողությունների (տե՛ս **Գևորգյան Հ.**, նշվ. աշխ., էջ 565- 569):

¹ «Бакинец», 29 марта 1920.

Ադրբեջանի հասարակության լայն խավերին միավորել մի ընդհանուր գաղափարի՝ հայ ժողովրդի և մասնավորապես արցախահայության նկատմամբ ատելության ներքո:

Շուշիի անկումը, նրա հայ բնակչության կոտորածը թողել են ուսանելի պատմական դասեր:

1. Հայ ազգի գոյությունը և անխաթար զարգացումը ապահովող ամենակարևոր գործոնը մեր եռամիասնությունն է՝ Հայաստանի Հանրապետություն, Արցախի Հանրապետություն և Մփյուռք: Մեր միաձույլ հասարակությունն է միայն, որ տեր կկանգնի ժողովրդի կյանքին ու պատվին, հայ էթնոսի ամբողջ ներուժը կծառայեցնի այդ կարևորագույն գործին:

2. Մենք դատապարտված ենք ստեղծելու քաղաքականապես, տնտեսապես ու բարոյահոգեբանական տեսակետից միաձույլ և ուժեղ հասարակություն, որը վստահորեն կընթանա դեմոկրատական առաջընթացի, չորրորդ տեխնոլոգիական հեղափոխության, հայ ազգային գաղափարի վրա խարսխված Հայոց պետականության նպատակների ու իդէերի իրականացման ճանապարհով:

3. Մեր էթնոսի և պետականությունների գոյատևման երաշխավորողը եղել է, կա ու լինելու է Հայոց հզոր բանակը, որը պետք է գտնվի մեր մշտաբուն հոգածության ներքո:

4. Յուրաքանչյուր հայ մարդու սրբազան պարտքը պետք է դառնա ծննդյան օրվանից սկսած նորելուկ սերնդի կրթության ու դաստիարակության ազնիվ գործը: Մեր երիտասարդությանը մշտապես պետք է ներարկել բարոյական բարձր ոգի, հայրենասիրություն, անհուն նվիրվածություն սեփական ժողովրդին, հայրենի եզերքը պաշտպանելու անկոտրում կամք ու վճռականություն: Յուրաքանչյուրի մեջ անհրաժեշտ է արթնացնել ոգու անհատական բարձր հատկանիշներ, սերմանել ազրեսորի, կեղեքիչի, բարբարոսի դեմ անկոտրում պայքարելու, նրան անպայման պատժելու անսանձ ցանկություն:

5. Հայ մտավորականությունը մի կողմ պետք է թողնի սեփական, երբեմն-երբեմն ի հայտ եկող երկչտությունը, պոտենցիալ վտանգների նկատմամբ բարեհոգի վերաբերմունքը, նեղ, եսասիրական բնագոյները և լրջորեն ծրագրի ու իրականացնի սեփական պետականությունների և ժողովրդի օրավուր բարդացող խնդիրների և իրական մարտահրավերների արդյունավետ ու թիրախավորված լուծումը: Մտավորականությունը պետք է գիտակցի, որ մեր նկատմամբ հստակ նպատակադրված քարոզչությունը մեծագույն վտանգ է մեր ազգային անվտանգությանը, և դրա անտեսումը կամ լուրջ չընդունելը ծանր հետևանքներ կարող է ունենալ:

6. Միջազգային ասպարեզում հետամուտ պետք է լինենք հայի դրական կերպարի անդուլ քարոզին՝ մեր երկու պետականության նկատմամբ դրական կարծիք հաստատելու կարևորագույն նպատակին: Անհրաժեշտ է օգտագործել լոբբիստական յուրաքանչյուր հնարավորություն, հայասեր մթնո-

լորտ ստեղծելու, մեր անկախության, ազատ զարգացման, արցախահայության խնդիրը հայ ժողովրդի իղձերին համապատասխան լուծելու համար: Այս դժվարին խնդիրները հաջողություն կունենան միայն գրագետ արտաքին քաղաքականություն վարելու ճանապարհով՝ հատկապես գերտերությունների, դեմոկրատական բոլոր ուժերի հետ հարաբերվելիս:

Մեր պետականություններն ու հասարակությունը դժվարին խնդիր ունեն լուծելու: Դա թուրքալեզու երկու հարևանների հետ խաղաղ գոյակցելն է: Հստակ է, որ մեր քաղաքակրթական ճանապարհները տարբեր են, և թուրքի գիշատիչ, կրոնական անհանդուրժողականության ու պանթուրքիստական բնագոյները ոչ մի տեղ չեն կորել: Ելնելով թուրք ժողովրդի ցեղային հատկանիշներից՝ Թուրքիան միշտ լինելու է Ադրբեջանի կողքին՝ ընդդեմ Հայաստանի: Մենք՝ հայերս, հստակ պետք է գիտակցենք, որ այս երկու ազգակից ժողովուրդների հետ հարաբերություններում շատ հաճախ քաղաքակրթության մշակված բարոյական նորմերը արժեք չեն ունենում:

Դեռևս Առաջին հանրապետության հռչակման առաջին պահերից և արցախյան ճգնաժամի օրերին Հայաստանի ղեկավարությունը, ցավոք, հետևողականորեն առաջնորդվում էր միջազգային իրավունքի և համընդհանուր բարոյականության սկզբունքներով, մի բան, որ արդարացված չէր, երբ հայությունն իր դիմաց ուներ բարոյականությունից գաղափար չունեցող Տաճկաստան և Ադրբեջան, որոնք հարմար պահի, առանց ընդհանրապես վարանելու ոտնատակ էին տալիս այդ սկզբունքները: Թե՛ Հայաստանի Հանրապետությունում և թե՛ Չանգեզուրում ու Արցախում, իհարկե, կային գործիչներ, որոնք մշտապես նախազգուշացնում էին նման գործելակերպից բխող վտանգների մասին և առաջարկում գործել այնպես, ինչպես գործում է թշնամին՝ անողոք ու դաժան: Բայց նրանք կառավարական շրջաններում եղանակ չէին ստեղծում: Նման գործելակերպը ծանր նստեց հայության վրա: Օրինակ՝ 1918 թ. վերջերին Գորիսից դեպի Շուշի արշավանքը դադարեցնելու և անգլիացիների ճնշման տակ Զաբուղի ձորից վերադառնալու մասին Անդրանիկի որոշումը դրա ակնառու ապացույցներից մեկն էր: Գարեգին Նժդեհն էր, որ, Չանգեզուր գալով, վճռականապես փոխեց թշնամու դեմ կռվելու մարտավարությունը և այստեղ հրապարակ բերեց «ակն ընդ ական» սկզբունքը:

Միանշանակ պետք է գիտակցենք, որ ադրբեջանական պետության հետ հարաբերվելիս քաղաքական, սոցիալ-տնտեսական բոլոր վիճակներում այս պետությունը Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի նկատմամբ հանդես է գալու տարածքային-նվաճողական հավակնություններով, փորձելու է հագեցնել մեր ունեցվածքին ու մշակութային արժեքներին տեր դառնալու անկոտրում ծարավը:

Ամուր, բարեկամական հարաբերություններ պետք է զարգացնենք հարևան Իրանի հետ: Ամեն ինչ պետք է անենք՝ ապահովելու նրա չեզոք, իսկ

լավագույն դեպքում մեզ համար բարենպաստ դիրքորոշումը Արցախի հարցում:

Հայաստանի արդի և ապագա շահերը սերտորեն միահյուսված են Ռուսաստանի շահերին: Հայ ժողովրդի համար ապացուցման կարիք չունի այն ճշմարտությունը, որ դեմոկրատական Ռուսաստանն է մեր միակ ու անփոխարինելի ռազմավարական դաշնակիցը: Բոլոր տեսակի մեծ ու փոքր հակառուսական տրամադրությունները պետք է վճռականորեն և վերջնականապես արմատախիլ արվեն հայ հասարակության միջից:

Արամ Տիմոնյան – *Разрушение Шуши, погром армянского населения: причины, последствия и уроки истории*

С конца XVIII века город Шуши стал неотъемлемой частью жизни армянского народа. После вхождения в состав Российской империи Шуши стал активно развиваться и в начале XX века превратился в один из крупных центров Кавказского края. В годы Первой русской революции Шуши превратился в арену азербайджано-армянских столкновений. Армянское население города поднялось на борьбу против посягательств на его существование со стороны крайне националистически и антиармянски настроенных азербайджанских громил, явно поддерживаемых царскими сатрапами. Несмотря на неравенство сил, армяне города смогли отстоять свое право на существование. Но, тем не менее, эти кровавые столкновения и антиармянская политика царизма имели значительные отрицательные политические и социально-экономические последствия для армянского населения Кавказа. Тяжелым оказалось и положение Арцаха, в том числе и Шуши. Первая мировая война, крушение Российской империи и создание независимых государств в Закавказье до крайности обострили межнациональные отношения в Кавказском крае. Азербайджанская республика с первых дней своего образования начала проводить яркую антиармянскую политику, которая в первую очередь представляла угрозу для существования армянского населения Арцаха и Зангезура. Кульминацией этой варварской, бесчеловечной политики стало уничтожение Шуши. С 23-го марта по 6-е апреля 1920 г. вооруженные формирования турок-азери и курдов Азербайджанской республики вырезали почти все армянское население Шуши. Тридцатипяти тысячное армянское население города перестало существовать. Некогда цветущий и лучезарный город и знаменитый очаг армянской культуры превратился в руины. Разгром административного и культурного центра Арцаха стал невосполнимой утратой для всего армянского этноса. Падение Шуши и геноцид его населения оставили кровавый след в нашей памяти и преподали серьезные уроки истории: гарантия существования и развития армянской нации – это нерушимое единство Республики Армения, Арцаха и Спюрка (армянской диаспоры); мы «обречены» на создание сильного общества, сплоченного в политическом, социально-экономическом и нравственно-психологическом отношении; гарантом существования нашего этноса и двух армянских государств является и будет являться Армянская армия; необходимо всегда помнить, что Азербайджан во всех политических, социально-экономических ситуациях в отношении Армении и армянского народа будет выступать с территориальными претензиями; армянский народ должен развивать крепкие, добрососедские отношения с Исламской Республикой Иран и постоянно осознавать, что единственным нашим неизменным союзником является и будет являться Российская Федерация.

Aram Simonyan – *The Destruction of Shusha, the Massacre of the Armenian Population: Causes, Consequences and History Lessons*

Since the end of the 18th century, the city of Shusha has become an integral part of the life of the Armenian people. After joining the Russian Empire, Shusha began to actively develop and at the beginning of the XX century turned into one of the prominent centers of the Caucasus region. During the First Russian Revolution, Shusha turned into an arena of Azerbaijani-Armenian clashes. The Armenian population of the city rose against the encroachments of extremely nationalist and anti-Armenian-minded Azerbaijani ruffians, who were openly supported by the satraps of the tsar. Despite the inequality of forces, the Armenians living in the city were able to protect themselves. But, nevertheless, these bloody clashes and the anti-Armenian policy of tsarism had serious negative political and socio-economic consequences for the Armenian population of the Caucasus. The situation in Artsakh, including Shusha, was also difficult. World War I, the collapse of the Russian Empire and the creation of independent states in Transcaucasia extremely aggravated interethnic relations in the region. From the first days of its formation, the Republic of Azerbaijan began to pursue a fierce anti-Armenian policy, which, first of all, posed a threat to the existence of the Armenian population of Artsakh and Zangezur. The culmination of this barbaric, inhuman policy was the destruction of Shusha. From March 23 to April 6, 1920, the armed formations of the Turks, the Azeri and the Kurds living in the Azerbaijan Republic massacred almost the entire Armenian population of Shusha. The thirty-five thousand Armenians of Shusha ceased to exist. The once flourishing and prosperous city, the famous center of Armenian culture was ruined. The defeat of the administrative and cultural center of Artsakh became an irrevocable loss for the entire Armenian ethnic group. The fall of Shusha and the genocide of its population left a bloody trace in our memory and taught serious history lessons: the guarantee of the existence and development of the Armenian nation is the indestructible unity of the Republic of Armenia, the Artsakh Republic and Spyurk (Armenian Diaspora); we are doomed to create a politically, socioeconomically, morally and psychologically cohesive and strong society; the guarantee of the existence of our ethnos and the two Armenian states is and will be the Armenian Army; it must always be remembered that in all political, socio-economic situations, Azerbaijan will make territorial claims against Armenia and the Armenian people; the Armenian people should develop strong, good-neighborly relations with the Republic of Georgia, the Islamic Republic of Iran and constantly be aware that the Russian Federation is and will be the only reliable ally forever.

Ներկայացվել է 05.06.2020

Գրախոսվել է 10.06.2020

Ընդունվել է տպագրության 30.06.2020

ԳԵՐՄԱՆԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՋԱՆՔԵՐԸ ԵՐԿՈՒ
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ
1918-1921 ԹԹ.

Բանալի բառեր – Էվալդ Շթիր, Ջեյմս Գրինֆիլդ, Յոզեֆ Մարքվարթ, Պաուլ Ռոնրբախ, Յոհաննես Լեյսիուս, Ընդհանուր ժողով, մշակույթ, պարբերական, գրքույկ, հրապարակում, Հայաստանի Հանրապետություն, Մխիթարյան միաբանություն, միություն, դասախոսություն

1919 թ. Գերմանա-հայկական ընկերության (այսուհետև՝ ԳՀԸ) քարտուղար Էվալդ Շթիրը հրատարակեց «Քրիստոնյաների գրկանքներն ու քրիստոնեական օգնությունը Թուրքիայում» վերնագրով հոդվածը, որում, անդրադառնալով հետպատերազմյան գերմանա-թուրքական հարաբերություններին, արձանագրում էր. «Գերմանա-թուրքական բարեկամությունը պատմական անցյալ է: Դա պատերազմի հետևանքն է [...]: Բեռլին-Բաղդադի (երկաթուղու – Հ. Մ.) կառուցումն ու դրա հետ կապված երազանքները խափանվեցին, և այս կապակցությամբ երկար քննարկումներ անելու իմաստ չկա: Առանց պատերազմի «դժբախտ» ավարտի, այսուամենայնիվ, գերմանա-թուրքական բարեկամական կապը խզվելու էր՝ երկու կողմից: Այն (գերմանա-թուրքական բարեկամությունը – Հ. Մ.) միշտ էլ սահմանափակ է եղել, գտնվում էր Էնվերի ու Թալեաթի չորս աչքի առջև և պահպանվում էր միայն անհրաժեշտությունից ելնելով»¹:

Նշենք, որ պատերազմի ավարտից հետո ոչ միայն գերմանա-թուրքական, այլև գերմանա-հայկական հարաբերությունները գտնվում էին ցածր մակարդակի վրա: Պատերազմից մեծ կորուստներով դուրս եկած երկու ժողովուրդներն էլ հայտնվել էին դժվարին կացության մեջ և ի վիճակի չէին միմյանց երաշխավորել ո՛չ քաղաքական աջակցություն, ո՛չ նյութական հովանավորություն²: Այդ իրադրությունում գերմանացի հայասերները խորհում էին վերակենդանացնել պատերազմի ստեղծած խոչընդոտների պատճառով ընդհատված գերմանա-հայկական մշակութային փոխառնչությունները, նպաստել, որ երկու ժողովուրդներին կապող թույլ թելերը հետգհետե ավելի ամուր դառնան: Հատկանշական է, որ զինադադրից և գրաքննության

¹ Stier E., Christennot und Christenhilfe in der Türkei // “Zeitschrift für Missionskunde und Religionswissenschaft”, 34 (1919), S. 123-140. Հմմտ. Meißner A., Martin Rades “Christliche Welt” und Armenien. Bausteine für eine internationale Ethik des Protestantismus, Band 22, Berlin, 2010, S. 267:

² Stier E., Ein Volk, das nicht sterben kann // “Christliche Welt”(CHW), 36 (1922), S. 153.

վերացումից հետո ԳՀԸ-ն ձեռնամուխ եղավ իր՝ 1914 թ. ընդունված կանոնադրության երկրորդ կետի¹, այլ կերպ ասած՝ սկզբից նեթ իր առջև դրված մշակութային նպատակների իրականացմանը: Ինչպես գիտենք, ընկերության պաշտոնական օրգան “Mesrop” պարբերականն առաջին համարի լույս ընծայումից հետո (1914 թ. հունիս) չունեցավ շարունակություն պատերազմի ժամանակաշրջանում²: Պատերազմի ավարտից հետո ԳՀԸ-ն չվերադարձավ նշված պարբերականի հրատարակությանը, այլ սկսեց տպագրել “Deutsch-Armenische Korrespondenz” (DAK) թերթը³, որը չէր կրում գաղտնի բնույթ և

¹ ԳՀԸ-ն, ըստ իր կանոնադրության երկրորդ կետի, հետապնդում էր հետևյալ նպատակները. ա) Գերմանիայում ստեղծել արդար ու անկողմնակալ կարծիք հայ ժողովրդի և հայերի շրջանում գերմանական ժողովրդի վերաբերյալ, բ) համակողմանի պատկերացում տալ համաշխարհային մշակույթում հայ ժողովրդի մատուցած ծառայությունների և հայ մշակույթի զարգացման հարցում գերմանական ժողովրդի ցուցաբերած ձգտումների վերաբերյալ, գ) օժանդակել գերմանացիների և հայերի, մասնավորապես՝ Գերմանիայում սովորող հայ ուսանողների անձնական կապերի զարգացմանը: Այդ նպատակների իրականացման համար նախատեսվում էր կատարել մի շարք աշխատանքներ, ինչպես, օրինակ, Հայաստանի իրադարձությունների վերաբերյալ ճշգրիտ տեղեկությունների հաղորդում գերմանական մամուլին, արժեքավոր հայկական գործերի թարգմանություն գերմաներեն և հակառակը՝ հայոց լեզվի, հայ մշակույթի և պատմության ուսումնասիրության համար Գերմանիայում հայագիտական գրադարանի հիմնադրում, հայկական դպրոցներում գերմաներենի դասավանդման խրախուսում, Գերմանիայում սովորող հայ ուսանողների համար տեղեկատվական կենտրոնի հիմնադրում և գերմանական ընտանիքների հետ նրանց շփումների ընդլայնում: Այս մասին տե՛ս **Սահակյան Ն.**, Գերմանա-հայկական ընկերության հիմնադրումը // «ՀՀ», 2016, թիվ 1, էջ 33-34:

² Այս մասին տե՛ս **Սահակյան Ն.**, Գերմանա-հայկական ընկերությունը եւ դր. Լիպարիտի առաքելությունը // «Էջմիածին», 2018, թիվ Ը, էջ 106-107:

³ Թերթի անվան ընտրության հեղինակը Է. Շթիրն էր: Նա վերցրել էր “Das Notwendige Liebeswerk” միության (որում ինքը հավասարապես գործում էր) պարբերական “Deutsch-Armenische Blätter”-ի անունը՝ դրանում կատարելով փոքրիկ փոփոխություն: 1918 թ. նոյեմբերի 12-ից հրատարակվող այդ թերթի ծավալը տարբեր համարների միջև տատանվում էր 4-8 էջի սահմաններում: DAK-ը երկար կյանք չունեցավ, քանի որ դրա տպագրության համար պահանջվող ծախսերը չէին ծածկվում անդամավճարների հաշվին՝ ԳՀԸ-ի անդամների փոքր թվաքանակի պատճառով: Թերթի վերջին՝ 12-րդ համարը, լույս տեսավ 1920 թ. փետրվարի 1-ին: 1921 թ. մայիսի 15-ի մի գրության մեջ Է. Շթիրը հաղորդում էր ԳՀԸ-ի անդամներին, որ ֆինանսական դժվարությունների պատճառով իրենք չեն կարող շարունակել այդ լրատուի հրատարակությունը և, ըստ այդմ, համաձայնության են հանգել Յոհ. Լեփսիուսի հետ՝ 1919 թ. նրա հիմնադրված «Դր. Լեփսիուսի արևելյան առաքելություն» («Հայաստանի օգնության գործ») կազմակերպության պաշտոնական օրգան “Der Orient”-ը (“Mitteilungen aus der Arbeit”) (որին ԳՀԸ-ն պարբերաբար տրամադրում էր «լուրեր Հայաստանում ստեղծված իրավիճակի վերաբերյալ») ԳՀԸ-ի անդամներին ուղարկելու շուրջ: Նա նաև նշել էր, որ իրենց կազմակերպությունն ի վիճակի է միայն հատուկ թողարկումների միջոցով իր անդամներին իրազեկել Հայաստանի իրադարձությունների մասին: Տե՛ս **Stier E.**, An unsere Mitglieder, den 15. Mai 1921, EZA Berlin: 1928 թ. ԳՀԸ-ն ձեռնամուխ եղավ նոր՝ “Mitteilungen der Deutsch-Armenischen Gesellschaft e. V. Berlin” վերնագիրով պարբերականի հրատարակությանը: Այն բաղկացած էր 4 էջից և պարունակում էր Հայաստանի ու հայ ժողովրդի ողբերգական ճակատագրի վերաբերյալ մի քանի կարճ հաղորդագրություն: Գլխավոր խմբագիրն էր 1927 թ. ապրիլից ԳՀԸ-ի

նախատեսված էր ընթերցող հասարակության լայն շրջանների համար: Թերթի գլխավոր խմբագիրն է. Շթիրն էր, որը նաև դրանում լույս տեսնող հոդվածների մեծ մասի հեղինակն էր: Նյութական դժվարությունների պատճառով թերթը լույս էր տեսնում անկանոն պարբերականությամբ¹:

ԳՀՀ-ն իր առջև նպատակ էր դրել DAK-ի միջոցով գերմանական հասարակությանը համակողմանի պատկերացում տալ հայերի ու Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ: Հատկանշական է, որ այդ թերթի խմբագրության տարածած հաղորդագրության մեջ ընկերությունը խոստանում էր իրադարձությունները ներկայացնել պատմական իրողությունների համատեքստում: Այն նաև երաշխավորում էր իր հրապարակած տեղեկությունների հավաստիությունը՝ մատնանշելով, որ Բեռլինում էր գտնվում Հայաստանի Հանրապետության (ՀՀ) դիվանագիտական ներկայացուցչությունը, որի հետ իրենք սերտորեն համագործակցում էին²:

Նշենք, որ ԳՀՀ-ն դիմեց նաև Գերմանիայի առաջատար թերթերի ու ամսագրերի խմբագիրներին՝ խնդրելով ճշգրիտ տեղեկություններ հրատարակել Հայաստանի իրադարձությունների վերաբերյալ: Ուշագրավ է, որ 1919 թ.

նախագահի պաշտոնը զբաղեցնել Պաուլ Ռոնրբախը: 1928 թ. նոյեմբերին 2-րդ համարի լույս ընծայումից հետո այդ պարբերականի հրատարակությունը դադարեցվեց: Արխիվային փնտրտուքների արդյունքում ինձ հաջողվել է գտնել դրա միայն 2-րդ համարը: Տե՛ս «Mitteilungen der Deutsch-Armenischen Gesellschaft e. V. Berlin», № 2, November 1928, EZA Berlin: Նշենք, որ ԳՀՀ-ի անդամները ստանում էին «Der Orient»-ը մինչև 1938 թ.: 1939 թ. այդ պարբերականի հրատարակությունը դադարեցվեց: 1937 թ. Պ. Ռոնրբախն ու Արտաշես Աբեղյանը ձեռնամուխ եղան ԳՀՀ-ի նոր՝ «Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft e. V. Berlin» վերնագրով կանոնավոր պարբերականի հրատարակությանը: 1943 թ. դեկտեմբերից (թիվ 15-16) այդ պարբերականը կրում էր «Armenien. Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft» վերնագիրը, որի վերջին համարը լույս տեսավ 1944 թ. սեպտեմբերին (թիվ 17-18):

¹ Stier E., Geschäftsbericht der Deutsch-Armenischen Gesellschaft über das Jahr 1919, gestattet auf der Generalversammlung am 18. Mai 1920, unpagiert, EZA Berlin. DAK-ի առաջին երեք համարները թեմատիկ բնույթ էին կրում: Դրա՝ 1918 թ. նոյեմբերի 12-ին լույս տեսած 1-ին համարի քննարկման նյութը պատերազմի ժամանակաշրջանում «Հայ ժողովրդի ճակատագիրն» էր («Հայերի աքսորը», «Աքսորի իրականացումը», «Աքսորյալների ճակատագիրը», «Իրավիճակը հայկական պրովինցիաներում», «Թուրքահայաստանի ապագա պետական կառուցվածքը», «Իրադարձությունները հայկական Անդրկովկասում», «Կովկասահայերի պահանջները», «Հայաստանի կառավարության կազմը», «Հայաստանի ապագան», «Հայկական սփյուռքը»), 1918 թ. նոյեմբերի 25-ին հրատարակված 2-րդ համարը կրում էր «Գերմանական կառավարությունը և Հայկական հարցը» խորագիրը («Անտանտի մեղադրանքները», «Գերմանիայի մեղքը», «Ուժերի գերմանա-թուրքական փոխհարաբերությունը», «Գերմանիայի օգնությունը Հայաստանին», «Գերմանական քաղաքականության սխալները»), իսկ 1918 թ. դեկտեմբերի 2-ին լույս տեսած 3-րդ համարը քննարկում էր «Հայերի կոտորածների պատճառները» («Հայերի կոտորածն Արդահանում», «Արյունահեղությունը Բաքվում», «Իրադարձությունները Նուխիում և Արեշում», «Թուրքական կառավարության վերաբերմունքը հայերի նկատմամբ», «Հայերն ու վրացիները»): Չորրորդ համարից սկսած՝ DAK-ը հրապարակում էր Գերմանիայի և Անդրկովկասի հարաբերություններին առնչվող ընթացիկ տեղեկություններ:

² Von der Deutsch-Armenischen Gesellschaft, Deutsch-Armenische Korrespondenz, h.g. von Pfarrer Stier, Generalsekretär der Deutsch-Armenischen Gesellschaft, undatiert, EZA Berlin.

հունվարի 21-ին դեմոկրատական ուղղվածությամբ “Frankfurter Zeitung” թերթը հրապարակեց Գերմանիայի արտգործնախարարության (ԱԳՆ) խնդրանքով Է. Շթիրի շարադրած «Հայաստան»¹ վերնագրով հոդվածը, որը լուսաբանում էր գերմանական կառավարության, միությունների ու միսիոներական կազմակերպությունների, ինչպես նաև ԳՀՀ-ի հայանպաստ գործողությունները Առաջին աշխարհամարտի տարիներին:

Պատերազմի ժամանակաշրջանում Օսմանյան կայսրությունում հայերի հետ կատարված իրադարձությունների վերաբերյալ տեղեկությունները լրացվեցին և ավելի ամբողջական դարձան ԳՀՀ-ի նախագահ Յոհ. Լեփսիուսի՝ «Գերմանիան և Հայաստանը 1914-1918 թթ.»² դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուի հրատարակության և 1916 թ. լույս տեսած «Տեղեկագիր Թուրքիայում հայ ժողովրդի դրության մասին» գրքույկի վերահրատարակության շնորհիվ³: Նշված աշխատությունները բացում էին հայոց եղերական ողբերգությունների վարագույրը, փաստական հիմնավորումներով մերկացնում ցեղասպանության բուն կազմակերպիչներին, ապացուցում, թե որքան կարևոր էր գերմանական օգնությունը մահվան ճիրաններում հայտնված հայերի համար:

Դեռևս պատերազմի ավարտական փուլում ԳՀՀ-ն ծրագրել էր հրատարակել մի գիրք, որը կներկայացներ Հայաստանը՝ իր ամբողջ բազմազանությամբ և հայերին՝ որպես մշակութային բարձր աժեքներ կրող ժողովրդի: Դրա շնորհիվ գերմանական հասարակությունը, որի մեծ մասի, նույնիսկ մտավորականներից շատերի համար Հայաստանն «անծանոթ երկիր» (terra incognita) էր⁴, կտեղեկանար, որ այն ուշադրության էր արժանի ոչ միայն ողբերգական ճակատագրով, այլև հարուստ ու բազմազան մշակույթով:

Այդ նպատակի համար կատարված մի բավական մեծ նվիրաբերություն հնարավորություն ընձեռեց ձեռնամուխ լինել նախատեսվող գրքի հրատարակության պատրաստման գործին: Պ. Ռոհրբախը ստանձնեց խմբագրական աշխատանքների իրականացումը, իսկ Է. Շթիրը նամակագրական կապ հաստատեց Վիեննայի Մխիթարյան միաբանության հայրերի հետ՝ համագործակցության և գիտական խորհրդատվություն ստանալու նպատակով: «Աշխատությունը պետք է հրատարակվի մեծ թվաքանակով և հիմնականում ծառայի քարոզչական նպատակներին: Այն պետք է ունենա աշխարհագրական ու պատմական ակնարկ, ինչպես նաև՝ հոդվածներ Հայաստանի՝

¹ Stier E., Armenien, hg. in “Frankfurter Zeitung” // [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1919-01-21-DE-001, PA-AA, R 14105](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1919-01-21-DE-001, PA-AA, R 14105).

² Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke. Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1919.

³ St u Lepsius J., Der Todesgang des armenischen Volkes. Bericht über das Schicksal des armenischen Volkes in der Türkei während des Weltkrieges, Heidelberg, 1919:

⁴ St u Stier E., Geschäftsbericht der Deutsch-Armenischen Gesellschaft über das Jahr 1919, gestattet auf der Generalversammlung am 18. Mai 1920, unpagiert, EZA Berlin:

որպես մշակութային երկրի նշանակության, նրա պոետիայի, արվեստի, մասնավորապես՝ ճարտարապետության վերաբերյալ: Այն թերի կլինի, եթե դրանում խոսք չլինի Մխիթարյան միաբանության մասին, և եթե այն չներկայացնի վերջինիս մեծ դերակատարությունը հայ ժողովրդի մշակութային վերելքի գործում»¹, – գրել էր Է. Շթիրը Հայր Ներսես Ակինյանին հասցեագրված գույգ նամակներում:

Պ. Ռոհրբախի խմբագրությամբ և Յոհ. Լեփսիուսին՝ «հայ ժողովրդի բարերարին», ձեռնարկով «Հայաստան, հողվածներ հայկական երկրի և ժողովրդական բանահյուսության»² վերնագրով աշխատությունը լույս տեսավ պատերազմի ավարտից փոքր-ինչ անց՝ 1919 թ. վերջին: Այն բաղկացած էր 150 էջից, պարունակում էր 128 նկար և մեկ քարտեզ: Գրքում զետեղված հողվածները վերաբերվում էին Հայաստանի աշխարհագրությանը, պատմությանը, եկեղեցուն, դպրոցին, նրա տնտեսական նշանակությանը, ներկայացված էին քաղվածքներ հայ պատմագրությունից և նմուշներ հայկական պոետիայից: Այսպիսով, փորձ էր արվել հնարավորինս ամբողջական պատկերացում տալ մշակութային Հայաստանի մասին:

1919 թ. հրատարակվեց նաև արևելագետ և հայագետ, ԳՀԸ-ի հիմնադիր անդամ Յոզեֆ Մարքվարթի «Հայ ժողովրդի ծագումն ու վերակենդանացումը»³ խորագրով աշխատությունը, որի հիմքում հեղինակի՝ 1914 թ. ԳՀԸ-ի հիմնադիր ժողովում ընթերցած համանուն վերնագրով հողվածն էր: Այն բաղկացած էր երկու մասից: Առաջին՝ «Հայ ժողովրդի ծագումը» վերնագիրը կրող մասում (էջ 1-38) հեղինակը քննարկում էր հայ ժողովրդի ծագման, կազմավորման, նրա աստիճանական զարգացման, Հայկական լեռնաշխարհում վերջնական հաստատման հարցերը: Աշխատության հետազոտական այս հատվածի վերջնական եզրակացությունն այն էր, թե «հնում հայերը ապրել են Եվրոպայում՝ հույների ու թրակիացիների նախահայրերին մոտիկ»: «Գաղթելով Արևմուտքից՝ նրանք նախ հաստատվել են Փոքր Հայքում», այնուհետև «Երասխի հովտում» (Ք. ա. V դար):

Աշխատության երկրորդ՝ «Հայ ժողովրդի վերակենդանացումը» վերնագիրը կրող մասում (հավելված, էջ 39-63), Յ. Մարքվարթը ներկայացնում էր հայ ժողովրդի տառապանքների շղթան՝ սկսած բյուզանդական կայսր Հուստինիանոսի ժամանակներից մինչև ներկա ժամանակը, անդրադառնում

¹ Stier an P. Nerses Akinian vom 1. und 26. Juli 1918, Archiv der Mechitaristenkongregation Wien. Յ մ մ տ. **Meißner A.**, ն շ վ . աշ խ., է ջ 270:

² Տե՛ս **Rohrbach P.** (Hg.), Armenien. Beiträge zur armenischen Lands- und Volkskunde, Stuttgart, 1919: Գրքում զետեղված էին Պ. Ռոհրբախի, Ամանդ Ֆրայլեր ֆոն Շվայգեր-Լեբխենֆելդի, իշխան Էբերհարդ ֆոն Վեսթարփի, Մելքոն Կրիշչյանի, Է. Շթիրի, Էռնստ Լոհմանի, Ն. Ակինյանի, Յոզեֆ Ստրժիգովսկու, Ջեյմս Գրինֆիլդի, Զիգֆրիդ ֆոն Վեգեսակի, Արշակ Չոպանյանի և Ավետիս Ահարոնյանի հողվածները:

³ Տե՛ս **Marquardt J.**, Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, Berlin, 1919:

գերմանա-թուրքական ռազմական համագործակցությանն Առաջին աշխարհամարտում, հայոց եղերական իրադարձությունների նկատմամբ գերմանական կառավարության դիրքորոշմանը և այս առումով մասնավորապես ընդգծում գերմանական մամուլի՝ անըմբռնելի, մարդասիրական սկզբունքներին հակասող թուրքամետ դիրքորոշումը: Նա սուր քննադատության էր ենթարկում գերմանական կառավարությանը հայերի հանդեպ ցուցաբերած անտարբերության համար, ներկայացնում մի շարք պահանջներ, որոնց իրագործումը համարում էր նոր Գերմանիայի՝ Վայմարյան հանրապետության բարոյական պարտականությունը՝ իբրև գերմանական նախընթաց քաղաքականության սխալների փոխհատուցում: Այսպիսով, Յ. Մարքվարթի աշխատությունը ուներ ոչ միայն գիտական-հետազոտական նշանակություն, այլև, ի հակադրություն պատերազմական ժամանակաշրջանի՝ հակահայկական բովանդակությամբ գրականության, քարոզում էր մարդասիրական գաղափարներ:

Հրատարակության ծախսերի աննախադեպ աճի հետևանքով, այսուամենայնիվ, չհաջողվեց տպագրել ԳՀԸ-ի անդամ Տիրան Մեստուջյանի¹ «Հայաստանի հնագույն շրջանի պատմությունը մինչև Արշակունիներ» (“Die älteste Geschichte Armeniens bis zu den Arsachakiden”) խոբագրով արժեքավոր աշխատությունը, որը 1919 թ. հեղինակի ատենախոսությունն էր²:

Գրավոր հրապարակումներին զուգահեռ՝ ԳՀԸ-ն ձեռնամուխ եղավ նաև Հայաստանի թեմայով հրապարակային դասախոսությունների կազմակերպմանը: Այսպես, օրինակ, նրա նախաձեռնությամբ՝ «Գերմանիայի հնագիտական ընկերություն»-ում Վիեննայի համալսարանի պրոֆ. Յ. Ստրժիգովսկին, «Համեմատական իրավագիտության և քաղաքատնտեսության միություն»-ում դր. Ջ. Գրինֆիլդը, Բեռլինի ազգագրության թանգարանում Ռայխսթագի պատգամավոր Դերման-Քյոլնը, «Հասարակական գիտությունների միություն»-ում, «Գերմանական ընկերության արտաքին քաղաքականության հանձնաժողով»-ում, «Գերմանական հաշտեցման լիգայում» և «Գերմանական խաղաղության լիգայում» դր. Մ. Կրիշչյանը, Ֆրայբուրգում քահանա Պաուլ Շվեներ, Բրաունշվայգում Է. Շթիրը կարդացին հայկական ճարտարապետությանը, համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանի ու հայերի

¹ 1915-1919 թթ. Տ. Մեստուջյանը ուսանում էր Հալլեի (Զաալե) համալսարանում աստվածաբանություն ու պատմություն: Այստեղ նա ստացավ փիլիսոփայության դոկտորի գիտական կոչում, իսկ 1919 թ. նշանադրվեց գերմանացի ուսուցչուհի Գերտրուդ Հեոցելի հետ: Թեև նրանք որոշել էին վերջնական բնակություն հաստատել Հայաստանում, սակայն այդ երազանքը դժբախտաբար իրականություն չդարձավ, քանի որ կարճ ժամանակ անց՝ 1920 թ. մարտի 7-ին, Մեստուջյանը մահացավ՝ սուր շնչառական հիվանդությունից: Նրա ուղարկվածությունը տեղի ունեցավ Հալլեի Զյուդֆրիդհոֆ գերեզմանոցում 1920 թ. մարտի 10-ին: Տե՛ս **Meißner A.**, ս շ վ . ա շ խ . , է ջ 427:

² **Stier E.**, Zur Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft (1914-1939) // “Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft”, Nr. 5-6, Dezember 1939, S. 8 (72).

ունեցած դերին, Հայկական ինդրին նվիրված դասախոսություններ¹:

1939 թ. տպագրված իր հոդվածներից մեկում Է. Շթիրը տեղեկություններ է հաղորդում այն միությունների մասին, որոնք ստեղծվել էին Գերմանիայի սահմաններից դուրս և ԳՀԸ-ի օրինակով պետք է խթանեին գերմանահայկական մշակութային կապերին ու նպաստեին դրանց ամրապնդմանը: Այսպես՝ «Գերմանա-հայկական կապերով զբաղվող միություններ» ստեղծվեցին Վիեննայում և Բուդապեշտում, Թիֆլիսում հիմնադրվեց «Գերմանա-հայկական մշակութային միությունը Կովկասում»² (1918 թ. հունիս³):

Թիֆլիսի միության հիմնադիրներն այն հայ երիտասարդներն էին, որ կա՛մ կրթություն էին ստացել Գերմանիայում, կա՛մ սերտ շփումների մեջ էին գերմանական մշակույթի հետ և հայ-գերմանական փոխառնչությունների զարգացման ու խորացման ջատագովներն էին: Միության նախագահ դարձավ Բազիլ Կորգանտֆը (Բարսեղ Ղորղանյան), նրա փոխանորդ՝ Բազիլ Կանաեանցը, քարտուղար՝ Ալեքսանդր Թութայեֆը: Միության աշխատանքներին լայնորեն աջակցում էր Թիֆլիսի գերմանական համայնքի ղեկավարի օգնական Արթուր Լայսթը:

Գերմանա-հայկական մշակութային այս միությունն ուներ շուրջ 100 անդամ: Նրա անդամ դառնալու համար գերմաներենի իմացությունը պարտադիր էր: Ովքեր չէին տիրապետում գերմաներենին, պարզապես համագործակցում էին միության հետ:

Այդ կազմակերպությունն անցկացնում էր շաբաթական ժողովներ, որոնց ժամանակ ընթերցվում էին դասախոսություններ: Այդ նյութերը տպագրվում էին “Kaukasische Post” պարբերականում (“Kaukasische Post”-ում, օրինակ, տպագրվեց Ա. Լայսթի՝ «Հայ ժողովուրդը» (“Das armenische Volk”) վերնագրով հոդվածը, որը հեղինակը ներկայացրել էր միության շաբաթական ժողովներից մեկում)⁴:

1918 թ. վերջին վրաց-հայկական պատերազմի բռնկումը, Անտանտի երկրների, մասնավորապես Անգլիայի ազդեցության ուժեղացումն Անդրկովկասում խոչընդոտներ ստեղծեցին Թիֆլիսի գերմանա-հայկական մշակութային միության գործունեության համար: Մինչև 1919 թ. ավարտը այն

¹ Stier E., Geschäftsbericht der Deutsch-Armenischen Gesellschaft über das Jahr 1921, erstattet auf der Generalversammlung am 30. Juni 1922, unpagiert, EZA Berlin. Նույնը տե՛ս Lepsius-Archiv Potsdam (այսուհետև՝ LAP), № 1221 (6):

² Տե՛ս Stier E., Zur Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft (1914-1939), S. 8 (72):

³ Այդ մասին են վկայում նշված միության անունից 1920 թ. փետրվարի 29-ին Յոհ. Լեփսիուսին և ԳՀԸ-ի վարչությանը ուղարկված զույգ նամակները: Նշենք, որ Յոհ. Լեփսիուսը եղել է այդ միության պատվավոր անդամ: Տե՛ս Hermann G., Die “armenischen Reformen” im Osmanischen Reich, Johannes Lepsius und die Gründung der Deutsch-Armenischen Gesellschaft // 75 Jahre Deutsch-Armenische Gesellschaft. Festschrift, hg. von der Deutsch-Armenischen Gesellschaft, Mainz, 1989, S. 60:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 60-61:

ստիպված էր գործել ընդհատակում (ինչպես ԳՀԸ-ն պատերազմի ժամանակ): 1920 թ. միությունը վերադարձավ իր բնականոն գործունեությանը: Նրա նախաձեռնությամբ 1920 թ. փետրվարի 29-ին կազմակերպվեց քննարկում Յոհ. Լեփսիուսի «Գերմանիան և Հայաստանը 1914-1918 թթ.» վերնագրով դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուի շուրջ: Ադրբեջանի Հանրապետության Հելենդորֆ կոչվող գերմանական համայնքում գործող ավագ ուսուցիչ Ֆրիդրիխ Նաումանը գերմաներեն թարգմանեց Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրաման¹:

ԳՀԸ-ն համագործակցում էր գերմանա-հայկական կապերով զբաղվող միությունների հետ՝ փորձելով այդ կերպ էլ ավելի ամրապնդել իր դիրքերն ու հասնել իր առջև դրված նպատակների իրականացմանը: Օրինակ՝ Թիֆլիսի գերմանա-հայկական մշակութային միության խնդրանքով՝ ընկերությունը վերջինին էր փոխանցում Հայաստանի թեմայով մեծ քանակությամբ գրականություն²:

Ուշագրավ է, որ Գերմանիայի և Հայաստանի գրադարանների միջև զրքերի փոխանակության կազմակերպմանը նպաստելու խնդրանքով 1921 թ. ԳՀԸ-ին դիմեց նաև «Հայաստանի ազգային գրադարան»-ի ներկայացուցիչությունը: Քանի որ այդ խնդրանքը համապատասխանում էր ԳՀԸ-ի կանոնադրության պահանջներին, ընկերությունը հանդես եկավ միջամտությամբ, որի շնորհիվ Պրուսիայի պետական գրադարանի (ներկայիս Բեռլինի պետական գրադարանի) ղեկավարությունը պատրաստակամություն հայտնեց կատարել այդ փոխանակությունը³:

Պատերազմի ժամանակ ԳՀԸ-ն դադարեցրել էր ընդհանուր ժողովների հրավիրումը՝ սահմանափակվելով խորհրդի նիստերով: Պատերազմի ավարտից հետո ընկերության առաջին ընդհանուր ժողովը տեղի ունեցավ Բեռլինի «Էսպլանադե» հյուրանոցում 1919 թ. մայիսի 21-ին Յոհ. Լեփսիուսի նախագահությամբ: Ժողովում է. Շթիրը ներկայացրեց ԳՀԸ-ի՝ 1914-1919 թթ. գործունեության վերաբերյալ ընդարձակ հաշվետվություն, որից հետո անդրադարձավ ընկերության նպատակներին՝ նշելով. «Առայժմ մեր ընկերության քաղաքական առաջադրանքներն ավարտված են: Հիմա մենք կարող ենք մեր ջանքերն ուղղել սկզբից ևեթ՝ մեր առջև դրված մշակութային նպատակների իրականացմանը: Հուսով եմ, որ ԳՀԸ-ի ու հայ ազգային շրջանների միջև սկզբնապես գոյություն ունեցող կապը, որն ավելի է ամրացել հայ ժողովրդի համար ծանր ժամանակներում, հնարավորություն կտա հասնել մեր մշակութային նպատակների իրականացմանը: Այն, ինչը մեզ տակավին պակասում է, այդ գործում գերմանական կողմի մասնակցությունն է՝ ավելի

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 61:

² Տե՛ս **Stier E.**, Geschäftsbericht der Deutsch-Armenischen Gesellschaft über das Jahr 1920, gestattet auf der Generalversammlung am 28. Mai 1921, unpagiert, EZA Berlin:

³ Տե՛ս նույն տեղում:

լայն ընդգրկումով: Մենք հույսեր ենք փայփայում՝ գերմանացի ժողովրդին պատերազմի պատճառով վրա հասած տառապանքը կնպաստի, որ հետգհետե ավելի բուռն դառնա նրա համակրանքն է՛լ ավելի մեծ վշտի մեջ ընկղմնված հայ ժողովրդի հանդեպ, և Արևմուտքի ու Արևելքի այդ երկու՝ այդքան փութաջան ժողովուրդները կկապվեն մշտական ամուր կապերով՝ օգնելով միմյանց կրկին ոտքի ելնել ծանր պարտությունից հետո (գերմանացիների դեպքում է. Շթիրը նկատի ուներ պատերազմում նրանց պարտությունն ու Վերսալյան պայմանագիրը, հայերի դեպքում՝ հայոց եղերական ողբերգություններն Օսմանյան կայսրությունում – չ. Մ): Դրան նպաստելն այսուհետև լինելու է մեր ընկերության առաջնային խնդիրը»¹:

Ընդհանուր ժողովը որոշեց ԳՀԸ-ն գրանցել միությունների գրանցամատյանում²: Մահմանվեց ընկերության անդամավճարների չափը³: Ժողովը ձևավորեց ԳՀԸ-ի խորհրդի նոր կազմ: Վերընտրվեցին կամ ընտրվեցին՝ որպես ընկերության նախագահ Յոհ. Լեփսիուսը, նրա տեղապահներ՝ Պ. Ռոհրբախն ու Ջ. Գրինֆիլդը, քարտուղարներ է. Շթիրն ու Վահան Զախարյանը, որը փոխարինեց Բեռլինից Ժնև տեղափոխված Ավետիք Իսահակյանին, գանձապահ՝ Հաննես Իփիջյանը, որը փոխարինեց պատերազմի ժամանակ թուրքերի կողմից սպանված բժիշկ Արմենակ Հայրանյանին: ԳՀԸ խորհրդի կազմում ընդգրկվեցին նաև՝ պրոֆ. Յ. Մարքվարթը (Բեռլին), պրոֆ. Մարտին Ռադեն (Մարբուրգ), պրոֆ. Հերման Գուրթեն (Լայպցիգ), պրոֆ. Էլիզաբեթ Էհոենտրաուտը (Դրեզդեն), դր. Արմին Թ. Վեգները (Բեռլին), ավագ ուսուցիչ Մարտին Նիպագեն (Մալխին), հյուպատոս Ավետիս Ավետիքյանը, Մ. Պիրանյանը (Բեռլին), Կարլ Չիլինգիրյանը (Համբուրգ), դր. Ս. Կրիշչյանը (Սյունխեն), Գուդինյանը (Լայպցիգ) և դր. Դորթը (Բեռլին): Ընդհանուր ժողովի եզրափակիչ մասում Յոհ. Լեփսիուսը հանդես եկավ «Հայ ժողովրդի ճակատագիրը համաշխարհային պատերազմում» թեմայով զեկուցմամբ⁴:

ԳՀԸ-ն իր մեծ առաջադրանքների իրականացման համար կատարվող աշխատանքներում գերմանական հասարակության լայն շրջանների ակտիվ մասնակցությունն ապահովելու նպատակով նախաձեռնություն ի հայտ բերեց՝ 1921 թ. դեկտեմբերի 10-ին ուղերձ հղելով իր անդամներին⁵: Դրանում

¹ Stier E., Geschäftsbericht der Deutsch-Armenischen Gesellschaft, erstattet auf der Generalversammlung am 21. Mai 1919, S. 19, EZA Berlin. Նույնը տե՛ս u [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1919-05-21-DE-001, PA-AA, R 14106](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1919-05-21-DE-001, PA-AA, R 14106).

² Տե՛ս Stier E., Zur Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft (1914-1939), S. 9 (73): Այդ որոշումը հաջողվեց կյանքի կոչել 1919 թ. հոկտեմբերի 2-ին: Տե՛ս u Meißner A., նշվ. աշխ. էջ 271:

³ Հինգ մարկ վճարող անդամները ստանալու էին ԳՀԸ-ի պաշտոնական օրգան DAK-ը, իսկ 20 մարկ վճարողները՝ նաև լրացուցիչ հրապարակումներ: Տե՛ս u Stier E., An die Mitglieder der Deutsch-Armenischen Gesellschaft, den 30. Juni 1919, EZA Berlin: Նույնը տե՛ս u LAP, № 1227:

⁴ Տե՛ս u Stier E., Bericht über die Generalversammlung, beigelegt dem Geschäftsbericht der Deutsch-Armenischen Gesellschaft, erstattet auf der Generalversammlung am 21. Mai 1919, EZA Berlin:

⁵ ԳՀԸ-ի՝ 1921 թ. մայիսի 28-ի տարեկան Ընդհանուր ժողովին մասնակցում էր ընդամենը 39 անդամ: Տե՛ս u Hofmann T., Armenier in Berlin – Berlin und Armenien, Berlin, 2005, S. 70:

նշվում էր, որ հայերի մշակութային հին ժողովուրդ լինելու, ամենատարբեր ոլորտներում նրանց ունեցած մեծ նվաճումների, նրանց՝ իրենց ընդունակությունների, եռանդի ու ջանասիրության շնորհիվ «Արևելքում արդի քաղաքակրթության անփոխարինելի մարտիկներ» լինելու մասին տեղյակ են միայն գերմանական հասարակության՝ այդ ժողովրդի հետ գիտական կամ գործնական շփումներ ունեցած նեղ շրջանները, մինչդեռ լայն շերտերը նրա մասին, հին նախապաշարմունքներից զատ, շատ բան չգիտեն: Նշվում էր նաև, որ վարչությունը Հայաստանի ու հայերի մասին խորը գիտելիքների տարածման հարցում, չնայած այդ ուղղությամբ նախաձեռնություններին, ինքնուրույնաբար ի վիճակի չէ ցանկալի արդյունքի հասնելու: Հետևաբար, այն դիմում էր ընկերության անդամներին՝ խնդրելով իր հետ սերտորեն համագործակցելով՝ նպաստել իրենց բարեկամների թվաքանակի ընդլայնմանը¹:

Գովազդի համար պետք է կազմակերպվեին հայկական մշակույթի, պատմության և այլ թեմաներով դասախոսություններ Գերմանիայի տարբեր բնակավայրերում: Հնարավորինս շատ անդամներ ներգրավելու համար տարեկան նվազագույն անդամավճարը մնալու էր անփոփոխ՝ հինգ մարկ: Անդամակցությունը հաստատվելու էր ընկերության վարչության տրամադրած համապատասխան վկայականներով՝ անդամակցության տոմսերով²:

ԳՀՀ-ին հաջողվեց համագործակցության մեջ մտնել «վստահելի անձանց» հետ, որոնք գործում էին Գերմանիայի 21 խոշոր քաղաքներում՝ իրենց եռանդն ի սպաս դնելով ընկերության շահերին: «Ծառայություն մատուցելով մարդասիրությանն ու արդարությանը,– նշում էր Է. Շթիրիը,– որքան շատ բացթողումներ են արվել ու մեղքեր են գործվել պատերազմական տարիներին, այնքան ավելի շատ այժմ պետք է փոխհատույց լինել ու սխալներն ուղղել՝ ի պատիվ Գերմանիայի, ի նպաստ Հայաստանի փրկության»³:

ԳՀՀ-ի գործունեության համար մեծ հաջողություն էր, որ, ինչպես արդեն նշվել է, 1918 թ. մայիսին Հայաստանի անկախության հռչակումից հետո Բեռլինում բացվել էր հայկական դեսպանություն, և, որ ամենակարևորն է, դեսպան էր նշանակվել ընկերության վարչության անդամ դր. Ջ. Գրինֆիլդը: 1922 թ. Խորհրդային Ռուսաստանի ու Գերմանիայի միջև Ռապալոյի պայմանագրի ստորագրումից և Բեռլինում խորհրդային դիվանագիտական առաքելության հաստատումից հետո Ջ. Գրինֆիլդը դարձավ Խորհրդային Հայաստանի անկախ «հավատարմատարը» Բեռլինում⁴:

¹ St' u Das Schreiben des Vorschtdands der Deutsch-Armenischen Gesellschaft an ihre Mitglieder, LAP, № 1223:

² St' u նույն տեղում:

³ Stier E., Geschäftsbericht der Deutsch-Armenischen Gesellschaft über das Jahr 1921, erstattet auf der Generalversammlung am 30. Juni 1922, unpagiert, EZA Berlin: Ն ու յ ն ը տե ' u LAP, № 1221 (6).

⁴ St' u Stier E., Zur Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft (1914-1939), S. 9 (73):

Այսպիսով, Առաջին աշխարհամարտի ավարտից հետո ԳՀՀ-ն ջանում էր նպաստել գերմանացի ու հայ ժողովուրդների մշակութային կապերի զարգացմանն ու ամրապնդմանը: Հատկանշական է, որ հայոց ողբերգական իրադարձությունների թեմայի լուսաբանմանը զուգահեռ՝ ընկերությունը փորձում էր գերմանական հասարակությանը ծանոթացնել հայ արարչագործ մտքի նվաճումներին, ներկայացնել հայերին որպես մշակութային բարձր արժեքներ կրող ժողովրդի, Հայաստանը՝ որպես հին մշակութային երկիր: Այս գործում ակնհայտորեն առաջնորդող դերակատարություն էր ստանձնել Է. Շթիրը, որն իր հավաստարիմ գործընկերների հետ անխնայ շարունակեց գերմանացի ու հայ ժողովուրդների մշակութային մերձեցմանն ուղղված աշխատանքների իրականացումը մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի բռնկումը:

Грануш Саакян – *Усилия Герmano-армянского общества в деле развития культурных связей двух народов в 1918-1921 гг.*

Герmano-армянское общество, созданное в 1914 г. в Берлине по инициативе Иоганнеса Лепсиуса, поставило перед собой цель поспособствовать сотрудничеству армянского и немецкого народов в сфере культуры, формированию прочных и продолжительных взаимоотношений. Однако спустя два месяца после основания Общества началась Первая мировая война, и первоначальная программа Общества, продиктованная трагическими событиями в Западной Армении, происходящими под предлогом войны, отошла на второй план. Первоочередной же задачей стала организация спасения армян. Общество вернулось к своей первоначальной миссии только после установления мира и провозглашения в Закавказье независимого армянского государства. Статья освещает и всесторонне представляет ту работу, которую проводило Общество с самого начала для решения поставленных перед ним задач.

Hranush Sahakyan – *German-Armenian Society's Efforts to Develop Cultural Relations between the Two Peoples in 1918-1921*

In 1914, by the initiative of Johannes Lepsius the German-Armenian Society (GAS) was set up in Berlin to promote the cooperation of German and Armenian peoples on cultural grounds and establish strong and lasting relations between them. However, two months after the establishment of the society, World War I broke out, under the guise of which tragic events happened in Western Armenia, which cancelled the original plan of the society, and its primary goal became the organization of the salvation of endangered Armenians. GAS returned to its original mission only after the establishment of peace and the declaration of an independent Armenian state in the South Caucasus. The article provides a comprehensive overview of the work the society had been doing to achieve its goals since its establishment.

Ներկայացվել է 17.02.2020

Գրախոսվել է 27.03.2020

Ընդունվել է տպագրության 30.06.2020

**ԹԱԼԵԱԹԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՂՈՍՈՆ ԹԵՀԼԻՐՅԱՆԻ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ «ՀԱՅՐԵՆԻՔ» ԵՎ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ»
ԹԵՐԹԵՐՈՒՄ**

Բանալի բառեր – Սողոմոն Թեհլիրյան, Թալեաթ, «Նեմեսիս» գործողություն, Մեծ եղեռն, դատավարություն, մամուլ, Հայ հեղափոխական դաշնակցություն

«Նեմեսիս»-ը Հայոց ցեղասպանությունն իրագործողներին և կազմակերպիչներին հայտնաբերելու և ոչնչացնելու գաղտնի գործողություն էր, որի իրականացման որոշումն ամենայն հավանականությամբ ընդունվել է 1919 թ. Երևանում: Քանի որ «Նեմեսիս»-ի գործունեությանը վերաբերող հանրությանը մատչելի արխիվային նյութերը շարունակում են խիստ սահմանափակ մնալ, հարցի հետազոտության համար զգալի կարևորություն ունեն մամուլի հրապարակումները: Թալեաթի սպանության և Սողոմոն Թեհլիրյանի դատավարության մասին 1921 թ. մարտից հուլիս ընկած ժամանակահատվածում կատարված հրապարակումների լուսաբանման հարցում «Հայրենիք» և «Ճակատամարտ» օրաթերթերի ընտրությունը պատահական չէ: «Հայրենիք»-ն այդ ժամանակ հիմնականում հրապարակում էր նյութեր Հայկական հարցի և ՀՅԴ-ի գործունեության վերաբերյալ, իսկ «Ճակատամարտ»-ի խմբագրատունը «Նեմեսիս» գործողության կազմակերպչական կենտրոնն էր Կ. Պոլսում: Այն հանգամանքը, որ երկու թերթերում կան ոչ միայն սեփական թղթակիցների հեղինակած, այլև արտերկրի մամուլից արտատպված հոդվածներ, առավել կարևոր և հիմնավորված է դարձնում այդ ընտրությունը: Սույն հոդվածի շրջանակներում անդրադարձ է կատարվում նաև «Նյու Յորք Թայմզ» թերթում լույս տեսած մի քանի հոդվածների վրա, որոնցից ևս արժեքավոր տեղեկատվություններ ենք քաղում:

«Նեմեսիս» գործողության թիրախային հանցագործների ցուցակում առաջին տեղը զբաղեցնում էր Օսմանյան կայսրության ներքին գործերի նախկին նախարար, մեծ վեզիր Մեհմեդ Թալեաթը, որը Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից էր: Երկար փնտրտուքից հետո այս գործողության մասնակիցներին հաջողվում է պարզել «Ալի Սալի բեյ» կեղծանունով Բեռլինում ապաստանած Թալեաթի հասցեն: Նրան բացահայտելու գործին լծված էր ոչ միայն Ս. Թեհլիրյանը, այլև մի ամբողջ հետախուզական խումբ: Վերջինս, երբ պատահաբար հանդիպում է Թալեաթին, փորձում է նմանություններ գտնել նրա դեմքի և իր մոտ եղած լուսանկարի միջև:

Հետագա հետախուզումներից պարզ է դառնում, որ «գոհը» հիրավի բացահայտված է: Ս. Թեհլիրյանը անմիջապես փոխում է իր բնակության վայրը՝ սենյակ վարձելով այն փողոցում, որտեղ բնակվում էր Թալեաթը: 1921 թ. մարտի 15-ի առավոտյան ժամը 11:00-ի սահմանում Սողոմոն Թեհլիրյանը գնդակահարում է Թալեաթին¹: Իր հուշերում նա հետևյալ կերպ է բնութագրում սպանության պահը. «Թալեաթը հարուածից կարծես ցցուեց ու մի ակնթարթ հզոր մարմինը պրկուեց ձիգ, բայց երերուն, ապա՝ սղոցուած կաղնու բունի պէս երեսի վրայ տապալուեց թնդինով... Քիչ դէնը մի կին ճշաց ու գետին փռուեց. մի մարդ վազեց դէպի նա... Բնաւ չէի կարող երեսակայել, որ այդպիսի դիւրութեամբ գետին պիտի փռուի գազանը: Մի վայրկեան մղում ունեցայ բոլոր գնդակները պարպելու մէջքին, բայց փոխանակ կրակելու՝ ատրճանակս նետեցի: Սեւ, թանձր արիւնը վայրկենապէս լճացաւ Թալեաթի գլխի շուրջ. կարծես ջարդուած անօթից մազուք էր դուրս թափում...»²:

Սպանությունից հետո ձերբակալված Ս. Թեհլիրյանին դատում է Բեռլինի երրորդ շրջանային դատարանը: Դատավարությունը տևում է շուրջ երկու օր, և երդվյալ ատենակալների որոշմամբ ամբաստանյալը արդարացվում է և ազատ արձակվում:

Այս իրադարձությունների վերաբերյալ մամուլում կատարված հրապարակումները հաճախ բավական արժեքավոր տեղեկություններ են պարունակում: Այդ ժամանակահատվածում մամուլում լույս տեսած հոդվածները գլխավորապես վերաբերում են հետևյալ թեմաներին՝ Թալեաթ փաշայի սպանության մանրամասներին, Հայոց ցեղասպանությանը, Ս. Թեհլիրյանի անդամակցությանը գաղտնի խմբակցությանը, նրա դատավարության լուսաբանմանը և նրա պաշտպանության համար նախաձեռնված հանգանակություններին:

Թալեաթի սպանությունից երկու օր անց՝ 1921 թ. մարտի 17-ին, «Հայրենիք»-ում տպագրվեց մի հոդված՝ «Թալեաթ սպանուած» վերնագրով, որտեղ նշվում էր, որ նա դարձել է վրեժի գոհ, որը վաղուց էր նրա համար նախատեսված, և հավելվում էր, որ «արդարությամբ» սպանողն ազգությամբ հայ է³: Ուշագրավ է, որ թուրքական շրջանականներում կար վարկած, թե իբր սպանությունը կազմակերպված է եղել ոչ թե հայերի, այլ հույների կամ անգլիացիների կողմից, որը, սակայն, հետագայում հերքվել է⁴:

¹ Ըստ Հանս Լուկաս Կիզերի՝ Թալեաթի դին ժամեր շարունակ մնում է փողոցում այն պատճառաբանությամբ, որ հարկ է եղել այն ենթարկել փորձաքննության և միայն Էռնստ Յեքի միջնորդությամբ ու պահանջով է տեղափոխվել Շարլոտենբուրգ փողոցի դիահերձարան: Մանրամասն տե՛ս **Kieser H.L.**, Talaat Pasha: Father of Modern Turkey, Architect of Genocide, Oxford Princeton, 2018, p. 404:

² **Մինախորեան Վ.**, Վերլիշումներ (Թալեաթի սպանելու մասին), Գահիրե, 1956, էջ 307-308:

³ Տե՛ս «Թալեաթ սպանուած» // «Հայրենիք», 17.III.1921:

⁴ Տե՛ս **Kieser H.L.**, նշվ. աշխ., էջ 405:

Թալեաթի սպանությունից հետո մամուլը հեղեղվեց դրան առնչվող նյութերով, որոնցում կային թե՛ իրականությանը համապատասխանող լուրեր և թե՛ ապատեղեկատվություն: Այսպես՝ «Նյու Յորք Թայմզ» օրաթերթում նշվում է այն մասին, որ Թալեաթը կնոջ հետ զբոսնում էր փողոցում, երբ Ս. Թեհլիրյանը գնդակահարել է նրան: Ըստ այս տեղեկատվության՝ մյուս գնդակից վիրավորվել է Թալեաթի կինը¹: Նմանատիպ նյութի ենք հանդիպում նաև «Հայրենիք» թերթում. «Թալեաթ փաշան կը պտըտեր իր կնոջ հետ Հարտենպերկ փողոցին մեջ, երբ հայ ուսանող ետևեն իրեն մոտեցավ և բարևեց: Եվ երբ Թալեաթ ետին դարձավ փոխադարձաբար բարևելու, օտարականը կրակեց նախկին Մեծ եպարքոսին գլխուն՝ սպանելով զայն վայրկենաբար: Երկրորդ գնդակ մը վիրավորեց Թալեաթի կինը»²: Թերթի հետագա համարներում ճշգրտվում է, որ Թալեաթի կնոջ՝ վիրավորված լինելու հանգամանքը չի համապատասխանում իրականությանը, և սպանվելու պահին նա միայնակ է եղել: Նույն օրերին շրջանառվում էր նաև մեկ այլ լուր, ըստ որի՝ Էնվեր փաշայի ինքնաթիռը Մոսկվայից Բեռլին մեկնելու ճանապարհին վթարի է ենթարկվել, ուստի նա մահացել է³, սակայն այս տեղեկությունը ևս հետագայում հերքվել է:

Թալեաթի սպանությունից հետո մամուլում սկսվեցին շրջանառվել լուրեր նրա ահռելի նյութական կարողությունների մասին: «Նյու Յորք Թայմզ»-ը, անդրադառնալով այս հարցին տեղեկացնում էր, որ սպանված նախկին մեծ վեզիրը 10 000 000 մարկ գումար է ունեցել գերմանական բանկերում⁴: Նրա «ապահով» կյանքի մասին է վկայում նաև այն փաստը, որ Բեռլինում նա իր կնոջ հետ ապրում էր ինը սենյականոց բնակարանում⁵: Իսկ երիտթուրք առաջնորդների կողմից գանձարանից զողացված ընդհանուր գումարի չափը, ըստ մամուլում նշված տեղեկությունների, կազմում էր շուրջ 15 000 000 դոլլար⁶:

Թալեաթի թաղման արարողությանը մասնակցելու հրավերներ էին ուղարկվել թե՛ Արևելյան ակումբի և թե՛ Թալեաթի կնոջ՝ Հայրիե խանումի կողմից: Մամուլում հաղորդվում էր, որ նրա հուղարկավորությունը կազմակերպված է եղել բարձր մակարդակով, որին մասնակցել են գերմանական պաշտոնյաներ, թուրքական և արաբական աշխարհի բարձրաստիճան ներկայացուցիչներ, 100-150 հնդիկ, պարսիկ, արաբ, եգիպտացի մուսուլման ուսանողներ⁷: Արարողությունը կարծես վերածվել էր կրոնական ծեսի¹, որի

¹ Տե՛ս «Talaat Pasha Slain in Berlin Suburb» // “New York Times”, 16.III.1921:

² «Թալեաթ սպանուած» // «Հայրենիք»:

³ Տե՛ս «Թալեաթի սպանութիինը» // «Ճակատամարտ», 18.III.1921:

⁴ Տե՛ս «Talaat is Mourned as Germany’s Friend» // “New York Times”, 18.III.1921:

⁵ Տե՛ս «Ինչպես կապրէր Թալեաթ» // «Ճակատամարտ», 7.IV.1921:

⁶ Տե՛ս «Թալեաթ սպանուած»:

⁷ Տե՛ս մանրամասն՝ **Kieser H.L.**, նշվ. աշխ., էջ 405:

ընթացքում մի թուրք բարձրացրել է ձեռքերը դեպի երկինք և ներկաներին ստիպել երդվել, որ վրեժ են լուծելու Թալեաթի սպանության համար²:

«Նյու Յորք Թայմզ»-ը հաղորդում էր, որ մինչև սպանությունը Թալեաթը մի քանի անգամ փոխել էր իր բնակության վայրը Բեռլինում, քանի որ մտավախությունն ուներ, որ իրեն հետապնդում են³: Նմանատիպ տեղեկատվության ենք հանդիպում նաև «Հայրենիք»-ում, որտեղ նշվում էր, որ Թալեաթը վախենում էր հայ և թուրք թշնամիների վրեժխնդրությունից, և դա էր պատճառը, որ նա հաճախ փոխում էր իր բնակավայրը⁴: Հայերի վրիժառությունից Թալեաթի երկյուղի մասին է վկայում «Ճակատամարտ»-ի առանձնացրած նյութը. «Թալեաթը երկար ատեն է ի վեր ուներ իր վախճանին կանխագգացումը: Քանիցս յայտարարած էր, իր Սթամպոլի բնակարանին մեջ՝ ուր իր մտերիմները կընդունէր, թե պիտի մեռնէր հայու մը ձեռքով»⁵: Թալեաթի բարեկամներից մեկը գերմանական մամուլին հայտնել էր, որ նախքան սպանությունը նա զգացել է, որ իրեն հետապնդել են⁶:

Գերմանական իշխանությունները լուրջ կասկածներ ունեին, որ Ս. Թեհլիրյանը որևէ խմբավորման անդամ է, և այն համոզմանն էին, որ նրան օժանդակել են: «Նյու Յորք Թայմզ»-ում լույս տեսած հոդվածը այս առումով կատարում է մի քանի շեշտադրումներ. նախ նշվում էր, որ Ս. Թեհլիրյանը միայնակ չի գործել և եղել է ՀՅԴ գործակալ, բացի այդ՝ նրա անձնագրում եղել է շվեյցարական վիզա, որը նա ձեռք էր բերել Փարիզում: Սակայն այդ կասկածի համար գլխավոր հիմք էր ծառայում այն, որ սպանությունից երկու օր առաջ Ս. Թեհլիրյանը ստացել էր 12 000 ֆրանսիական մարկի չեկ, որն ամենայն հավանականությամբ նրան էր ուղարկվել սպանությունն իրագործելուց հետո փախուստի դիմելու համար⁷:

Գերմանական թերթերից մեկը գրում էր, որ Ս. Թեհլիրյանը, լինելով ՀՅԴ կոմիտեի անդամ, երդվել էր լինել վրիժառու և այդ պատճառով գնդակահարել էր Թալեաթին⁸, իսկ ըստ մեկ այլ գերմանական պաշտոնական հա-

¹ Տե՛ս «Գերմանները կը շարունակեն իրենց ողբը եղեռնագործի մը դագաղին վրայ» // «Ճակատամարտ», 7.IV.1921:

² Հետաքրքրական է, որ թաղման արարողության ժամանակ Բեհաեդդին Շաքիրը նշում է, որ Թալեաթի սպանությունը ոչ թե անձնական կամ ազգային վրեժխնդրության արդյունք էր, այլ ինպերիալիստական քաղաքականության հետևանք՝ ընդդեմ իսլամական ժողովուրդների:

³ Տե՛ս «Talaat Pasha Slain in Berlin Suburb» // «New York Times», 16.III.1921:

⁴ Տե՛ս «Թալեաթի սպանութեան շուրջ» // «Հայրենիք», 18.III.1921:

⁵ «Ի՞նչ կը խորհին Թալեաթի սպանութեան շուրջ» // «Ճակատամարտ», 19.III.1921:

⁶ Տե՛ս «Ինչ կը խորհին գերմաններն ու անգլիացիները Թուրքիոյ երկուսն տիրականին մասին» // «Ճակատամարտ», 8.IV.1921:

⁷ Տե՛ս «Talaat Pasha Slain in Berlin Suburb» // «New York Times», 17.III.1921:

⁸ Տե՛ս «Ինչ կը խորհին գերմաններն ու անգլիացիները Թուրքիոյ երկուսն տիրականին մասին» // «Ճակատամարտ», 8.IV.1921:

դորդագրության՝ նա եղել է հայ կառավարության գործակալ¹: Մամուլում անընդհատ շրջանառվում էր նաև այն տեսակետը, որ կատարվածը ոչ թե զուտ վրիժառական գործողություն է, այլ քաղաքական սպանություն²: Թեև թերթերի տարբեր էջերում նշվում էր, որ Ս. Թեհլիրյանը միայնակ չի գործել, և որ նրա թիկունքում քաղաքական ուժ է կանգնած, այդուհանդերձ դա ապացուցել հնարավոր չեղավ: Այդ շրջանում ՀՅԴ-ն որևէ կերպ չստանձնեց կատարվածի պատասխանատվությունը, և միայն տարիներ անց, երբ Ս. Թեհլիրյանը և այլ վրիժառուներ հրապարակեցին իրենց հուշերը, պարզ դարձավ, որ այդ գործողությունների թիկունքում կանգնած է եղել հենց այդ կուսակցությունը:

Թեև «Նեմեսիս» գործողության մասին թերթերում ուղղակի անդրադարձների չենք հանդիպում, սակայն «Հայրենիք»-ի էջերում լույս տեսած՝ «ՆԷՄԷՄԻՍ» վերտառությամբ հոդվածը որոշակի ուշադրություն է գրավում: Հաշվի առնելով, որ այս օրաթերթը լուսաբանում էր ՀՅԴ-ի գործունեությունը, այդ հոդվածը պատահաբար չէր տեղ գտել այնտեղ: «Նեմեսիս»-ը խիստ գաղտնի գործողություն էր, ուստի հոդվածագիրն ուղղակի անդրադարձ չի կատարում դրան, այլ նշում է. «Անոնք, որ կը մտածեն թե կրնան խուսափիլ Նեմեսիսի հարուածներեն, այս առթիւ թող մտածեն լրջորեն և ինքդինքնին արժանի չդարձնեն անիրաւուած ցեղի մը հրաբխային վրէժխնդրութեան»³: Այնուհետև հոդվածագիրը հավելում է, որ եթե Թալեաթն իր մահով կնքեր մահկանացուն, ապա դա կծանրանար հայության խղճի վրա: Այս առիթով «Ճակատամարտ»-ը, հղելով հունական «Փրոստոս» թերթին, գրում է, որ «Նեմեսիս աստվածային վրէժխնդրութիւնը և մարդկային անեծքը» վերջապես հարվածեցին ոճրագործին⁴, ինչը ևս չի կարելի պատահական համարել:

Թեև գերմանական իշխանությունները լուրջ կասկածներ ունեին առ այն, որ Ս. Թեհլիրյանը որևէ գաղտնի խմբավորման անդամ է, և որ սպանությունը իրականացնելիս նրան օժանդակել են, վերջինս այդուհանդերձ հարցաքննության ընթացքում պնդել է, որ գործել է ինքնուրույն և խոստովանել, որ Թալեաթին սպանել է կանխամտածված: Որպես միայնակ գործելու ապացույց նա նշել է, որ Բեռլին գալիս չգիտեր, թե Թալեաթն այնտեղ է, և պնդել է, որ նրան պատահական է հանդիպել: Կար նաև տեսակետ, որ Ս. Թեհլիրյանը Թալեաթի հասցեն գտել էր Բեռլինի բնակարանների վարչությունից⁵:

Ս. Թեհլիրյանի կատարած քայլը մեծ ոգևորություն առաջացրեց հայու-

¹ Տե՛ս «Թալեաթ փառայի սպանութեան մանրամասնութիւնները» // «Հայրենիք», 14.IV.1921:

² Տե՛ս նույն տեղում:

³ «ՆԷՄԷՄԻՍ» // «Հայրենիք», 18.III.1921:

⁴ Տե՛ս «Ինչ կը խորհին Թալեաթի սպանութեան մասին» // «Ճակատամարտ», 20.III.1921:

⁵ Տե՛ս «Գերմանները կը շարունակեն իրենց ողբը եղեռնագործի մը դագաղին վրայ» // «Ճակատամարտ», 7.IV.1921:

թյան շրջանում, և բարձր մակարդակով նրա պաշտպանությունը դարձել էր համահայկական խնդիր, նախաձեռնվել էին նրան աջակցելու տարբեր արշավներ, որոնք ուղղված էին դատարանում նրա պաշտպանությունը հավուր պատշաճի ապահովելուն: Մարտի 20-ին «Հայրենիք»-ում լույս է տեսնում «Հերոս Թեյլերեանի համար» վերտառությամբ մի հոդված, որն ազդարարում էր հանգանակության սկիզբը: Այդ գործը նախաձեռնած Վահան Քարտաշյանը¹ առաջարկել էր, որ «Հայրենիք»-ում հանգանակության կազմակերպմանը առանձին սյունակ հատկացվի, որն ուղղվելու էր Թեհլիրյանի պաշտպանությանը և ազատագրմանը: Իսկ ինքն անձամբ, որպես հանգանակության մեկնարկ, նվիրաբերել էր տասը դոլլար²: Մայիսի հինգի դրությամբ Ս. Թեհլիրյանի պաշտպանական հանձնախումբը 200 000 մարկ էր փոխադրել Բեռլին և պատրաստվում էր հետագայում այն ավելացնել³: Պաշտպանական հանձնախումբը կոչով է հանդես եկել առ այն, որ յուրաքանչյուր հայ միանա և օժանդակի Թեհլիրյանի պաշտպանական գործին և քաջալերել է նրանց. «Անգամ մըն ալ կոչ կընենք բոլորին՝ դրկելու իրենց նուէրները կարելի եղածին չափ շուտ: Թեհլիրեանի համար մեծ սփոփանք մը պիտի ըլլայ, երբ ան տեսնէ եւ զգայ, որ հեռուոր գաղութներու հայերն անգամ իրեն հետ են, իրեն համար կաշխատին»⁴: Պաշտպանական հանձնախումբն արդարացիորեն նշում էր, որ Ս. Թեհլիրյանի քայլը համարվում է «հայության հոգու ծանրությունը թեթևացնող արարք»: «Հայրենիք»-ում տպագրված սույն հոդվածի հիման վրա կարող ենք վկայել, որ Ս. Թեհլիրյանի պաշտպանական հանձնախումբը կենտրոնացած էր ԱՄՆ-ի =80 նահանգի Բոստոն քաղաքում՝ ամենայն հավանականությամբ հենց այդ նույն օրաթերթի գրասենյակում:

Հարկ է նշել, որ հանգանակության սահմանված չափերը խիստ տարբեր էին՝ սկսած մեկ դոլլարից: Հանգանակությունների թիվը կտրուկ ավելանում է ապրիլին, երբ դրանց միանում է Կերիի (փոքր քաղաք Հունաստանում) հայ գաղութը: Ուշագրավ է, որ Ս. Թեհլիրյանին սատարում էին ոչ միայն հայեր, այլև այլազգիներ: Դրա վառ ապացույցներից է այն, որ հանգանակությանը միացել էին ասորիներ, բուլղարներ և հույներ⁵: Սա վկայում է այն մասին, որ Թալեաթի սպանությունը ոգևորություն էր առաջացրել մասնավորապես այն ազգերի շրջանում, որոնք ևս տուժել էին Օսմանյան կայսրությունում այլազ-

¹ Վ. Քարտաշյան – ամերիկահայ քաղաքական գործիչ, իրավաբան: Շուրջ երկու տասնամյակ պայքարել է հայերի իրավունքների համար: Նրա և իր գործընկերների գործունեության ամենամեծ արդյունքը 1920 թ. ապրիլի 23-ին ԱՄՆ-ի կողմից Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչումն էր:

² Տե՛ս «Հերոս Թեյլերեանի համար» // «Հայրենիք», 20.III.1921:

³ Տե՛ս «Երկու հարյուր հազար մարք հերոս Թեհլիրեանի պաշտպանութեան համար դրկուած է ուղղակի Պերլին-նոր գումարներ պիտի դրկուին շուտով» // «Հայրենիք», 5.V.1921:

⁴ Նույն տեղում:

⁵ Տե՛ս «Հերոս Թեյլերեանի համար» // «Հայրենիք», 2.IV.1921:

զինների բնաջնջման քաղաքականությունից: Դատավարության նախաշեմին հանգանակություններն ավելանում են և գերազանցում 9000 դոլլարը¹:

Մամուլից տեղեկանում ենք նաև, որ հանգանակության համար կիրառվում էր ոչ միայն ուղղակի գումար նվիրաբերելու մեթոդը, այլև ԱՄՆ-ում կազմակերպվում էին տարբեր միջոցառումներ, որոնցից ստացված հասույթն ուղղվելու էր Ս. Թեհլիրյանի պաշտպանությանը: Օրինակ մայիսի 30-ին նախատեսվում էր մի «նվազահանդես», որը կազմակերպել էր հայազգի Ռոզ Զուլալեան տիկինը: Հայտարարության մեջ նշվում էր, որ ջանք չէր խնայվել, որպեսզի այդ նվազահանդեսը հնարավորինս շքեղ լիներ: Տոմսերի գները տատանվում էին 50 ցենտից 1,5 դոլլարի սահմաններում, սակայն դրանք արագորեն սպառվել էին: «Ամեն հայ անհատ, – նշվում էր այդ առթիվ կատարված հրապարակումներից մեկում, – որուն սիրտը ցնծութեամբ լեցուեցաւ և ազգային վրէժխնդրական զգացումներուն չափով մը գոհունակութիւնը վայելեց, պարտական է գալ այս նուազահանդեսին, հերոսին պարտականութեան իր բաժինը բերելու»²: Մեկ այլ միջոցառում՝ կրկին Ս. Թեհլիրյանին աջակցելու նպատակով, կազմակերպվել էր «Քնար» թատերախմբի մասնակցությամբ և պետք է տեղի ունենար հունիսի 12-ին³:

Հանգանակության յուրօրինակ տեսակ էր Ս. Թեհլիրյանի լուսանկարների վաճառքը, որի մասին տեղեկանում ենք «Հայրենիք»-ից. «Հրապարակ հանուած է հերոս Սողոմոն Թեհլիրեանի մեծադիր նկարը»⁴: Նաև հաղորդվում էր, որ դա նախաձեռնել է նրա պաշտպանական հանձնախումբը, և որ ամբողջ հասույթը տրամադրվելու է հերոսին: Նկարը, որի արժեքը 25 ցենտ էր, բազմացվել ու ուղարկվել էր տարբեր համայնքներ, և այն հնարավոր էր ձեռք բերել նաև «Հայրենիք»-ի խմբագրատնից: Ուշագրավ է, որ հանգանակություններին մասնակցում էին մեծ թվով մարդիկ, և չնայած շատերի ներդրումները փոքր էին, սակայն փաստում էին Ս. Թեհլիրյանին ցուցաբերվող հասարակական մեծ աջակցությունը: Հանգանակությունները շարունակվեցին նաև դատավարությունից հետո:

Ըստ մամուլի տեղեկությունների՝ Ս. Թեհլիրյանի դատավարությունը պետք է տեղի ունենար ապրիլին կամ մայիսին, սակայն անհայտ պատճառներով ձգձգվում է մինչ հունիս: Ըստ որոշ հրապարակումների՝ ձեռքավալվելու օրը նա չի ենթարկվել հարցաքննության, քանի որ հրաժարվել է պատասխանել հարցերին ֆրանսերեն կամ թուրքերեն⁵: Ինչպես նշում է

¹ Տե՛ս «Հերոս Թեհլիրեանի համար» // «Հայրենիք», 29.V.1921:

² «Հերոս Սողոմոն Թեհլիրեանի նուազահանդեսը» // Նույն տեղում:

³ Տե՛ս «Պատիի հերոս Թեհլիրեանի» // «Հայրենիք», 1.VI.1921:

⁴ «Հրապարակ հանուած է հերոս Սողոմոն Թեհլիրեանի մեծադիր նկարը» // Նույն տեղում:

⁵ Տե՛ս «Ինչ կը խորհին գերմաններն ու անգլիացիները Թուրքոյ երէկուան տիրականին մասին» // «Ճակատամարտ», 8.IV.1921:

միննույն սկզբնաղբյուրը, նա պահանջել է երկու հայ թարգմանիչներ և մեկ պաշտպան, քանզի չի ցանկացել, որ իր դատն ընդհատումներով ընթանա¹: Հարցաքննությունից հետո Ս. Թեհլիրյանի հետ փորձել է հանդիպել Թալեաթի եղբորորդին՝ հույս ունենալով, որ կպարզի սպանությանն առնչվող նոր հանգամանքներ: Սակայն նա կտրականապես հրաժարվել է պատասխանել նրա հարցերին²:

Օրեր անց Ս. Թեհլիրյանի հայ բարեկամները դիմում են հայտնի իրավաբան ֆոն Գորդոնին և պաշտպան դոկտոր Սիմոնին՝ խնդրելով ստանձնել նրա պաշտպանությունը³: Դատավարությունը, որն ըստ նախնական պայմանավորվածության՝ պետք է տեղի ունենար մայիսի 30-ին⁴, կայացել է հունիսի 2-ին և 3-ին: Դրան մասնակցում էին միսիոներներ և գլխավոր քույրեր, բարձրաստիճան պաշտոնյաներ, թարգմանիչներ, հայ վաճառականներ, հայ համայնքի ներկայացուցիչներ: Ներկաների թվում էր նաև Թալեաթի այրին: Բացի հիմնական վկաներից և պաշտպան-փաստաբաններից՝ դատին հրավիրված էին նաև դատաբժիշկներ: Վերջնական վճռի վրա մեծ ազդեցություն պետք է ունենար բժշկական մասնագետների դիրքորոշումը, քանի որ Ս. Թեհլիրյանը հաճախ ունենում էր «ջղային նոպաներ» (էպիլեպտիկ ցնցումներ), և նրա փաստաբանները պնդում էին, որ հիվանդության հիմնական պատճառը նրա վերապրած ծանր իրադարձություններն են եղել, ուստի բժշկական մասնագետների մասնակցությունը ոչ միայն անհրաժեշտ էր, այլև կարևոր դեր էր ունենալու վճռի կայացման գործում⁵: «Նյու Յորք Թայմզ»-ը դատավարությունն անվանել է «սենսացիոն»⁶, մի իրադարձություն, որն ուղղված էր Առաջին համաշխարհային պատերազմի տարիների թուրք և գերմանացի առաջնորդների դեմ:

Դատավարությունը մեծ հուզում էր առաջացրել հայության շրջանում, և շատերը ցանկանում էին անձամբ մասնակցել դատական նիստերին: «Նյու Յորք Թայմզ»-ը տեղեկացնում էր, որ ոչ միայն ամբողջ դատարանն էր լի հայերով, այլև ամբողջ փողոցն էր շրջափակված Սողոմոն Թեհլիրյանի հայրենակիցներով⁷: Դատարանի մուտքը խստիվ հսկում էր վեց ոստիկան, որոնք ստուգում էին մուտք գործողների անցագրերը⁸: Ըստ «Ճակատամարտ»-ի հաղորդման՝ արևմտյան սոցիալիստական լրատվամիջոցներից մեկը, անդ-

¹ Տե՛ս «Թալեաթի սպանության մեջ քաղաքական կուսակցության մը մատը կուզեն տեսնել» // «Ճակատամարտ», 12.IV.1921:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս «Թալեաթի սպանիչին դատավարութիինը» // «Ճակատամարտ», 5.VI.1921:

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Տե՛ս “Says Mother’s Ghost Ordered Him to Kill” // “New York Times”, 3.VI.1921:

⁷ Տե՛ս նույն տեղում:

⁸ Տե՛ս «Նոր մանրամասնութիինը Թեհլիրեանի դատավարության շուրջ» // «Ճակատամարտ», 11.VI.1921:

բաղաճառնալով ոչ միայն դատավարությանը, այլև Ս. Թեհլիրյանի հագուկապին, դիմագծերին և հոգեվիճակին, նշել է, որ նա հագնված էր անթերի, փոքրիկ, նիհար կազմվածքով, գունատ դեմքով, բարձր ճակատով, երկարավուն քթով, ցցված սև մազերով և թեթև մորուքով մարդ էր: Նրա կեցվածքը անհողողող էր և հանդարտ, նա հուզվում էր միայն այն դեպքում, երբ խոսում էր ջարդերի մասին¹:

Մեղադրյալին և վկաներին լսելուց հետո երդվյալ ատենակալների ժողովը տևեց մեկ ժամ 15 րոպե, որի ընթացքում նրանք «այո» կամ «ոչ» պետք է պատասխանեին մի քանի հարցերի. արդյո՞ք կատարվածը սպանություն էր, ոճի՞ր էր, կա՞յին արարքի մեղմացուցիչ հանգամանքներ, մեղավո՞ր էր արդյո՞ք Ս. Թեհլիրյանը Թալեաթին սպանելու համար²: Դատավարության ընթացքում գլխավոր դատախազը ամեն կերպ փորձում էր ապացուցել, որ նա հանցանքը կատարել էր կանխամտածված: Մինչ երդվյալ ատենակալները խորհրդակցում էին, դահլիճում թեժ քննարկումներ էին ընթանում, կանխատեսվում էր, որ դատապարտյալին ազատ են արձակելու կամ ամենաշատը վեց ամիս բանտարկության կենթարկելին³, սակայն հարկ է նշել, որ մեղավոր ճանաչվելու դեպքում Ս. Թեհլիրյանը մահապատժի էր ենթարկելու: Գրեթե մեկուկես ժամ խորհրդակցելուց հետո երդվյալ ատենակալներները «խնդալով»⁴ մտնում են դահլիճ. նրանցից մեկը կարդում է հարցը և պատասխանը. «Ուսանող Սողոմոն Թեհլիրեան մարտի 15-ին, Հարտենպերկ փողոց, Թալեաթ փաշան կանխամտածուած կերպով սպաննած ըլլալուն համար մեղապա րտ է», – «ոչ»⁵:

Այսպիսով՝ երդվյալ ատենակալների որոշմամբ Սողոմոն Թեհլիրյանը ազատ է արձակվում: Նրանք առաջնորդվեցին հետևյալ կանոնով. կասկածի դեպքում առաջնորդվել հոգուտ ամբաստանյալի⁶: Դատարանի վճիռն ընդունվեց ծափահարություններով և «բրավո» վանկարկումներով: Ս. Թեհլիրյանի հայրենակիցները և գերմանացի բարեկամները շրջապատում են նրան, ողջագուրվում. «Ժամ մը վերջ ծաղիկներով զարդարուած օթօ մը իր հայրենակիցներու ընկերակցութեամբ և ժողովրդի մեջ Սողոմոնը կը տանի բանտէն»⁷:

Ս. Թեհլիրյանի ազատ արձակումը բողոքի ալիք է առաջացնում թուրքական շրջանակներում: Թուրքական կողմը բավականին մեծ գումարներ էր

¹ Տե՛ս «Թեհլիրեանի ազատ արձակումը» // «Ճակատամարտ», 23.VI.1921:

² Տե՛ս «Սողոմոն Թեհլիրեանի դատավարոթիինը եվ հայկ. հարցը Պերլինի դատարանին առջեի» // «Ճակատամարտ», 21.VI.1921:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Նույն տեղում:

⁶ Տե՛ս «Թեհլիրեանի ազատ արձակումը, ինչ տպավորութիին թողուց Գերմանիոյ մեջ» // «Ճակատամարտ», 25.VI.1921:

⁷ «Սողոմոն Թեհլիրեանի դատավարոթիինը եվ հայկ. հարցը Պերլինի դատարանին առջեի»:

ծախսել, որպեսզի կարողանար դատը շահել, սակայն ապարդյուն: Թուրքական տարբեր թերթեր սկսում են մեղադրել Գերմանիային դավաճանության և «երկերեսանիության» մեջ: Այս ամենից գատ նաև Գերմանիայի թուրքական և արևելյան ակումբներն էին բողոք ներկայացրել դատարանի որոշման դեմ, որում նրանք Հայկական հարցը կոչում էին «Տեւական պատերազմական վիճակ մը»¹: Այդ գրությունում նաև նշված էր, որ դատարանը պետք է զբաղվեր ոչ թե թուրք-հայկական հարցով, այլ 1921 թ. մարտի 15-ի սպանությամբ²: Գրությունը եզրակացնում էր, որ դատավորները ենթարկվել են պաշտպանների և վկաների՝ այսպես կոչված երևակայական հայտարարությունների թելադրանքին, ուստի Բեռլինում բացակայում էին արդար դատավորներն ու արդարությունը³: Բողոքների ալիքը, սակայն, չի ստանում լայն աջակցություն և շուտով մոռացվում է:

Ս. Թեհլիրյանի վրիժառական արարքը հայ ժողովրդի համար սփոփիչ դեր ունեցավ և որոշ չափով հանդարտեցրեց հայությանը՝ վերականգնելով նրա ոտնահարված արժանապատվությունը: Իր արարքի շնորհիվ նա հայության համար դարձավ անմահ հերոս: Նրա մասին գրեցին երգեր, բանաստեղծություններ, պատմվածքներ, կանգնեցրին հուշարձաններ: Նրա վրիժառական արարքը մեծ արձագանք ստացավ ոչ միայն Եվրոպայում, այլև աշխարհի տարբեր ծայրամասերում, ինչի շնորհիվ գերմանական, ֆրանսիական, ամերիկյան, անգլիական մամուլի էջերում տպագրվեցին հոդվածներ հայկական ջարդերի և Հայկական հարցի վերաբերյալ:

Ամփոփելով նշենք, որ «Հայրենիք» և «Ճակատամարտ» թերթերում խնդրո առարկա թեմաներով լույս տեսած հոդվածները մեզ հնարավորություն են ընձեռում պարզել, թե հայ հասարակական միտքը, ինչպես նաև միջազգային հանրությունը ինչ չափով էին իրազեկված այն ամենին, ինչ տեղի է ունեցել դեռևս Ս. Թեհլիրյանի դատավարության շրջանում: Դրանք մեզ միաժամանակ հաղորդում են կարևոր մանրամասներ, որոնք դեռևս դուրս են մնացել ուսումնասիրողի տեսադաշտից և բացի այդ ի ցույց են դնում հայաշխարհում տիրող այն բարոյահոգեբանական մթնոլորտը, որի պայմաններում տեղի ունեցավ Ս. Թեհլիրյանի, իսկ ավելի ստույգ՝ Թալեաթի դատավարությունը:

Թերթերի հրապարակումները քննական ուսումնասիրության ենթարկելիս և արժևորելիս չպետք է անտեսել նաև այն հանգամանքը, որ դրանց տեղեկատվական գործունեությունը, աշխարհի տարբեր ծայրամասերում բնակվող հայերի համար լրատվական առաջնային սկզբնաղբյուր լինելուց գատ, նպատակաուղղված էր նաև միավորել հայկական համայնքներին՝

¹ Տե՛ս «Պերլինի թուրքերուն բողոքը Թեհլիրեանի անպարտ արձակման դեմ» // «Ճակատամարտ», 28.VI.1921:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում:

նրանց համագրային նախաձեռնությունների մղելու համար. մի առաքելություն, որն ամեն դեպքում հանգանակությունների և այլ դրամահավաք միջոցառումների միջոցով որոշակիորեն արդյունավորվեց:

Нели Абрамян – Освещение убийства Талаата и судебного процесса над Согомоном Тейлиряном в газетах «Айреник» и «Чакатамарт»

Статья представляет собой обзор материалов, опубликованных в периодических изданиях «Айреник» и «Чакатамарт», об убийстве Талаата и о судебном процессе над Согомоном Тейлиряном. В статье рассматриваются эти два издания с марта по июль 1921 года. Выбор этих двух газет не случаен. В газете «Айреник» публиковались в основном статьи об Армянском вопросе и деятельности Армянской революционной федерации, а редакция «Чакатамарта» была организующим центром операции «Немезис» в Константинополе. Следует также отметить, что в этих двух газетах мы обнаружили как кое-что новое из личной переписки, так и переводы статей, опубликованных в зарубежной прессе. В статье также затрагиваются некоторые статьи, опубликованные в «Нью-Йорк Таймс», из которых мы получаем ценную информацию об этих случаях.

Neli Abrahamyan – Coverage of Talaat Pasha’s Murder and Soghomon Tehlirian’s Trial in the Newspapers “Hayrenik” and “Jakatamart”

The article is an overview of the materials published in the periodicals “Hayrenik” and “Jakatamart” on Talaat Pasha’s murder and Soghomon Tehlirian’s trial. The paper examines these two periodicals in the period from March to July, 1921. The choice of these two newspapers is not accidental; the “Hayrenik” daily mainly published articles on the Armenian Cause and the activities of the Armenian Revolutionary Federation, while the “Jakatamart” editorial office was the organizing center of the Nemesis Action in Constantinople. It should also be noted that in these two newspapers we found both news of own correspondence and translations of the articles published in foreign press. The article also touches upon some of the articles published in “The New York Times”, from which we receive valuable information on these cases.

Ներկայացվել է 18.03.2020

Գրախոսվել է 07.04.2020

Ընդունվել է տպագրության 30.06.2020

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍԱՍԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՑԱՆԸ

Բանալի բառեր – Հովհաննես Թումանյան, Փետրվարյան ապստամբություն, Փրկության կոմիտե, Կարմիր բանակ, բոլշևիկներ, ՀՅԴ, Երևան, Թիֆլիս

1921 թ. մարտի 20-ին՝ Բաթումի գրավումից հետո, երբ ռուսական կարմիր զորամասերի գործողությունները Հայաստանում ակտիվացան և փոխադրվեցին Սուխոյ-Ֆոնտան, Գ. Օրջոնիկիձեի հանձնարարությամբ Թիֆլիսից Երևան ժամանեց բանաստեղծ Հովհ. Թումանյանը¹, որի համար դեպի ռազմաճակատի գիծը անցաթուղթն ապահովեց Հովհ. Բաղրամյանը²:

Հետագայում իր հուշերում Սիմոն Վրացյանը Հովհ. Թումանյանի՝ Երևան այցի մասին գրում է, որ իր համար անհասկանալի էր, թե արդյոք նա ինքնակամ էր ժամանել Երևան, թե՞ նրան ուղարկել էին բոլշևիկյան իշխանությունները: Սակայն նա ավելի շատ հակված էր կարծելու, որ Թումանյանը առանց պետական մարմինների համաձայնության չէր կարող Թիֆլիսից մեկնել: «Անշուշտ, Թումանյանը,– գրում է նա,– Թիֆլիսից մեկնել էր «Կովկասի փոխարքայ» Սերգո Օրջոնիկիձեի արտօնությամբ և որոշ պատուերով»³: Այս հարցում նա իհարկե ճիշտ էր, քանզի առանց իշխանության համաձայնության և հովանավորության՝ Թումանյանը չէր կարող ժամանել Երևան:

Անվիճելի է նաև այն, որ Ամենայն հայոց բանաստեղծը Հայաստան էր մեկնում ժողովրդին ծառայելու ազնիվ մղումով ու հաստատակամությամբ: «Ջերմ ու սրտաբաց զրույցի ժամանակ,– գրում է Ս. Ալիխանյանը,– Օրջոնիկիձեն անհանգստություն հայտնեց, որ բանաստեղծը ժողովրդի նկատմամբ ունեցած խոր սիրո դրդմամբ, դիմելով այդպիսի համարձակ քայլի, պարզապես վտանգի է ենթարկում իր կյանքը: Բայց Հովհ. Թումանյանը անսասան էր, ամբողջովին կլանված հոգու, սրտի ազնիվ պոռթկումով: Նա Գ. Օրջոնիկիձեին անկեղծորեն ու եռանդով համոզում էր, որ դաշնակցականների մոտ իր երևալը կարող է ամենակարճ ժամանակում վերջ տալ արյունահեղ պայքարին և շատ ու շատ կյանքեր փրկել անխուսափելի կործանումից»⁴:

Թիֆլիսից ժամանելով Հայաստան՝ Հովհ. Թումանյանը ճանապարհին կանգ առավ բոլշևիկների ճակատում՝ Ելենովկայում՝ Գ. Աթարբեկյանի մոտ: Նրան Ս.

¹ Տե՛ս **Հակոբյան Ա.**, Հայաստանի բանվորների ու գյուղացիների հաղթանակը 1921 թ. քաղաքացիական կռիվներում, Երևան, 1960, էջ 67:

² Տե՛ս **Баграмян И.**, Мои воспоминания, Ереван, 1979, с. 113:

³ **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով, հ. 2, Պէյրուք, 1967, էջ 103:

⁴ **Ալիխանյան Ս.**, Գ. Օրջոնիկիձեն և Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, Երևան, 1974, էջ 133:

Կասյանի և Ա. Խանջյանի առաջարկով ուղեկցում էր Կարո Ամոնյանը¹:

Կարո Սասունին, վերհիշելով Հովհ. Թումանյանի Թիֆլիսից Երևան ժամանումը, գրում է. «Եվ ահա 1921 թ. փետրվարեան փոթորկալի ձմրան, երբ մինք հյուսիսեն խուժող բռնակալուեան դեմ կը կռուէինք, Թումանեանը յայտնուեցաց առաջաւոր ճակատին վրայ, ձիւներուն մեջ խրած սահնակի մը մեջ: Սուխոյ-Ֆոնտան էինք: Կեսգիշերին ներկայացաւ ենթասպա մը իր թիկնապահով եւ նամակ մը յանձնեց ինձի: Իբրև բանակցող կուզեր ներկայանալ մեր կառավարութեանը:

Անմիջապէս կարգադրեցի, որ քաղաքավարութեամբ Թումանեանին փոխադրեն մոտս: Ճակատին հսկող զինուորները Թումանեանի աչքերը թաշկինակով մը կը կապեն եւ կրակի գիծը կ'անցընեն միշտ այն մտահոգութեամբ, թէ թշնամին, կրնայ ծանոթանալ մեր ճակատին բռնած դիրքերուն...»²:

Կ. Սասունին, խոսելով Ս. Վրացյանի հետ և ստանալով նրա թույլտվությունը Հովհ. Թումանյանին Երևան փոխադրելու համար, հաջորդ օրը՝ մարտի 20-ի առավոտյան, նրան ճանապարհեց մայրաքաղաք:

Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Ս. Վրացյանին Հովհ. Թումանյանի տված զեկույցից պարզ է դառնում Թիֆլիսի կարծիքն առ այն, որ փետրվարյան իրադարձությունները զուտ կուսակցական գործ են և կարող են աղետաբեր լինի հայ ժողովրդի համար: Ըստ Կ. Սասունու՝ Ախտայի գրավումից հետո Թումանյանին ուղարկել էին հենց բոլշևիկները, որոնք, հանդիպելով ուժեղ դիմադրության, «թույլ էին տվել բանաստեղծի մեկնումը դեպի Երևան՝ հոյս ունենալով, որ անոր տուած լուրերով կարելի կըլլար հուսալքում առաջացնել մեր շարքերու մեջ»³:

Հովհ. Թումանյանը, մարտի 20-ի իր ժամանման մասին մամուլին տված հարցազրույցում նշում էր, որ իր նպատակն է եղել ծանոթանալ երկրի դրությանը և որևէ քաղաքական խնդիր չի հետապնդել⁴:

Ինչևէ, Թիֆլիսում իշխող կարծիքը ցրելու նպատակով նույն օրը Հայրենիքի փրկության կոմիտեն իր նախագահի՝ Ս. Վրացյանի ստորագրությամբ Գ. Օրջոնիկիձեին ուղարկեց հեռագիր, որտեղ նշված էր. «Այսօր Երևան հասավ բանաստեղծ Հովհ. Թումանյանը, որի հաղորդումից երևում է, որ դուք բոլորովին սխալ տեղեկություններ ունեք Հայաստանի դեպքերի մասին: Հայաստանի հեղաշրջումը անպատասխանատու մարդկանց գործ չէ, այլ բառացի կերպով ամբողջ ժողովրդի, որը կռվում էր իր գոյության համար: Իմացեք, որ միայն հայ գյուղացիների դիակների վրայով, կարելի է հասնել Երևանին: Թումանյանին տրվում է լիակատար հնարավորություն ծանոթա-

¹ Տե՛ս ՀՀԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 59, թ. 4:

² **Սասունի Կ.**, Յուշեր եւ վկայութիւններ, Պէյրոս, 1972, էջ 168:

³ Նույն տեղում, էջ 204:

⁴ Տե՛ս «Ազատ Հայաստան», 24 մարտի, 1921:

նալու իրերի իսկական դրությանը և տեղեկացնելու Ձեզ»¹:

Դաշնակցական պատմագրությունը վկայում է, որ Հովհ. Թումանյանին տրվել են լայն հնարավորություններ այցելելու պետական և հասարակական հիմնարկություններ, ծանոթանալու իրերի կացությունը², այնինչ խորհրդային պատմագրությունը պնդում է, որ նա ենթարկվել է տնային կալանքի³:

Ուշագրավ է նաև այն, որ մինչ Թումանյանի ժամանումը Երևան այստեղ շատ քչերն էին տեղյակ Վրաստանի դեպքերին, որոնց մասին Հայրենիքի փրկության կոմիտեն լսել էր ռադիոյով, սակայն կարողացել էր գաղտնի պահել: Եվ քանի որ Թումանյանի Երևան գալուց հետո ժողովուրդը հնարավորություն կունենար տեղեկանալու Վրաստանի խորհրդայնացման փաստին, հանգամանք, որը, բնականաբար, վատ կանդրադառնար բարոյահոգեբանական մթնոլորտի վրա, նա, ինչպես վկայում է Ս. Վրացյանը, մեկուսացվել է: Ըստ վերջինիս՝ ինքը անգամ առաջարկներ էր ստացել ձերբակալելու և որպես ռազմագերի պահելու Թումանյանին, սակայն «ինչպես բանտարկել Ամենայն Հայոց բանաստեղծին, ինչ կ'ասէր հանրային կարծիքը»⁴:

Այսպես, Թումանյանը հանձնվում է իր որդու՝ Համլիկի հոգատարությանը: Վերջինս Ս. Վրացյանի դիվանապետն էր և բնակվում էր իր քրոջ՝ Գիգա Խատիսյանի կնոջ մոտ՝ Ալ. Խատիսյանի նախկին բնակարանում: Իսկ Հովհաննես Քաջազնունուն, որը Թումանյանի մտերիմ բարեկամներից էր, հանձնարարվեց գրողին ծանոթացնել երկրում ստեղծված իրավիճակին:

Հովհ. Թումանյանը Երևանում եղած ժամանակ մի քանի անգամ այցելել է Ս. Վրացյանին Հայրենիքի փրկության կոմիտեի գրասենյակում, հանդիպումներ է ունեցել այդ կոմիտեի անդամների, ՀՅԴ ներկայացուցիչների, մասնավորապես Հ. Օհանջանյանի, Վ. Մինախորյանի, Ա. Խոնդկարյանի, Բ. Իշխանյանի, Դավիթ Անանունի և այլոց հետ⁵:

Նշենք, որ նախքան Երևան ժամանելը Հովհ. Թումանյանը նամակ էր տպագրել «Կոմունիստ» թերթում Երևանի «հեղաշրջման» մասին՝ անվանելով այն ավանտյուրա՝ դրա կատարողներին համարելով «սոսկալի դավադրության կույր գործիք»: Հայոց մեծ բանաստեղծը, հավատ ունենալով դեպի նոր՝ բոլշևիկյան իշխանությունը, խնդրում էր «վերջին տանջանքի բաժակը» հեռացնել «արյունաքամ հայ ժողովրդից», հատուկ «եղբայրական» զգացմունքով և ներողամտությամբ մոտենալ Երևանին և աշխատավոր հայ ժողովրդին, որը, անշուշտ, անմեղ էր⁶:

¹ Վրացյան Ս., Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի միջև, Երևան, 1993, էջ 575:

² Տե՛ս նույն տեղում, էջ 575:

³ Баграмян И., նշվ. աշխ., էջ 114, Ալիխանյան Ս., նշվ. աշխ., էջ 136:

⁴ Վրացյան Ս., Կեանքի ուղիներով, էջ 104:

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի միջև, էջ 575, Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, Երևան, 1995, էջ 408:

Լինելով Հայաստանում և տեսնելով կատարվող իրադարձությունները՝ Հովհ. Թումանյանը Երևանից հետևյալ հեռագիրը հղեց Թիֆլիս՝ Օրջոնիկիձեին.

«Հինգերորդ օրն է, ես Երևանում եմ: Ծանոթանալով գործերի դրությանը՝ բոլորովին համոզվեցի, որ մեզ մոտ՝ Թիֆլիսում, կազմած համոզումը Հայաստանի դեպքերի մասին, չի համապատասխանում իրականությանը: Շարժումը սկսվել է գյուղացիության մեջ, զանազան շրջաններում, տարածվել է մինչև Երևան և իր հետևից քաշել է մտավորականությանը: Ստեղծվել է հետևյալ դրությունը, զենքը ձեռքին միմյանց դեմ են դուրս եկել մի կողմից Հայաստանի բանվորների և աշխատավորների, մյուս կողմից կոմունիստների զինված խմբերը, հոսում է արյուն առանց որևէ հիմքի թշնամության և փոխադարձ բնաջնջման համար: Ռազմաճակատում ընկեր կոմունիստները որոշ կերպով ասում էին, թե ամբողջ հեղափոխության ընթացքում կարմիր բանակը ավելի անմիտ կռիվ չի վարել: Այդ պատճառով ջերմորեն խնդրում եմ Ձեր հեղինակավոր միջամտությունը, որպեսզի շուտափույթ կերպով վերջ դրվի այս ոչ ոքի պետք չեղած արյունահեղությունը: Անհրաժեշտ եմ համարում ասել, որ կոմունիստներից և ո՛չ մեկը և ո՛չ մի ռազմագերի այստեղ չի գնդակահարվում: Եթե պահանջվի լրացուցիչ տեղեկություններ, խնդրում եմ կանչել ինձի ռադիոյի մոտ»¹:

Ցավոք, Թումանյանի այս հեռագիրը մնաց անպատասխան:

Իր հաջորդ նամակում ևս նա համոզմունք է հայտնում, որ շարժումը առաջացել է գյուղացիության մեջ, և հիշեցնում է բոլշևիկներին, որ հեղափոխության ամբողջ ընթացքում սրանից ավելի անիմաստ կռիվ նրանք չեն ունեցել²:

Պարզ էր, որ Հովհ. Թումանյանը կարևորություն էր տալիս ոչ այնքան շարժման պատճառներին, որքան սկսված խռովության վերացմանը³: Ի դեպ, Երևանի գրավումից հետո բոլշևիկյան «Կոմունիստ» թերթը նրա դեմ հանդես եկավ քննադատական հոդվածով՝ «Մի դիպլոմատի խորտակված կտիերա» վերնագրով⁴: Այստեղ նշվում է, որ Հովհ. Թումանյանը ցանկություն է ունեցել Հայաստանի «փրկիչներին» ծանոթացնել իրենց ձեռնարկի քաղաքական անհուսալի հեռանկարների հետ և առաջարկել նրանց կամովին վայր դնել զենքերը Հայաստանի «բանվորագյուղացիական իշխանության» առջև, սակայն Երևան հասնելուն պես նրա դերը փոխվել է: Ըստ հոդվածագրի՝ նրա ստորագրությամբ մի ռադիոհեռագրությունում դիվանագետի դերը ստանձնած բանաստեղծը պաշտպանության տակ է առնում դաշնակցականների ձեռնարկած ժողովրդական շարժումը և խնդրում հանգիստ թողել Վրացյանի կառավարությանը:

Այս ամենին ի պատասխան՝ նույն թերթի ապրիլի 13-ի համարում տպագրվում է Հովհ. Թումանյանի «Նամակ խմբագրությանը» վերտառությամբ

¹ Վրացյան Ս., Հայաստանը բոլշևիկյան մուրձի և թուրքական սալի միջև, էջ 575:

² Տե՛ս Թումանյան Հովհ., նշվ. աշխ., էջ 376-377:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 509-518:

⁴ «Կոմունիստ», 10 ապրիլի, 1921:

հողվածը: «Մի շատ շռայլ վերնագիր իմ շատ պարզ դերի համար,– գրում է նա: – Էդ տեսակ չափազանցեցված նշանակություն և խորհրդատվություն տվեց, իմ գալուն և Փրկության կոմիտեին, Էնքան, որ ինքն էլ վախեցավ, հասարակությունն էլ, ես էլ»:

Այնուհետ բանաստեղծը շարունակում է.

«– Եղածը սա է.

Երևանի հեղաշրջումը շատ ծանր տպավորություն էր արել Թիֆլիսի հայության վրա և ահավոր լուրեր էին տարածել քաղաքում Երևանի կոտորածների, կախվածների ու գնդակահարվածների մասին:

Ընդհանուր ցանկությամբ և խորհրդային իշխանության հավանությամբ էս եկա Երևան ճշմարտությունը իմանալու, և եթե, կարելի կլինի, միջամտելու, որ անարյուն վերջանա սկսված խռովությունը:

Ես նախօրոք խոսել էի և ունեի կոմունիստ իրավասու ընկերների և մարմինների տրամադրությունը: Դժբախտաբար էդ տրամադրությանը ընդառաջ չգնաց Փրկության կոմիտեն միմիայն մի առարկությամբ, թե՛ չենք հավատում»:

Շարունակելով իր միտքը՝ Հովհաննես Թումանյանը գրում է. «Երևանում ինձ համար պարզվեցին մի քանի կարևոր հանգամանքներ, դրանց մասին ես պարտք համարեցի նամակով գրել ընկ. Աթաբեկյանին, և էն կոմունիստ ընկերներին, որոնց հետ խոսել էի Թիֆլիսից Երևան գալիս և նրանց միջոցով ընկ. Օրջոնոկի՝ իրձեին-Թիֆլիս:

Էդ նամակներից մի երկու-երեք կետ համառոտաձև, Փրկության կոմիտեն ռադիո ղրկեց Թիֆլիս ընկ. Օրջոնոկիձեին, հայտնելով, թե մնացած կետերը իրանց հետ համաձայնեցրած չի, չի կարող ռադիո տալ և կղրկե իմ նամակները»¹:

Տպագրելով Հովհ. Թումանյանի նամակը՝ «Կոմունիստ» թերթը նույն համարում հարցը փակեց «Խմբագրության կողմից» պատասխանով, թե վիժել է բանաստեղծի ստանձնած առաքելությունը և խորտակվել «նորելուկ դիպլոմատի կառիերը»:

Այս առիթով Վ. Ղազախեցյանն իրավացիորեն նշում է, որ Ամենայն Հայոց բանաստեղծը, իր կամքից անկախ, հայտնվել էր երկու քարի արանքում: Նրա գերագույն ձգտումը անիմաստ արյունահեղությունը վերջ տալն էր, որին պատրաստ չէին ո՛չ մեկ, ո՛չ էլ մյուս կողմերը: Այստեղից էլ իրարամերժ կարծիքների առկայությունը Հովհ. Թումանյանի մոտ, որի պատճառը ոչ թե բանաստեղծն էր, այլ ժամանակի իրականությունը: Նա համակրում էր բոլշևիկներին, քանի որ ռուսասեր էր, մոտ էր կանգնած դաշնակցականներին, քանի որ ազգասեր էր²:

¹ «Կոմունիստ», 13 ապրիլի, 1921, **Թումանյան Հովհ.**, նշվ.աշխ., էջ 409-410, **Ալիխանյան Ս.**, նշվ. աշխ., էջ 136:

² Տե՛ս **Ղազախեցյան Վ.**, Հայաստանը 1920-1940 թթ., Երևան, 2006, էջ 77:

Անշուշտ իրավացի է նաև Ս. Վրացյանը, երբ գրում է, որ Հովհ. Թումանյանը մինչև իր ոսկրի ծուծը հայ ազգային բանաստեղծ էր և ազգային գործիչ: Նա որևէ կուսակցության անդամ չէր, այլ պարզապես համազգային էր¹:

Չնայած Հովհ. Թումանյանի ժամանանը Երևան և Գ. Օրջոնիկիձեի՝ Հայրենիքի կոմիտեին հղած արդեն հիշատակված մարտի 20-ի վերջնագրին, քաղաքացիական պատերազմը շարունակվեց մինչև ապրիլի սկիզբը: «Փաստօրեն Թումանեանի երևալը Երեւանում որևէ ձեռով օգտակար չեղաւ մեզ: Թէև ժողովրդին որոշ յոյս ներշնչեց, որ նրա միջնորդութիւնը կը փութացնէ հաշուեյարդարը պատերազմի և խաղաղութեան վերականգնումը Հայաստանի և Ռուսաստանի միջև, բայց միւս կողմից՝ նրա ներկայացութիւնը Երեւանում հակառակ իր կամքին, թուլացնում էր ռազմաճակատների հոգեբանութիւնը»²,– իր հուշերում գրում է Ս. Վրացյանը:

Ամենայն հայոց բանաստեղծը անկեղծորեն ցանկանում էր հաշտեցնել բոլշևիկներին ու ապստամբներին, դադարեցնել քաղաքացիական կռիվները, խաղաղություն հաստատել հայ և ռուս ժողովուրդների միջև: Թումանյանի ժամանումը Երևան որոշակի հույսեր ներշնչեց ժողովրդին, նա թեև հանդես եկավ կողմերի միջև միջնորդական առաքելությամբ, հանդարտեցման, արյունահեղությանը վերջ տալու կոչով, բայց, ցավոք, դա եղավ անօգուտ, քանզի քաղաքացիական կռիվները շարունակվեցին մինչև ապրիլի 2-ը, երբ Կարմիր բանակը վերագրավեց Երևանը:

Нателла Григорян – *Февральское восстание и Ованес Туманян*

Февральское восстание 1921 г. является одним из самых противоречивых вопросов истории Армении новейшего периода, по которому и в Армении, и в диаспоре была создана научно-историческая литература, хотя этому восстанию были даны противоречивые оценки. В статье представлена роль Ованеса Туманяна в период Февральского восстания. Цель нашей статьи – представить политику Ованеса Туманяна, выступающего с призывом к примирению двух противоборствующих сторон.

Natella Grigoryan – *The February Rebellion and Hovhannes Tumanyan*

The 1921 February rebellion is one of the contradictory issues in the newest period of Armenian history. There is rich historiographic literature with discrepant assessments on the issue both in Armenia and Diaspora. The paper presents H. Tumanyan's role during the February rebellion. Consequently, we aim to introduce H. Tumanyan's policy of appealing for reconciliation to both opposing sides.

Ներկայացվել է 09.03.2020

Գրախոսվել է 21.04.2020

Ընդունվել է տպագրության 30.06.2020

¹ Տե՛ս **Վրացեան Ս.**, Էջեր մոտիկ անցեալից // «Հայրենիք», 1923, թիվ 10, էջ 77:

² **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով, էջ 106:

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՉԱԳԱՆ ԱՎԱԳՅԱՆ

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ (ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 200-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

Բանալի բառեր – Ղևոնդ Ալիշան, Արշակ Չոպանյան, հուշ, պատմություն, հայրենիք, կրոն, գրող, գիտնական, բանաստեղծություն, վերլուծություն, ընդհանրացում, ազդեցություն, ոճ, աշխարհայացք

Արշակ Չոպանյանը խորին ակնածանքով ու խանդադատանքով է վերաբերվել Ղևոնդ Ալիշանին, «բազմաթիվ առիթներով խոստովանել, թե իր պատանեկան հասակում, ուրիշ գրողների ու մտածողների թվում Ղևոնդ Ալիշանն է եղել, որ խոր ազդեցություն է թողել իր կազմավորման վրա»¹:

Չոպանյանը նրա հետ ծանոթացել է հավանաբար 1898 թ. Վենետիկում՝ Մխիթարյանների Սուրբ Ղազար կղզում, որտեղ մեկնել էր՝ հայ միջնադարյան ձեռագրերում պրպտումներ կատարելու²: Այդ հանդիպումից մնացել է ջերմագին մի հուշ. «Տպաւորութիւնը, գոր իր անձը վրաս թողոյց՝ երբ երեք տարիի չափ առաջ զինքը տեսայ Վենետիկի վանքին մէջ, շուարումի, խանդադատանքի եւ զմայլման բուռն խառնուրդ մը եղաւ. պարթեւ հասակով, թիկնեղ եւ վեհաշուք ծերունի մը կսպասէի գտնել, եւ տեսայ փոքրիկ, թեթեւ, գրեթէ աննիւթ էակ մը որ գետնին վրայէն կը սահէր աւելի քան կը քալէր, եւ որ իր թռչնակի վզին վրայ կը կրէր երկրպագելի գլուխ մը ալեւոր մանուկի - ծերացած հրեշտակ մը կարծես որ երկնքէն փախեր մեր մէջն էր եկեր իր բիւրեղէ երգովը պահ մը մեր ցաւերն անուշցնելու համար եւ որ կ'արտոռար սակայն վայրկեան մը առաջ վերաթռիլ դէպ ի իր հեռաւոր օդակառոյց կապոյտ բոյնը որուն կարօտն ունէր միշտ»³: Չոպանյանի այս ինքնաբերական, հուզաբորբոք խոսքը, որը պատկերավոր բնութագրումներով հագեցած հիացական զգացմունքների արտահայտություն է, տեսանելի է բնութագրում Ալիշանի բոլորանավեր, աստվածասեր, «փափուկ ու կաթոզին» մարդկային կերպարը:

¹ **Դալլաքյան Գ.**, Արշակ Չոպանյան, Երևան, 1987, էջ 207:

² Տե՛ս նույն տեղում, էջ 102:

³ **Չոպանյան Ա.**, Չ. Ղևոնդ Ալիշան // «Անահիտ», 1902, թիւ 4, էջ 79: Այսուհետև այս հոդվածից հղումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերում նշելով միայն էջը:

Ա. Չոպանյանը, որ Մխիթարին ու միաբանությանը նվիրված իր մի քանի հոդվածներում¹ արդեն ամենայն բարեխղճությամբ և պատասխանատվությամբ, բազմաթիվ ճիշտ դիտարկումներով ներկայացրել էր Աբբահոր և նրա հիմնադրած միաբանության հայանպաստ գործունեության դերն ու նշանակությունը մեր ժողովրդի կյանքում և նրա պատմության համար, մի առանձին հոդվածով անդրադարձել է նաև Ալիշանին: Եվ դա պատահական չէ: Բացի անձնական ջերմ վերաբերմունքից՝ պետք է անշուշտ կարևորել նաև այն, որ մեծահամբավ գրող, գիտնական, խմբագիր, մանկավարժ Ալիշանը Չոպանյանի համար առանձնացել է իր բազմահարուստ կյանքով, վիթխարի գործով՝ շուրջ հիսուն հատորի հասնող և ամենազանազան բնույթ ու բովանդակություն ունեցող աշխատություններով (բանաստեղծություն, արձակ, գեղարվեստական թարգմանություն, պատմաաշխարհագրական ուսումնասիրություններ, պատմիչների քննական տեքստերի հրատարակություն, գիտական բուսաբանություն, հայկական հեթանոսության ու նրա հավատալիքների քննական վերլուծություն, բանագիտություն և այլն)²: «Ոչ մեկ հայ Հայկեն մինչեւ այսօր,– գրում է Ա. Չոպանյանը,– չէ ցոյց տուած այդքան վիթխարի աշխատասիրութիւն մը՝ այդքան հարուստ ու փայլուն արդիւնքով մը պսակուած: Քսան հոգիի գործ կատարած է Ալիշան իր կեանքին ընթացքին մէջ, ամբողջ մատենադարան մը, ամբողջ աշխարհ մը թողած է մեզի. եւ հայ պատանիներու համար որ նոր կը սկսին ուսանիլ, զարգանալ ու կազմուիլ, եւ որոնք պէտք ունին իրենց ազգին ու հայրենիքին վրայ իրենց տաք ու ազնիւ ձայնի մը, չկայ աւելի կազդուրիչ, աւելի հրահանգիչ ու հրապուրիչ մատենադարան քան այն գոր Ալիշան կանգնած է» (73): Գրականագետ Սուրեն Շտիկյանը Ալիշանին գրեթէ միևնույն գնահատականն է տվել. «Ալիշանը,– գրում է նա,– կարողացավ վճռականորեն բարձրանալ այն մարդկանցից ու միջավայրից, որտեղ ապրում ու գործում էր: Մխիթարյան ոչ նախորդ և ոչ էլ հաջորդ սերունդների մեջ, այս առումով, Ալիշանին հավասար ու համագոր մեծություն չենք գտնում»³:

Չոպանյանի՝ Ալիշանին նվիրված հոդվածում թեև ակնհայտ է զգացական տարրը, և հաճախ հեղինակի խոսքը նրա նկատմամբ ստանում է քնարական երանգներ, սակայն քննադատը իրեն հատուկ խորաթափանցությամբ Ալիշանի բազմաբովանդակ գործին տալիս է սեղմ ու դիպուկ գնահատականներ, անում բազմաթիվ կարևոր և արժեքավոր ընդհանրացումներ,

¹ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Վենետիկի Մխիթարեանները // «Անահիտ», 1899, թիւ 12, *նույնի՛* Մխիթարի գործը // Նույն տեղում, 1901, թիւ 8, *նույնի՛* Մխիթար // նույն տեղում, 1901, թիւ 10-11:

² Տե՛ս Հայ նոր գրականության պատմություն (այսուհետև՝ ՀՆԳՊ), հ. 1, Երևան, 1962, էջ 480, **Մակվեցյան Է.**, Ղևոնդ Ալիշան // «Երիտասարդ գիտաշխատող», Երևան, 1970, էջ 55, Ալիշանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1974, էջ 4, նաև՝ **Ալիշան Ղ.**, Երկեր, Երևան, 1981, էջ 3-14:

³ Ալիշանը ժամանակակիցների հուշերում, էջ 4-5:

որոնք, ճիշտ է, այսօր կարող են թվալ ինքնին հասկանալի՝ բոլորի կողմից ընդունված, համընդհանուր ճանաչման արժանացած, սակայն չնոռանանք, որ նա այդ ամենը արել է ավելի քան հարյուր տարի առաջ, թեմայի ուսումնասիրության ասպարեզում նախորդելով շատ շատերին՝ եղել առաջիններից մեկը: Հարկ է նաև նկատել, որ անթաքույց խանդավառությունը և դրվատանքը չեն խանգարել քննադատին՝ երբեմն-երբեմն նաև անկեղծորեն և անաչառորեն ցույց տալու Ալիշանի բազմաբովանդակ գործի առանձին մասնավոր թերությունները:

Հողվածի սկզբում Չոպանյանը ելակետային մի դիտողություն է գրանցում՝ պարզելով ընդհանրապես գիտական քննություններում վերլուծական կարողության և երևակայական մտքի փոխհարաբերության հարցը, որի հետևությունն ուղղակիորեն կապվում է Ալիշանի գիտական-գրական ժառանգության արժևորման և նրա ստեղծագործական խառնվածքի, գիտական աշխարհայեցողության բնորոշման հետ: «Կատարեալ գիտունը,– գրում է նա,– պետք է անշուշտ մտքին հետ ունենայ եւ սիրտը, վերլուծման հետ եւ երեւակայութիւնը,– որովհետեւ առանց ստոր գիտունը կ'ըլլայ պարզ գործաւոր մը, անկարող՝ լայն հայեացքներու եւ մեծ հետեւութիւններու: Բայց միմիայն սրտով մարդ «գիտուն» չի կրնար ըլլալ: Բանաստեղծութեան մէջ, սիրտը կբաւէ յաճախ, կարեւորագոյն տարրն է գոնէ (թէպէտեւ ամենէն վեհ ներկայացուցիչները մարդկային բանաստեղծութեան ամենէն բարձր տեսակին, անոնք են որ կրցած են սիրտը մտքին միացնել...):

Ալիշան սիրտ մըն էր, բայց շատ մեծ սիրտ մը (ընդգծումը մերն է – Վ. Ա.): Այդ սիրտը ամբողջապէս լեցված էր երկու պարզ ու մեծ զգացումներով, Աստուծոյ սէրն եւ ազգին սէրը... Եվ այդ երկու սէրերը Ալիշանի հոգւոյն մէջ սերտօրէն իրարու կապուած էին, կամ անելի ճիշդ իրարու խառնուած, իրարու հետ ներքնապէս ընդելուզուած ու գրեթէ միակ զգացում մը դարձած էին, առանց սակայն իրենց ուրոյն անհատականութիւնը բոլորովին կորսնցնելու...» (69-70):

Այս բնորոշմամբ Չոպանյանը փաստորեն պարզում է Ալիշանի ստեղծագործության էությունը և ցույց տալով նրա հսկայածավալ ժառանգության նշանակությունը՝ մասնավորապէս նկատում, որ շատ մեծ է նրա՝ իբրև բանաստեղծի դերը, երբ գրողը իր բուն տարերքի մէջ է, երբ «թուականները, պատմական կամ կրօնական առեղծուածները, բանասիրական կնճիռները այլ եւս չեն ծանրաբեռներ իր թոփչը»: Եվ եթէ «Ալիշան չունէր վերլուծումի կարողութիւնը», իսկ հղացած գործերը չունէին «գիտական» անհրաժեշտ գործություն, ապա սոսկ այն պատճառով, որ, ինչպէս բացատրում է Չոպանյանը, նրա համար անվիճելի ու անքնին, հավիտենական ու վերջնական ճշմարտություն էր այն ամենը, ինչ Աստծո, աշխարհի, կյանքի և հայոց պատմության վերաբերյալ հաղորդել էին իր նախահայրերը, ինչ հատկապէս ավանդում էին Աստվածաշունչն ու Մովսէս Խորենացին՝ «գերագոյն գրքերը իրեն համար»: Ալիշանը խոր պաշտամունք ուներ այն ամենի նկատմամբ,

ինչ վերաբերում էր հայ հողին, հայոց պատմությանն ու մշակույթին: Նրա համար աշխարհի կենտրոնը Հայաստանն էր, երկրագնդի բոլոր լեռների մեջ վեհագույնը՝ Արարատը, իսկ ազգերի մեջ ամենից հինը, ամենից քաջն ու ազնիվը՝ հայր: Չոպանյանն ինքը ևս նկատում է, որ այսօրինակ աշխարհայեցողությունը շատերի համար կարող է ամբարշտություն թվալ, քմածին սնապարծություն, սակայն «իր աղամանդէ երազին մէջ փակուած այդ մաքուր ու մանկական հոգու» համար «սնամէջ հռետորութեամբ մը թարգմանուող ուռուցիկ զգայնությիւն մը չէր», այլ հավատամք:

Անշուշտ հարցն այնպէս չպետք է պատկերացնել, թե իբր Չոպանյանը անտեսում է Ալիշանի պատմական, բանասիրական, տեղագրական երկասիրությունների գիտական արժեքը: Ճիշտ է, թեև նա գտնում է, որ դրանցում հաճախ պակասում է քննադատական ոգին, պատմական շատ կնճռոտ հարցեր լուծված են բանաստեղծական ենթադրություններով, ավելի իշխող է զգացումը, քան գիտականությունը¹, սակայն, հատկապէս նկատի ունենալով այդ աշխատությունների՝ «իբրեւ նիւթեղէններու ամենէն փարթամ հաւաքածուն» լինելու օգտակար հանգամանքը, դրանք գնահատում է շատ բարձր և արդարացիորեն գտնում, որ Ալիշանին պետք է դատել իր ուրույն արժանիքի համեմատ, «իր մասնաւոր գործին մէջ», որն էր նախորդների փառավոր անցյալի օրինակով հարազատ ժողովրդին ազնվացնող ու կազդուրիչ հպարտություն ներշնչելը: Եվ իսկապէս, Ալիշանի կողմից մեր պատմությանն ու դրա հերոսական էջերին անդրադառնալը, ճիգը, թե Հայկազյան թագավորների օրոք հայերն արդեն միաստված էին, Հայաստանի գլխավոր նահանգների վերաբերյալ անհամար, բազմաբովանդակ տեղեկությունների հավաքագրումը, անցյալում տարբեր երկրների հետ հայերի ունեցած հարաբերությունների ամփոփումը, նշանավոր հայ շատ անհատների կյանքի և գործի համապատկերի կազմումը, նախնյաց ձեռագիր շատ գործերի հրատարակումը, հայ ժողովրդական երգերի հավաքածու կազմելը և թարգմանաբար եվրոպացիներին ծանոթացնելը և միմյանց հաջորդող տարբեր այլ ուսումնասիրություններ, համոզված ենք, մղված չէին միայն հեղինակի զուտ բանասիրական հետաքրքրությունից: Կար նաև մեկ այլ, ոչ պակաս էական խնդիր: Իր օրերին՝ «ողբալի, քայքայուած, մոխրապատ Հայաստանին» ու հայությանը վարակած վիատության ժամանակներում, պետք էր ապացուցել, որ Հայը աշխարհի ամենաուժեղ ազգերից մեկն է, քանի որ ունի վաղեմի պատմություն ու քաղաքակրթություն, բարոյական ուժ և իմաստություն: Այստեղ, կարծում ենք, տեղին է մեջբերել Ալիշանի գործը ուսումնասիրողներից հայր Բարսեղ Սարգիսյանի հետևյալ գնահատականը, որ կարող է հավաստել և լրացնել ասվածը. «...Ինքը կաթողիկէայ ճշմարիտ հայ էր՝

¹ Ըստ Դանիել Վարուժանի՝ «Ալիշան բանաստեղծ էր, որ գիտություն կընէր»: Տե՛ս **Վարուժան Դ.**, Երկեր, Երևան, 1946, էջ 356:

մինչև իր ծուծը, և այնպես ալ կ'ուզէր ապրիլ ու մեռնիլ: Կ'ուզէր իջնել Հայոց ստորին խաւերուն՝ ժողովրդեանը մէջ. կ'ուզէր մօտէն բարբառել անոր սրտին, այսինքն՝ անոր աշուղներու միջնաշխարհիկ, պարզ ու գողտրիկ լեզուովն երգել Հայոց աշխարհիկը, օդն ու ջուրը. վասն զի՝ մէկ խօսքով կ'ուզէր ներշնչել Հայոց նոր սերունդին հայրենասիրութիւն...»¹:

Իր հողվածի հետագա շարադրանքում, ընդմիջարկելով խոսքը Ալիշանի բանաստեղծության մասին, Չոպանյանը անում է հետևյալ հավելումը, որ դարձյալ կարող է հաստատել մեր դատողությունը. «Այն շրջանին ուր Ալիշանի միտքը եւ քնարը կազմուեցան, հայ ժողովուրդը թանձր սգիտութենէ հազիւ սթափիլ սկսած, ստրկական բարքերը թօթափելու դեռ նոր մղուած, նիւթապէս ու բարոյապէս շատ տկար՝ յարաբերաբար դեռ շատ զօրաւոր Թուրքին լուծին տակ, անկարող էր վերսկսելու Մամիկոնեանց կամ Ռուբինեանց առնական ճիգը. Ալիշան, ինչպէս եւ այդ շրջանի հայ գրողներու մեծամասնութիւնը, կը մտածէր թէ նախ պէտք էր բարոյապէս, մտաւորապէս ամրացնել հայ տարրը...» (77): Այնուհետև մի առանձին խորհուրդ վերագրելով Ալիշանի ստեղծագործությանը՝ Չոպանյանը ցույց է տալիս, որ եթէ նա անգամ «ուղղակի» ոչ մի դեր չի կատարել հայկական ազատագրական շարժումների սկզբնավորման ու առաջխաղացման գործում, ապա նրա կողմից մեր ժողովրդի պատմական անցյալի քաջ ու դյուցազնական պատմության վերհանումը, հայ միտքը գայթակղելով իր գեղեցիկ, քաղաքականապէս անկախ ու հզոր անցյալի պատկերներով, մեծապէս նպաստել է հայ ազատագրական պայքարի ծննդյանն ու հետագա զարգացմանը²: «Ալիշանի գործը՝ սթափեցնող, ազնուացնող, ներշնչող մեծ ձայնն է եղած որ պատրաստած եւ դիրքացուցած է Բաֆֆիի գործը» (78),– վերջում եզրակացնում է նա:

Ա. Չոպանյանը շատ բարձր է գնահատում նաև Ալիշանի պատմագեղարվեստական արձակի գլուխգործոցն ու գազաթնակետը՝ «Յուշիկը հայրենեաց Հայոց» երկհատոր ստեղծագործությունը³, համոզված, որ դրանում «տիրապետող կրօնական զգացումը ոչինչ ունի թուլացուցիչ եւ ջլատիչ, այլ ընդհակառակն դրդիչ մը կը դառնայ աշխատասիրութեան, քաջութեան, առողջ հայրենասիրութեան» (73): Այստեղից էլ ամենևին պատահական չէ, որ Չոպանյանը «Յուշիկները» գնահատում է իբրև ազդակ Ծերենցի, Մամուրյանի ու Բաֆֆու՝ հայոց հին կյանքը վերակենդանացնող վեպերի հղաց-

¹ **Սարգիսեան Բ.**, Երկհարիրամեայ գրականական գործունէութիւնն եւ նշանաւոր գործիչներ Վենետիկոյ Միսիթարեան միաբանութեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1905, էջ 324: Նույն գնահատականին հանդիպում ենք և ուրիշների մոտ. տե՛ս, օրինակ՝ ՀՆԳՊ, հ. 1, էջ 481-482, 491, **Ալիխանեան Ա.**, Հ. Ղեւոնդ Ալիշան (բանախօսութիւն ծննդեան 150-ամեակին առթիւ) // «Բազմավեպ», 1970, թիւ 11-12, էջ 400:

² Նույն գնահատականը տե՛ս ՀՆԳՊ, հ. 1, էջ 498, նաև՝ **Մակվեցյան Է.**, նշվ. աշխ., էջ 57:

³ Ղ. Ալիշանի այս երկի հանգամանակից վերլուծությունը տե՛ս **Երեմեան Ս.**, Ազգային դէմքեր. Գրագետ հայեր, Երրորդ շարք, Վենետիկ, 1913, էջ 92-120:

ման, Գ. Սրվանձտյանցի՝ հայ աշուղական երգերի և ընդհանրապես ժողովրդական տարասեռ ստեղծագործությունների հավաքչության (տե՛ս 76)՝:

Գալով Ալիշանի բանաստեղծությանը՝ Չոպանյանը այն համարում է գրողի «գործին ամենէն թանկագին, ամենէն բարձր մասը», որտեղ արդեն նա իր բուն տարերքի մեջ է՝ «իր երեսակայութեանը երկնքին մեջ»: «Իր երգը ամենէն վեհը, ամենէն ճոխը, ամենէն հզորն է, զոր հայ քնարը արձակած ըլլա երբեք, եւ ամենէն բազմագանը» (74)²,– գրում է Չոպանյանը: Բ. Սարգիսյանի հիացական մեծարանքը ամենին չի զիջում Չոպանյանի գնահատականին. «Հ. Ալիշանն ազգային բանաստեղծութեան ու քերթողաց արեզակն է: Յետագայք՝ գրեթէ առհասարակ՝ անկէ լուսաւորուեցան ու ներշնչուեցան. և թէ ընդհանուր տեսակէտով ոչ ոք կրցաւ գերազանցել զինքը, իբրեւ ինքնատիպ և տաղանդաւոր բանաստեղծ»³: Այս հարցում պակաս խանդավառ չէ նաև Մխիթարյան մեկ այլ միաբանի՝ Միմեոն Երեմյանի գնահատականը. «Հ. Ալիշան մեր մեջ այն միակ բանաստեղծն է, որ արժանի ըլլայ բանաստեղծ կոչուելու բառին ամբողջական նշանակութեամբը: Ինքը մեր պատնասներուն խումբին մեջ կ'ապրի իբրեւ ամենէն գերազանց անգուզական մեծ քերթողը»⁴:

Ուշագրավ է, որ անդրադառնալով ստեղծագործական առնչություններին, Չոպանյանը առաջին հերթին շեշտում է Ալիշանի բանաստեղծության կապը հայ միջնադարյան գրականության հետ: Ու թէև, ճիշտ է, առանց հատուկ զուգահեռներ անցկացնելու նա Ալիշանի քնարեգության մեջ տեսնում է Եղիշեի, Մովսես Խորենացու, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Հովհաննես Թլկուրանցու և Հովհաննես Պլուզ Երզնկացու ձայները՝ ներդաշնակորեն խառնված եվրոպացի հեղինակներից Պետրարկայի, Լամարթինի, Միլթոնի, Հյուգոյի և Բայրոնի տավիղների մի քանի հնչյուններին, սակայն համոզված գտնում է, որ Ալիշանի երգը միանգամայն ինքնաբուխ է և իր շատ հատկանիշներով ինքնատիպ⁵: Նա գտնում է, որ Ալիշանը իր բանաստեղծական նկարագրով քրիստոնյա է («Ալիշան քրիստոնեայ է մինչև ոսկորներուն ծուծը»), ու որքան էլ թէև յուրացրել է արևմտյան գրականու-

¹ Ի դեպ, համանման միտք, որ ուղղակիորեն հիշեցնում է Ա. Չոպանյանի ասածը, հայտնում է Բասեղ Սազիսյանը. տե՛ս **Սարգիսեան Բ.**, նշվ. աշխ., էջ 333: Հարկ է նշել, որ ընդհանրապես ակնառու է Ա. Չոպանյանի հողվածի ազդեցությունը Բ. Սարգիսեանի վրա, որի գրքում հանդիպում ենք նաև գրեթէ բառացի քաղվածքների Չոպանյանի հողվածից, սակայն առանց չակերտների կամ անհրաժեշտ հղումների: Համեմատի՛ր, օրինակ, Ալիշանի բանաստեղծական խառնվածքի բազմագանության մասին Չոպանյանի և Բ. Սարգիսեանի մոտեցումները. **Չոպանեան Ա.**, Հ. Ղեւոնդ Ալիշան, էջ 75 և **Սազիսեան Բ.**, նշվ. աշխ., էջ 330:

² Հետագայում վերատպելով այս հողվածը «Դեմքեր»-ի առաջին հատորում՝ Չոպանյանը վերանայել է իր այս ձևակերպումը և «զոր հայ քնարը արձակած ըլլա երբեք»-ի փոխարեն գրել «զոր նոր ժամանակներու հայ քնարը արձակած է», որ բնականաբար ավելի ճիշտ է. տե՛ս **Չոպանեան Ա.**, Դեմքեր, հ. 1, Փարիզ, 1924, էջ 93:

³ **Սարգիսեան Բ.**, նշվ. աշխ., էջ 306:

⁴ **Երեմեան Մ.**, նշվ. աշխ., էջ 197-198:

⁵ Նույն համոզմունքին է և Բ. Սարգիսյանը. տե՛ս **Սարգիսեան Բ.**, նշվ. աշխ., էջ 327:

թյունը, մնացել է «խորապէս արեւելցի», «խորապէս «հայ» մանաւանդ» (74):

Թվում է՝ ինչ-որ բան հարմար չի գալիս: Տարօրինակն այն է, որ պարբերաբար շեշտելով Ալիշանի խնամիրությունը արևմտյան հեղինակների հետ՝ Չոպանյանը գտնում է, որ նա «խորապէս արեւելցի մնացած է սակայն»: Մի տեսակ կարծեք անհասկանալի է մնում այն տրամաբանությունը, որով նա «արեւելցի» Ալիշանին կապում է արևմտյան ռոմանտիկների հետ և այդ կապը համարում միանգամայն հասկանալի: Սակայն երբ հաշվի ենք առնում այն կարևոր հանգամանքը, որ Պետրարկան, Լամարթինը, Հյուգոն, Բայրոնը իրենց ստեղծագործական երբեմն խորհրդավոր, երբեմն հանդուգն, իսկ ավելի հաճախ նուրբ մտահղացումների դրսևորմամբ հարազատ են ընդհանրապես արևելյան գեղեցկագիտությանը, թերևս պարզ է դառնում, թե արևմտյան ազդեցության տակ ինչ է նկատի ունեցել Չոպանյանը: Ուրեմն՝ ստացվում է, որ արևմտյան ներգործությունը Ալիշանին ավելի շուտ առաջնորդել է դեպի իրեն հարազատ արևելյան մտածողության տարերքը:

Հարցը թերևս կարելի է դիտարկել մեկ այլ մեկնակետից ևս՝ առանց մերժելու նախորդը: Ալիշանի՝ իբրև բանաստեղծի ներաշխարհն ունի ինքնատիպ խոր արտահայտություններ, որոնք հղացել են բանաստեղծի համար գաղափարական երկու էական տարրերից՝ կրոնից և հայրենիքից, որ նկատում է Չոպանյանը: Ուրեմն՝ կարելի է կարծել, որ եվրոպացիների ազդեցությունը ունեցել է ավելի շուտ և շատ արտաքին, ձևական արտահայտություն, իսկ խորքում Ալիշանը միշտ մնացել է իր ներշնչանքի բուն տարերքում՝ հայրենիքի պաշտամունքի ու քրիստոնեական հավատքի նկատմամբ անձնուրաց սիրո մթնոլորտում:

Հոդվածում թեև, ինչպես արդեն նկատեցինք, ակնառու է անթաքույց խանդավառությունը Ալիշանի անձով ու գործով, որը, խոստովանենք, երբեմն Չոպանյանին մղում է չափազանցված գնահատականների, սակայն դրվատանքն ու ներբողը չեն խանգարում, որ նա ցույց տա նաև Ալիշանի բանաստեղծական ժառանգության առանձին թերությունները, ինչպես, օրինակ, «ճաշակի պակաս՝ երբեմն, համեմատութեան պակաս՝ յաճախ, մերթ ծայրայեղ ճոռոմութիւն, ու ստեպ՝ տղայաբանութիւնը վսեմին» և այլն (74), որ քննադատը պայմանավորում է նրա ապրած միջավայրով և համոզված գտնում, որ «եթէ Ալիշան եւրոպական մեծ ազգի մը ծոցը ծնած եւ ազատ կեանքի մը մէջ զարգացուցած ըլլար իր մտաւորական կարողութիւնները... յառաջ պիտի բերէր թերևս Հիւկոյի կամ Պայրընի հաւասար արուեստագէտ մը» (75): Այնուհետև Չոպանյանը Ալիշանին իր քնարի լավագույն էջերով համարում է «Հայոց մեծագոյն բանաստեղծը, որովհետեւ, – ինչպէս ինքն է բացատրում, – որքան ալ Աբովեան, Պէշիքթաշլեան, Դուրեան կը գերազանցեն Ալիշանը գրական այս կամ այն սեռին մէջ ուր իրենք մասնաւոր ուժ մը ցոյց կուտան, Ալիշան զանոնք ամենքն ալ կը գերազանցէ իր տաղանդին անհուն բազմազանութեամբը, լեզուին հարստութեամբն ու ճապկութեամբը, տաղաչափութեան անվերջ պէսպիսութեամբը» (75):

Հողվածի շարունակության մեջ Չոպանյանը, ճիշտ է, առանց որոշակի մասնավորումների, նշում է նաև Ալիշանի՝ ժամանակի թե՛ արևմտահայ և թե՛ արևելահայ գրողներից շատերի՝ առանձնապես Մկ. Պեշիկթաշյանի, Պ. Դուրյանի, Ռ. Պատկանյանի, Ղ. Աղայանի, Ծերենցի, Բաֆֆու վրա ունեցած ազդեցությունների մասին¹՝ նկատելով, որ նա ժամանակակից ոչ մի հայ հեղինակի, անգամ Մխիթարյան գրողների, ստեղծագործական ներգործությունը չի ունեցել: Վերջին պնդման հետ իհարկե դժվար է համաձայնել, որովհետև Ալիշանը ևս ենթարկվել է Մխիթարյան միջավայրի «վտանգավոր փորձությանը»՝ «վարժապետական» քարոզի գայթակղությանը, մի բան, որ Դանիել Վարուժանի մասին իր հողվածում վկայում է հենց Չոպանյանը²: Մխիթարյաններից Քիպարյանն Ալիշանի 150-ամյակին նվիրված իր հողվածում գրում է, որ «Ալիշան իր պատանեկություն անցուց այս շրջանակին մեջ (Մխիթարյան – Վ. Ա.), շնչեց այս մթնոլորտը, որմէ չազդուիլ կարելի չէր...»³:

Անշուշտ, վիճակն այլ է, երբ խոսքը վերաբերում է «Երգք Նահապետի» շարքին, որը դուրս է Մխիթարյանների բանաստեղծության զարգացման ընդհանուր օրինաչափություններից: «Ալիշանից ո՛չ առաջ և ո՛չ էլ հետո Մխիթարյան բանաստեղծները նման բան չեն ստեղծել»⁴,– գրում է Ա. Ինճիկյանը: Միքայել Նալբանդյանը հենց այս շարքը նկատի ուներ, երբ գրում էր, որ «չափաբերական քերթվածոց մեջ արժանավոր վարդապետը ախտյան չունի...»⁵:

Իր խոսքը ամփոփելով «Հայութեան մեծ-հայրիկի» անձի ու կյանքի փառաբանությամբ՝ Ա. Չոպանյանը անմնացորդ հավատով վստահեցնում է, որ Ալիշանի «տաք», «սիրուն» հոգին ու գործը հավերժորեն պետք է ուղեկցեն սերունդներին, և Վենետիկի միաբաններից պահանջում է հանգամանորեն հայությանը ծանոթացնել Ալիշանի կենսագրությանն ու գործին, ամբողջական պատկերացում տալ նրա խառնվածքի ու դերի մասին:

Այսպիսով, ինչպես տեսանք, Արշակ Չոպանյանի՝ Ղևոնդ Ալիշանին նվիրված հողվածը, որ հաճախ ունի խոսքի քնարական երանգավորումներ,

¹ Այս հարցի կապակցությամբ Բ. Սարգիսյանի խոսքը թերևս ավելի արժեքավոր է, քանի որ նա վերլուծաբար, հաճախ նաև կոնկրետ ստեղծագործությունների համադրությամբ ու բաղդատմամբ հիմնավորում և ցույց է տալիս հայ հեղինակներից շատերի՝ Ալիշանից ունեցած ազդեցությունները. տե՛ս **Սարգիսեան Բ.**, նշվ. աշխ., էջ 331, 333: Հետագայում շատերն են խոսել մեզանում Ալիշանից ստացած ստեղծագործական ներշնչման և ազդեցությունների մասին. տե՛ս, օրինակ, **Ճանաչեան Մ.**, Հ. Ղևոնդ Ալիշան՝ Նահապետ Հայոց (իր ծննդեան 150ամեակին յիշատակով) // «Բազմավեպ», 1970, թիւ 11-12, էջ 300, **Ալիխանեան Ա.**, նշվ. աշխ., էջ 400:

² Տե՛ս **Չոպանեան Ա.**, Դեմքեր, հ. 2, Փարիզ, 1929, էջ 114:

³ **Քիպարեան Կ.**, Ղևոնդ Ալիշան // «Բազմավեպ», 1970, թիւ 11-12, էջ 315: Նույն գնահատականը տե՛ս նաև՝ ՀՆԳՊ, հ. 1, էջ 497:

⁴ ՀՆԳՊ, հ. 1, էջ 75:

⁵ **Նալբանդյան Մ.**, ԵԼԺ, հ. 3, Երևան, 1940, էջ 120:

գրական ու բանաստեղծական ոճ, ուշագրավ է Ալիշանի բազմավունդակ գործը մեկնաբանելու, վերլուծելու արժեքավոր դիտարկումներով, որոնք այսօր ևս ընկալվում են իրենց գիտական արժեքայնությամբ, հետաքրքիր և ուսանելի են հասկապես գրող-բանաստեղծ Ալիշանի ստեղծագործության վերաբերյալ տեսական, իսկապես հիմնարար արժեք ունեցող դրույթներով:

Вачаган Авагян – Гевонд Алишан в оценке Аршака Чопаняна

Основываясь на статье знаменитого литературоведа Аршака Чопаняна (1872-1954) о знаменитом писателе и ученом Гевонде Алишане, написанной еще в 1902 г., автор сделал попытку показать, как А.Чопанян, будучи одним из первых в области изучения оценочной стороны данной темы, со свойственной ему литературоведческой проникновенностью дал краткую и точную оценку содержательной деятельности Алишана, сделал многочисленные важные обобщения, которые и по сей день сохраняют свою значимость благодаря научной ценности. Особенно интересны и поучительны тезисы, касающиеся произведений писателя и поэта и имеющие значительную теоретическую ценность.

Vachagan Avagyan – Ghevont Alishan in Archag Tchobanian's Appreciation

The pivotal point of current study is the article, written in 1902 by eminent literary critic Archag Tchobanian (1872-1954) on prominent writer and researcher Ghevont Alishan (1820-1901). It shows how Tchobanian, being one of the first in the appreciation area of his subject study, gave short and precise evaluations of Alishan's multifaceted work with special literary insights, making many important and valuable generalizations, which are still perceived with their scientific value; they are interesting and valuable especially with their points of theoretical and really fundamental value of Alishan's poetical works.

Ներկայացվել է 12.03.2020

Գրախոսվել է 24.03.2020

Ընդունվել է տպագրության 30.06.2020

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՇԵՐՏԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԽՆԴԻՐԸ. ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱԶՄ

Բանալի բառեր – բառային ֆոնդ, հիմնական կազմ, տարակարծություններ, ընդհանուր հայերենյան բառեր, բառակազմական հիմք, կայունություն, փոփոխություններ, տարբեր փուլեր, տարբեր լեզուներ, համագործածական, ոճականորեն չեզոք, գործուն բառաշերտ

Լեզվի բառապաշարի շերտերը քննելիս գրեթե բոլոր լեզվաբաններն էլ մեզանում այս կամ այն չափով, այս կամ այն կերպ անդրադառնում են բառապաշարի հիմքը կազմող բառային շերտին: Եվ այդ շերտի բնութագրությունը, հիմնական հատկանիշներով տարբեր չլինելով կամ հիմնականում չտարբերվելով հանդերձ, տարբեր ուսումնասիրություններում անվանվում կամ ձևակերպվում է տարբեր կերպ:

Հասկանալի է, որ լեզվում կա մի բառաշերտ, որը ի սկզբանե՝ գրական լեզվի կազմավորման շրջափուլից սկսած, ձեռք է բերում քաղաքացիության իրավունք և գործածվում է զարգացման հաջորդ փուլերում: Այդ շերտին պատկանող բառերն ունեն բնութագրական ընգծված հատկանիշներ՝ ծագումնաբանորեն գերազանցապես հիմք լեզվի բառեր են, գործածածական տեսակետից՝ ամենից ակտիվը, հասկանալիության առումով՝ հանրահասկանալին, բառակազմորեն բնութագրվում են բարձր արտադրողականությամբ, իմաստային տեսակետից, որպես կանոն, բազմիմաստ են և փոխաբերականությամբ հարուստ:

Այս հատկանիշներով բնութագրվում են բառեր, որոնք հայ լեզվաբանական գրականության մեջ հորջորջվում են «մի խումբ» անվանումներով՝ *ընդհանուր հայերեն բառեր, հիմնական բառաֆոնդ, բառային հիմնական ֆոնդ, հիմք բառապաշար, գործուն բառաշերտ, համագործածական բառեր, համահայկական բառեր, բառային հիմնական կազմ* են: Այս բոլոր անվանումների տակ կարելի է գետեղել (և այդպես էլ սովորաբար արվում է) ստորև բերված երեք տասնյակ և դրանց նման էլի հարյուրավոր կամ նույնիսկ հազարավոր (ըստ մոտեցման) բառեր, ինչպես՝ *տուն, ջուր, հաց, քար, լույս, արև, փողոց, դուռ, պատուհան, ծառ, ծաղիկ, միրգ, խոտ; մարտ, ապրիլ, տարի, ամիս, շաբաթ; թև, ոտք, գլուխ, աչք, մազ; հարց, խոսք, զրույց,*

պատասխան, երգ: լռել, ասել, բերել, տալ, հարցնել ևն:

Հարցին առաջին անդրադարձողներից մեկը Գ. Սևակն էր: Նա հայերենի բառապաշարի շերտաբանական դասակարգումը կատարելիս որպես առաջին և իր պարունակությամբ խոշորագույն շերտ առանձնացնում է **ընդհանուր հայերեն բառերի շերտը**, որը, ըստ նրա, «կենդանի և հարաշարժ է եղել հայ ժողովրդի ու հայ լեզվի գոյության նախնական շրջանից սկսած»¹: Լեզվաբանը անում է մի շատ ուշագրավ դիտարկում. բառապաշարի այդ շերտը, ասում է նա, ավելի ու ավելի նվազելու հեռանկար ունի. նվազել է միջին հայերենում, աշխարհաբարի վաղ շրջանում, բարբառներում ևն, «նվազած վիճակով կենդանի է և այսօր»: Այդ բառաշերտի մի հատվածը փոխարինվում է նորաստեղծ բառերով ու բառիմաստներով, ինչպես նաև փոխառություններով²: Լեզվաբանի այս դիտարկումները ենթադրել են տալիս, որ **ընդհանուր հայերեն բառեր** տերմինը նա գործածում է նեղ իմաստով (որը, ի դեպ, նույնանում է հետագայում շրջանառության մեջ դրված **բառային հիմնական ֆոնդ** տերմինին)՝ նկատի ունենալով հին հայերենում և գրաբարում գործածված բառապաշարը, որը իր մի զգալի մասով պահպանվեց նաև լեզվի զարգացման հետագա փուլերում: Բազմաթիվ բառեր ու արտահայտություններ հնացել են, դուրս եկել գործածությունից կամ դարձել նվազ գործածական, ինչպես՝ **սեպուհ, տասնապետ, արոր, գույթան, մարզպան, մեծ տիկին, աշտե, վաղվաղակի, անագան, ուսոր, աճապարել** ևն: Այս տրամաբանությամբ՝ նրա կողմից հայերենի բառապաշարի մյուս շերտերի տարբերակումը ներկայանում է միանգամայն համակարգված ու ամբողջական. Սևակն առանձնացնում է ևս չորս շերտեր՝ **գրաբար բառեր, միջին հայերենյան բառեր, բարբառային բառեր, նոր հայերեն բառեր**³: Վերջին դեպքում նկատի ունի նորակազմ բառերը և փոխառյալ նորաբանությունները:

Բառապաշարի շերտերի նկարագրությանը է. Ադայանը անդրադառնում է հայերենի բառային կազմի ծագումնաբանական դասակարգումը կատարելիս: Նա առանձնացնում է ութ շերտ՝ *համահայկական, համագրական, միջինհայերենյան, նոր գրական, մասնավոր գրական, աշխարհաբարյան, հին կամ գրաբարյան և բարբառային բառեր*: **Համահայկական** է համարում այն բառերը, որոնք գործածվել են հին հայերենում ու գրաբարում և պահպանվել են մեր լեզվի գրական և խոսակցական տարբերակներում և նույնիսկ բարբառներում կամ դրանց մեծագույն մասում: «Այս կարգին պատկանող բառերը, որոնք հսկայական թիվ են ներկայացնում, – գրում է նա, – մեր աշխարհաբար գրական լեզվի հիմքն են կազմում: Դրանք հայոց լեզվի բառապաշարի այն միջուկն են, որ դարերի ընթացքում ամրացել, հաստատուն կերպով պահպանվել և հայերենի բոլոր դրսևորումների բառապաշարի

¹ Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 2009, էջ 113:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում:

հիմքը դարձել: Բացի իրենց քանակային մեծությունից, այդ կարգի մեջ մտնող բառերը բնութագրվում են մեծ կենսունակությամբ և, մանավանդ, բառակազմական հսկայական դերով...»¹: Դրանք հայերենի բոլոր տարբերակներում գործածվող ընդհանուր գործածական բառեր են (**ջուր, հաց, եղբայր, աչք, մարդ, զուլս, տուն, բան, վազել** ևն), մինչգրաբարյան փոխառություններ (**մանուշակ, հրաման, ձյուժ, ոչխար** ևն), գրաբարի շրջանում կատարված փոխառություններ (**թատրոն, զմուռս, եպիսկոպոս, կիրակի, մեռոն** ևն)²: Դժվար չէ նկատել, որ Է. Աղայանի կողմից առանձնացված **համահայկական** կոչված բառաշերտը նույնանում է Գ. Սևակի **ընդհանուր հայերեն բառեր**-ին. խնդիրը սուկ տերմինաբանության մեջ է: Նա, ինչպես և Գ. Սևակը, չի գործածում **բառային հիմնական ֆոնդ** տերմինը:

Հ. Պետրոսյանի հայերենագիտական բառարանում արդեն տարբերակվում են **ընդհանուր հայերենյան բառեր** և **բառային հիմնական ֆոնդ** հասկացությունները, իսկ նախորդների կողմից գործածված **ընդհանուր հայերենյան** և **համահայկական** տերմինները անուղղակիորեն նույնացվում են, քանի որ հայերենի բառային կազմում բառարանն առանձնացնում է այդ անվանումներով մեկ ընդհանուր բառաշերտ: Բայց նախորդների կիրառած տերմինները (**համահայկական // ընդհանուր հայերենյան**) բառարանը գործածում է շատ ավելի լայն նշանակությամբ՝ նրանում նկատի առնալով պատմական տարբեր ժամանակներում և լեզվի տարբերակներում գործառվող բառապաշարի նաև առանձին ենթաշերտերը՝ **գրաբար, միջինհայերենյան, արևելահայերենյան, արևմտահայերենյան և բարբառային բառաշերտեր**: Դրանցից յուրաքանչյուրը, ըստ բառարանի, «համապատասխան լեզվավիճակի համար ինքնուրույն, անկախ բառապաշար է»³: Կարծում ենք՝ տերմինի այս նշանակությամբ գործածությունը առավել համոզիչ է և տրամաբանական: **Նախ**՝ գրաբարյան, միջինհայերենյան և մնացյալ շերտերը իրապես համահայկական են և, ինչպես անվանումն է ենթադրում, գործածվել կամ գործածվում են ընդհանուր հայության կողմից: Նույն հաջողությամբ համահայկական կարող են համարվել նաև բառապաշարում նախորդների կողմից առանձնացվող մյուս շերտերը՝ **համագրական** (ծաղկավառ, փիլիսոփա, փառահեղ, քերական, զանգրահեր, իղձ, սյուք, տենչ ևն) կամ **նոր գրական** (օդանավ, ախտահանել, մանրէ, բուրումնավետ, միլիոն ևն) և կամ **աշխարհաբարյան** (մատղաշ, մուգ, կտրիճ ևն): **Երկրորդ**՝ Է. Աղայանի դասակարգման մեջ թեև պահպանված է դասակարգման սկզբունքի միասնականությունը, սակայն տարբերակվող շերտերը չեն բացառում մեկը մյուսին. տեսակասեռային հարաբերության մեջ են (խախտվում է գիտական դասակարգման կարևոր սկզբունքներից մեկը. առանձնացվող կողմերը կրկնում-

¹ **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 120:

² Տե՛ս նույն տեղում:

³ **Պետրոսյան Հ.**, Հայերենագիտական բառարան, Երևան, 1987:

ներառում են միմյանց). բառերի շատ որոշակի քանակ, որը ներկայացվում է որպես **նոր գրական**, հաջողությամբ կարող է միաժամանակ **համագրական** և կամ **մասնավոր գրական** համարվել: Է. Աղայանի այս դասակարգումը կարելի է ընդունել միայն խիստ պայմանականորեն: Եվ, ինչպես ասացինք, հայերենագիտական բառարանը առաջարկում է դասակարգման առավել ընդունելի տարբերակ:

Նշված բառարանում **բառային հիմնական ֆոնդ** հասկացությունը բնորոշվում է խիստ համառոտ. «Բառապաշարի առավել գործուն, կենսունակ շերտը երբեմն կոչվում է **բառային հիմնական ֆոնդ**»¹: Այսքանը: Չեն բերվում համապատասխան բացատրություններ և օրինակներ, չեն նշվում այլ հատկանիշներ: *Գործուն, կենսունակ* բնութագրումները ենթադրել են տալիս, որ գործ ունենք բառապաշարի այդ շերտի դասական լայն ըմբռնման հետ:

Ուսումնասիրողներից Ա. Մարգարյանը հետևում է Գ. Սևակի շերտաբանական դասակարգմանը՝ ժամանակակից հայոց լեզվի բառապաշարում առանձնացնելով հինգ շերտ՝ ա) ընդհանուր հայերեն բառեր, բ) գրաբարյան (գրաբար) բառեր, գ) միջին հայերեն բառեր, դ) բարբառային բառեր, ե) նոր հայերեն բառեր: Մեզ հետաքրքրող շերտի (իր բնութագրմամբ՝ **ընդհանուր հայերեն բառեր**) վերաբերյալ լեզվաբանը տալիս է շատ համառոտ, բայց ճշգրիտ բնութագրումներ: Դրանք, ըստ լեզվաբանի, կազմում են ժամանակակից հայոց լեզվի բառապաշարի հիմնական ու առանցքային շերտը, ամենակարևոր դերն են կատարում մարդկանց հաղորդակցական գործընթացում և բնութագրվում են երեք հիմնական հատկանիշներով՝ «ա) սերում են ավելի վաղ ժամանակներից և առավել հարուստ կենսագրություն ունեն, բ) արտացոլում են արտաքին աշխարհի և մարդկային կյանքի առավել կարևոր երևույթներն ու իրողությունները, գ) շատ ավելի մեծ չափով են մասնակցում բաղադրյալ բառերի կազմությանը և հիմք են ծառայում նրանց համար»²: Սկզբունքորեն պաշտպանելով Գ. Սևակի մոտեցումը և առաջնորդվելով նրա դասակարգմամբ՝ Ա. Մարգարյանը, սակայն, չի անդրադառնում այդ բառապաշարի զարգացման ու փոփոխության խնդիրներին: Ամենայն հավանականությամբ, Ա. Մարգարյանը կարծես հակված չէ պաշտպանելու **ընդհանուր հայերեն բառեր** հասկացության այդ ըմբռնումը և այդ բառաշերտը կայուն գործածական է համարում լեզվի զարգացման բոլոր փուլերում ու բոլոր տարբերակներում՝ առանց նվազման կամ հավելումի և զարգացումների: Այդ մասին նա թեև ուղղակիորեն չի արտահայտվում, սակայն բառաշերտի ընդհանուր բնութագրության մեջ ըստ էության պաշտպանում է այդ մոտեցումը: Ա. Մարգարյանը գրում է. «Այդ շերտին են պատկանում բոլոր այն բառերը, որոնք ընդհանուր են հայոց լեզվի բոլոր փուլերի ու հատվածների՝

¹ Տե՛ս **Պետրոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 114:

² **Մարգարյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1993, էջ 177:

թե՛ գրաբարի, թե՛ միջին հայերենի, թե՛ բարբառների և թե՛ արևմտահայ ու արևելահայ աշխարհաբարների համար, ինչպես՝ **մարդ, քույր, եղբայր, սիրտ, աչք, ձեռք, քիթ, գլուխ, ...աշխատել, ուտել, սիրել գալ, ...ես, դու, մի/մեկ, երկու, երեք...**»¹: **Ընդհանուր հայերեն բառեր** տերմինը գործածվում է նեղ ըմբռնմամբ և ըստ էության նույնացվում է **բառային հիմնական ֆոնդ** հասկացության նույնպիսի ըմբռնմանը, որը հասկացության բովանդակությունից դուրս է թողնում տևական ժամանակի մեջ փոփոխությունների ենթարկվող շերտը:

Ժամանակակից հայոց լեզվի ակադեմիական հրատարակությունը գրեթե նույն հատկանիշներով բնութագրվող բառաշերտը կոչում է **բառային հիմնական ֆոնդ**: Ըստ այդմ՝ բառային հիմնական ֆոնդը բառային կազմի կենսականորեն անհրաժեշտ շերտն է, մեր լեզվի բառային կազմի հիմքը, փոփոխության ենթարկվում է դանդաղ: Այն դարերի պատմություն ունի, «գոյություն է ունեցել հազարավոր տարիներ առաջ և ժառանգաբար պահպանվել ու հասել է մեզ»²: Այստեղ, ինչպես տեսնում ենք, հստակորեն պաշտպանվում է հայերենի բառային կազմի այդ շերտի պատմական զարգացման փոփոխության գաղափարը: Ըստ հետազոտողի՝ այդ շերտի բառերից շատերը անփոփոխ պահպանվել են (քար, հող, լեռ, ջուր, մայր, եղբայր, ծառ, խմել, գնալ, քնել ևն), շատերը դուրս են ընկել (արոր, վահան, սաղավարտ, քյոխվա, նիզակ, ոստիկան ևն), դրան հակառակ՝ մարդու հասարակական գործունեության փոփոխությամբ պայմանավորված՝ բառային հիմնական ֆոնդ են մուտք գործել այլ բառեր (կոլտնտեսական, սովետ, կենտրոն, հարվածային, հեռուստացույց, տիեզերագնաց ևն): Այլ կերպ ասած՝ «Ժամանակակից հայերենի բառային հիմնական ֆոնդի մեջ մտնում են այնպիսի բառեր, որոնք արտահայտում են այսօրվա և վաղ անցյալի մարդու համար ընդհանուր հասկացություններ...»³: Փաստորեն **բառային հիմնական ֆոնդ** բնորոշմամբ նկատի են առնվում և՛ լեզվի պատմական զարգացման բոլոր շրջափուլերում գործածվող ընդհանուր հայերեն բառերը, և՛ տվյալ շրջափուլում որոշակի փոփոխություններ կրած գործածական բառաշերտը:

Համեմատաբար նոր ժամանակներում, անդրադառնալով հարցին, իր բուհական ձեռնարկում Ֆ. Խլղաթյանը հայերենի բառապաշարում (նա առավել նպատակային և ճշգրիտ է համարում **բառային կազմ** տերմինը) առանձնացնում է գործառական ակտիվություն ունեցող բառաշերտ, որը և անվանում է **բառային հիմնական ֆոնդ**: Ոլորտային սահմանափակություններ չունենալու պատճառով բառային հիմնական ֆոնդի բառերը նա

¹ Տե՛ս **Մարգարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 177:

² «Ժամանակակից հայոց լեզու», հ. 1, Երևան, 1979, էջ 221:

³ Նույն տեղում, էջ 221-222:

համարում է **համագործածական** կամ **չեզոք**¹: Դասակարգման ելակետ և սկզբունք է ընտրվում փաստորեն ֆոնդի բառապաշարի գործառական ակտիվությունը: Այս հայերենի բառապաշարի կամ բառային կազմի համար իբրև **ծագումնաբանական խմբեր** է տարբերակում հետևյալները՝ **բնիկ հայերեն բառեր**, **բնաձայնական բառեր**, **ոչ հնդեվրոպական բնիկ հայերեն բառեր**, **աշխարհաբարյան գրական հայերեն բառեր**, **բարբառային և արևմտահայերեն բառեր**: Փոխառյալ և օտար բառերը լեզվաբանը ներկայացնում է այս տարբերակումներից դուրս՝ առանձին խորագրով²: Ի դեպ, լեզվաբանը բառապաշարը դասակարգում է նաև **ըստ գործածության** (հավանաբար նկատի ունի գործածության հաճախականությունը) և **ըստ գործածության ոլորտների**՝ վերջինում առանձնացնելով նաև **համագործածական** բառերի խումբը: Մոտեցումը կարծես համակարգված չէ. հստակ չեն դասակարգման սկզբունքները, ամբողջական չեն դասակարգված խմբերը: Օրինակ՝ **ծագումնաբանական խմբերում** չեն նշվում նորակազմությունները՝ նոր բառերի շերտը, չեն ճշգրտվում **համագործածական բառեր** և **բառային ֆոնդ** հասկացությունները, չեն մատնանշվում դրանց փոփոխության հնարավոր սահմանները: Այս հարցերը հիմնավոր քննարկման չեն ենթարկվում՝ թերևս աշխատանքի բնույթով պայմանավորված:

Մի շարք այլ աշխատանքներում թեև չի խոսվում համահայկական բառապաշարի կամ բառային հիմնական ֆոնդի մասին, բայց այս կամ այն սկզբունքով դասակարգումներում անուղղակիորեն նկարագրվում է նաև այդ բառապաշարը: Այսպես. Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարի և դրա զարգացման խնդիրներով զբաղվող լեզվաբաններից Հ. Օհանյանը չի անդրադառնում բառապաշարի **ծագումնաբանական կամ շերտաբանական** դասակարգմանը և բառապաշարը **ըստ գործածության ակտիվության** ու տարածվածության դասակարգելիս առանձնացնում է երեք շերտ՝ **ա**) ակտիվ կիրառություն և լայն տարածվածություն ունեցող բառեր, **բ**) գործածության սահմանափակություն և ոչ մեծ ընդգրկում ունեցող բառեր, **գ**) գործածության սովորական կամ միջին հաճախականություն ունեցող բառեր: Մի կողմ թողնենք այն հանգամանքը, որ իրապես շատ դժվար է գործածության սովորական կամ միջին հաճախականություն ունեցող բառերը տարբերակել մյուս երկու շերտերից, մի բան, որ, մեր կարծիքով, չի հաջողվել նաև ուսումնասիրողին: Առավել կարևոր և ուշագրավ է ուսումնասիրողի կողմից ակտիվ բառապաշարին տված բնութագրությունը և դրանում բառային շատ որոշակի խմբեր առանձնացնելը: Այդ տասնհինգ խմբերը (հեղինակը հավելում է նաև շատ գործածական բայերի մի մեծ խումբ՝ առանց բնութագրման) **ըստ** երկրորդ հայերենի բառային հիմնական ֆոնդը կազմող բառերն են կամ, այլ

¹ **Խլղաթյան Ֆ.**, Ժամանակակից հայոց լեզու, Ա մաս, Երևան, 2009, էջ 177:

² Տե՛ս **Խլղաթյան Ֆ.**, նշվ. աշխ., էջ 179-200:

ձևակերպմամբ, **համահայկական բառապաշարը**, ինչպես՝ **ա)** անձնական, ցուցական դերանունները չնչին բացառությամբ, հարցահարաբերական և որոշյալ մի շարք դերանուններ, **բ)** մարդու մարմնի մասերի անվանումները, **գ)** ընտանիք, գերդաստան անվանող բառերը, **դ)** տարվա եղանակների, ամիսների, շաբաթվա օրերի անվանումները, **ե)** կենդանիների և բույսերի տեսակները նշող բառեր, **զ)** թվականները, առանձնապես մեկից տասը, տասնավորները, հազարն ու միլիոնը, **է)** աշխատանքի, արտադրության հետ կապված հասկացությունների անվանումներ, **ը)** շարժում ցույց տվող բառերի մեծ մասը են¹:

Մակայն դասակարգումը ունի ձևակերպումներ և ներկայացվող լեզվական նյութի առանձին հաստատումներ, որոնք այնքան էլ համոզիչ չեն: Օրինակ՝ որքանո՞վ է հիմնավոր այն պնդումը, որ ակտիվ բառապաշարի մաս է կազմում միայն հարցահարաբերական ու որոշյալ դերանունների մի մասը. այդ բառապաշարից դուրս են թողնվում, օրինակ, ժխտական, փոխադարձ կամ անորոշ դերանունները կամ դրանց մի մասը (**ոչինչ, ոչ մեկը; իրար, միմյանց; ինչ-որ, մի քանի, ուրիշ, այլ** են): Կա ևս մի հետաքրքիր հանգամանք: Քննարկվող գիրքը շարադրվել է մոտ չորս տասնամյակ առաջ: Հասկանալի պատճառներով (հասարակական կյանքի առաջընթաց, քաղաքական և տնտեսական զարգացումներ են) էական փոփոխություններ կան բառապաշարի այն շերտերում, որոնք ուղղակիորեն առնչվում են այդ պատճառներին: Ակտիվ բառապաշարի մաս համարվող մի խումբ բառեր դուրս են մղվել, հնացել են, դարձել օտարաբանություններ կամ պարզապես քիչ գործածական բառեր են, ինչպես՝ **բրիգադ, հաստոց, կոլտնտեսություն, սովետ, դիրեկտոր, պրոցես, պրոբլեմ, մուրաբա** են: Եվ հակառակը, նույն պատճառներով այդ բառապաշարում չեն արձանագրված բազմաթիվ բառեր, որոնք ակտիվ գործածություն ունեն այսօր և առնչվում են՝ համակարգչային տեխնիկային (համացանց, սոցցանց, օգտատեր, լայվ, համակարգիչ, կայք), ռազմական կյանքին (գորակոչ, զինծառայող, ռազմական, հրետակոծում, զորք, խոցում), քաղաքական ու դիվանագիտական ոլորտին (ԵԱՏՄ, Եվրախորհուրդ, ՀԱՊԿ, հանրահավաք, ժողովրդավարություն), սննդի տեսակներ (չիպս, սուշի, սթեյք, համբուրգեր), գործիքներ ու սարքավորումներ, մասնագիտություն, կոչում, աստիճան, պաշտոն, դիրք կամ այլինչ նշանակող կամ դրանց առնչվող բառեր (օդորակիչ, տնօրեն, վարչապետ, ինքնանկար, նախարար, խոսնակ, փոխխոսնակ, փոխարտգործնախարար, տնտեսվարող, գրասենյակ, պարզևավճար, դրամաշնորհ, ՄՊԸ, ԱԱԾ, ԱՊՊԱ, ՊԵԿ, ՄԻՊ) են:

Քննարկվող հարցը անհամեմատ համակարգված և հստակ է ներկայացվում «Ժամանակակից հայոց լեզու» բուհական դասագրքում: Այստեղ ժամա-

¹ Տե՛ս **Խղարթյան Ֆ.**, նշվ. աշխ., էջ 33-35:

նակակից հայոց լեզվի բառապաշարում առանձնացվում է երկու հիմնական շերտ՝ **բառային հիմնական ֆոնդ** (որը անվանվում է նաև **բառագանձ**) և **բառային կազմ**: «Բառային հիմնական ֆոնդը,– կարդում ենք այդ դասագրքում,– բառապաշարի հիմքն է, նրա բազան, ամենակայուն շերտը, որի մեջ առաջին հերթին մտնում են նախասկզբնական և նախնական ամենակարևոր և ամնեաանհրաժեշտ այն բառերը, որոնք հաստատապես մուտք են գործել այդ լեզվով խոսող ժողովրդի կյանքում: Դրանք ընդհանուր գործածական այն բառերն են, որոնք անվանում են օբյեկտիվ իրականության առարկաները, երևույթները, գործընթացները, հատկանիշները և այլն: Այդ բառերը տարբեր դարաշրջանների և տարբեր ժողովուրդների լեզուների համար կարող են բնույթով տարբեր լինել»: Ըստ այդմ՝ բառային հիմնական ֆոնդի մեջ են մտնում այն բառերը, որոնք հանրահասկանալի են տվյալ լեզվով հաղորդակցվողներին և գործածվում են հանրության բոլոր շերտերի կողմից՝ անկախ կրթությունից, մասնագիտությունից և բնակության վայրից: **Բառային կազմը**, ըստ նույն տեսակետի, ներառում է լեզվի ամբողջ բառապաշարը, այդ թվում նաև հիմնական բառաֆոնդը². Նրա մեջ են մտնում նոր բառերն ու բառիմաստները, որն է բնագավառում՝ գեղարվեստական գրականություն, ՋԼՄ-ներ, գիտություն և այլուր, գործածվող բառերը ևն: «Լեզվի բառային կազմը հիմնական բառաֆոնդի համեմատությամբ քանակապես շատ ավելի ընդարձակ և ավելի փոփոխական է, նրա սահմաններն ավելի շարժուն են»³: Այս տեսակետում, ինչպես և Գ. Սևակի դիտարկումներում, հատուկ անդրադարձ է կատարվում բառային հիմնական ֆոնդի հարաբերականորեն կայուն լինելուն. այդ բառապաշարը ներքին և արտաքին գործոնների ազդեցության տակ տևական ժամանակի մեջ մասամբ ենթարկվում է փոփոխությունների. դուրս են ընկնում հնացած բառերն ու բառիմաստները, նոր բառերի և բառիմաստների մի որոշակի մաս մուտք է գործում հիմնական բառաֆոնդ: Սկզբունքորեն համաձայնելով այս մտտեցմանը՝ դժվար է, սակայն, համաձայնել այն կարծիքին, որ բառաֆոնդի փոփոխությունը կատարվում «հավասար արագությամբ», և որ «յուրաքանչյուր հազարամյակի ընթացքում դուրս է ընկնում այդ բառերի 15%-ը»⁴, պահպանվում է 85%-ը: Հետաքրքիր է, որ օտարագրի լեզվաբանի (Սվոդեշ) այս դիտարկումները միջնորդավորված հղումով բերվում են Գ. Ջահուկյանի աշխատությունից և բերվում են առանց վերապահության, երբ ինքը՝ Ջահուկյանը, խիստ վերապահությամբ է ընդունում բառաֆոնդի փոփոխության այդ վիճակագրությունը: Միանգամայն արդարացի է հայ լեզվաբանի այն պնդումը, որը վերա-

¹ **Սուրիապյան Ա., Սուրիապյան Զ., Տելեքյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2017, էջ 163:

² Տե՛ս նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 166:

⁴ Տե՛ս նույն տեղում:

բերում է Սվոդեշի լեզվաժամանակագրական մեթոդի հիմքում ընկած ենթադրության «խիստ մոտավոր բնույթին»։ «հիմնական բառաֆոնդի փոփոխությունը,– գրում է Գ. Ջահուկյանը,– խիստ հեռու է հավասարաչափությունից և կարող է տալ տարբեր լեզուների և լեզուների տարբեր շրջանների համար մինչև 2-3 տասնյակ տոկոսի տատանում»¹։ Ակնհայտ է, օրինակ, որ վերջին հարյուրամյակում և առավել ևս վերջին հիսուն տարիներին հայերենի բառային հիմնական ֆոնդը էական փոփոխություններ է կրել. միջուկը հիմնականում պահպանվել է, բայց և ընդհանուր ֆոնդը հարստացել է բազմաթիվ նոր բառերով ու բառիմաստներով։

Այսպիսով: Դժվար չէ նկատել, որ մեզանում միասնական կարծիք և մոտեցում չկա ընդհանուր հայերեն (ընդհանուրհայերենյան) բառաշերտ, ընդհանուր բառային ֆոնդ, բառային հիմնական ֆոնդ, համահայկական բառապաշար, բառային հիմնական կազմ, բառային կազմ և նման հասկացությունների վերաբերյալ։ Իսկ երբեմն էլ հստակ չեն նշվում դասակարգման սկզբունքները։ Ըստ էության նույն հատկանիշներով բնութագրվող բառաշերտը մասնագիտական գրականության մեջ տարբեր կերպ է ընկալվում կամ անվանվում։

Ընդհանուր և միասնական մոտեցում ձևավորելու համար, կարծում ենք, պետք է ճշգրտել երկու կարևոր հարց՝ 1. տերմինաբանությունը, 2. երևույթի ընդգրկման և փոփոխությունների շրջանակը։

Մեր մոտեցումը հետևյալն է. բառապաշարի քննարկվող շերտը անվանելու համար շրջանառվող տերմիններից նախընտրելի է **բառային հիմնական կազմ** կամ **հիմնական բառակազմ** անվանումը։ **Ընդհանուրհայերենյան, համահայկական** և նման տերմինները, ինչպես վերը նկատեցինք, շփոթություն են ստեղծում և ճշգրիտ չեն բնութագրում երևույթը։ **Բառային հիմնական կազմ** անվանումը հստակ է և բովանդակությամբ նույնանում է **բառային հիմնական ֆոնդ** կամ **հիմնական բառաֆոնդ** հասկացությանը։ Առաջինը նախընտրելի է՝ պարզապես հայերեն (ոչ օտար տերմին) լինելու հանգամանքով պայմանավորված։

«Բառաշերտը (пласть слов) բառային կազմի այն մասն է, որը որոշակի հատկանիշով (բառամթերքով և գործառությամբ) առանձնանում և ինքնուրույն խումբ է կազմում»²։ Ասել է թե, շերտաբանական դասակարգում կատարելիս պետք է առանձնացնել բառապաշարի այն շերտերը, որոնք իրարից տարբերվում են բառային ընդհանուր կազմով (բառամթերքով) և գործառական, կիրառական յուրահատկություններով, նաև այն հատկանիշով, թե որքանով են առանձնացվող շերտերը կենսունակությամբ ու գործածակալությամբ տարբերվում իրարից։ Ռուսերեն լեզվաբանական տերմինների

¹ **Ջահուկյան Գ.**, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 219։

² **Պետրոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 114։

բառարանում հասկացությունը բնութագրվում է հետևյալ կերպ. բառային հիմնական ֆոնդը լեզվի հիմնական (սկզբնատիպ) բառերի ամբողջությունն է, նրա բառապաշարի առավել կայուն մասը¹: Մեկ այլ բնորոշմամբ բառային հիմնական ֆոնդը լեզվի բառապաշարային հիմքն է, բառապաշարի առավել կայուն շերտը, որը ընդգրկում է ամենից առաջ սկզբնատիպ, առավել կարևոր և անհրաժեշտ ընդհանուր գործածական անվանումները այն առարկաների, երևույթների, գործընթացների, որոնք կապված են ռեալ իրականության հետ և ամուր մտած են ժողովրդի կյանքի մեջ²: Այս բնորոշումները ցույց են տալիս, որ լեզվի բառային հիմնական կազմը ունի որոշակիորեն ընդգծված և առանձնացող հատկանիշներ:

Փորձենք ընդհանուր գծերով ներկայացնել դրանք:

1. **Ընդգրկման** կամ, այսպես կոչված, **տարածական-իմաստային առումով** բառային հիմնական կազմը վերաբերում է մարդկային կյանքի առավել կարևոր երևույթներին և իրողություններին՝

Ա) մեզ անմիջականորեն շրջապատող առարկաների, երևույթների, կենցաղային իրերի ու առարկաների անվանումներ՝ **տուն, հաց, ջուր, աղ, սեղան, աթոռ, հող, օդ, մարդ, քամի, լույս, այգի, փողոց, դանակ, պատառաքաղ, ափսե, գդալ,**

Բ) ազգակցություն, բարեկամություն և դրանց մոտ իմաստներ նշանակող բառեր՝ **ընկեր, ընկերուհի, քույր, որդի, եղբայր, քեռի, անեք, հորաքույր, մորաքույր, հարևան, բարեկամ, ազգական, հարազատ,**

Գ) զանազան զգացմունք, ապրում, տպավորություն արտահայտող բառեր՝ **սեր, ուրախություն, ցավ, վիշտ, մեղք, անտարբերություն, լավություն, չարություն, տրամադրություն, ափսոսանք, հանգստություն,**

Դ) առարկաների և երևույթների անմիջական հատկանիշ անվանող բառեր՝ **լավ, վատ, հիմար, անմիտ, հետաքրքիր, պարզ, հասարակ, անիմաստ, ուշադիր, հպարտ, լուրջ, ի միջի այլոց, վստահ,**

Ե) մարդու մարմնի մասերի անվանումներ՝ **թև, գլուխ, աչք, ձեռք, սիրտ, մատ, լեզու, ոտք, թիկունք, պարանոց, մազ, հոնք, փոքր, եղունգ, ծունկ,**

Զ) շաբաթվա օրերի անվանումներ և ամսանուններ՝ **կիրակի, երկուշաբթի, մայիս, մարտ, հունվար, ապրիլ,**

Է) ամենօրյա գործողությունների և վիճակների անվանումներ՝ **ասել, խոսել, վազել, քնել, լսել, աշխատել, երգել, գնալ, նկարել, հիշել, ապրել, անել, փորձել, ելնել, աղմկել, զրուցել, նայել, հավանել, դնել, տանել, թողնել, դառնալ,**

Ը) սննդի տեսակ, խմիչք, հագուստ և դրանց հետ առնչվող հասկացություններ անվանող բառեր՝ **հաց, ջուր, ճաշ, թեյ, գինի, հյութ, միս, լոլիկ,**

¹ St' u **Ахманова О. С.**, Словарь лингвистических терминов, Москва, 2013:

² St' u **Азимов Э., Шүкин А.**, Новый словарь методических терминов и понятий (теория и практика обучения языкам), Москва, 2009:

վարունգ, պանիր, կարագ, կարտոֆիլ, խնձոր, սուրճ; կոշիկ, վերնաշապիկ, գլխարկ, ակնոց, մատանի,

Թ) բնակության վայրերի և դրանց առնչվող իրողությունների անվանումներ՝ քաղաք, գյուղ, մարզ, ավան, փողոց, տուն, դուռ, պատուհան, տանիք, հատակ, աթոռ,

Ժ) կենդանական և բուսական աշխարհի հետ կապված անվանումներ՝ մարդ, ձի, կով, ոչխար, հավ, գայլ, աղվես, մեղու; ծաղիկ, վարդ, տերև, թթենի, խնձոր, խոտ, դեղձ, նուռ:

2. Բառային հիմնական կազմը **խոսքիմասային պատկանելությամբ** ներառում է բոլոր խոսքի մասերը առավել կամ պակաս չափով. առավել մեծ թիվ են կազմում **գոյական, ածական, բայ** համարվող բառերը, իսկ մյուս խոսքի մասերից առանձնանում են որոշակի խմբեր, որոնք թեև քանակով մեծ չեն, բայց աչքի են ընկնում գործածության մեծ հաճախականությամբ, ինչպես ա) թվականներից (հատկապես քանակականները)՝ **մեկից տասը, տասնավորները, հարյուր, հազար, միլիոն, միլիարդ** ևն, բ) դերանուններից՝ **ես, դու, իրար, ոչ մի, մի քանի, ոչ ոք, բոլոր, ամեն մի, յուրաքանչյուր, երբ, ուր, ինչքան, այստեղ, սա, դա, այսքան, այլ** ևն, գ) ձայնարկություն, վերաբերական, մակբայ, կապ և շաղկապ խոսքի մասերից՝ **վա՛յ, ա՛խ, է՛, ի՛, է՛յ, ա՛;** ; **իհարկե, երևի, հավանաբար, անշուշտ, ոչ/չէ, այո, դժվար թե, միգուցե; արագ, շուտ, դանդաղ, միշտ, ուշ, երեկ, վաղը, հիմա, անընդհատ; համար, նման, պես, մասին, վրա, տակ, բացի, առանց, մոտ; ու, իսկ, բայց, սակայն, կամ, նաև, թե, որ, թեև, եթե, մինչև** ևն:

3. Բառակազմական տեսակետից և ծագումնաբանորեն բառային հիմնական կազմը լեզվի ընդհանուր բառային կազմի և նրա պատմական զարգացման բառակազմական հիմքն է. «Հիմնական բառային կազմը ազդում է լեզվի ընդհանուր բառային կազմի ձևերի և միջոցների հարստացման վրա, որոշում է նրա պատմական զարգացման ներքին օրինաչափությունները»¹: Այդ երկուսի միջև առկա է կառուցվածքային ամուր կապ: Ծագումնաբանորեն լինելով առավելապես պարզ բառեր՝ հիմնական կազմի բառերը բաղադրական հիմքեր են դառնում ընդհանուր բառապաշարի, այդ թվում՝ նորակազմությունների համար, ինչպես՝ **արև** > *արևային, արևմուտք, արևկող, արևափայլ, անարև, արևառ, ԱՐԵՎԱԿ, արևահամ* և տասնյակ ու հարյուրավոր բառեր: Կամ՝ **սիրտ** > *սրտակից, սրտային, սրտոտ, անսիրտ, սրտացավ, սրտագիր, սրտագրող, սրտագրություն, սրտաբան, սրտաբաց, սրտաբեկ, սրտագին, սրտակեղեք* ևն, ևն:

4. Լեզվի բառային հիմնական կազմը լեզվի ընդհանուր բառապաշարի նաև իմաստաբանական հիմքն է: Արդի հայերենի բառային բազմիմաստու-

¹ St' u **Виноградов В.**, Избранные труды. Лексикология и лексикография, Москва, 1977 (<https://scicenter.online/frazeologiya-leksikografiya-leksikologiya-scicenter/sistema-jiviyih-morfologicheskikh-leksicheskikh-125950.html>):

թյունը ձևավորվել և զարգացել է՝ հիմքում ունենալով առավելապես հիմնական բառային կազմի իմաստաբանական կառուցվածքն ու շերտերը: **Թև** բառի իմաստային հենքի վրա են, օրինակ, ձևավորվել նրա երկու տասնյակից ավելի իմաստները, **կառավարել**-ը իր բոլոր նոր՝ աշխարհաբարյան իմաստներով սերում է գրաբարյան սկզբնական իմաստից՝ կառք՝ առարկա, միավոր, կառույց, համակարգ կամ այլինչ ղեկավարելը, ուղղություն տալը: **Կայք** բառի նոր՝ համակարգչային **սայթ** իմաստը (իմաստային նորաբանություն) ածանցյալ է գրաբարի **կայ** բայական իմաստից նև: Սրանք հնից ածանցված նոր իմաստներ են, որ համալրում են բառային ընդհանուր կազմի իմաստաբանությունը: Ըստ որում, բազմիմաստ բառի ոչ բոլոր իմաստները կարող են համարվել հիմնական բառակազմի իմաստային միավոր կամ մուտք գործել բառային հիմնական կազմ¹: Օրինակ՝ հենց **կայք** բառի՝ աշխարհաբարում առաջացած իմաստներից մեկը (ունեցվածք, հարստություն, կարողություն, ինչք, գույք, կալվածք. մյուս՝ **հանգրվան** իմաստը հնացած է) այսօր չի կարող համարվել բառային հիմնական կազմի միավոր, քանի որ այն համագործածական բառ չէ: Կամ՝ **նախարար** բառի երկու հիմնական իմաստներից (1. Հին Հայաստանում որևէ նահանգի՝ գավառի՝ երկրամասի տեր հանդիսացող իշխան; 2. Մինիստր)² արդի հայերենի բառային հիմնական կազմ անցավ երկրորդը՝ **մինիստր** իմաստը:

Կա նաև մի ուրիշ հետաքրքիր իրողություն՝ կապված բառիմաստի կամ ավելի ճիշտ՝ բառի հոմանշային տարբերակների հետ: Ակնհայտ է, որ բառային հիմնական կազմում գրեթե առանց բացառության «հաշվառվում են» բառի ոճականորեն չեզոք իմաստները կամ հոմանշային չեզոք՝ համագործածական տարբերակները, ինչպես ցույց են տալիս վերը նշված օրինակները: Մեկ այլ օրինակ՝ գույն անվանող **սպիտակ** բառի հոմանշային երկու տասնյակից ավելի տարբերակներից (ճերմակ, ձյունաթույր, սպիտակավուն, ձյունաճերմակ, ձյունափրփուր, ճերմակափառ, սպիտակափառ, ձյունասպիտակ, կաթնաթույր, ձյունեբանգ, ճերմակորակ, շուշանաթույր նև) արևելահայերենում հիմնական կազմի բառ է **սպիտակ**-ը, արևմտահայերենում՝ **ճերմակ**-ը: Հնարավոր է նաև, որ ի սկզբանե հիմնական բառակազմում «հաշվառվող» բառի հոմանշային չեզոք տարբերակներից մեկը, աստիճանաբար ոճական երանգավորվածություն ձեռք բերելով, դուրս մղվի գործածությունից (բառային հիմնական կազմից)՝ իր տեղը զիջելով հոմանշային չեզոք այլ տարբերակի, ինչպես, օրինակ՝ **ուստր/տղա**, **ունկն/ականջ**, **ատոք/լիքք**, **ակաղձուն/առատ**, **լեփ-լեցուն**, **վասն/համար**, **մասին**, **հանգույն/նման**, **արտորալ/շտապել**, **ի հեճուկս/հակառակ**, **ի տրիտուր/որպես հատուցում**, **պատասխան**, **զի/քանի որ** և այլ նման տարբերակներից առաջինները:

¹ Տե՛ս **Реформатский А.**, Введения в языкознание (<http://www.bibliotekar.ru/yazikovedenie-1/27.htm>):

² Տե՛ս **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976:

Հետաքրքիր է նաև հետևյալ հանգամանքը. ժամանակի ընթացքում բառային հիմնական կազմում կարող են հաստատվել նաև բառի ոչ թե հիմնական, այլ երկրորդական կամ փոխաբերական և կամ հետագայում ձեռք բերված իմաստներից մեկը կամ մյուսը: Օրինակ՝ **հավ** (թռչուն/ընտանի թռչուն), **կաղ** (հաշմանդամ/ոտքից հաշմանդամ), **պարապել** (պարապ լինել/զբաղվել), **պատարագ** (գոհ/եկեղեցական արարողություն), **վերարկու** (վրան գցելու զգեստ/ձմեռային վերնազգեստ), **խնդրել** (որոնել, փնտրել/ուզել, աղերսել), **ապրել** (փրկվել/կյանք վարել), **աշխատել** (հոգնել, նեղություն կրել/աշխատանք կատարել, վաստակել), **սիրուն** (սեր ունեցող/գեղեցիկ) բառերի՝ փակագծերում նշված առաջին իմաստները հնացած են. հիմնական բառային կազմ են մտել դրանց նոր՝ աշխարհաբարյան՝ երկրորդ իմաստները. հիմնական կազմ է անցել, օրինակ, **աթոռ** բառի նաև փոխաբերական՝ **պաշտոն** իմաստը: Հիմնական կազմի բառերը հանրահասկանալի են:

5. **Գործառական տեսակետից բառային հիմնական կազմը ամենից ակտիվ բառաշերտն է, գործուն է, կենսունակ:** Հայտնի է, որ ըստ գործածականության՝ բառերը լինում են **գործուն** և **ոչ գործուն**: Առաջինները այն բառերն են, որոնք լեզվակիրառողի համար ոչ միայն հասկանալի են, այլև գործածվում են նրա կողմից: Երկրորդները լեզվակիրառողը հասկանում է, սակայն ինքը, որպես կանոն, չի կիրառում¹: Հասկանալի է, որ գործուն բառապաշարի հիմքը բառային հիմնական կազմն է: Այսինքն՝ բառային հիմնական կազմի բառերը ամենից գործածականներն են: Բայց այս դեպքում պետք է նկատի առնել նաև մեկ ուրիշ հանգամանք. բառային հիմնական կազմի բաղադրիչներ լինելով հանդերձ՝ բառերի որոշակի քանակ կարող է նույն գործածականությամբ չբնորոշվել տարբեր խմբի լեզվակիրառողների համար: Օրինակ՝ **գիտություն**, **հողված**, **փաստ**, **զեկուցում**, **հիմնավորում**, **տերմին** բառերը գործուն են գիտությամբ զբաղվող լեզվակիրառողների միջավայրում, բայց բնավ գործածական չեն, ասենք, օրինակ, գյուղատնտեսությամբ զբաղվողների համար, և հակառակը. երկրորդների համար գործածական **արտ**, **բահ**, **գոմ**, **կով**, **ցանք**, **բերք**, **տրակտոր**, **մարգ**, **ակոս**, **էտել**, **խոտհունձ** բառերը քիչ գործածական են առաջինների միջավայրում: Երկուսն էլ բառային հիմնական կազմի բառեր են՝ տարբեր լեզվակիրառողների կողմից առավել կամ պակաս գործածականությամբ:

6. **Լեզվի բառային հիմնական կազմը կայուն է.** այս շերտի բառերը շատ ավելի «երկար են ապրում», քան ընդհանուր կազմինը: Հայոց լեզվի բառային հիմնական կազմը բառապաշարի միջուկն է՝ և դարերի ընթացքում ամրապնդվել է հայերենի բոլոր դրսևորումներում՝ գրաբար, միջին հայերեն, արևելահայերեն և արևմտահայերեն, բարբառներ: Մակայն դրանից չի հետևում, որ գրաբարից փոխանցված բառաշերտը իր մշտապես կայուն և ան-

¹ Տե՛ս <https://studopedia.org/8-226370.html>:

փոփոխ տեղն ունի հիմնական կազմում: Հիմնական շերտը՝ միջուկը, իհարկե, պահպանվում է, ինչպես՝ **հայր, մայր, տուն, հող, քար, ջուր, արև, հաց, լույս, տարի, ամիս, շաբաթ, ժամ** ևն, բայց մի շատ որոշակի շերտ նաև դուրս է մնում կամ կրում է իմաստային փոփոխություններ ևն, ինչպես վերը տեսանք: Լեզվի պատմական զարգացման ընթացքում հիմնական բառակազմը նաև համալրվում է: Եվ դա բնական գործընթաց է:

Բառային հիմնական կազմի բնութագրության կարևոր կողմերից մեկը նրա սահմանների, ավելի ստույգ՝ նրանում կատարվող փոփոխությունների հստակեցումն է: Ընդունված մոտեցմամբ, որը սովորաբար անուղղակիորեն մատուցվում է մասնագիտական գրականության մեջ, բառային հիմնական կազմի ենթաշերտեր կամ բաղադրիչներ են համարվում նաև այն բառերը, որոնք լեզվի պատմական զարգացման ընթացքում կրում են որոշակի տեղաշարժեր: Բնութագրվելով զգալի կայունությամբ՝ բառային հիմնական կազմը, այնուամենայնիվ, կրում է փոփոխություններ: Առավել կայուն է բառային կազմի այն հատվածը, որը կապվում է սկզբնատիպ բառապաշարի հետ, գալիս է հնից, անվանում է մեզ անմիջականորեն շրջապատող իրողություններ ու երևույթներ: Փոփոխական է այն ենթաշերտը, որը կապվում է հասարակական կյանքի տեղաշարժերի հետ:

Տվյալ ժամանակաշրջանի համար գործուն և կենսունակ բառաշերտը հնանում, դուրս է ընկնում կամ դառնում սակավ գործածական, և հակառակը. ժամանակի ընթացքում ձևավորվում, ստեղծվում են բառեր կամ բառաշերտեր, որոնք լեզվի զարգացման այս կամ այն հատվածում դառնում են կենսունակ ու գործուն: Տևական ժամանակի մեջ փոփոխություններն ակնառու են: Այսպես. հին հայերենում, գրաբարում կամ միջին հայերենում բառային հիմնական կազմի շատ միավորներ դուրս են ընկել կամ անցել ոչ գործուն բառաշերտի մեջ, ինչպես՝ **ազատանի, տասնասպետ, թագաժառանգ, պայլ, պանդուխտ; անագան, ակաղձուն, ազագուն, վաղվաղակի** ևն: Մոտ անցյալում (նկատի ունենք խորհրդային միության տարիները) բառային հիմնական կազմում գործառվող բառեր էին՝ **կոլտնտեսություն, սովետ, շրջկոմ, պիոներ, կոմերիտական, գյուղխորհուրդ, խորհրդային, հնգամյակ** ևն:

Նոր ժամանակներում (նկատի ունենք անկախության երեք տասնամյակները) հայերենի բառային հիմնական կազմը համալրվեց բազմաթիվ նոր բառերով, որոնք հարստացրին հայերենի բառային կազմի ակտիվ ենթաշերտը: Դրանց առաջացման աղբյուրները տարբեր են՝ ա) արդեն իսկ մեր բառապաշարում կիրառվող բառեր՝ (**վարկ, վարկառու, տոկոս, հեղափոխություն, իշխանափոխություն, հակահեղափոխություն, բանակ, զինվոր, զինակոչ, հրամանատար, զորամաս, ավտոմեքենա, քաղաքականություն, ներդրում, խոստում** ևն), բ) նորակազմություններ՝ **հրետակոծում, օգտատեր, համակարգիչ, տարածաշրջան, հանրահավաք, օդորակիչ**, գ) նախկինում գործածվող բառերի՝ նոր իմաստով կիրառություններ (իմաստային նորա-

բանություններ)՝ **մարզ, նախագահ, էջ, հավանում (լայք), խոցում, նախարար, պատուհան, քայլել, թիրախ, լում, մկնիկ, ոստիկան, դ)** փոխառյալ նորաբանություններ՝ **հիփոթեք, մոթել, հոլդինգ, ֆիթնես, կոլաժ, սերիալ, սելֆի, ռոուլինգ, շոու բիզնես, նոութբուք, կարանկե, պիցցա** ևն:

Այդ փոփոխություններն առավելապես պայմանավորված են մարդու հասարակական (տնտեսական, սոցիալական, քաղաքական, ռազմական ևն) գործունեության փոփոխություններով, ինչպես նաև բուն ազգային կյանքի նոր յուրահատկություններով:

Տեղաշարժերը երբեմն անխուսափելի են դառնում ժամանակի ավելի փոքր հատվածներում՝ հասարակական առավել ազդեցիկ և կտրուկ փոփոխություններով պայմանավորված: Եվ հաճախ այդ փոփոխությունները երկար կյանք չեն ունենում, ուստի առավել տրամաբանական է, կարծում ենք, այդքան ակտիվ տեղաշարժերի ենթարկվող բառաշերտերը չներառել բառային հիմնական կազմ: Հասարակական կյանքի փոփոխությունները կարճ ժամանակից կարող են դրանք դուրս մղել լեզվից կամ վերածվել քիչ գործածական բառամթերքի: Դրանք գրականության մեջ պարզապես կարող են դիտարկվել որպես ժամանակի գործուն բառապաշարի ենթաշերտեր: Այդպես է, օրինակ, վերջին տարիներին հայերեն գործուն շերտի մեջ «ներխուժած» բազմաթիվ բառերի պարագան՝ **դուխով, լայվ, դաս, վերթինգ, ծեփել, փռել, լայքել, պատժել, թիրախավորել, փողոց փակել, ֆեյք** ևն:

Ինչ վերաբերում է իմաստային հնաբանություններին (իմաստով հնացած բառեր՝ **բարեկամ, բանավոր, իմաստակ, պարապել** ևն) և մի շարք բառերի հոմանշային հնացած տարբերակներին (**ուստր, ունկ, անագան, ապաժամ, ազագուն, ակադձուն, շուրջանակի** ևն), ապա ակնհայտ է, որ դրանք կենսունակ են եղել լեզվի պատմական զարգացման որոշակի շրջափուլում (առավելապես գրաբարում), հետագայում դուրս են մղվել կենդանի լեզվից, անցել անգործածական կամ քիչ գործածական բառապաշար և որպես բառային հիմնական կազմի տարրեր կարող են ներառվել միայն տվյալ շրջափուլի բառային կազմում: Լեզվի բառային հիմնական կազմ ասելով պետք է նկատի ունենալ բառապաշարի այն շերտը, որը հիմնականում գործադրվել է գրական հայերենի զարգացման բոլոր շրջափուլերում և չի ընդգրկում այս կամ այն շրջափուլում հասարակական կյանքի զարգացմամբ ներառված հնարավոր բառապաշարը, որը արագ է փոփոխության ենթարկվում:

Լայն իմաստով՝ բառային հիմնական կազմը ներառում է նաև տվյալ շրջափուլում հավելված և գործածական մեծ ակտիվություն ունեցող բառերը: Դրանք իսկապես գրական լեզվի տվյալ շրջափուլի հիմնական բառակազմի անբաժանելի բաղադրիչ են: Այդպիսի ընդհանուր բառային կազմ են ունեցել և՛ գրաբարը, և՛ աշխարհաբարը կամ նոր գրական հայերենը: Վերջինիս համար, օրինակ, այդպիսի բառեր են՝ **սուրճ, սառնարան, հեռուստացույց, համակարգիչ, բջջային, վարկ, համացանց, բիզնես, բենզին, ավտոբուս,**

մեքենա, հեռախոս, ինստիտուտ, համայնք, թաղապետ, քաղաքապետ, վարչապետ, մարզ են: Ի վերջո, պայմանական են նաև լեզվի բառային հիմնական կազմի և լեզվի բառային կազմի սահմանները. ժամանակի ընթացքում փոխներթափանցումները անխուսափելի են:

Եվ վերջապես, ամբողջացնելու համար բառային հիմնական կազմի նկարագրությունը պետք է ընդգծել ևս մի կարևոր հանգամանք. բառապաշարի այդ շերտը որոշակի տարբերություններ է դրսևորում ոչ միայն նույն լեզվի զարգացման տարբեր փուլերում, այլև տարբեր լեզուներում: Խոսքը այս դեպքում առավելապես վերաբերում է, այսպես կոչված էկզոտիզմներին, որոնք բնորոշում են տվյալ ժողովրդի ազգային նկարագիրը՝ կյանքը, կենցաղը, հոգեբանությունը, և որոնք, որպես կանոն, չեն ունենում համարժեքներ այլ լեզուներում¹: **Օրինակ՝ բառային հիմնական կազմի միավորներ են՝ հայերենում՝ լավաշ, տոլմա, դուդուկ, քոչարի, դրամ, վրացերենում՝ սացիվի, խալի** (կերակրատեսակներ), **բաղդադուրի, կինտաուրի** (պարատեսակներ), **դիպլիպտոն** (երաժշտական գործիք), **լարի** (դրամական միավոր), ռուսերենում՝ **судак, щука, леш** (ձկնատեսակներ); **береза** (ծառատեսակ), **блины** (կերակրատեսակ), **чистушка, бариня, калинка** (պարատեսակներ), ճապոներենում՝ **գեյշա** (պարուհի), **իեն** (դրամական միավոր) են: Արաբերենում, օրինակ, **խմել** գաղափարի համար կա 153 բառ, գլխի պատովածքի համար՝ 14 բառ, էսկիմոսերենում՝ 4 բառ ձյուն գաղափարի համար՝ նստած ձյուն՝ **aput**, վերևից թափվող ձյուն՝ **qana**, քամիների հոսանքով քշված ձյուն՝ **pigsirpoq**, ձնախառն բուրբ՝ **qimuqsuq**: Հասկանալի է, որ այս բառերի մի զգալի մասը նշված լեզուներում բառային հիմնական կազմի՝ բառաֆոնդի միավոր է²: Կարելի է հավելել հատուկ անուններ՝ տեղանուններ, անձնանուններ, աշխարհագրական անուններ, դիմելաձևեր, հասարակական-քաղաքական իրակություններ են, են:

Այս բոլորը միասին ձևավորում են տվյալ լեզվի **բառային հիմնական կազմը** (բառային հիմնական ֆոնդը):

**Юрий Аветисян – Проблема стратификационной классификации лексики:
основной словарный состав армянского языка**

Разногласия, имеющиеся в специальной литературе относительно основного лексического фонда армянского языка, создают сложности для научного описания его характеристики и границ. Согласно принятому подходу, иногда несправедливо расширяются границы этого слоя. По нашему убеждению, основной лексический фонд армянского языка характеризуется весьма определенными характеристиками: это в основном исконно армянские слова или древние заимствования и образованные с помощью них

¹ Տե՛ս **Քամայան Ա.**, Փոխառություն, օտարաբանություն և էկզոտիզմ // «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն» (այսուհետև՝ «ԲԵՀ»), Երևան, 2015, թիվ 2, էջ 72-73:

² Տե՛ս **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, 2005, էջ 123:

слова; они сформировались в основном в древнеармянском языке и грабаре; в течение исторического развития языка подверглись незначительным изменениям; в словообразовательном отношении значительную часть составляют либо простые, либо корневые слова; в плане общественной коммуникации они жизненно необходимы, являются наиболее употребительными; выделяются своим лексическим значением; с разными звуковыми чередованиями и различной артикуляцией сохранились во всех вариантах армянского языка. Активные лексические изменения, обусловленные развитием общественной жизни или другими факторами, могут быть включены в основной лексический фонд условно и с определёнными оговорками. У основного лексического фонда языка и общего словарного состава языка нет четких границ.

**Yuri Avetisyan – *The Problem of Classification of Vocabulary Layers:
the Main Word Stock of the Armenian Language***

Ambiguity of opinions prevailing in scientific studies concerning the main word stock of the Armenian language makes it difficult to describe the scope of its characteristics and coverage. Traditionally, the scope of word stock is sometimes unnecessarily extended. We are convinced that the main word stock of the Armenian language is characterized by very certain features: etymologically, the word stock mainly includes native Armenian words or old borrowings and their compoundings, it developed in Old Armenian and Grabar and has undergone few changes during the historical development of the language; morphologically, it mainly consists of simple words or word stems; in terms of communicative function it is vital, widely used, and has polysemic characteristics; with some phonetic and pronunciation changes it has been preserved in all manifestations of the Armenian language. Due to changes in public life or other factors, active vocabulary changes may be included in the main word stock conditionally and within certain scopes. The main word stock of the language and the general word stock do not have strictly defined boundaries.

Ներկայացվել է 13.02.2020

Գրախոսվել է 20.03.2020

Ընդունվել է տպագրության 30.06.2020

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՊԱՇՓԱԿԱՆՆԵՐԻ ՀՆՉԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ
(համաժամանակյա քննություն)

Բանալի բառեր – Հ. Աճառյան, Հ. Ֆոգտ, հպաշփական բաղաձայններ, հին հայերեն, շնչեղ ձայնեղ, հնչույթային կարգ, արդի բարբառներ

Հին հայերենում տարբերակվում է հպաշփականների երեք հնչույթային կարգ. ձայնեղ՝ *ձ* [j], *ջ* [jʃ], ոչ շնչեղ խուլ՝ *ծ* [c], *ճ* [č] և շնչեղ խուլ՝ *ց* [cʰ], *չ* [čʰ]: Որ գրաբարում դրանք ունեցել են հնչույթային արժեք, ակնհայտ է դառնում գործառական հնչույթաբանության երկու ընթացակարգերի՝ տարբերակիչ հատկանիշների և երկանդամ (բինար) հակադրությունների սկզբունքների կիրառումով: Ըստ այդմ՝ տարբերակվում են հակադրությունների հետևյալ տեսակները. 1) *ձայնեղ* ~ *ոչ շնչեղ խուլ* (հմմտ. *ձագ*, -ու ~ *ծագ*, -ի «ծայր», *ձաղկել* «ծեծել, խարազանել» ~ *ձաղկել* «բուսնել, բողբոջել», *ձառ* «ծուռ, տգեղ» ~ *ծառ*, -ոյ, *ձոյլ* «ձուլված, ձուլածո» ~ *ձոյլ* «անաշխատասեր», *ձիր*, - ձրի «պարզև, նվեր» ~ *ծիր*, - *ծրոյ* «շրջագիծ, շրջան» (*ձ~ծ*), - *ձար* «մազ» ~ *ձար* «հնարք, միջոց» (*ձ~ձ*), - *ջիղ*, -ի «նյարդ, ջիլ» ~ *ծիղ*, -ոյ կամ -ի «ծիլ, ցողուն», *ջին*, -ի «ծեծի գավազան» ~ *ծին*, -ի «ծնունդ, ծագում», *ջախել* «ջախջախել, փշրել» ~ *ծախել* «ծախսել, վճարել», *ջուլ*, -ոյ «ընծիւղ, ծիլ» ~ *ծուլ*, -ու (*ջ~ծ*), - *ջահ*, -ի «վառած լույս՝ պայծառ բոցով»¹ ~ *ձահ*, -ի «պատշաճ, տեղին», *ջոխ* «գավազան, ձեռքի փայտ» ~ *ձոխ*, -ի «1. հարուստ, 2. երևելի» (*ջ~ձ*), - *ձետ*, -ոյ «կենդանիների մազոտ պոչ» ~ *ձետ*, -ի «սերունդ, զարմ» (*ձ~ձ*),). 2) *ձայնեղ* ~ *շնչեղ խուլ* (հմմտ. *ջրել* «ջնջել, ոչնչացնել» ~ *ցրել* «ցրիվ տալ, տարածել» (*ջ~ց*), *ձող*, -ոյ «երկար՝ ուղիղ ու բարակ փայտ» ~ *ցող* «ցորենի ցողուն»², *ձայն*, -ի ~ *ցայն* «այնքան, այնչափ» (*ձ~ց*), *ջախել* «ցաքանել» ~ *ջախել*, - *ցան*, -ի «ցանելը, ցանք» ~ *ջան*, -ի «ճիգ, ջանք» (*ջ~ց*)). 3) *շնչեղ խուլ* ~ *ոչ շնչեղ խուլ* (հմմտ. *չար*, -ի «ոչ բարի, վատ, հոռի» ~ *ձար* «հնարք, միջոց» (*չ~ձ*), *չափ*, -ոյ «չափման միավոր» ~ *ծափ*, -ի «ծափահարելը» (*չ~ծ*), *ցիր* (սեռ. ցրի) «ցրված, տարածված» ~ *ծիր* (ծրոյ), *ցին*, ցնոյ «ձուռակների ընտանիքին պատկանող զիշատիչ թռչուն» ~ *ծին* (*ջ~ծ*): Համեմատաբար փոքրաթիվ են *ձայնեղ~ձայնեղ* հակադրությունները (հմմտ. *ձախ*, -ու «ահյակ» ~ *ջախ*-(ել), *ձրեւ*, -եցի «ձրի տալ, բաշխել» ~ *ջրեւ* «ջուր տալ», *ձան*-(ծաղ) «ծանծաղ» ~ *ջան*, -ի «ջանք, աշխատանք», *ձենն*, -ոին

¹ Ըստ «Առձեռն բարարան հայկազնեան լեզուի», Անթիլիաս, 1988, էջ 705:

² Նույն տեղում, էջ 800:

«ձեռք» ~ ջեռում, -ոյ «տաքանալ», ձեր, -ոյ «ձերը» ~ ջեր, -ոյ «ջերմություն» (ձ~ջ): Գրեթե չի հանդիպում *ոչ շնչեղ խուլ* ~ *ոչ շնչեղ խուլ* տիպի հնչույթային հակադրություն. այդպիսի հնարավոր հակադրություններն էլ այսպես կոչված «մաքուր» տեսակի չեն (հմմտ. *չոր*, -ոյ «խոնավությունից զուրկ» ~ *ցորժամ* «մինչև երբ»)¹: Ընդհակառակը, զգալիորեն շատ են հնչույթային զրոյի հետ հպաշփականների հակադրությունները (հմմտ. *ցայգ*, -ոյ «գիշեր, մինչև լուսանալը» ~ *այգ*, -ու «վաղ առավոտ, լուսաբաց», *ցնորեմ*, -եցի «խելքահան անել, մոլորեցնել» ~ *նորեմ*, -եցի «նորոգել, նորացնել» (*ց~թ*), *ձառ* ~ *առ* (նախդիրը) (*ձ~թ*), *ջայլ*, -ի «մեռելի վրա լացող կանանց խումբ» ~ *այլ*, -ոյ «ուրիշ» (*ջ~թ*), *ծամ*, -ոյ «երկար մազեր» ~ *ամ*, -ի «տարի», *ծայր*, -ի «եզր, վերջ» ~ *այր* (սեռ. *ամն*) «տղամարդ» (*ծ~թ*) են):

Հպաշփականներին բնորոշ է հնչյունական բարդ կազմությունը. նրանք հատկանշվում են հպականների համար բնութագրական պայթյունով արտաբերական *գրոհի* (էքսկուրս²) ժամանակ և շփումով՝ *նահանջի* (ռեկուրս³) ժամանակ, բայց նրանց երկբնույթ արտաբերությունը հնչույթատարբերակիչ արժեք չունի: Ըստ արդի գրական արևելահայերենի հպաշփականների փորձառական ուսումնասիրությունների արդյունքների, այդ հնչյունների կազմում տարբերակվում են «հպական+շփական» հնչառակներ (հմմտ. ձ[j]=դ[d]+զ[z], ծ[c]=տ[t]+ս[s], ց[c']=թ[t']+ս[s], ջ[j]=դ[d]+ժ[ձ], ճ[ճ]=տ[t]+ շ[ճ], չ[ճ']=թ[t']+շ[ճ]), սակայն գործառական առումով նրանք համարժեք են պարզ հնչյունների, ինչպիսին են հպականներն ու շփականներն առանձնաբար⁴: Հպաշփականների այդ հատկության մասին նշում է դեռևս Հ. Հյուբշմանը, ըստ ամենայնի՝ նկատի ունենալով նաև Ջ. Ջիվերսի և Հ. Աճառյանի փորձառական ուսումնասիրության արդյունքները 19-րդ դարավերջին (հմմտ. «... արտաբերելիս [իմա՝ «աֆրիկատները» –Վ. Պ.] երկու տարրը միմյանց հետ հնարավորինս սերտ կապված են, առանձնապես չի կարելի դրանք, ինչպես այդ գերմաներենում հաճախ պատահում է, վանկերի բաժանել»⁵): Մյուս կողմից, նշված հնչառակների առկայությունը հպաշփականների կազմում դեռևս չի նշանակում, որ, օր., *դզ* (dz) հնչյունակապակցությունը հնչաշղթայում համարժեք է *ձ* (j) հնչույթի, իսկ *տս* (ts) հնչյունակապակցությունը՝ *ծ* (c) հնչույթի: Այսպես. նկատի առնելով (*մի՛ յ կրծեր* («կրծել» բայի արգել. հրամ.) ~

¹ Այդ բնորոշումով մենք նկատի ունենք, օր., ծագ-ձագ տեսակի հակադրությունները, երբ համեմատվող ձևերը հնչույթային կազմով համարժեք են, այսինքն՝ ամբողջությամբ ծածկում են մեկը մյուսին:

² Լատիներենի *excursio*-ից՝ «դուրս վազելը», «արտագրոհ»:

³ Լատիներենի *recursus*-ից՝ «հակառակ շարժում», «վերադարձ»:

⁴ Տե՛ս *У Ачатырян А.*, Об аффрикатах армянского языка // «Известия АН АрмССР» (серия общественных наук), 1962, № 11, с. 45-46, **Խաչատրյան Ա. Հ.**, Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, Երևան, 1988, էջ 93-99:

⁵ **Հյուբշման Հ.**, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2004, էջ 60:

կրտսեր «տարիքով փոքր» բառերի կազմում մի կողմից՝ *ծ* հնչույթի, իսկ մյուս կողմից՝ *տս* հնչյունական (/հնչույթային) հաջորդականության ձևավորած տարբերակիչ հակադրությունը, կարելի է ասել, որ այդ հակադրության մեջ *տս*-ն համարժեք է *ծ*-ի, որովհետև *ծ*-ն հակադրվում է *տս* հնչյունների ամբողջությանը, այլ ոչ թե՝ նրանցից որևէ մեկին առանձին վերցրած: Բայց դա դեռ չի նշանակում, թե հին հայերենի *տս* հաջորդականությունը մեկ հնչույթ է, որովհետև, օր., *կրտսեր* բառը վանկատելիս՝ նրա բաղադրիչները հայտնվում են տարբեր վանկերում (հմմտ. *կ(ը)րտ-սեր*): Իսկ բաղադրյալ կազմությամբ հնչույթի և համապատասխան հնչյունական/(հնչույթային) հաջորդականության տարբերակման չափանիշներից մեկը վանկատման ժամանակ բարդ հնչույթի հնչյունական բաղադրիչների՝ միևնույն վանկում գտնվելու հատկությունն է¹: Հետևաբար, չնայած *ծ-տս* հնարավոր հնչույթաբանական հակադրությանը, հին հայերենի *տ*-ն և *ս*-ն առանձին հնչույթներ են, այլ ոչ թե՝ միևնույն հնչույթի հնչյունական բաղադրիչներ²: Երբեմն այսպես կոչված բարդ հնչույթը կարող է հակադրություն ստեղծել այլպես իր հնչյունական կազմի «բաղադրիչներից» մեկի հետ, այսինքն՝ նրանց միջև կարող են ձևավորվել գործառական հարաբերություններ (հմմտ. *ծածանիմ* «ալիքաձև շարժվել, ծփալ» ~ *տատանիմ* «տարուբերել, երերել» ~ *սասանիմ* «ցնցել, թափահարել»³): Նկատի ունենալով, որ գրական արևելահայերենը, հայերենագիտության մեջ ընդունված պատկերացման համաձայն, ընդհանուր առմամբ հարազատ է մնացել հին հայերենի հնչույթային /(հնչյունական) համակարգի, մասնավորապես՝ բաղաձայնների հնչարտաբերությանը⁴, ուրեմն կարելի է նույնը ասել նաև հին հայերենի հպաշփականների արտաբերական հատկությունների մասին:

Հպաշփականների երեք հնչույթային կարգերից խնդրահարույց է եղել

¹ Sté u Трубешкой Н. С., Основы фонологии, Москва, 2000, с. 61:

² «Հպաշփական հնչույթ-հնչույթակապակցություն» հակադրությունը սովորական երևույթ է նաև այլ լեզուներում, օր.՝ արդի ռուսերենում. հմմտ. площадь «հրապարակ» ~ плоскость «հարթություն», упрощение «պարզեցում» ~ простой «պարզ, հասարակ» ևն, որոնցում առկա են ш ~ск, ш ~ст հնչույթաբանական հակադրությունները:

³ Ա. Խաչատրյանը վերոհիշյալ օրինակներում տեսնում է հակադրության չեզոքացում (տե՛ս Туманян Э. Г., Древнеармянский язык, Москва, 1971, с. 61), մեր կարծիքով, սակայն, նշված բառերը, հոմանիշ լինելով հանդերձ, նույնիմաստ չեն, հետևաբար առկա է հնչույթաբանական հակադրություն: Իսկ, օր., չուտո և թշվառ բառերի դեպքում իսկապես հակադրություն չկա, քանզի չ-ն և թշ-ն բաղադրում են միևնույն բառային իմաստը՝ «ողորմելի, դժբախտ, խեղճ» (տե՛ս նույն տեղում):

⁴ Հմմտ. «... հին հայերենը արտասանվել է նույն ձևով, ինչպես այսօրվա արևելահայերենը» (Հյուբշման Հ., նշվ. աշխ., էջ 68): - «Միջին գրական հայերենը և արևմտահայ գրական լեզուն մեծապես տարբերվում են արևելահայ գրական լեզվից գրաբարից ունեցած իրենց տարբերությունների բաշխմամբ. Արևելահայ գրական լեզուն առաջին երկուսից ավելի մոտ է գրաբարին հնչյունապես և ավելի հեռու քերականապես» (շեղտո. իմն է՝ Վ. Պ.) // **Ջահուկյան Գ. Բ.**, Միջին հայերենը որպես լեզվական որակ // «ԲԵՀ», 1993, թիվ 1, էջ 17:

ձայնեղների հնչույթաբանական բնութագրի հարցը: Որովհետև հին հայերենի հպաշփականների նկարագրական (համաժամանակյա) քննությունը, որպես կանոն, կատարվել է հպականների հետ ընդհանուր համատեքստում (իր «Ակնարկներ ...»-ում Ա. Մեյեն հպականներն ու հպաշփականները քննում է հպականների ընդհանուր կարգի տակ¹), ուստի այդ առումով ևս հպականների մասին ասվածը հավասարապես տարածվել է նաև հպաշփականների վրա: Այն է. 1) ձայնեղ հպաշփականներն առհասարակ զուրկ էին շնչեղության հատկանիշից², 2) ձայնեղ հպաշփականների շնչեղությունը հնչույթաբանական հատկանիշ էր³, 3) ձայնեղ հպաշփականների շնչեղությունն ուներ միայն հնչյունաբանական արժեք⁴:

Հին հայերենի ձայնեղ հպականներին շնչեղության հատկանիշ վերագրելու համար հիմք է ընդունվում, մասնավորապես, երկու հանգամանք. ա) շնչեղությունն ընդհանուրհնդեվրոպական լեզվի հպական բաղաձայնների բնութագրական գծերից էր, ընդ որում՝ ինչպես ձայնեղների, այնպես էլ խուլերի, իսկ հայերենի հպականները սերել են հ.-ե. հպականներից, բ) իբրև

¹ Sté u Meillet A., Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, p. 25-38:

² Հին հայերենի հպաշփականների հնչարտաբերական հատկությունների մասին Հ. Հյուբշմանը ուղղակի կարծիք չի հայտնել, բայց վերապահումով նրան կարելի է այդպիսի տեսակետ վերագրել՝ նկատի ունենալով, որ այդօրինակ հետևությունը բխում է հին հայերենի հպականների հնչարտաբերական բնույթի մասին նրա պատկերացումներից, այն է՝ հին հայերենի հպականները հ.-ե. շնչեղ ձայնեղ հպականների տեղաշարժի արդյունք են (հմմտ. *b^h>բ, *g^h>գ, *d^h>դ): Դա նշանակում է, որ, ըստ Հ. Հյուբշմանի՝ հին հայերենի հպականները առհասարակ զուրկ էին շնչեղության հատկանիշից: Բսկ հպականներն ու հպաշփականները, ինչպես ասվեց, դիտարկվել են նույն մոտեցումով (հմմտ. **Հյուբշման Հ.**, Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շարքում // Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2004, էջ 24):

³ Sté u Պեդեքսըն Հ., Հայերեն եւ դրացի լեզուները, Վիեննա, 1907, էջ 8, Meillet A., Les dialects indo-européens, Paris, 1950, p. 12, Ղարիբյան Ա. Ս., Հայ բարբառագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները Սովետական Հայաստանում // «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ «ՊԲՀ»), 1958, թիվ 1, էջ 18-39, նույնի՝ Հայ բարբառների ծագման հարցի շուրջը // «ՊԲՀ», 1958, թիվ 3, էջ 240-266, Гарибян А. С., Новая группа диалектов армянского языка // «Вопросы языкознания» («այսուհետև՝ «ВЯ»), 1958, № 5, с. 95-101, նույնի՝ Об армянском консонантизме // «ВЯ», 1959, № 5, с. 81-90, նույնի՝ Еще раз об армянском консонантизме // «ВЯ», 1962, № 2, с. 18-23, Allen W. S., Notes on the Phonetics of an Eastern Armenian Speaker // Transactions of the Philological Society of America, 1950, p. 180-206, Фогт Г., Заметки по армянскому консонантизму // «ВЯ», 1961, № 3, с. 41, Бенвенист Э., Проблемы армянского консонантизма // «ВЯ», 1961, № 3, с. 38, Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի (այսուհետև՝ ԼՔՀԼ), հ. 6, Երևան, 1971, էջ 554-555, նույնի՝ Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 598, Սուրադյան Հ. Գ., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, Հնչյունաբանություն, Երևան., 1982, էջ 296-297:

⁴ Sté u Ջահուկյան Գ. Բ., Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը // «ՊԲՀ», 1959, թիվ 2, էջ 282-319, Джаукян Г. Б., К вопросу о происхождении консонантизма армянских диалектов // «ВЯ», 1960, № 6, с. 39-49, նույնի՝ Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967, с. 76: Հմմտ. նաև՝ Ջահուկյան Գ. Բ., Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 263, Աղայան Է. Բ., Գրաբարի քերականություն, Երևան, 1964, էջ 155:

հնչյունաբանական հատկանիշ՝ շնչեղությունը բնորոշ է նաև արդի հայերենի մի շարք բարբառների ձայնեղ հպականներին (Արարատյան, Մշո, Նոր Ջուղայի, Ակնի, Համշենի, Մեքաստիայի, Շապին-Գարահիսարի, Ջեյթունի, Նոր Նախիջևանի ևն)¹, իսկ արդի հայերենի բարբառները կամ առնվազն դրանց մեծ մասը, ընդունված պատկերացման համաձայն, ետգրաբարյան շրջանի տարածական զարգացումներն են:

Հին հայերենի ձայնեղ հպաշփականներին նույնպես, ինչպես ձայնեղ հպականներին, վերագրվել է շնչեղության հնչյութաբանական հատկանիշ: Եվ դա տրամաբանական է, քանզի, անկախ ծագումնաբանությունից և պատմական զարգացումից, հին հայերենի հպականները և հպաշփականները վաղուց կայունացած բաղաձայնական համակարգի դրսևորումներն էին: Ընդ որում, այդ տեսակետը պաշտպանողների կարծիքով շնչեղությունը՝ որպես հնչյութաբանական հատկանիշ, բնորոշ էր ինչպես նախապատմական, այնպես էլ գրաբարյան հայերենին (հմմտ. «... նախապատմական շրջանում, սկզբնապես, հայերենը ունեցել է բաղաձայնական միասնական մի համակարգ, որի մեջ շնչեղ ձայնեղների արտասանությունը հայերենի համար եղել է որպես հնդեվրոպական միասնության շրջանից ժառանգած հնչարտաբերական ունակություն: Այդ համակարգում, ինչպես նշում է Ֆոգտը, էական [իմա՝ հնչյութաբանական՝ Վ. Պ.] դեր էր կատարում շնչեղության և ոչ շնչեղության հակադրությունը»²): Ակներն է, որ հին հայերենի հպականների և հպաշփականների վերաբերյալ Հ. Ֆոգտի վերլուծությունը Հ. Մուրադյանի համար ունեցել է կողմնորոշիչ նշանակություն (հմմտ. «... հնդեվրոպական շնչեղ ձայնեղ [bh]-ը անփոփոխ է մնացել պատմական Հայաստանի կենտրոնական բարբառներում և, հետևաբար, հայկական այբուբենի տառերը, որոնք տառադարձվում են որպես [b], [d], [g], [j], [j̄], պիտի տառադարձել որպես [bh], [dh], [gh], [jh], [j̄h]»³): Հասականալի է, որ ինչպես Հ. Ֆոգտի, այնպես էլ Հ. Մուրադյանի (ինչու ոչ, նաև ուրիշների՝ Հ. Աճառյան, Է. Բենվենիստ ևն) այդօրինակ դատողությունների հիմքում հ.-ե. հպականների քառակարգ համակարգն է՝ շնչեղ և ոչ շնչեղ ձայնեղների, շնչեղ և ոչ շնչեղ խուլերի հնչյութաբանական հակադրությամբ՝ B^h [b^h] ~ B [b], P^h [p^h] ~ P [p]: Ինչպես նշել ենք մեր հրապարակումներից մեկում, դեռևս նախորդ դարի կեսերից սկսած հ.-ե. հպականների քառակարգ հայեցակարգը (B^h ~ B ~ P^h ~ P) քննադատել են հնդեվրոպաբաններից շատերը՝ այն համարելով չարդարացված ոչ միայն ծագումնաբանորեն, այլև՝ տիպաբանորեն, և փոխարինել են եռակարգ հայեցակարգով՝ առանց շնչեղ ձայնեղների (B^h) կամ առանց պարզ

¹ Տե՛ս Պետրոսյան Վ., Հին հայերենի ձայնեղ հպականները (համաժամանակյա հայեցակերպ) // «ԲԵՆ. Հայագիտություն», 2019, թիվ 1, էջ 40-51:

² Մուրադյան Հ. Դ., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, Հնչյունաբանություն, Երևան, 1982, էջ 296:

³ Փոգտ Դ., նշվ. աշխ., էջ 41:

ձայնեղների (B), երբեմն էլ՝ առանց պարզ խուլերի (P)¹: Իսկ, օր., Թ. Գամկրելիձեն, Վյաչ. Իվանովը, Պ. Հոպերը, Ֆ. Կորտլանդը և ուրիշներ պարզ ձայնեղների հնչույթային կարգը փոխարինել են խուլ/ձայնեղ ձայնածերպայինների/կատկայնացածների/ (глоттализированные) կարգով՝ P'/B', T'/D', K'/G'²: Իսկ մեր կարծիքով, նախահնդեվրոպականում կարող է ընդունելի լինել հպականների միայն երկու հնչույթային կարգերի վերականգնումը՝ շնչեղ և ոչ շնչեղ ենթահնչույթային/(հնչյունական) տարբերակներով (հմմտ. B^h] կամ [b^h/b], P^h] կամ [p^h/p])³:

Հին հայերենի հպաշփականներին շնչեղության հնչույթաբանական հատկանիշ վերագրողների հիմնական փաստարկներից մեկը արդի հայերենի վերոհիշյալ բարբառներում հպաշփականների շնչեղ ձայնեղ հնչույթային կարգի տարբերակումն է (հմմտ. *ձոր>ձ'որ*, *ձաւար>ձ'ավար*, *ձ'էնձ'ընալ* («ձայն»-ի կրկնությամբ) «բարձրաձայնել», *ջրաղաց>ջ'աղաց*, *ջուր>ջ'ուր*, *ջ'ըրջ'ընել* («ջուր»-ի կրկնությամբ) «առատ ջուր ցանել» (Ար.)⁴, *ձուկն>ձ'ուկն*, *ձգել>գ'ձ'ել*, *բարձ>բ'արձ'*, *ջուր>ջ'ուր*, *ջաղացք>ջ'աղաց*, *ջորի>ջ'որի* (Ջղ.)⁵, *ձագ>ձ'ոգ'*, *ձէթ>ձ'էթ*, *ջուր>ջ'որ*, *մրջին>մոռջ'ում* (Ջթ.), *ձագ>ձ'ոգ'*, *ձմենն>ձ'մեր*, *ջրի>ջ'եր*, *առջել>արջ'ել* (ՀՃ.)⁶, *ձայն>ձ'էն*, *ձմենն>ձ'մեր*, *ձուկն>ձ'ուկ*, *ջուր>ջ'ուր*, *ջարդել>ջ'այթուշ* (Հմշ.)⁷, իրականում, սակայն, նշված բարբառների ձայնեղ հպաշփականների շնչեղությունը հնչյունաբանական հատկանիշ է, բայց ոչ՝ հնչույթաբանական: Այդ մասին է վկայում այն իրողությունը, որ վերոհիշյալ բարբառներում չկան միևնույն հպաշփականի ոչ շնչեղ և շնչեղ գործառական (իմս՝ հնչույթային արժեքով) հակադրություններ: Այսինքն՝ չկան, օրինակ՝ *գձել ~ գ'ձ'ել* (Ջղ.), *ձուկ ~ ձ'ուկ* (Հմշ.), *ջոր ~ ջ'որ* (Ջթ.) տիպի հակադրություններ՝ որպես տարբեր իմաստներով բառային միավորներ: Հետևաբար, հպաշփականների ոչ շնչեղ և շնչեղ արտաբերությունները այդ բարբառներում միևնույն հնչույթի կիրառական տարբե-

¹ Տե՛ս **Պետրոսյան Վ.**, Հպական բաղաձայնների հնդեվրոպական համակարգը // «ՎԷՄ», 2019, թիվ 2, էջ 107-136:

² Տե՛ս **Гамкредидзе Т. В., Иванов Вяч. Вс.**, Индоевропейский язык и индоевропейцы, т. I, Тбилиси, 1984, с. 5-17, **Хоппер П. Дж.**, Типология праиндоевропейского набора сегментов // Новое в зарубежной лингвистике, Москва, 1988, с. 169, **Кортланд Ф.**, Праиндоевропейские глоттализированные смычные // «ВЯ», 1985, № 4, с. 52:

³ Տե՛ս **Պետրոսյան Վ.**, նշվ. աշխ.:

⁴ Տե՛ս **Մարկոսյան Ռ.**, Արարատյան բարբառ, Երևան, 1989, էջ 55:

Գրիգոր Գրիգորյանը պաշտպանում է Թ. Թորամանյանին կոթողի հեթանոսական ծագման հարցում և կարծում, որ Աբրահամի զոհաբերության տեսարանի առկայությունը դեռևս հիմք չէ հուշարձանը քրիստոնեական համարելու համար: Նա մի շարք փաստարկների հիմամբ հայտնում է այն ուշագրավ տեսակետը, որ հրեաների նախահայր Աբրահամի պատմությունը հայտնի է և տարածված է եղել հեթանոսական Հայաստանում՝ նախ հրեական ծագում ունեցող հզոր Բագրատունիների, ինչպես նաև Տիգրան Մեծի (Ք. ա. 95-55) կողմից Հայաստան բերված մեծաթիվ հրեա գերիների շնորհիվ: Ապա Գր. Գրիգորյանը կովան է դարձնում Մովսես Խորենացու այն վկայությունը, որ ըստ Սուրբ Գրքի՝ Աբրահամ նահապետից առաջ է եկել պարթևների ցեղը, որի ներկայացուցիչ Վաղարշակը (Ք. ա. 11 դ.), դառնալով Հայոց թագավոր և Արմավիրում կառուցելով մեհյան, արձաններ է կանգնեցրել արեգակի, լուսնի և իր նախնիների (պարզ է նաև՝ Աբրահամի ու Իսահակի համար), որոնց պաշտամունքը փաստորեն մտցրել է հայկական պանթեոն²: Այո՛, Աբրահամն ու Իսահակը հնարավոր է պաշտված լինեն հրեական միջավայրում, Հայոց պարթևական արքունիքում, Բագ-

¹ Գարեգին վրդ. Յովսեփեան, Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան, պրակ Գ., Նիւ Եորք, 1944, էջ 112-115:

² Տե՛ս Գրիգորյան Գր., Հայաստանի վաղ միջնադարյան քառանիստ կոթողները, Երևան, 2012, էջ 87:

րատունիների վաղ ժառանգական հայրենիք Մպեր գավառում, որը գտնվում էր Արևմտյան Հայաստանում, բայց ոչ Հայկ նահապետի անմիջական սերունդներին պատկանող տիրույթներում, այդ թվում նաև Գառնահովտում:

Կոթողի երկրորդ նիստին, ըստ Բ. Առաքելյանի՝ «ներքևում քանդակված է նույնալիսի ականթատերն կենտրոնական փնջով, քիչ վերևում դարձյալ ականթատերններ փոքր ինչ այլ կերպավորումով, կենտրոնում ցողուն, վրան բացված ծաղիկը...: Վերևում կանգնած է մի ֆիգուրա en face, որից պահ-



Նկ. 2. Կոթողի երկրորդ նիստը

պանված է գոտուց ներքևի մասը, հագին երկարաճիտք կոշիկներ, գոգավոր փեշերով գոտեպինդ զգեստ և խոզագլուխ ֆիգուրաներին հատուկ վերարկու, աջ փեշը ծածկում է ֆիգուրայի կողքը, երևում է վերարկուի կեղծ թևը»¹: Նա կարծես ականարկում է Տրդատ Մեծին, երբ նա խոզագլուխ դարձավ Հռիփսիմյաց կույսերի նախճիրից հետո: Ուրեմն այդ դեպքում արքայից վեր պետք է պատկերված լիներ Գրիգոր Լուսավորիչը՝ լուսապսակով և Մուրբ գիրքը ձեռքին, ինչպես Թալինի վաղմիջնադարյան կոթողի վրա: Սակայն, կարծում ենք, ավելի ճիշտ է Գ. Հովսեփյանը, որը հավանական է համարում, որ պատկերվածը կարող է լինել ննջեցյալը²: Այս տեսակետին համամիտ է նաև Գր. Գրիգորյանը, որը ննջեցյալի ոտքերի ներքևում պատկերված բույսը համարում է մահվան ու վերակենդանացման գաղափարի խորհրդանիշ, սակայն եզրահանգում է, որ երկրորդ նիստի հորինվածքը ևս հեթանոսական է³:

Ննջեցյալի թերի պատկերի հագուստները վկայում են, որ նա եղել է բարձրաշխարհիկ անձ: Վարդան Հացունու պարզաբանմամբ՝ հայ իշխանների պատմուճանները ձգվում էին մինչև ծնկները՝ «ի բաց առեալ անոնք՝ որ թագաւորական արտօնութեամբ կը կրէին զպատմուճանն մեծ մինչև սրունից կէտը»⁴: Իշխանների զգեստի կարևորագույն բաղադրիչ էր համարվում գոտին, և «բոլոր նախարարք իրենց մէջքին կը պահէին զայն միշտ»⁵:

Անտարակույս, ննջեցյալը Կամսարական տոհմի ներկայացուցիչ է, քանի որ նրա ավատական տիրույթներում է գտնվել Գառնահովիտ գյուղը: Իսկ ո՞վ կարող է պատկերված լինել: Այդ հարցի պատասխանը հուշում է առաջին նիստի խմբապատկերի՝ Աբրահամի զոհաբերության պատմության

¹ Առաքելյան Բ., նշվ. աշխ., էջ 49:

² Տե՛ս Հովսեփյան Գ., նշվ. աշխ., էջ 116:

³ Տե՛ս Գրիգորյան Գր., նշվ. աշխ., էջ 84-85:

⁴ Հացունի Վ., Պատմութիւն հին հայ տարագին, Վենետիկ, 1923, էջ 117:

⁵ Նույն տեղում:

անկայությունը կոթողի վրա: Թեման պատահական չի ընտրված. ննջեցյալը, որը, դատելով հագուստներից, հասուն մարդ է, ինչ-որ ընդհանուր եզրեր ունի Աբրահամի ու Իսահակի հետ: Ջոհաբերվող մանուկ Իսահակը փրկվում է Աստծո կամքով: Արշակ Բ-ի կողմից բնաջնջվող Կամսարական տոհմից փրկվում է միայն Սպանդարատը¹: Ըստ Փավստոս Բուզանդի՝ Սպանդարատը փոքրիկ մանուկ է, որին փախցնում-փրկում է Հայոց սպարապետ Վասակ Մամիկոնյանը (345-368)²: Մովսես Խորենացին Սպանդարատին համարում է չափահաս, ավելին՝ ամուսնացած, կինը՝ Արշանու(յ)շը, Արշակունյաց տոհմից էր, նրանք ունեին երկու որդի, և իր հորեղբայր Ներսեհ Ա-ից դժգոհ՝ նա հեռացել ու բնակվում էր կողակցի ժառանգական կալվածում՝ Տարոնի և Հաշտյանքի կողմերում, այդ իսկ պատճառով հեռու լինելով՝ փրկվեց կոտորածից³:

Հայր Սահակ Կոզյանն ավելի ընդունելի է համարում Փավստոս Բուզանդի հաղորդած տեղեկությունը⁴, հավանաբար այն պատճառով, որ նա ժամանակագրական առումով ավելի մոտ է ողբերգական իրադարձություններին, քան պատմահայրը: Ամեն դեպքում, երկու պատմագիրների մոտ փրկվածը նույն անձն է՝ Սպանդարատը: Եթե զուգահեռում ենք կոթողի հետ, նա մանուկ է, ինչպես Իսահակը: Մովսես Խորենացին, գուցե, ավելի առաջ գնալով է ներկայացրել Սպանդարատին, երբ նա ողբերգական իրադարձություններից հետո արդեն հասուն մարդ էր: Այն, որ փրկվածն իրոք Սպանդարատն է, հաստատվում է նաև նրա անվան հայեցի ստուգաբանությամբ:

Հրաչյա Աճառյանը Սպանդարատ անունը ստուգաբանում է պահլավե-

¹ Հայտնի է, որ Սպանդարատի հորեղբայր Ներսեհ Ա Կամսարականը 358 թ. գլխավորել է նախարարական գործերի հարձակումը Արշակ Բ արքայի (345-368) կողմից իր թագավորության սկզբներին Արարատ լեռան թիկունքին հիմնադրված Արշակավան քաղաքի վրա, որտեղ թագավորի կոչով ու զանազան արտոնությունների տրամադրմամբ բնակություն էին հաստատել պարտապաններ, վարկառուներ, խաբեբաներ, գողեր, մարդասպաններ, իրենց տերերի մոտից փախած ծառաներ, վնասարարներ, ամեն տեսակի հանցագործներ: Նկատելի է, որ Ներսեհն ավագ եղբորից՝ Արշավիր Ա Կամսարականից հետո դարձել էր «Տեր Շիրակայ եւ Արշարունեաց»: Նախարարները հիմնահատակ կործանեցին Արշակավանը, սրի քաշեցին բոլոր բնակիչներին, բացի ծծկեր երեխաներից, որովհետև կատաղած էին իրենց ծառաների և վնասարարների դեմ: 363 թ. Արշակ թագավորը վրեժխնդիր է լինում իր անվամբ հիմնադրված քաղաքի ավերման համար՝ սրատելով գլխավոր նախաձեռնողներին, հատկապես բնաջինջ անելով Կամսարական տոհմը՝ չխնայելով անգամ կանանց ու երեխաներին: Ոչ ոք նրանցից չփրկվեց, բացի Արշավիր Ա Կամսարականի որդի Սպանդարատից: Իսկ Կամսարականների տիրույթերը կցվեցին արքունիքին:

² Տե՛ս Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն: Բնագիրը՝ Ք. Պատկանյանի, թարգմ. և ծանոթագր. Ստ. Մալխասյանի, Երևան, 1987, էջ 203:

³ Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն: Քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխարհաբար թարգմ. և մեկնաբան. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1981, էջ 357, 393:

⁴ Տե՛ս Կոզեան Ս., Կամսարականները. «Տեարք Շիրակայ եւ Արշարունեաց», Վիեննա, 1926, էջ 88:

րեն, որը նշանակում է «սրբատուր»¹, իսկ ըստ Ֆերդինանտ Յուստիի ու Հայնրիխ Հյուբշմանի, որոնց հղում է Ս. Կոզյանը՝ «գոհի բարեկամ»²: Հայերեն ստուգաբանելու դեպքում՝ Սպանդարատ բառն արտահայտում է սպանդի (կոտորածի) չենթարկվածի իմաստ: Հ. Աճառյանն **արատ** արմատը համարում է կորած (թեև այսօր այն մասամբ վերականգնված է, օրինակ՝ լեզվական արատ, սրտի արատ, ունենալ արատներ և այլն), «բայց կայ **անարատ** արմատը»³: Այն է՝ ըստ մեր տեսակետի՝ կոտորածից փրկվածի անունը նախապես հնչել է Սպանդանարատ, որը կրճատվել ու պահլավերենի ազդեցությամբ դարձել է Սպանդարատ: Վերջինս, կարծում ենք, ոչ թե փրկվածի անունն է, այլ մականունը: Դրանով է նա գրանցում ստացել պատմության էջերում, իսկ նրա իսկական անունը մոռացության է մատնվել:

Մովսես Խորենացուց հայտնի է, որ Սպանդարատ Կամսարականը, 371 թ. Ջիրավի ճակատամարտում հերոսաբար կռվելով ու թշնամիներից Ղեկաց (լեզգիների) արքա, քաջ Շերգիրին հաղթելուց հետո, Հայոց Պապ թագավորից (369-373) որպես քաջության պարգև ետ է ստացել հայրենի Արշարունիք և Շիրակ գավառները⁴: Կամսարականների սպանդից անցել էր ութ տարի, և մանուկ Սպանդարատը, մեծանալով Վասակ սպարապետի դաստիարակության ներքո, անշուշտ պետք է տիրապետեր նաև մամիկոնյանական մարտարվեստի նրբություններին և, դառնալով չափահաս, կարող էր լիովին մասնակցել Ջիրավի ճակատամարտին: Առհասարակ, հնում մանուկ նշանակել է **երիտասարդ, պատանի**⁵:

Պատանին արբունքի հասակն էր, մոտավորապես 14-ից 20 տարեկանը⁶: Եթե ընդունենք, որ սպանդի ժամանակ Սպանդարատը փոքրիկ մանուկ էր, այն է՝ 10-ից 12 տարեկան (շուրջ այդքան կարող էր եղած լիներ Իսահակը), ապա Ջիրավում նա արդեն կլիներ 18-ից 20 տարեկան:

Տեր դառնալով հայրենական տիրույթներին և անշուշտ նստելով իր հայրական Մարմետում (Երվանդաշատում)՝ Սպանդարատ Կամսարականն ամռան տապին կնախընտրեր շոգ Երասխաձոր-Արշարունիքից հեռանալ գով Շիրակ, որտեղ, Գառնահովտում գտնվելով, վախճանվել է ու թաղվել⁷:

¹ Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ., Երևան, 1948, էջ 597:

² Տե՛ս **Կոզեան Ս.**, նշվ. աշխ., էջ 11:

³ **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, 1971, էջ 297:

⁴ Տե՛ս **Մովսես Խորենացի**, նշվ. աշխ., էջ 371, 373:

⁵ Տե՛ս «Հայերեն բացատրական բառարան», կազմեց Ստ. Մալխասեանց, հ. III, Երևան, 1944, էջ 255:

⁶ Տե՛ս «Հայերեն բացատրական բառարան», կազմեց Ստ. Մալխասեանց, հ. IV, Երևան, 1945, էջ 57:

⁷ Մովսես Խորենացին հիշատակում է ևս մեկ Սպանդարատի՝ Արշարունյաց տեր, որը ս. Սահակ Ա Պարթև Հայոց կաթողիկոսին (387-439) արքայից ազատելու ու հայրապետական աթոռին վերադարձնելու խնդրանքով 432 թ. մեկնել է Տիգրանի՝ Պարսից Վոսամ (Բահրամ) Ե Գոռ արքայի (421-439) մոտ (տե՛ս **Մովսես Խորենացի**, նշվ. աշխ., էջ 435, 437): Սա չի կարող



Նկ. 3. Կոթողի երրորդ նիստը

Այն, որ կոթողի երկրորդ կողին պատկերվածը ննջեցյալ է, հասկացվում է նրա ոտքերի ներքևում ականթատերևների մեջ բացված ծաղիկով, որի բոլորուն տեսքը նման է հավերժության խորհրդանշանին, ինչն ակնարկում է հանգուցյալի հարության և դրախտային հավիտենական կյանքին արժանանալու մասին:

Կոթողի երկրորդ նիստն իմաստային առումով լրացնում է երրորդ կողը: Այստեղի պատկերաքանդակը թերևս ամենաառեղծվածայինն է: Ներքևում քանդակված են նախորդ երեսների նման ականթատերևներ, որոնց ետևում կանգնած է կին՝ երկար զգեստով, իրանը կիպ սեղմած գոտիով՝ կապը առջևից ներքև իջնող: Նա գլխից վեր բարձրացրած ձեռքերով բռնել է կրկնափեղկ սեղանաձև շրջանակ, որի մեջ կան վեցաթև և ութաթև երկու վարդյակ: Ըստ Գ. Հովսեփյանի՝ կնոջ գլխին կա գլխարկ, որի ձևն անորոշ է՝ եղծված լինելու պատճառով:

Վարդապետը սեղանաձև շրջանակի միջի պսակաթերթերով վարդյակները հարցականով հաց է ենթադրում, «որ նուէր է մատուցանում, արդեօ՞ք վերելի անձնաւորութեան, որի ոտներն են միայն երեւում տարօրինակ կօշիկով (սանդալ)»:

Մեզ համար միանգամայն մուր է քանդակի նշանակությունը¹: Միաժամանակ այս երեսի պատկերաքանդակում նա տեսնում է հելլենական ձևակերպություն²:


նույնանալ կոտորածից փրկված Սպանդարատի հետ, որովհետև պատմահայրը 387 թ. մեր երկծվենված հայրենիքի բյուզանդական մաս հեռացած Հայոց գլխավոր իշխանների շարքում հիշատակում է նրա որդի, պատանի Գազավոն Կամսարականին, որը 389 թ.՝ Արշակ Գ-ի (387-389) մահից հետո, դարձավ Բուզանդահայաստանի վերակացու՝ ստրատելատ (տե՛ս նույն տեղում, էջ 383, 389, 391), ապա Խոսրով Գ-ի կոչով վերադարձավ Հայաստան ու վերստին տեր դարձավ Շիրակին ու Արշարունիքին: Գազավոնի բարձրանալը պատանի հասակում նշանակում է, որ հայրը՝ Սպանդարատը, արդեն մահացած էր: Ինչ վերաբերում է Սպանդարատ Բ-ին, ապա նա հավանական է՝ լինի Գազավոնի եղբայր Շավարշի որդին (Գազավոնի տղան Հրահատն էր, նա հետագայում դարձավ Կամսարական տոհմի նահապետը), որի անունը ներառված չէ Կամսարականների տոհմածառում (տե՛ս **Կոզեան Ս.**, նշվ. աշխ., էջ 172): Իսկ Սպանդարատ անունը Ս. Կոզյանի դիտարկմամբ՝ «այլուր այնքան ցանցառաղէպ էր, որ Կամսարական տոհմին սեպհական անուններէն կարելի է համարիլ» (նույն տեղում, էջ 17-18):

¹ **Հովսեփյան Գ.**, նշվ. աշխ., էջ 116:

² Տե՛ս նույն տեղում:

Լևոն Ագարյանը հնարավոր է համարում, որ «սա հեթանոսական թեմա է, գուցե որևէ աստվածուհի»¹: Ըստ նրա՝ Սիրարփի Տեր-Ներսեսյանը սասանյան արվեստի ադդեցություն է տեսնում, և քանդակը նրան հիշեցնում է Անահիտ դիցուհուն²: Իսկ Ասատուր Մնացականյանը, Լ. Ագարյանի մեջբերմամբ, «այս քանդակը պտղաբերության ու գարնանային աստվածության պատկեր է համարում»³: Այդ հորինվածքը հեթանոսական է կարծում նաև Գր. Գրիգորյանը⁴:

Բոլոր տեսակետներն ընդունելի չեն, քանի որ անտեսված է կամ յուրովի է ընկալված կոթողի քրիստոնեական-հինկտակարանյան ակունքը՝ Աբրահամի զոհաբերության տեսարանը: Գ. Հովսեփյանի՝ հելլենական ձևակերպություն տեսնելը նույնպես հարիր չէ, քանի որ հեթանոսությունը իր պաշտամունքային կառույցներով ու կուռքերով ոչնչացնելով մերժած քրիստոնությունը, այն էլ վաղ միջնադարում, հին, խորտակված կրոնին տեղ չէր տա:



Նկ. 4. Կոթողի երրորդ նիստի վերարտադրությունը

Բ. Առաքելյանի տեսակետը, որը պատկերվածը Տիրամայրն է⁵, ընդունելի կլիներ սրբապսակի առկայության դեպքում, որը չկա, մինչդեռ Հայաստանի վաղմիջնադարյան կոթողներում Աստվածածինը պատկերվում է լուսապսակով:

Վերջին տարիներին նոր տեսակետ է առաջ քաշել Զարուհի Հակոբյանը, ըստ որի՝ կինը «Մառնան է, նրա ձեռքերում հացեր են՝ ըստ Աբրահամի հյուրընկալության պատմության»⁶: Հայտնի է, որ Մառնան Իսահակին ծննդաբերել է գառամյալ հասակում, հետևապես նա պետք է պատկերվեր ծեր տարիքին բնորոշ տեսքով, ինչպես ամուսինը՝ Աբրահամը, կոթողի առաջին երեսին, մինչդեռ կինն ունի երիտասարդի առույգ ու պիրկ մարմին:

Իսկ Առաքել Պատրիկն իր հերթին փորձել է կնոջը պատկերել տարազով՝ հետևյալ վերարտադրությամբ⁷:

Մենք կարծում ենք, որ գեղեցկուհին Արշանու(յ)Չ Արշակունին է՝

¹ Ագարյան Լ., Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Երևան, 1975, էջ 65:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, Մնացականյան Ա., Հայկական զարդարվեստ, Երևան, 1955, էջ 61-62:

⁴ Տե՛ս Գրիգորյան Գր., նշվ. աշխ., էջ 86:


⁵ Տե՛ս Առաքելյան Բ., նշվ. աշխ., էջ 50:

⁶ Հակոբյան Զ., Հայկական վաղմիջնադարյան քանդակը (4-7-րդ դարեր), Երևան, 2016, էջ 74:

⁷ Պատրիկ Ա., Հայկական տարազ, Армянский костюм, Armenian national costumes, Երևան, 1983, էջ 36, տախտակ 11:

Սպանդարատի կինը: Մարմինը ձգող գոտին, բացի կնոջ գեղեցկությունն ընդգծելուց, ցույց է տալիս նրա իշխանուհի լինելը: Վեր պարզած ձեռքերով բռնած սեղանաձև շրջանակները խորհրդանշում են նրա և ամուսնու տապանները, որոնք իշխանուհին, դնելով ամենաողորմած Հիսուս Քրիստոսի ոտքերի տակ (պահպանվել են միայն ստորին հատվածները), Բարձրյալից հայցում է Երկրորդ գալուստով Աստծո արքայությունում հավիտենական կյանք, որը խորհրդանշում են հավերժության գաղափարանիշ երկու վարդյակները՝ Սպանդարատի ու իր՝ Արշանու(յ)շի համար: Այստեղից ենթադրելի է, որ կոթողի պատվիրատուն կինն է, և հուշարձանը կանգնեցվել է ոչ թե մեկ, այլ երկու հոգու՝ ամուսինների հիշատակի համար:

Ինչ վերաբերում է վերջին՝ չորրորդ նիստին, ապա այնտեղ պահպանված է՝ ներքևում, նույն ակնաթերթը, որից վերև՝ ակոսի մեջ, ամենաստորին մասում՝ կարճ պոչուկով եռանկյունաձև սլաք՝ դեպի վեր ուղղորդված:



Նկ. 5. Կոթողի չորրորդ նիստը

Բ. Առաքելյանի մեկնաբանությամբ՝ «չորրորդ երեսի վրա մենք ունենք խաչի երկարաձիգ քանդակի ներքևի թևը լայն գեղարդաձև հիմքով, ինչպիսին հանդիպում է Թալինի, Մրենի և Դարբանդի կողմերում»¹: Քրիստոնեական պատկերագրությունում եռանկյունաձև սլաքը՝ եռանկյունին, կարող է խորհրդանշել Սուրբ Երրորդությունը:

Ըստ Լ. Ազարյանի՝ «սլաքի և եռանկյունաձև սեպի պատկերը Աստրեստանում ընդունվել է որպես աստվածային հասկացության խորհրդանիշ: Այն կապում են նաև հայկական Տիր աստվածության հետ: Տիր բառը հին պարսկերենում նշանակել է նաև նետ և Մերկուրի (Տիր) մոլորակը: Առավել կարևոր է Խորենացու այն վկայությունը, թե Արշակ Ա-ն (II դ. վերջ մ. թ. ա.) ի նշանավորումն պոնտացիների դեմ տարած հաղթանակի, վրան տեգ ամրացրած կոթող է կանգնեցնում²: Հնարավոր է, որ դեկորատիվ նշանակություն ստացած զարդապատկերային այս մոտիվը կոթողների վրա խաչի հետ մեկտեղ խորհրդանշում է նաև քրիստոնեության հաղթանակը»³:

Ըստ Գր. Գրիգորյանի՝ Գառնահովտի կոթողի այդ «նիստին պատկերված նիզակատեգի քանդակը Միհր աստծո ատրիբուտն է, և կոնկրետ այս հորինվածքում Միհրը ներկայանում է իբրև գերեզմանների

¹ Առաքելյան Բ., նշվ. աշխ., էջ 51:

² Տե՛ս Մովսես Խորենացի, նշվ. աշխ., էջ 135:

³ Ազարյան Լ., նշվ. աշխ., էջ 66:

վերակացու ու պահապան, ննջեցյալների ճակատագրի տեր»¹: Ինչ վերաբերում է վերասլաց ակոսին, ապա Գր. Գրիգորյանն այն կարծում է սեպ և, ի տարբերություն Լ. Ազարյանի, դա է համարում Տիր աստծո խորհրդանիշը, այլ ոչ թե տեգը, որը նա կապում է Միհրի հետ²: Ամեն դեպքում, Միհրն ու Տիրն աղերսվում են «հոգու փրկության գաղափարի հետ»³ և անկախ ժամանակից՝ ընդգծում կոթողի մահարձան լինելը:

Այսպիսով, Գառնահովտի կոթողը մեր կողմից համարվելով Սպանդարատ Կամսարականի և Արշանու(յ)շ Արշակունու հիշատակին կանգնեցված հուշարձան՝ հստակեցնում է նաև դրա կերտման ժամանակը՝ IV դարի երկրորդ կես:

Ашот Манучарян – Гарнаовитский раннесредневековый памятник с новыми, частичными комментариями

Своеобразный памятник Гарнаовита эпохи раннего средневековья исследовали некоторые ученые, выражая различные точки зрения по поводу скульптурных изображений, сохранившихся на всех четырех сторонах стелы. Торос Тораманян датировал памятник языческой эпохой, не учитывая изображение на лицевой стороне, на которой, согласно Гарегину Овсепяну, представлена ветхозаветная сцена жертвоприношения Авраама (Быт. 22. 1-13). Неполное изображение на четвертой стороне правильно интерпретировал Бабкен Аракелян, отмечая, что здесь высечено нижнее длинное крыло креста. Основной загадкой являются изображения на второй и третьей сторонах, на которых предположительно изображены царь Трдат III, Богородица Мария (Б. Аракелян), языческая богиня Анаит (Сирарпи Тер-Нерсесян и др.) или жена Авраама Сара (Заруи Акопян). В результате наших исследований было выявлено, что на второй и третьей сторонах изображены князь Спандарат Камсаракан и его жена Аршануш Аршакуни. Именно ко времени их деятельности относится Гарнаовитский памятник, то есть к середине IV века.

Ashot Manucharyan – The Early Medieval Monument of Garnahovit. New Data and Commentaries

The unique early medieval monument of Garnahovit has been studied by a number of scholars, who expressed various viewpoints on the sculptural images depicted on all four sides of the memorial. Toros Toramanyan ascribed it to the pagan period, without regard to the image on the front side, on which, according to Garegin Hovsepyan, an Old Testament scene of Abraham's sacrifice is represented (Genesis 22. 1-13). Incomplete image on the forth side was correctly interpreted by Babken Arakelyan, who mentioned that here the lower long wing of a cross is carved. The main riddle are the images on the second and third sides, where the king Tiridates III, Holy Mother (B. Arakelyan), pagan goddess Anahit (Sirarpi Ter-Nersesyan and others) or Abraham's wife, Sarah (Zaruhi Hakobyan) are supposedly depicted. As a result of

¹ Գրիգորյան Գր., նշվ. աշխ., էջ 82:

² Տե՛ս նույն տեղում, էջ 81:

³ Նույն տեղում, էջ 83:

our research it was revealed that on the second and third sides the prince Spandarat Kamsarakan and his wife Arshanush Arshakuni are depicted. Thus, Garnahovit stela is ascribed to the period of their activities, i.e. to the middle of IV century.

Ներկայացվել է 13.01.2020

Գրախոսվել է 24.03.2020

Ընդունվել է տպագրության 30.06.2020

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փայլակ Ենգոյան, Էդիկ Մինասյան, Երևանի պետական համալսարանն ու համալսարանականները Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2019, 586 էջ + 48 ներդիր

Պատմական գիտությունների դոկտորներ, պրոֆեսորներ, 1970-1978 թթ. ԵՊՀ ԽՄԿԿ պատմության ամբիոնի վարիչ, երջանկահիշատակ Փայլակ Ենգոյանի (1921-1978) և ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան Էդիկ Մինասյանի գրախոսվող գիրքը վերաբերում է Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում ԵՊՀ-ի դասախոսների, ուսանողության, վարչատնտեսական աշխատողների սխրանքներին և մարտական ծառայություններին, ինչպես նաև թիկունքում նրանց հայրենանվեր գործունեությանը: Հեղինակները զետեղել են ռազմաճակատ մեկնած ավելի քան 400 համալսարանականների կենսագրություններ, օգտագործել տվյալներ արխիվներից, անձնական գործերից, ճակատային համալսարանականների հարազատների և ընկերների բանավոր ու գրավոր հուշերից: Պատերազմի մասնակիցների մի մասը զոհվել է մարտի դաշտում, այլք վերադարձել են, ավարտել ուսումը, աշխատանքի անցել ԵՊՀ-ում և այլ հաստատություններում:

Առաջին գլխում հեղինակները ներկայացրել են ԵՊՀ-ի հիմնադրման կարևորությունը և նրա ավանդը բարձրագույն կրթության հենքի վրա կադրեր պատրաստելու գործում, որոնք մեծ դեր են խաղացել Խորհրդային Հայաստանի սոցիալ-տնտեսական, գիտակրթական և մշակութային կյանքի զարգացման գործում: Միաժամանակ ցույց է տրվել հայ ժողովրդի ավանդը Հայրենական մեծ պատերազմի հաղթանակում:

Փ. Ենգոյանը և Է. Մինասյանը երկրորդ գլխում փաստական հարուստ նյութերի հիման վրա լուսաբանել են ԵՊՀ-ի դերը գորահավաքային, աշխարհագորային, կամավորական ջոկատների ստեղծման գործում, ինչպես նաև մեկնաբանել հայկական ազգային դիվիզիաների կազմում համալսարանականների ավանդը, Կարմիր բանակի շարքերում նրանց կովելու պատրաստակամությունը, թիկունքային աշխատանքներին արդյունավետ մասնակցությունը: Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերից ԵՊՀ-ն զինվորագրվեց հայրենիքի պաշտպանությանը, ռազմաճակատ մեկնեցին նրա աշխատակիցները, թե՛ ռեկտորը և թե՛ պահակը՝ խոստանալով անմնացորդ

ծառայել հայրենիքի պաշտպանությամբ:

ԵՊՀ ռեկտոր Գարեգին Պետրոսյանը, ելույթ ունենալով ԵՊՀ-ի ընդհանուր ժողովում, հայտարարել է, որ ինքնակամ թողնում է այդ պաշտոնն ու կամավոր մեկնում ռազմաճակատ հանուն հայրենիքի պաշտպանության: Դա համալսարանականների շրջանում լայն արձագանք գտած հուզիչ և ոգեշնչող կոչ էր. շատ երիտասարդներն ասել են: Պատերազմի միայն առաջին տարում ռազմաճակատ են մեկնել 360 համալսարանական, որոնց թվում էին Մկրտիչ Ներսիսյանը, Անուշավան Արզումանյանը, Գևորգ Ջահուկյանը, Գևորգ Ղարիբջանյանը, Վաչե Նալբանդյանը, Աշոտ Ասլանյանը, Հովհաննես Բարսեղյանը, Սիրաք Գյուլբուդադյանը, Պետրոս Բեգիրզանյանը, Պերճ Բոչնադյանը, Սերոբ Պողոսյանը, Գևորգ Բաբաջանյանը, Բենիկ Թումանյանը, Կորյուն Շահբազյանը, Վաչագան Սաղաթելյանը և շատ ուրիշներ:

Պատերազմի տարիներին ԵՊՀ-ի առջև ծառայող հրատապ խնդիրներ, վերանայվեցին ուսումնական ծրագրերը, ներդրվեցին ռազմական պատրաստման դասընթացներ, կազմակերպվեցին ռազմապաշտպանական միջոցառումներ, ուժեղացվեց ռազմահայրենասիրական, գաղափարական-դաստիարակչական աշխատանքը ուսանողների մոտ թշնամուն հաղթելու կամք և վճռականություն արմատավորելու հարցում: Կազմակերպվեցին նաև ուսանողուհիների բուժքույրական դասընթացները, որտեղ նրանց ուսանում էին առաջին բուժօգնության ձևերն ու մեթոդները, իսկ գործնական պարապունքներն անցկացվում էին հոսպիտալում: Առաջին շրջանավարտների մի մասը ծառայության մեկնեց հանրապետության հիվանդանոցներ և հոսպիտալներ, իսկ այլք՝ տարբեր ռազմաճակատներ:

Համալսարանականներն ակտիվորեն մասնակցեցին նաև թիկունքային աշխատանքներին: ԵՊՀ-ի ամբիոններն ու լաբորատորիաները արտադրության մեջ ներդրեցին մի շարք նորարարություններ. քիմիկոսները գազապաստարանների համար մշակեցին ածուխի և ֆիզիոլոգիական աղի ստացման տեխնոլոգիաներ, ուսումնասիրեցին Երևանի տրամվայի էլեկտրական և հեռախոսային ընդգետնյա ցանցի կաբելների քայքայման պատճառները և միջոցառումներ ձեռնարկեցին դրանց դեմ պայքարելու համար, նիկելապատեցին կաուչուկի գործարանի ԱՊՍ կայանի համար անհրաժեշտ 700 մանր դետալներ, ուսումնասիրեցին Ազարակի, Փիրդուռյանի հանքերը և 909 նմուշի մեջ ճշգրտեցին պղնձի քանակը և այլն: ԵՊՀ-ի երկրաբանները հետազոտեցին և ճշգրտեցին հանրապետության հանքային հարստությունների պաշարները, տնտեսագետները օգնեցին հանրապետության պլանավորող օղակներին ճիշտ հաշվառման ենթարկել հումքային ու աշխատանքային հնարավորությունները: Արտադրության մեջ նոր մեխանիզմների ներդրման գործում արդյունաբերական ձեռնարկություններին օգնեցին համալսարանի ֆիզիկոսները, մաթեմատիկոսներն ու մեխանիկները:

Գրեթե ամեն օր ԵՊՀ-ից աշխատանքային ուժեր էին ուղարկվում հանրապետության տարբեր շրջաններ՝ դաշտային աշխատանքներում կոլտնտե-

ասկաններին օգնելու համար: Հարյուրավոր ուսանողներ և դասախոսներ դասերից հետո նաև Երևանի երկաթուղային կայարանում ու ավտոկայանում օգնում էին բարձրանալու և բեռնաթափման աշխատանքներին: Համալսարանականները մեծ եռանդով կազմակերպեցին մետաղի ջարդոնի և բանակի համար տաք հագուստ հավաքման աշխատանքները, մասնակցեցին Երևանում հակաօդային պաշտպանության կազմակերպման ու ղեկավարման գործին և այլն: Պատերազմի տարիներին ԵՊՀ-ի ղեկավարությունը, կուսակցական և հասարակական կազմակերպությունները հատուկ ուշադրության էին արժանացնում ռազմաճակատներում զոհված կամ զործող բանակում գտնվող զինվորականների զավակներին, պարբերաբար տալիս դրամական օգնություն, ապահովում հագուստով և այլն:

Փ. Ենգոյանի և Է. Մինասյանի գրքի երրորդ գլուխը նվիրված է ռազմաճակատներում զոհված համալսարանականներին, որոնք թողել են լավագույն հայրենասերների հիշատակ, որը սրբությամբ են պահպանում ԵՊՀ-ի սաները: 1979 թ. մայիսի 8-ին Մեծ հայրենականում խորհրդային ժողովրդի տարած փառապանծ հաղթանակի 34-րդ տարեդարձի նախօրեին ԵՊՀ-ի բակում հանդիսավորությամբ բացվեց Հայրենական մեծ պատերազմում զոհված համալսարանականների հիշատակը հավերժացնող աղբյուր-հուշարձանը, որի վրա գրված է «Հավերժ փառք 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում զոհված համալսարանականներին»: Հինգ մետր բարձրություն ունեցող գրանիտե հուշարձանին ամրացված պղնձե թռչնող կանաչ տերևը խորհրդանշում է երիտասարդ զոհվածներին, իսկ աղբյուրից ավազանի մեջ հոսող ջուրը՝ նրանց կյանքն ու հավերժությունը:

Ոչինչ չի մոռացվել, ոչ ոք չի մոռացվել... հուշարձանը դրա վառ ապացույցն է և սիրո ու երախտագիտության խոսք զոհված համալսարանականների հիշատակին, որոնք առանց երկմտանքի մեկնել են ռազմաճակատ՝ պաշտպանելու հայրենի սուրբ հողը և զոհվելով անմահացել:

Չորրորդ գլխում հեղինակները ներկայացնում են ԵՊՀ-ի ուսանողների, ասպիրանտների և դասախոսների սխրանքները: Մեծ հայրենականի տարիներին հայրենիքի պաշտպանության գործին զինվորագրված 869 համալսարանականների՝ դասախոսների, ուսանողների, ասպիրանտների ու վարչատնտեսական ոլորտի աշխատողների գրեթե 90 տոկոսը եղել է տարբեր ռազմաճակատներում: Նրանցից շատերը պարզևատրվել են Խորհրդային Միության ջբանջաններով ու մեղալներով, իսկ դասախոս, գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը և ուսանող Սուրեն Սարգսյանը արժանացել են Խորհրդային Միության հերոսի բարձր կոչման: Այս գլխում անդրադարձ է կատարվել նաև Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում մարտնչած, այնուհետև համալսարանում ուսանող, ասպիրանտ կամ դասախոս դարձած անձանց կենսագրություններին և սխրանքներին:

Վերջաբանում ամփոփվել են ուսումնասիրության արդյունքները և հիմնավորվել է ԵՊՀ-ի դերը ոչ միայն Հայրենական մեծ պատերազմում, այլև

արցախյան շարժման, ադրբեջանա-արցախյան պատերազմի ընթացքում (1988-1994): Անդրադարձ է կատարվել նաև 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմին համալսարանականների մասնակցությանը, նրանց սխրանքներին:

Փ. Ենգոյանը և Է. Մինասյանը արժանի են երախտագիտության, քանզի նրանց գիրքը հասցեագրված է ոչ միայն պատմաբաններին, քաղաքագետներին, հարցի ուսումնասիրությամբ զբաղվող այլ մասնագետներին, այլև ընթերցող լայն հանրությանը:

ԿԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ներկայացվել է 25.04.2020

Ընդունվել է տպագրության 30.06.2020

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Աբրահամյան Նելի	ԵՊՀ ասպիրանտ, ՀՀԻ ցեղասպանագիտության բաժնի լաբորանտ (neli.abrahamyan@ysu.am)
Ավագյան Վաչագան	ԵՊՀ հայ գրականության պատմության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու (avagyan.vachik@yandex.ru)
Ավետիսյան Յուրի	ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (yuriavetisyan@ysu.am)
Ավետյան Սարգիս	ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու (sargisavetyan@ysu.am)
Բայրամյան Հրաչիկ	ԵՊՀ ՀՀԻ հայ-վրացական հարաբերությունների բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ (hrachik.bayramyan@ysu.am)
Գրիգորյան Նաթելլա	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ, պատմական գիտությունների թեկնածու (natella.gri@gmail.com)
Եղիազարյան Արման	ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր (armanyeghiazaryan@ysu.am)
Հայրունի Աշոտ	ԵՊՀ ՀՀԻ առաջատար գիտաշխատող, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր (ashot.hayruni@ysu.am)
Հարությունյան Կլիմենտ	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր
Մանուչարյան Աշոտ	ԵՊՀ հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու (ashot.manucharyan.1959@mail.ru)
Մինասյան Էդիկ	ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (history@ysu.am)
Մխոյան Հայկ	ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմու-

Մովսիսյան Արտակ

թյան ամբիոնի ասիստենտ, պատմական գիտությունների թեկնածու (haykmkhoyan@gmail.com)
ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (artakmovsisyan@ysu.am)

Պետրոսյան Վարդան

ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ (vz.Petrosyan@ysu.am)

Սահակյան Հրանուշ

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ (hranush.sahakyan@mail.ru)

Միմոնյան Արամ

ԵՊՀ ՀՀԻ տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (asimonyan@ysu.am)

Քոսյան Լիլիթ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող (l.qosyan@gmail.com)

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ

- Абраамян Нели** Аспирант ЕГУ, лаборант отдела геноцидологии Института арменоведческих исследований ЕГУ (neli.abrahamyan@ysu.am)
- Авагян Вачаган** Доцент кафедры истории армянской литературы ЕГУ, кандидат филологических наук (avagyan.vachik@yandex.ru)
- Аветисян Юрий** Заведующий кафедрой армянского языка ЕГУ, доктор филологических наук, профессор (yuriavetisyan@ysu.am)
- Аветян Саргис** Доцент кафедры общего языкознания ЕГУ, кандидат филологических наук (sargisavetyan@ysu.am)
- Айруни Ашот** Ведущий научный сотрудник Института арменоведческих исследований ЕГУ, профессор кафедры истории армянского народа ЕГУ, доктор исторических наук (ashot.hayruni@ysu.am)
- Арутюнян Климент** Главный научный сотрудник Института истории НАН Армении, доктор исторических наук
- Байрамян Грачик** Заведующий отделом армяно-грузинских отношений Института арменоведческих исследований ЕГУ, кандидат филологических наук, доцент (hrachik.bayramyan@ysu.am)
- Григорян Нателла** Ассистент кафедры истории и обществознания Армении Иджеванского филиала ЕГУ, кандидат исторических наук (natella.gri@gmail.com)
- Егиазарян Арман** Заведующий кафедрой диаспороведения ЕГУ, доктор исторических наук (Armanyeghiazaryan@ysu.am)
- Косян Лилит** Младший научный сотрудник Института истории НАН РА (l.qosyan@gmail.com)
- Манучарян Ашот** Доцент кафедры истории Армянской церкви и экклезиологии ЕГУ, кандидат исторических наук (ashot.manucharyan.1959@mail.ru)
- Минасян Эдик** Декан факультета истории ЕГУ, доктор исторических наук, профессор (history@ysu.am)
- Мовсисян Артак** Заведующий кафедрой истории армянского народа ЕГУ, доктор исторических наук, профессор (artakmovsisyan@ysu.am)
- Мхоян Айк** Ассистент кафедры истории сопредельных с Арменией государств ЕГУ, кандидат исторических наук (haykmkhoyan@gmail.com)
- Петросян Вардан** Заведующий кафедрой общего языкознания ЕГУ,

Саакян Грануш

Симонян Арам

кандидат филологических наук, доцент
(vz.Petrosyan@ysu.am)

Аспирант кафедры истории армянского народа ЕГУ
(hranush.sahakyan@mail.ru)

Директор Института арменоведческих исследований
ЕГУ, член-корреспондент НАН Армении,
доктор исторических наук, профессор
(asimonyan@ysu.am)

INFORMATION ABOUT THE AUTHORS

- Abrahamyan Neli** PhD student at YSU, Laboratory Assistant at the Department of Genocide Studies of the Institute of Armenian Studies of YSU (neli.abrahamyan@ysu.am)
- Avagyan Vachagan** PhD in Philology, YSU, Associate Professor at the Chair of Armenian Literature (avagyan.vachik@yandex.ru)
- Avetisyan Yuri** Doctor of Philology, Professor, Head of the Chair of Armenian Language of YSU (yuriavetisyan@ysu.am)
- Avetyan Sargis** PhD in Philosophy, Associate Professor of the Chair of General Linguistics of YSU, (sargisavetyan@ysu.am)
- Bayramyan Hrachik** PhD in Philology, Associate Professor, Head of the Department of Armenian-Georgian Relations of the Institute for Armenian Studies, YSU (hrachik.bayramyan@ysu.am)
- Grigoryan Natella** Assistant Professor at the Chair of Armenian History and Social Sciences of YSU Ijevan Branch, PhD in Historical Sciences (natella.gri@gmail.com)
- Harutiunyan Kliment** Doctor of Historical Sciences, Leading Researcher at the Institute of History of the National Academy of Sciences of Armenia
- Hayruni Ashot** Doctor of Historical Sciences, Senior Researcher at the Institute for Armenian Studies of YSU, Professor at the Chair of Armenian History of YSU (ashot.hayruni@ysu.am)
- Manucharyan Ashot** PhD in History, Associate Professor of the Chair of the History of the Armenian Church and Ecclesiology of YSU (ashot.manucharyan.1959@mail.ru)
- Minasyan Edik** Doctor of History, Professor, Dean of the Faculty of History, YSU (history@ysu.am)
- Mkhoyan Hayk** Candidate of Historical Sciences, Assistant Professor at the Chair of the History of Armenia's Neighboring Countries of YSU (haykmkhoyan@gmail.com)
- Movsisyan Artak** Doctor of Philology, Professor, Head of the Chair of Armenian History of YSU (artakmovsisyan@ysu.am)
- Petrosyan Vardan** PhD in Philology, Associate Professor, Head of the Chair of General Linguistics, YSU (vz.Petrosyan@ysu.am)
- Qosyan Lilit** Junior Researcher at the Institute of History of NAS RA (l.qosyan@gmail.com)
- Sahakyan Hranush** PhD student at the Chair of Armenian History of YSU

Simonyan Aram

(hranush.sahakyan@mail.ru)

Director of the Institute for Armenian Studies of YSU,
Corresponding Member of the NAS RA, Doctor of
Historical Sciences, Professor (asimonyan@ysu.am)

Yeghiazaryan Arman

Doctor of History, Head of the Chair of Diaspora
Studies, YSU (Armanyeghiazaryan@ysu.am)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ 75-ԱՄՅԱԿԸ

Կլիմենտ Հարությունյան

Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում տարած
հաղթանակում 1941-1945 թթ. (ռուսերեն)3

Կլիմենտ Հարությունյան

Խորհրդային Միության նավատորմի ծովակալ, Սովետական
Միության հերոս Իվան Ստեփանի Իսակով (ռուսերեն)23

Էդիկ Մինասյան

Երևանի պետական համալսարանի մասնակցությունը Հայրենական
մեծ պատերազմին (ռուսերեն)28

Հայկ Մխոյան

Հայրենական մեծ պատերազմը Երևանի պետական համալսարանի
աշխատակիցների հուշերում 40

Հրաչիկ Բայրամյան

Խորհրդային Միության վիրահայ հերոսները50

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Արտակ Մովսիսյան

Ծովափ թագավորության գահացանկը (մաս Բ)64

Արման Եղիազարյան

Կարսի թագավորության ստեղծման թվականը և հանգամանքները....81

Լիլիթ Քոսյան

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի որբախնամ գործունեության
պատմությունից (1890-ական թթ.)94

Աշոտ Հայրունի

Գերմանական արևելյան առաքելության Ուրֆայի կայանը Մեծ եղեռնի
և Աշխարհամարտի տարիներին (գերմաներեն) 102

Արամ Միմոնյան

Շուշիի ավերումը, նրա հայ բնակչության ջարդը. պատճառները,
հետևանքները ու պատմական դասերը 121

Հրանուշ Սահակյան

Գերմանա-հայկական ընկերության ջանքերը երկու ժողովուրդների մշակութային կապերի զարգացման հարցում 1918-1921 թթ.	144
Նելի Աբրահամյան	
Թալեաթի սպանության և Սողոմոն Թեհլիրյանի դատավարության լուսաբանումը «Հայրենիք» և «Ճակատամարտ» թերթերում.....	155
Նաթելյա Գրիգորյան	
Փետրվարյան ապստամբությունը և Հովհաննես Թումանյանը	166

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վաչագան Ավագյան	
Ղևոնդ Ալիշանը Արշակ Չոպանյանի գնահատմամբ.....	172

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Յուրի Ավետիսյան	
Բառապաշարի շերտաբանական դասակարգման խնդիրը. հայերենի բառային հիմնական կազմ.....	181
Վարդան Պետրոսյան	
Հին հայերենի հպաշփականների հնչաբանական բնութագրերը (համաժամանակյա քննություն)	198
Սարգիս Ավետյան	
Արդի արևելահայերենի շեշտափոխական ձայնավորային հերթագայությունները (համաժամանակյա և տարաժամանակյա քննություն).....	206

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Աշոտ Մանուչարյան	
Գառնահովտի վաղմիջնադարյան կոթողը՝ նոր, մասնակի մեկնաբանություններով.....	220

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կլիմենտ Հարությունյան	
Փայլակ Ենգոյան, Էդիկ Մինասյան, Երևանի պետական համալսարանն ու համալսարանականները Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.).....	230
Տեղեկություններ հեղինակների մասին.....	234

СОДЕРЖАНИЕ

75-ЛЕТИЕ ПОБЕДЫ ВТОРОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

Климент Арутюнян Армянский народ в Великой Отечественной войне 1941-1945 гг. (на русском языке)	3
Климент Арутюнян Адмирал флота Советского Союза, Герой Советского Союза Иван Степанович Исаков (на русском языке)	23
Эдик Минасян Участие Ереванского государственного университета в Великой Отечественной войне (на русском языке)	28
Гайк Мхоян Великая Отечественная война в воспоминаниях сотрудников Ереванского государственного университета.....	40
Грачик Байрамян Грузино-армянские герои Советского Союза.....	50

ИСТОРИЯ

Артак Мовсисян Царский список Софенского царства.....	64
Арман Егизарян Дата и обстоятельства создания Карсского царства	81
Лилит Косян Из истории попечения сирот, организованного Константинопольским патриархатом Армянской апостольской церкви в 1890-ые годы	94
Ашот Айруни Немецкая восточная миссия в городе Урфа в годы Геноцида армян и Первой мировой войны (на немецком языке)	102
Арам Симонян Разрушение Шуши, погром армянского населения: причины, последствия и уроки истории.....	121
Грануш Саакян Усилия Германно-армянского общества в деле развития культурных связей двух народов в 1918-1921 гг.....	144
Нели Абраамян Освещение убийства Талаата и судебного процесса над Согомоном Тейлиряном в газетах «Айреник» и «Чакатамарт»	155
Нателла Григорян Февральское восстание и Ованес Туманян.....	166

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

Вачаган Авагян

Гевонд Алишан в оценке Аршака Чопаняна 172

ЯЗЫКОЗНАНИЕ

Юрий Аветисян

Проблема стратификационной классификации лексики: основной
словарный состав армянского языка 181

Вардан Петросян

Фонематические характеристики аффрикат древнеармянского языка
(синхронный анализ)..... 198

Саргис Аветян

Чередования гласных, обусловленные перемещением ударения, в
современном восточноармянском языке (синхроническое и
диахроническое рассмотрение)..... 206

ДИСКУССИЯ И ОБСУЖДЕНИЕ

Ашот Манучарян

Гарнаовитский раннесредневековый памятник с новыми, частичными
комментариями 220

РЕЦЕНЗИИ

Климент Арутюнян

Енгоян Пайлак, Минасян Эдик, Ереванский государственный университет
и сотрудники университета в годы Великой Отечественной войны (1941-
1945 гг.) 230

Сведения об авторах 236

COTENTS

THE 75th ANNIVERSARY OF THE VICTORY OF THE SECOND WORLD WAR

Kliment Harutyunyan Armenian People in the Victory in Great Patriotic War (1941-1945) (in Russian).....	3
Kliment Harutyunyan Admiral of the Fleet of the Soviet Union, Hero of the Soviet Union Ivan Stepanovich Isakov (in Russian).....	23
Edik Minasyan Participation of Yerevan State University in the Great Patriotic War (in Russian).....	28
Hayk Mkhoyan The Patriotic War in the Memoirs of the Employees of Yerevan State University.....	40
Hrachik Bayramyan Georgian-Armenian Heroes of the Soviet Union.....	50

HISTORY

Artak Movsisyan The King-List of the Kingdom of Sophene.....	64
Arman Yeghiazaryan Date and Circumstances of the Formation of Kars Kingdom.....	81
Lilit Kosyan From the History of the Activity for the Care of Orphans of the Armenian Patriarchate of Constantinople (1890s).....	94
Ashot Hayruni German Eastern Mission in Urfa during the Genocide and World War I (in German).....	102
Aram Simonyan The Destruction of Shusha, the Massacre of the Armenian Population: Causes, Consequences and History Lessons.....	121
Hranush Sahakyan German-Armenian Society's Efforts to Develop Cultural Relations between the Two Peoples in 1918-1921.....	144
Neli Abrahamyan Coverage of Talaat Pasha's Murder and Soghomon Tehliryan's Trial in the Newspapers "Hayrenik" and "Jakatamart".....	155

Natella Grigoryan
The February Rebellion and Hovhannes Tumanyan 166

HISTORY OF LITERATURE

Vachagan Avagyan
Ghevont Alishan in Archag Tchobanian’s Appreciation 172

LINGUISTICS

Yuri Avetisyan
The Problem of Classification of Vocabulary Layers: the Main Word Stock of
the Armenian Language 181

Vardan Petrosyan
Phonemic Descriptions (a Synchronic Examination) of Old Armenian
Affricates 198

Sargis Avetyan
The Accent-Shift-Conditioned Vowel Alternations in Modern Eastern
Armenian (a Synchronic and Diachronic Examination) 206

DEBATE AND DISCUSSION

Ashot Manucharyan
The Early Medieval Monument of Garnahovit. New Data and
Commentaries 220

REVIEW

Kliment Harutyunyan
Paylak Yengoyan, Edik Minasyan, Yerevan State University and University
Students and Employees during the Great Patriotic War (1941-1945) 230

Information about the Authors 238

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՆԴԵՍ
2 (20)

Համ. ձևավորումը՝ Ա. Աղուզումցյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Ստեփանյանի

Չափսը՝ 70x100 1/16:
Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ:
Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային կրիչով (տեքստը՝ Word, նկարները՝ TIFF կամ բարձրորակ JPG): Հիմնական լեզուն հայերենն է, ընդունվում են նաև ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն հոդվածներ, որոնք պետք է ունենան ամփոփում (հայերեն տեքստի դեպքում՝ անգլերեն և ռուսերեն, այլ լեզուների դեպքում՝ հայերեն և ռուսերեն, շուրջ 300 բառ):

Չափանիշներն են՝

1. Տառատեսակը հայերեն՝ Sylfaen, այլ լեզուներինը՝ Times New Roman:

2. Տառաչափը՝ 12, միջտողային բացատը՝ 1.5:

3. Հոդվածի սկզբում դրվում է հեղինակի անուն, ազգանունը (զլխատառերով), վերնագիրը (զլխատառերով), հոդվածի վերջում նշվում է հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը (հեռախոսահամարը և էլփոստի անվանումը տպագրվում են հեղինակի համաձայնությամբ):

4. Հղումները տրվում են տողատակում՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը, վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջը:

5. Տալ բանալի բառեր:

Հոդվածները ներկայացնել՝

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ 2-րդ մասնաշենք, 5-րդ հարկ, 511 սենյակ, «Հայագիտության հարցեր» հանդեսի խմբագրություն (handes@armin.am), հեռ. +374 60 710092

NOTICE FOR THE AUTHORS

The articles should be represented in USB flash drive (text should be in Microsoft Word Document, pictures – TIFF or JPG). The main language of the article is Armenian (with summary in English and in Russian, about 300 words), if the articles are in Russian, English, French, German there should be a summary in Armenian and in Russian (about 300 word).

The criteria are the following:

1. Theme font – Sylfaen (in Armenian), Times New Roman (in other languages)

2. Font Size – 12, Line Space – 1.5

3. At the beginning of the article there should be the name and surname of the author (uppercase), the title (uppercase), at the end of the article there should be the academic degree of the author, workplace, position, telephone number and E-mail (telephone number and e-mail are published according the author’s agreement)

4. The references should be footnoted; font size- 10, the author, the title, volume, place and date of publication (also the number, if the article was published in magazine) and the page should be mentioned.

5. To write key words.

The articles are accepted in the Institute for Armenian studies of YSU, Alex Manoogian 1, YSU 2nd annex, 5th floor, room N 511, the editorial office of the bulletin “Armenological Issues” (handes@armin.am), tel.: +374 60 710092

К СВЕДЕНИЮ АВТОРОВ

Статьи необходимо представлять на электронном **флеш-накопителе** (текст – Word, фотографии – TIFF или JPG в высоком качестве). Основной язык – армянский, принимаются также статьи на русском, английском, французском и немецком языках, которые должны иметь резюме (в случае армянского текста – на английском и русском языках, в случае других языков – на армянском и русском, около 300 слов).

Параметры

1. Шрифт армянского языка - Sylfaen, других языков - Times New Roman.

2. Размер шрифта – 12, межстрочный пробел - 1.5.

3. В начале статьи дается имя и фамилия автора (заглавными буквами), заголовок (заглавными буквами), в конце статьи отмечается ученая степень автора, место работы, должность, номер телефона и адрес электронной почты (номер телефона и адрес электронной почты печатается с согласия автора).

4. Ссылки даются под строкой в порядке возрастания, размер шрифта - 10, дается автор источника, заголовков, том, место и год издательства (в случае прессы также и номер) и страница.

5. Дать ключевые слова.

Статьи принимаются в

Институте арменоведческих исследований ЕГУ,

Алека Манукяна 1, 2 корпус ЕГУ, 5-й этаж, комната 511, редакция журнала «Вопросы арменоведения» (handes@armin.am), тел.: +374 60 710092